




ՀԷ. ՏԱՐԻ

ԲԱՌՈՒՄ

ՊԼՇՏՈՆԿԱՆ ԱՐԱՆԻՐ
ԱՐԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ
ԱՆՅՈՒՆՆԵՐԻ ՄԻԲՈՒՆ ԷԶՐԻԼԵՐԻ

ՆՊԵՏԵՐ

2020
II. ԷԶՐԻԼԵՐԻ




ՀՐԱՄԱՆԱԻ

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳՆԻ ԵՐԿՐՈՐԴԻ

ՎԵՀԱՓԱՌԻ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



«ԷԶՄԻԱԾԻՆ»

կրօնագիտական եւ հայագիտական ամսագիր

Խմբագրական

Գլխավոր խմբագիր՝ **Գեորգ Մադոյեան**


Խմբագիրներ՝ **Արփինէ Զանթիկեան,
Լուսինէ Վարդանեան**

Լեզուաոճական խմբագիր՝ **Նարէ Սարգսեան**

Տեխնիկական խմբագիր՝ **Գոռ Գրիգորեան**

Խմբագրական խորհուրդ՝ **Տ. Եզնիկ արք. Պետրոսեան,
Տ. Զաքարիա ծ. վրդ. Բաղումեան,
Տ. Անդրէաս վրդ. Եզեկեան,
Ազատ Բօգոյեան,
Գեորգ Տէր-Վարդանեան,
Վարդան Դերիկեան,
Գոհար Աւագեան**





“Etchmiadzin”

Theological and Armenological Journal

Editorial staff

Editor-in-Chief **Gevorg Madoyan**

Editors **Arpine Chantikyan,
Lusine Vardanyan**

Stylistic editor **Nare Sargsyan**

Technical editor **Gor Grigoryan**

Editorial Board **Archbishop Yeznik Petrosyan,
Proto-Archimandrite Zakaria Baghumyan,
Archimandrite Andreas Yezekyan,
Azat Bozoyan,
Gevorg Ter-Vardanyan,
Vardan Devrikyan,
Gohar Avagyan**



«Эчмиадзин»

Религиоведческий и арменоведческий журнал

Редакционный состав


Главный редактор **Геворг Мадоян**

Редакторы **Арпине Чантикян,
Лусине Варданян**

Стилистический редактор **Нарэ Саргсян**

Технический редактор **Гор Григорян**

Редакционный совет **Архиепископ Езник Петросян,
Протоархимандрит Закария Багумян,
Архимандрит Андреас Езекян,
Азат Бозоян,
Геворг Тер-Варданян,
Вардан Деврикян,
Гоар Авакян**



ԻԲՐԵՒ ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

«Ազատության ու անկախության կանչը մեր բազմադարեան պատմության հրամայականն է, մեր ազգի գիտակցության թելադրանքն է, մեր ապագայ գոյատևման երաշխիքն է»:

Վազգէն Ա. Կաթողիկոս

1988-ին պատմական սխալն ուղղված տեսնելու հավատքով եւ արդարութիւնը վերահաստատելու անբեկանելի վճռականութեամբ՝ հայ ժողովուրդը ոտքի կանգնեց՝ Արցախը Մայր Հայրենիքին վերամիավորելու պահանջով: 1988—1994 թթ. ընթացող արցախյան գոյամարտն ի վերջո ծնկի բերեց թշնամուն: Անցած երեսուն տարիներին Հայոց աշխարհն ապրում էր նոր շնչով ու նոր տեսիլքով: Հոգեւոր ու բարոյական վերածնութեան տեսիլքը հույս էր ներշնչում գալիք օրերի նկատմամբ: Հայաստանում եւ Արցախում վստահ եւ հստակ օրենսդրական քայլերով գանահարվում էին անցյալի պատմական սխալները, օրվա իշխանութիւնները խոստումներ էին տալիս վերացնելու հասարակութեան մեջ տեղ գտած անարդարութիւնն ու անհավասարութիւնը, ասել է թե՛ հասարակութիւնը բռնել էր ինքնամաքրման ճանապարհը՝ տքնելով արդարութեան հիմքի վրա ստեղծել իրավական պետութիւն:

Երկրում օրենքի գերակայութեան հաստատման ու հոգեւոր-բարոյական կյանքը խթանելուն զուգահեռ՝ քայլ առ քայլ ամրապնդվում եւ զորանում էր նաեւ հայոց պետականութեան միակ երաշխավորը՝ հայոց բանակը: Վերջինս միակ երաշխավորն էր նաեւ 30 տարի ծխացող արցախյան հիմնախնդրի խաղաղ կարգավորման:

2020 թ. սեպտեմբերի 27-ին թուրք-ադրբեջանական դաշինքը, իր բանակում ընդգրկելով նաեւ ահաբեկիչների եւ վարձկանների, Արցախում սանձազերծեց նոր պատերազմ: Ու կրկին՝ արդեն որեւորդ անգամ փոթորկվեց Արցախը: Փոթորկվեց ողջ հայութիւնն ի Հայրենիս եւ ի սփյուռս:

Այս անգամ եւս դարերով իր ժողովրդին զորավիգ եղած, պետականության բացակայության շրջանում հայ ժողովրդի ճակատագրին տեր կանգնած Հայ Եկեղեցին կրկին հաղորդակցվեց իր ազգի արդար պահանջատիրությանը:

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր երանաշնորհ նախորդների նման հանդես եկավ բազմաթիվ կոչ-ուղերձներով՝ ուղղված հայությանը, բացի այդ՝ տասնյակ նամակներով խնդիրը բարձրաձայնվեց միջազգային աստաններում, պետական, կրոնական, մշակութային ու հասարակական-քաղաքական հեղինակավոր գործիչների շրջանակներում: Դիվանագիտական ճանապարհով հարցի խաղաղ լուծմանն ուղղված ջանքերից զատ՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածինն իր եկեղեցականաց դասով (ճեմարանական, սարկավագ, քահանա, վարդապետ, եպիսկոպոս) ձեռնամուխ եղավ մարդասիրական օգնություն կազմակերպելուն: Բացի նշվածից՝ եկեղեցականները բառացիորեն հրետակոծության տակ շարունակում էին իրականացնել իրենց հոգեւոր առաքելությունը, իսկ նրանցից շատերն առաջնագծում ոգեւորում եւ ոգեշնչում էին մարտնչող զինվորներին:

Նոյեմբերի 9-ին եռակողմ համաձայնագրի ստորագրմամբ ավարտվեց Արցախյան երկրորդ պատերազմը: Ավարտվեց ծանր պարտություն, պարտվեցինք բոլորս, գուցե պարտվել էինք դեռ պատերազմը չսկսված: Այս մասին մենք չենք իմանա, կիմանան հաջորդ սերունդները, երբ պատմությունը՝ որպես արդար դատավոր, կայացնի իր վճիռը: Կորցրեցինք բոլորս, բայց ավելիով՝ հայ եկեղեցականը, որը կորցրեց ոչ միայն իր պատմական հայրենիքի՝ արյունով ու քրտինքով հետ բերվածի մի մասը, այլեւ հոգեւոր հայրենիքի մի մասը, որը նույնիսկ հայրենիքը հետ բերելուց հետո, հնարավոր է, կորսված լինի հավետ: Օրինակները շատ են: Բայց եղան եւ հաղթողներ, ո՛չ, ամենեւին էլ նկատի չունենք թշնամուն. այս պատերազմում չպարտվեց, ավելին՝ հաղթեց հայ զորականը, որի մարտի դաշտում գործած հերոսական գրվագներն այսօր եւս արժանի են «գրոյ յիշատակի»:

Եկեղեցին արձանագրեց, որ եռակողմ համաձայնագրի ստորագրման արդյունքում «կայացված որոշումները փոթորկել են ամենքիս հոգին» (Գարեգին Բ.): Եւ ահա այս փոթորկոտ ոգով եւ աղետահար հոգով պետք է թերթենք Արցախի պատմության հերթական էջը, որը, հուսանք, չի վերածվելու հայոց պատմության վերջին էջի: Այս ծանր պարտությունից




հետո որքան հոգեկան ուժ ու եռանդ, բազկի թափ ու մկանների պրկում է անհրաժեշտ լինելու հայ ժողովրդին՝ ծնկի չգալու համար: Արդյոք կունենանք բավական ներուժ՝ ճակատներս բաց ու բարձր աշխարհին նայելու, վերահաստատելու ազգերի մեջ հնագույններից մեկը լինելու, պետականություն եւ մշակույթ ունենալու, գոյություն եւ լինելության իրավունքը:

Պատմականորեն փաստված աներկբա իրողություն է, որ հայ ժողովուրդը տոկացել է բնական աղետների եւ թշնամու հարվածների ներքո, սակայն մշտապես հառնել է նույնիսկ Եղեռնի մոխիրներից, Սարդարապատում հաստատել իր լինելության իրավունքը՝ մշտապես աջակից եւ ոգեպնդող ունենալով Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցին, որն այսուհետ եւս ի գլուխ ունենալով Գարեգին Բ. 70-ամյա իմաստուն Հայրապետին, զորավիգ կկանգնի իր ժողովրդին տագնապի պահին, կամոքի հայ ժողովրդի վիշտը եւ հույս ու հավատ կներշնչի գալիք պայծառ օրերի նկատմամբ:

Ա. ԲԵՆ. Պ.





**Ն. Ս. Օ. Տ. Տ. ՊԱՐԵԳԻՆ Բ.
ՍԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԲ ԵՒ ԱՍԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ՈՒՂԵՐՁԸ ԺՈՂՈՎՐԴԻՆ**

(Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 10 նոյեմբերի, 2020 թ.)

Սիրելի հաւատաւոր զաւակներ,

Արցախեան հակամարտութեան հանգուցալուծման առնչութեամբ վերջին ժամերին մեր հայրենիքում տեղ գտնող զարգացումները, կայացուած որոշումները փոթորկել են ամէնքիս հոգին: Մեր հայեացքի առջեւ են անցնող աւելի քան երեք տասնամեակներին յանուն Արցախի անկախութեան պայքարած ու տքնած, իրենց կեանքն ընծայած մեր հայորդիները, վերջին 44 օրերի ընթացքում նահատակութեամբ իրենց կեանքը փառաւորած սիրելիները, պատերազմի տառապանքը յաղթահարող մեր քաջարի արցախահայուցիւնը, այս պահին առաջնագծում անյողդողդ կանգնած ամեն մի զինուորն ու հրամանատարը: Ծանր բաժին է ընկել մեզ բոլորիս, բայց նաեւ պատասխանատուութիւն՝ ի շահ հայրենիքի գործելու սթափ քաջութեամբ, հեռատես իմաստութեամբ եւ անսակարկ վճռականութեամբ:


Աղօթք է մեր սրտում յանուն համազգային մեր խոհեմութեան եւ միասնականութեան: Դարաւոր մեր պատմութեան դասերի քաջ գիտակցութեամբ եւ ազգային միաբանութեան պահպանման անհրաժեշտութեամբ կոչ ենք անում պահպանել հանգարտութիւնը եւ շտրուել մեզ փոթորկող զգացումների անհարկի դրսեւորումներին, զերծ մնալ բռնութիւններից եւ անկարգութիւններից: Առկայ ճգնաժամը պէտք է իր կարգաւորումը ստանայ Հայաստանի եւ Արցախի ռազմաքաղաքական ուժերի միասնական ջանքերով: Սիրելիներ, մեր պահուածքը երբեք չպէտք

է վտանգի առաջնագծում խրամատների մէջ իրենց սրբազան ծառայութիւնը քաջութեամբ շարունակող զինուորների կեանքը: Թիկունքն այս իրավիճակում առաւել, քան երբեւէ պէտք է ամուր մնայ, թիկունքում պիտի հաստատուն լինեն համերաշխութիւնն ու կայունութիւնը, որպէսզի կարողանանք միասնաբար լուծումներ ու ելքեր գտնել յանուն Արցախի ու Հայաստանի, յանուն մեր ժողովրդի անվտանգ եւ ապահով կեանքի:

Կոչ ենք ուղղում նաեւ Հայաստանի եւ Արցախի իշխանութիւններին անյապաղ հիմնաւոր եւ սպառիչ բացատրութիւններ ներկայացնելու մեր ժողովրդին ի հայրենիս, յԱրցախ եւ ի սփիւռս՝ կայացուած որոշումների եւ հայրենի մեր երկրի ապագայի վրայ դրանց ներազդեցութեան վերաբերեալ:

Մենք խոնարհուում ենք մեր հայրենեաց պաշտպանների յաղթական ոգու առջեւ եւ բարձրօրէն գնահատում ենք ազգիս իւրաքանչիւր զաւակի անձնուիրումն ու զոհողութիւնը: Մենք հաւատում ենք մեր ժողովրդի իմաստութեանը:

Աստուած պահապան մեզ եւ մեր հայրենիքին:



**Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ
ԱՐՑԱԽՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ ՀԱՅՐԵՆԻՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ
ՆԱՀԱՏԱԿՎԱԾ ՀԵՐՈՍՆԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻ ԱՐԱՐՈՂՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՅՔԻՆ**

(Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 22 նոյեմբերի, 2020 թ.)

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

«Ես իսկ եմ հարուստում եւ կյանք. ով հավատում է ինձ, թեպետ եւ մեռնի, կապրի»

(Հովհ. ԺԱ. 25):

Սիրելի՛ հավատավոր զավակներ,

Առ Աստված աղոթքով համախմբվել ենք այսօր՝ հարգանքի ու երախտի մեր տուրքը մատուցելու Արցախի ազատ ու անկախ կյանքի պաշտպանության համար զոհված մեր հերոսներին եւ խոնարհվելու նրանց լույս հիշատակի առջեւ:

Հայոց նոր գոյապայքարում նահատակված արիասիրտ մեր զինվորների ու զորահրամանատարների քաջագործությունները հավերժական վկայություններ են մեծ հայրենանվիրումի ու ազգասիրության: Արցախի Հանրապետության դեմ Ադրբեջանի նախաձեռնած պատերազմում, որ սանձազերծվեց Թուրքիայի սատարումով եւ վարձկան ահաբեկիչների ներգրավումով, մեր հերոս զավակները խիզախությամբ մարտնչեցին թշնամու անհավասար ուժի դեմ՝ ի գին իրենց կյանքի պաշտպանելով մեր հայրենիքը:

Այսօր մենք բոլորս սիրելի որդեկորույս ծնողների՝ սգակիր հայրերի ու մայրերի, այրիացյալ կանանց ու որբացած մանուկների հետ միասին մեր սրտերում կրում ենք մեր զոհված քաջորդիների կորստի մեծ վիշտը: Այս անասելի ցավի հետ մեկտեղ նաեւ հպարտություն ենք ապրում նրանց անզուգական խիզախության, անօրինակ սխրանքների եւ պանծալի քաջագործությունների համար: Մեր հերոսները մարտնչեցին

ամենայն անձնվիրություններ, արցախահայության ազատ ապրելու արդար իրավունքի եւ Հայաստան ու Արցախ աշխարհի խաղաղ, ապահով կյանքի եւ բարօր առաջընթացի տեսիլքով: Մեր նահատակների լույս հիշատակի առջեւ մենք այսօր կոչված ենք եւ պարտք ունենք արժեւորելու եւ իրականություն դարձնելու նրանց նվիրական երազներն ու տեսիլքները:

Սիրելիներ, դարերի հոլովությունում մեր ժողովուրդը բազում անգամներ մահվան հովիտների միջով է անցել, տեսել է ավեր, կոտորածներ, ցեղասպանություն: Սակայն բոլոր փորձությունների մեջ կարողացել ենք հաղթել մահվանը՝ հավատալով հարուցյալ Հիսուս Քրիստոսին եւ Նրա կենարար խոսքին. «Ով հավատում է Ինձ, թեպետ եւ մեռնի, կապրի»: Աստծուն ապավինած՝ մեր ցավն ու վիշտը մենք վերածել ենք ուժի ու զորության, մեր կորուստն ու սուգը վերափոխել ենք կամքի ու վճռականության: Անգամ ցեղասպանությունից հետո, երբ նահատակվեցին մեր ժողովրդի մեկ եւ կես միլիոն զավակներ, եւ կորցրեցինք պատմական մեր հայրենիքի մեծագույն մասը, երբ եղեռնից մազապուրծ բազում հայորդիներ տարագրվեցին ու սփռվեցին աշխարհով մեկ, մենք կարող եղանք Արեւելյան Հայաստանի այս փոքրիկ հատվածում աննկուն ոգով վերակերտել մեր պետականությունը, շենացնել հայրենիքը, Սփյուռքում գաղթօջախներ հիմնել եւ դրանք ծաղկեցնել կրթական, մշակութային, բարեսիրական ու ազգային հաստատություններով եւ եկեղեցիներով:

Այսօր պատերազմի հետեւանքով ունեցած ցավալի կորուստներով եւ ստեղծված ներքաղաքական բարդ պայմաններով մեր երկիրը հայտնվել է ծանր ճգնաժամի առջեւ: Այս դժվարին իրադրության մեջ հայրենիքի գերագույն շահի առաջ պետք է խոնարհվեն անհատական եւ խմբակային բոլոր շահերն ու հավակնությունները: Յուրաքանչյուրիս, ի մասնավորի պետական եւ քաղաքական գործիչների պարտքն է պատասխանատվության բարձր գիտակցությամբ հանձն առնել ամեն զոհողություն ստեղծված բարդ իրավիճակի հաղթահարման համար՝ հանուն մեր հայրենիքի կայունության, անվտանգության եւ վառ ու լուսավոր ապագայի:

Հայրենիքի համար իրենց կյանքը տված մեր զավակների անձնազոհության ու վառ հիշատակի հանդիման հարկ ի վերա մեր կա պահպանել մեր միասնականությունը, հեռու մնալ ատելություն ու թշնամանք հրահրող խոսքերից ու գործերից եւ զերծ պահել հայրենի մեր երկիրը նոր ցնցումներից ու վտանգներից: Հայրենասիրության, միաբանության, համերաշխության ու հանդուրժողության ոգով լծվենք արցախահայության


իրավունքների պաշտպանությունը, Հայաստանի եւ Արցախի նոր կյանքի կերտմանը:

Սիրելի՛ հավատավոր զավակներ, այս պահին, սրտաբուխ աղոթքը մեր շուրթերին, մեր գնահատանքը եւ մեր խոնարհումը բերենք հայրենիքի պաշտպանության սրբազան գործում անօրինակ սխրանքներ դրսևորած մեր բոլոր քաջարի զորահրամանատարներին, զինվորներին եւ աշխարհագորայիններին, այդ թվում՝ ազգային փոքրամասնությունների արիասիրտ զավակներին: Աղոթենք զոհված մեր հերոս որդիների հոգիների հանգստության համար՝ հայցելով ամենազոր Սուրբ Հոգու մխիթարությունը նրանց ընտանիքներին, ծնողներին, հարազատներին եւ համայն մեր ժողովրդին: Հայրենյաց պաշտպան մեր նահատակները, իրենց անձերը զոհելով հանուն ազգի ու հայրենիքի, անմահացան եւ արժանի պիտի դառնան երկնային հավիտենական կյանքին՝ ըստ մեր Տիրոջ խոստման. «Ես իսկ եմ հարություն եւ կյանք. ով հավատում է Ինձ, թեպետ եւ մեռնի, կապրի»: Առ Աստված աղոթքով հայցենք բարվոք ապաքինում վիրավորված մեր զինվորներին, նաեւ ամենակալ Տիրոջ խնամքն ու զորակցությունը՝ գերեվարված մեր զավակներին՝ մաղթելով ազատություն եւ բարի վերադարձ հայրենիք:

Թող Աստծու սերը, շնորհները եւ օգնականությունը հովանի լինեն մեր հայրենիքին եւ աշխարհափյուռ մեր ժողովրդին, այսօր եւ միշտ եւ հավիտյանս. ամեն:

ԳԱՐԵԳԻՆ Բ.

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ





Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ
ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ՍԵՊՈՒՀ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԶՈՒԼՁՅԱՆԻ
ՀՈՒՂԱՐԿԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԱՌԻԹՈՎ

(Սուրբ Գրիգոր Նարեկացի եկեղեցի, Վանաձոր, 24 նոյեմբերի, 2020 թ.)

Գերաշնորհ, հոգեշնորհ, արժանապատիվ հայրեր,
Սիրելի սգակիր հավատացյալներ,

Կորստի ծանր զգացումով ու խոր վշտով սգում ենք մեր Եկեղեցու բազմավաստակ հոգեւորականի՝ Գուգարաց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Սեպուհ Արքեպիսկոպոս Զուլչյանի անժամանակ մահը: Ամենքիս համար դժվարին այս պահին Մեր սրտաբուխ աղոթքները թող ուղեկից լինեն լուսահոգի Սրբազանին դեպի երկնային հավիտենական կյանք նրա ճանապարհին:

Սեպուհ Սրբազանին ճանաչել ենք հոգեւոր ճեմարանում նրա ուսանողական տարիներից: Նա ծնվել է Արեւմտյան Հայաստանում՝ Փոքր Հայքի Մալաթիա քաղաքում, ապա մանուկ հասակում ծնողաց հետ ներգաղթել հայրենիք եւ բնակութիւն հաստատել Գյումրի քաղաքում: Կյանքի ողջ ընթացքին Սրբազանի սիրտն ու հոգին անքակտելիորեն կապված մնացին իր ծննդավայրին՝ մեր պատմական հայրենիքին, մեր սրբություններին, մեր հայրերի ստեղծած հարուստ ժառանգութեանը:

Դեռեւս ուսանողական տարիներից Սրբազանն առանձնանում էր իր եռանդուն ու աշխույժ բնավորութեամբ, մեր ժողովրդի բարօրութեանն ու մեր Սուրբ Եկեղեցու պայծառութեանն իր ջանքերը բերելու ազնիվ ձգտումներով: Ավարտելով հոգեւոր ուսումնառութիւնը՝ լուսահոգի Սրբազանը երջանկահիշատակ Վազգեն Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնութեամբ ձեռնադրվեց կուսակրոն հոգեւորական: Նա վարչական տարբեր հանձնառութիւններ ստանձնեց Մայր Աթոռում, հովվական սպասավորութիւն իրականացրեց հայրենիքում եւ արտերկրում՝ իր կարողութիւններն ի սպաս դնելով մեր Սուրբ Եկեղեցու առաքելութեան արդյունավորմանը:

1997 թվականին, երջանկահիշատակ Գարեգին Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությունը, լուսահոգի Սրբազանը ծառայության կոչվեց Գուգարաց թեմի առաջնորդի պաշտոնին եւ արժանացավ եպիսկոպոսական օծման՝ նոր ու առավել պատասխանատու հանգամանքով շարունակելու իր ծառայությունը Բարձրյալն Աստծուն ու հավատավոր մեր ժողովրդին: Բարեհիշատակ Սեպուհ Սրբազանը անսպառ եռանդով քարոզեց Աստծու խոսքը իր հոգեւոր առաջնորդությանը վստահված հավատավոր հայորդիներին, Բարձրյալի եւ մեր հայրերի հանդեպ պատասխանատվության բարձր զգացումով կարելին ի սպաս դրեց՝ վերարթնացնելու հոգեւոր կյանքը տիրախնամ թեմում: Շուրջ քառորդ դար նվիրյալ ծառայությամբ Սրբազանը նախաձեռնեց ու քաջալերեց թեմի տասնյակ վանքերի ու եկեղեցիների նորոգության ու վերակառուցման աշխատանքները: Նա եղավ մեկն այն երջանիկ առաջնորդներից, որոնց պաշտոնավարության շրջանում՝ խորհրդային Միության փլուզումից հետո, լուրջ աշխարհում Աստծու օրհնությամբ վերստին դողանջեցին զանգեւոր մեր վանական համալիրների, բացվեցին դռները փակված եկեղեցիների, շարունակվեցին շարականն ու աղոթքը հայ հոգեւորականի մեր բոլոր սրբավայրերում:

Հոգեւույս սրբազանը ձեռնամուխ եղավ նաեւ հասարակական ու բարեսիրական ծրագրերի իրականացմանը: Նրա նախաձեռնությամբ հիմնվեց «Ծիծեռնակ» ճամբարը, որի հարկի ներքո տարիներ շարունակ ամառային իրենց հանգիստն անցկացրեցին բազմաթիվ հայորդիներ կարիքավոր ընտանիքներից: Գիտենք, թե ինչպիսի ուշագրություն ու սեր էր տածում նա մանկական այդ ճամբարի հանդեպ եւ հետեւողականորեն հոգ տանում, որ հաստատության հարկի ներքո հանգրվանած մանուկների ու պատանիների ճամբարային օրերը հագեցած լինեն կրթական ու դաստիարակչական միջոցառումներով:

Վերջին տարիներին Սրբազանի նախանձախնդրությամբ ի կատար ածվեց «Ձեռք մեկնիր եղբորդ» բարեգործական ծրագիրը, որի շրջանակներում իր անձնական հեղինակության ու հարաբերությունների շնորհիվ կարողացավ բնակարաններով ապահովել տասնյակ ընտանիքների՝ իբրեւ աջակցություն Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու:

Լուսահոգի Սրբազանն իր կարողություններն ու փորձառությունը ծառայեցրեց նաեւ Սուրբ Էջմիածնի շինությանն ու պայծառությանը՝ հանձնառություններ ստանձնելով Մայր Աթոռի տարբեր հանձնախմբերում եւ

անդամակցելով Գերագույն Հոգեւոր Խորհրդին: Նրա վաստակը մեր Եկեղեցու անդաստանում Մենք գնահատել ենք՝ շնորհելով հոգեւույս Սրբազանին Արքեպիսկոպոս Զուլջյան պատիվ:

Սեպուհ Արքեպիսկոպոս Զուլջյանի վախճանով մեր Եկեղեցին կորցրեց իր նվիրյալ ու քաջակորով սպասավորին: Սրբազանի մահվան կապակցությամբ այս օրերին Մենք ցավակցություններ ենք ստացել մեր Նվիրապետական Աթոռների գահակալներից՝ Արամ Ա. Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսից, Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարք Սահակ Արքեպիսկոպոս Մաշալյանից, Թեմակալ առաջնորդներից, մեր բազմաթիվ հավատացյալ հայորդիներից:

Ի խորոց սրտի Մեր աղոթքն է, որ Բազումողորմ Տերն ամենառատ Իր ողորմությամբ գթա հավատարիմ Իր ծառային՝ նորոգ հանգուցյալ Տ. Սեպուհ Արքեպիսկոպոս Զուլջյանին եւ երկնային երանական հանգրվաններում խաղաղության մեջ ընդունի նրա լույս հոգին՝ արժանացնելով փառաց անթառամ պսակին: Ամենքիս սգակիր սրտերին մխիթարություն թող լինեն սիրելի Սեպուհ Սրբազանի աստվածասեր կյանքի բարի հիշողություններն ու կենարար պատգամը Հիսուս Քրիստոսի. «Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում ձեզ, որ, ով Իմ խոսքը լսում է ու հավատում է Նրան, ով Ինձ առաքեց, ընդունում է հավիտենական կյանքը» (Հովհ. Ե. 24):


Հայցում ենք, որ բարեգութն Աստված Սուրբ Հոգու մխիթարությամբ սփռվի հոգեւույս Սրբազանի ընտանիքի անդամների՝ եղբայրների, քույրերի, հարազատների եւ համայն վշտացելոց սրտերը:


Սրբազանի լույս հիշատակը մշտապես պիտի ապրի Մեր, հոգեւորականաց, մեր Սուրբ Եկեղեցու հավատացելոց հոգիներում ու սրտերում:

«Յիշեսցէ Տէր զհոգի ծառային Իւրոյ եւ հանգուցէ զնա ի լոյս երեսաց աստուածութեան Իւրոյ. ամէն»:

ԳԱՐԵԳԻՆ Բ.

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ





ԳԵՐԱԳՈՅՆ ՂՈԳԵԻՈՐ ԽՈՐՀՐԴԻ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ

(Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 27 հոկտեմբերի, 2020 թ.)

Արցախի Հանրապետությունն արդեն մէկ ամիս դիմակայում է Ադրբեջանի զինուած ուժերի լայնածաւալ յարձակմանը, որին բացայայտ իր մասնակցութիւնն է բերում Թուրքիան՝ ներգրաւելով ինչպէս միջազգային ահաբեկչական խմբաւորումների վարձկան զրոհալիւնների, այնպէս էլ թուրքական բանակի յատուկ ջոկատալիւնների եւ մատակարարելով գերժամանակակից մեծաքանակ զէնքեր: Ադրբեջանի ռազմաֆաղափական ղեկավարութիւնը, այս ընթացքում կիրառելով իր ողջ զինանոցը, այդ թւում եւ միջազգայնօրէն արգելուած զինատեսակները, թիրախաւորում է Արցախի բնակավայրերը, նաեւ խնամատարական, կրթական, մշակութային եւ պաշտամունքային նշանակութեան բազմաթիւ շինութիւններ, ընդհուպ՝ Ստեփանակերտի ծննդատունը, ինչն աննախադէպ վարձագիծ է՝ անգամ ահաբեկչական խմբաւորումների վարձագծի տեսանկիւնից: Հայրենիքի պաշտպանութեան սրբազան պայքարում ունենձ հարիւրաւոր վիրաւոր եւ նահատակ զինուորականներ, բնակավայրերի հրետակոծութեան հետեւանձնով կան բազում վիրաւորուածներ եւ զոհեր խաղաղ բնակչութեան մէջ:

Արցախի ժողովրդի հանդէպ իրականացուած այս ռմրագործութիւնների համար Ադրբեջանի Հանրապետութեան նախագահ Իլհամ Ալիււը, ինչպէս նաեւ այդ ռմրագործութիւններին աջակցող եւ անմիջական մասնակից ռազմաֆաղափական միւս գործիչները պէտք է կանգնեն միջազգային դատական ատեանների առջեւ եւ պատասխանատուութեան ենթարկուեն իբրեւ մարդկութեան դէմ ուղղուած յանցագործութիւնների կազմակերպիչներ:


Գերագոյն հոգեւոր խորհուրդը կոչ է անում միջազգային հանրութեանը, ի մասնաւորի ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահող երկրներին, հաւատարիմ հակամարտութեան խաղաղ ճանապարհով կարգաւորման սկզբունքներին, առաւել գործնական, ազդեցիկ ու վճռական միջոցներ գործադրել արիւնահեղութեան կասեցման, տարածաշրջանում խաղաղութեան վերահաստատման

և արցախահայության ինֆնորշման և պարզապես մարդկանց կեանքի, ապրելու իրատունքի իրացման համար: Արցախի հարցը ռազմական ճանապարհով վճռելու, արցախահայութեանը բնաջնջելու Ադրբեջանի ֆաղաֆականությամբ վերստին փաստում է այն իրողությունը, որ Արցախի համար չի կարող լինել անվտանգության երաշխիք Ադրբեջանի կազմում:

Գերագույն հոգեւոր խորհուրդը բարձրօրէն գնահատում է Մինսկի խմբի համանախագահող երկրների հետեւողական ջանքերը՝ ուղղուած մարդասիրական հրադադարի հաստատմանը և պահպանութեանը, որը երրորդ անգամը լինելով, բացայայտ խախտում է Ադրբեջանի կողմից: Կիսայոյս ենք, որ Մինսկի խմբի համանախագահողների կողմից կը գտնուեն արցախեան հակամարտութեան հանգուցալուծման ուղիներ, և մարդկային անմեղ կեանքները չեն զոհաբերուի սոսկ աշխարհաֆաղաֆական շահերին: Այսօր Արցախը կարիք ունի համայն աշխարհի հումանիտար աջակցութեան:

Աղօթում ենք, որ Տէրն օրհնի Հայաստան և Արցախ մեր հայրենի երկիրը, ամենագօր Իր Սուրբ Աջի հովանու ներքոյ յոյսով ու հաւատով զօրաւոր ու միասնական պահի մեր ժողովրդին և զօրացնի բազուկը հայրենեաց մեր ֆաջարի պաշտպաններին:

Թող ամենողորմ Աստուած խաղաղութեան մէջ պահի համայն աշխարհը՝ զերծ պատերազմի արհաւիրքներից, ցաւերից ու վշտերից:



ԳԵՐԱԳՈՅՆ ՀՈԳԵՒՈՐ ԽՈՐՀՐԴԻ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ

(Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 16 նոյեմբերի, 2020 թ.)

1. Վերջին շաբաթներին, Արցախի դեմ Ադրբեջանի, Թուրքիայի եւ միջազգային անաբեկչական ցանցերի կողմից սանձազերծուած պատերազմական գործողութիւնների պայմաններում, մեր հաւատաւոր ժողովուրդը հայրենիքում եւ սփիւտում ապրեց անհուն ցաւով եւ աղօթքով առ Աստուած՝ ուժերի ներածին չափով ջանալով աշակցել արցախահայութեանը, Արցախի Պաշտպանութեան բանակին եւ ի լուր աշխարհի բարձրաձայնել Արցախի ազատ ու անկախ կեանքի իրաւունքի մասին՝ շարունակելով ապաւինել մեր զինուորի յաղթական ոգուն:

2. Անվիճարկելի ու կենսական է հրադադարի պահպանումը եւ տարածաշրջանում տեսական ու յուսալի խաղաղութեան ապահովումը: Այնուամենայնիւ, հրադադարի վերաբերեալ նոյեմբեր 10-ի եռակողմ յայտարարութիւնը, դրանից բխող հետեւանմաները եւ առկայ անորոշութիւնները, Արցախի մի հատուածի կորստի փաստը յանկարծակիի բերեցին հանրութեանը՝ յանգեցնելով արդար ընդվզման, ինչն իր հերթին յղի է մեր երկրի ներքաղաքական ապակայունացմամբ եւ սպառնում է կանգնեցնել հայրենիքը նոր վտանգների առջեւ:

3. Այս օրերին կոչուած ենք տուրք չտալ մեր զգացմունքներին եւ առաջնային կերպով երախտիքի բացառիկ դրսեւորմամբ յարգել յիշատակը մեր հերոս զաւակների, որոնք իրենց կեանքն ընծայեցին յանուն մեր հայրենիքի, եւ զօրակցել նրանց ընտանիքներին ու մեր ողջ ժողովրդին, ինչպէս նաեւ պատշան կերպով դիմաւորել 44 օր շարունակ, ի զին ամեն զրկանքի, հերոսական մարտեր մղած ֆաշարի մարտիկներին:

4. Անցնող այս ժամանակահատուածում կայացուած որոշումների, հակամարտութեան այսօրինակ հանգուցալուծման եւ ազգային համերաշխութեան վերականգնման համար, միմիայն օրինականութեան նկատմամբ անվերապահ յարգանքով, պէտք է պատասխանատւութիւն կրեն բոլոր պատկան մարմինների իրաւասու պաշտօնեաները՝ չբացառելով նաեւ հրաժարականների հաւանականութիւնը:

5. Յարկ է պահպանել իրատունի գերակայությունը եւ ֆաղափական բոլոր գործընթացները լուծման առաջնորդել ՀՀ Սահմանադրութեան շրջանակներում: Ընդամիսն առկայ պայմաններում անթոյլատրելի է աւելացնել մեր ժողովրդի ցար՝ աւելի վտանգելով պետութեան եւ մեր ժողովրդի ապագան: Առաջին հերթին իշխանութիւնները, խորհրդարանական ընդդիմութիւնը եւ բոլոր հասարակական-ֆաղափական միատրները պէտք է անյապաղ ձեռնամուխ լինեն երկխօսութեան՝ համագործակցութեան մթնոլորտում լուծումներ գտնելու խնդիրների կարգաւորման համար: Որեւէ շեղում այս ուղուց չի կարող ընդունելի նկատուել մեր ժողովրդի ու եկեղեցու կողմից: Ստեղծուած իրավիճակում անհրաժեշտ է ի գին ամենի պահպանել ազգային մեր միասնականութիւնը եւ հեռու մնալ այն խաթարող ֆայլերից:

6. Հետեւելով այս օրերին հրապարակաւ հնչող պաշտօնեաների ելոյթներին, Երեսմում տեղի ունեցող ընդդիմադիր ուժերի հանրահաւաքներին եւ ցոյցերին՝ այսու յորդորում ենք ՀՀ վարչապետին, իշխանութեան ներկայացուցիչներին եւ ընդդիմութեանը՝ գերծ մնալ ատելութիւն եւ թշնամանք հրահրող արտայայտութիւններից, սպառնալիքներից ու նմանօրինակ գործողութիւններից: Բռնութեան ցանկացած դրսետում, կորստի ցար կրող մեր ժողովրդին առաւել վնասեցնող եւ բորբոքող արարք պէտք է արժանանան պարսաւանի: Դատապարտում ենք Ազգային ժողովի նախագահի եւ որեւէ այլ անձի նկատմամբ կիրառուած բռնութիւնները, միեւնոյն ժամանակ ֆաղափական ենթատեքստով որեւէ բռնանշում:

7. Մեր յորդորն է Ազգային ժողովին եւ յատկապէս մեծամասնական խմբակցութեանը, երկրի շահերի բարձր գիտակցութեամբ ֆաղափական պատասխանատուութիւն դրսետելու եւ վերականգնելու ԱԺ բնականոն աշխատանքը՝ իրավիճակի թելադրութեամբ դրանից բխող բոլոր պարտաւորութիւններով հանդերձ: Յարկ է ականջալուր լինել ժողովրդի ձայնին եւ հաղորդ հանրութեան հիասթափութիւններին եւ պահանջներին՝ գործել անձնական եւ կուսակցական շահերից վեր, պետական մտածողութեան բարձր գիտակցութեամբ ու պատասխանատուութեամբ: Հայրենիքն այսօր կարիքն ունի անյապաղ ֆայլերի ձեռնարկման:

8. Ամենիս սրբազան պարտքն է Հայաստանում եւ Սփիւռքում մեր գործուն ներդրումը բերելու այս վիճակի յաղթահարմանն ի նպաստ: Յանձնառութիւն պիտի դրսետուենք նաեւ ըստ ամենայնի զօրակցելու արցախահայութեանը եւ Արցախի իշխանութիւններին վերակազմակերպելու մեր ժողովրդի

զաւակների կեանքը: Այդ ուղիով պէտք է պաշտպանենք հայրենի հողի վրայ ապրելու մեր իրաւունքը: Արցախը չպէտք է հայաթափուի:


9. Առանձնակի ցաւով ենք անդրադառնում յանձնուելիք տարածքներում մեր ինքնութեան բազմադարեայ վկաների՝ մատուռների, եկեղեցիների ու վանքերի, ամրոցների, պատմամշակութային կոթողների ու թանգարանների որբացման իրողութեանը: Կոչ ենք անում պատկան պետական մարմիններին եւ սփիւտեան կարող ուժերին, համախորհուրդ Հայոց եկեղեցու հետ, ամեն ջանք ի գործ դնելու՝ փրկելու դրանք Ադրբեջանի հայատեաց ֆաղափականութեան հետեւանով յետագայ աւերից:

10. Ամենայն Հայոց Կաթողիկոսը Գերագոյն հոգեւոր խորհրդի զօրակցութեամբ պիտի շարունակի իր ջանքերը ներդնել երկրում միասնականութեան ու համերաշխութեան մթնոլորտի հաստատման եւ անհրաժեշտ գործընթացները օրինական ուղիներով առաջնորդելու համար:

Մեր խոնարհումն ենք բերում հայրենիքի պաշտպանութեան սրբազան գործում անօրինակ սխրանքներ դրսեւորած մեր բոլոր ֆաջարի զինուորներին, զօրականներին եւ աշխարհագօրայիններին: Նաեւ աղօթում ենք ռազմական յանցաւոր գործողութիւնների հետեւանով զոհուած հայորդիների հոգիների հանգստութեան համար՝ հայցելով ամենագօր Սուրբ Հոգու մխիթարութեան ու սփոփանքի շնորհները նահատակուած մեր զաւակների ընտանիքներին, հարազատներին եւ մեր ողջ ժողովրդին: Ապափինում ու հոգու նորոգութիւն ենք մաղթում վիրատուրուած մեր զինուորներին՝ հայցելով Տիրոջ զօրակցութիւնն ու օգնականութիւնը նրանց:

Կոչ ենք ուղղում մեր ժողովրդի զաւակներին այս դժուարին պայմաններում պահպանել զգօնութիւնը, ողջախոհութիւնը եւ հաւատն ու վստահութիւնը, որ միաբան ընթացքով մենք ի զօրու ենք դուրս գալու ստեղծուած բարդ իրավիճակից, յաղթահարելու խնդիրներն ու յառնած մարտահրաւիրները եւ միասնականութեամբ կերտելու հզօրութիւնը մեր հայրենիքի, նորոգ յաղթական առաջընթացը եւ լուսաւոր գալիքը մեր ժողովրդի:

Աղօթում ենք, որ ամենողորմ Տէրն Իր սիրով ու օրհնութեամբ անսասան, ապահով ու խաղաղ պահի հայրենի մեր երկիրը՝ տոկունութիւն եւ կորով պարգեւելով մեր ողջ ժողովրդին:



**Տ. ՎԱԶԳԵՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԻՐՉԱԽԱՆՅԱՆԻ ՔԱՐՈՉԸ՝
ԽՈՍՎԱԾ Ս. ԳԱՅԱՆԵ ՎԱՆՔՈՒՄ ՄԱՏՈՒՅՎԱԾ ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳԻՆ**

(1 նոյեմբերի 2020 թ.)

Յանուն Հօր եւ Որդոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

«Մի՛ երկնչիւր, միայն հավատա՛»
(Ղուկ. Ը. 50):

Սիրելի՛ հավատացյալ քույրեր եւ եղբայրներ,

Համատես Ավետարանները ներկայացնում են, որ Հիսուսի քարոզչության շրջանին նրան մոտեցավ Հայրոս անունով մի ժողովրդապետ եւ ասաց, թե իր աղջիկը հիվանդ է եւ խնդրեց գալ ու աղոթել, որ նա փրկվի: Բայց մինչ Հիսուս պատրաստվում էր այցելել ժողովրդապետի տուն, նրա ծառաները եկան եւ ասացին. «Վարդապետին այլեւս մի՛ անհանգստացրու, որովհետեւ քո աղջիկը մահացել է»: Հիսուս, տեսնելով այս պատվարժան մարդու ընկճված հոգեվիճակը, ասաց. «Մի՛ վախեցիր, միայն հավատա՛, եւ նա կապրի» (Ղուկ. Ը. 50): Ու այցելելով նրանց տուն՝ Հիսուս վերցրեց աղջկա ձեռքը, եւ կենդանության շունչը վերադարձավ աղջկան, ու նա կենդանացավ (հմմտ. Ղուկ. Ը. 40—42, 49—55):

Եւ ահա, սիրելիներ, այս ավետարանական պատմությունը շատ նման է մեր ժողովրդի վիճակին, երբ Արցախում եւ Հայաստանի սահմանների մոտ կենաց ու մահու պայքար ենք մղում. մեր ներսում երկյուղն ու վախն են ոչ այնքան թշնամու նկատմամբ, ոչ էլ կյանքը կորցնելու, որքան՝ հայրենիքը չկորցնելու համար: Եւ այստեղ է, որ կրկին իր ձեռքերը բացած, ժպտադեմ պիտի նայի մեզ Քրիստոս ու ասի. «Մի՛ վախեցեք, հավատացե՛ք ու դուք ապրելու եք» (հմմտ. Ղուկ. Ը. 50):

Այս պահին երեւի թե տեղին է, որ ազգի ապրումները, կորուստներն ու փորձությունները համեմատենք Աստվածաշնչի մեծ կերպարներից մեկի՝ Հոբի պատմության հետ: Հորը նույնպես կորցրեց իր զավակներին,

ինչպես մենք ենք կորցնում նահատակվող զինվորներին, կորցրեց իր ունեցվածքն այնպես, ինչպես մեր Արցախի ժողովուրդը կորցնում է դարերով կերտած շենքերն ու ծաղկուն այգիները, որ այս օրերին փշուր-փշուր են լինում թշնամու ականներից: Այսօր էլ ոմանք փորձում են մեղադրել մեզ տարբեր մեղքերի մեջ, ինչպես այդ օրերին Հոբի բարեկամներն էին վարվում նրա հետ: Ծանր փորձություն է տրվում մեզ, որ հեռանանք մեր Աստծուց, երգահանի պես նորից ասենք. «Ո՛ր էիր, Աստված, երբ կոտորվում էր մի ողջ ժողովուրդ»: Բայց ճիշտ հակառակը պատահեց, այսօր տաճարները լեփ-լեցուն են հավատացյալներով, այսօր Հայոց Եկեղեցին առավոտ թե գիշեր զանգեր է ղողանջեցնում, աղոթք ու պատարագ հնչեցնում ու հավաքում իր ժողովրդին՝ գոտեպնդելու եւ մեկ անգամ եւս իր հավատարմությունը հայտնելու մեր հայրերի Աստծուն: Եւ դրա համար Աստված այս արհավիրքի մեջ օրհնում է մեզ եւ ուժ ու քաջություն տալիս, որպեսզի կարողանանք հաղթել եւ պահպանել հողը հայրենի:

Զմոռանանք, սիրելիներ, որ հողն իր մեջ զորություն ունի: Հնամենի Արցախի՝ հայկական հողի զորությունը փոխանցվում է մեր զինվորներին, որ կարողանան դիմադրել եւ հաղթել թշնամուն: Ինչպես Արշակ թագավորը, պարսից արքունիքում քայլելով հայոց հողի ու ջրի վրայով, ուժ եւ զորություն էր ստանում, այդպես այսօր Արցախի հողն օգնում է մեր զինվորներին եւ հետ շարտում հակառակորդին, թուլացնում նրա ամբողջ ուժն ու կարողությունը: Այդ հողի ուժն է մեզ այսօր պահում: Մենք այլեւս չենք ուզում հայրենիքը երգելով սիրել, առանց այդ էլ Արաքսի այն կողմում թողել ենք մի մեծ հայրենիք, որի կարոտը շարունակում է ապրել մեր սրտերում:

Երեսուն տարի առաջ Աստված Արցախը վերադարձրեց Մայր Հայրենիքին. ունեցանք հաղթանակներ ու նոր ձեռքբերումներ, սակայն ունեցանք բացթողումներ, որոնք ճակատագրական եղան մեր ժողովրդի համար: Զկարողացանք առավել ուժեղ Արցախ, հզոր բանակ ու ամուր սահմաններ կերտել, բայց Աստծուն փառք՝ ունենք այն, ինչ ունենք:

Եւ այստեղ պիտի գիծ քաշենք անցյալի ու ներկայի միջեւ: Զենք կարող ապագայի մասին խոսել ու ապրել անցյալի հոգսերի ծանրության տակ, անցյալը անցած է, այնտեղից պիտի վերցնենք լավը, այն, ինչ օգնելու է մեզ առաջ գնալու ու նորանոր հաջողություններ կերտելու:

Այս պահին ցանկանում եմ հիշեցնել մեր երջանկահիշատակ Գաբեգին արքեպիսկոպոս Հովսեփյանցի մի կարեւոր խոսքը. «Ո՛վ հայ

ժողովուրդ, դու հավատա՛քո նախնիների Աստծուն, հավատա՛քո պատմությանը, ու դու չես մեռնի»։ Մենք հավատում ենք մեր հայրերի Աստծուն, հավատում ենք մեր պատմությանը եւ չենք մեռնի. ապրելու ենք՝ ապրեցնելու համար։

Ինչպես հնում մարտիրոսների արյունը հիմք դարձավ Եկեղեցուն, այդպես եւ այսօրվա մեր նորօրյա նահատակների արյունն է հիմք դառնում նոր, առավել հզոր ու միացյալ Հայաստանի՝ նորանոր տեսլիքներով ու ձեռքբերումներով։

Սիրելի՛ հավատացյալներ, երբ մեր եղբայրներն ու քույրերն Արցախի ու Հայաստանի սահմաններում իրենց կյանքն են վտանգում ի պաշտպանություն հայ ժողովրդի, Առաքելական Սուրբ Եկեղեցին աղոթքով եւ գործնական այլ միջոցներով շարունակում է սատարել իր ժողովրդին տառապանքների ու հերոսության այս օրերին։ Եւ այդ Եկեղեցու գլուխ կանգնած է Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ.-ն, որի գահակալության 21-րդ տոնակատարությունն է այսօր։

Մեր սիրելի Վեհափառն Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդության տարիներին Սոււմգայիթից եւ Բաքվից փախստականներին, երկրաշարժից տուժածներին, արցախյան պատերազմի հետեւանքով զոհվածների ու վիրավորների ընտանիքներին աջակցեց, ամոքեց շատերի կոտորված սրտերը, ձեռք մեկնեց ժողովրդին եւ իր ազգի կողքին կանգնեց։ Պատմում են, թե ինչպես այդ օրերին Գարեգին արքեպիսկոպոսը Երեւանից հասնում էր՝ Հայաստանի հյուսիսային ու հարավային սահմաններ, օրհնում զինվորներին, որպեսզի նրանք կարողանան քաջաբար պաշտպանել հողը հայրենի։ Իսկ երբ ստանձնեց հայրապետական գահը, տեսավ Արցախի ապրիլյան գոյամարտը եւ այսօր՝ արցախյան մի նոր հերոսամարտ։ Ու Վեհափառը կրկին լծվեց հայրական խնամատարության գործին Հայաստանում, Արցախում, Սիւնուքում, կոչերով դիմեց աշխարհի տարբեր ժողովուրդներին, երկրների ղեկավարներին, հոգեւոր պետերին՝ մեր ժողովրդի ձայնը լսելի դարձնելու համայն աշխարհում։ Վեհափառի՝ մեր ժողովրդի ապրելու իրավունքը բարձրաձայնող կոչերն աշխարհին նմանեցնում եմ Խրիմյան Հայրիկի՝ ժամանակին արտահայտած մի կարեւոր մտքի. «Պիտի ձեռք բերենք իրավունք, որ իրավունք ունենանք»։ Այսօր մեր Հովվապետի եւ Քահանայապետի գլխավորությամբ թակում ենք աշխարհի առաջնորդների դռները, որպեսզի իրավունք ունենանք իրավունք ունենալու, որպեսզի հնամենի քրիստոնյա մի


ժողովուրդ, որ հազարամյակներով ապրել է իր բնօրրանում, որտեղ քարոզել են Հիսուսի առաքյալներն ու աշակերտները, սրբացրել այդ հողը, որ այն շարունակի մնալ քրիստոնեական եւ պատկանի այն ժողովրդին, որին Աստված ի վերուստ պարգեւել է այդ սուրբ հողը:


Վեհափառ Հայրապետ, մաղթում ենք Ձերդ Սրբությանն արեւշատ տարիներ: Շարունակեք Ավետարանում նշված Քաջ հովվի պես առաջնորդել մեր Հայոց Եկեղեցին ու մեր ժողովրդին Հայաստանում եւ Սփյուռքում: Աղոթում ենք Ձերդ Սրբության արեւշատության համար, որ ուղղափառ հավատքով առաջնորդեք երկար տարիներ, որ ազգս հայոց շարունակի Սբ. Գրիգոր Լուսավորչի աջի վրա հիմնված իր ներկան եւ հերոսական ապագան կերտել, որ շարունակենք ապրել Հիսուսով, սիրենք ու շարունակենք մեր ամենօրյա կյանքը Հիսուսով: Եւ Նրա մեծ գործությամբ ոչ միայն ապրենք, այլ նաեւ այդ մեծ տեսիլքն ու երազանքներն իրականացնենք, որոնք շատ-շատ երիտասարդների կյանքում մնացին չիրականացած:

Հանուն մեր միաբանության մեկ անգամ եւս շնորհավորում ենք Վեհափառ Հայրապետի գահակալության 21-րդ տարեդարձը եւ մաղթում գահակալության խաղաղ տարիներ:

Սիրելի ժողովուրդ, «Մի վախեցիր, փոքրիկ հոտ, որովհետեւ ձեր Հայրը բարեհաճեց տալ ձեզ արքայությունը» (Ղուկ. ԺԲ. 32) ավետարանական պատգամով շարունակենք հավատալ մեր հայրերի Աստծուն, Հայոց բանակի հաղթանակին, Հայաստան պետության հարատեւությանն ու քաջաբար պայքարենք մեր հավերժ ապրելու իրավունքի համար:

Աստված օրհնի մեր ժողովրդին, մեր բանակն ու ազգը, այժմ եւ միշտ եւ հավիտյանս հավիտենից. ամեն:





ՄԱՏԹԵՈՍ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ ՔԱՐՈԶՆԵՐԸ

Ակիգբը՝ նախորդի

ՄԱՏԹԵՈՍ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ ՔԱՐՈԶԸ ՊԱՀՔԻ ԱՌԱՋԻՆ Գ. ՇԱԲԱԹԻ
«ԱՐԴԱՐԻՆ ԱՐԴԱՐՈՒԹԻՒՆԸ ԻՐ ՎՐԱՅ ՊԵՏԻ ԸԼԼԱՅ» ԽՕՍՔԻՆ ՄԱՍԻՆ

Մեր նիւթական բնութիւնը կրկնակի փոփոխութիւն ունի. մէկը՝ նման փոփոխում, իսկ միւսը՝ հակառակ:

Նմանը՝ ինչպէս այսօր երեկոն նման է միւս օրուան, քանի որ նոյնպէս լոյս է տարուան բոլոր օրերը:

Իսկ հակառակը՝ որովհետեւ լոյսը գիշերի կը փոխուի, եւ գիշերը՝ ցերեկի:

Այս նախախնամութիւնն Աստուած¹ ըրաւ, որպէսզի հակառակին փոխուելով՝ մարմինը հանգստանայ: Իսկ նմանին փոխուելով՝ էութիւնը կը մնայ, այդպէս ալ մարդուն գործը փոփոխում ունի երբեմն նմանին, եւ երբեմն ալ հակառակին, ինչպէս բարի գործերէն մեղքի ու անօրէնութեան, իսկ մեղքերէն՝ արդարութեան: Նմանապէս սա ալ օգուտ է մարդուն, քանի որ սրբութենէ սրբութիւն շարժուելով՝ հոգիին էութիւնը կենդանի կը մնայ, իսկ հակառակի պարագային, այսինքն՝ որ մինչեւ հիմա մեղքի մէջ եղանք, երբ հիմա դառնանք չարէն դէպի բարին, մեր հոգին տառապանքներէն կը հանգստանայ: Իսկ այս միակ բանով օրինակին նմանինք, քանի որ եթէ մինչեւ հիմա բարիք գործած ենք, ու հիմա սրբութեան ժամանակ է, չարին կը փոխուինք՝ գիտնալով սխալ գիտութեամբ, թէ ուրիշներուն սրբութիւնը մեզի կը հաղորդուի, այդ պատճառով այսօր մարգարէն կ'ըսէ. «Արդարին արդարութիւնը իր վրայ պիտի ըլլայ»²:

Այստեղ կը թուի, թէ օրինադրելով կ'ըսէ. «Արդարին արդարութիւնը իր վրայ պիտի ըլլայ»:

¹ Հմմտ. Ծննդ. Ա. 14:

² Եզեկ. ԺԸ. 20:

Արդարեւ, եթէ այդպէս է, մենք ո՛չ մէկ օգուտ ունինք սուրբերէն, որ կը դատապարտուինք անոնց յիշատակը կատարելով ու անոնց ոսկորները պատուելով:

Եւ երկրորդ՝ տարակուսանք է այն, որ կ'ըսէ. «Անօրէնիմ անօրէնութիւնը իր վրայ պիտի ըլլայ»³, իսկ եթէ այդպէս է, ապա ինչո՞ւ համար մարգարէն կ'աղաչէ. «Օտարէն պահէ ծառադ»⁴:

Ասոնք բացատրելով՝ կ'ըսենք. եթէ մէկը մեղք կը գործէ՝ արդարին սրբութեան ապաւինելով, անոր արդարութենէն ոչինչով կ'օգտուի, քանի որ սուրբը զանոնք հաղորդակից չի դարձնէր իր արդարութեան, քանի որ ինչ միութիւն կայ լոյսին եւ խաւարին մէջ⁵: Իսկ եթէ բարիք կը գործէ, եւ բան մը կը պակսի իրմէ ու [սուրբի մը], սրբութեան կ'ապաւինի, [ապա] արդարին սրբութիւնն օգնական ու բարեխօս է իրեն համար:

Այս բանին կրնայ մէկը առարկել, թէ առաքեալը կ'ըսէ. «Մարդ եթէ նոյնիսկ ամբողջ Օրէնքը գործադրէ, բայց մէկ պատուիրանի կատարման մէջ թերանայ, ամբողջ Օրէնքին դիմաց յանցաւոր կ'ըլլայ»⁶, ասիկա ի՞նչ է:

Ասոր կը պատասխանենք. անիկա հին օրէնքին համար կ'ըսէ, ուր չկային Քրիստոսի շնորհքն ու ողորմութիւնը, այլ միայն՝ արդարութեամբ դատաստան եւ «ատամ ատամի դէմ»⁷:

Իսկ նոր օրէնքին մէջ մարդը միայն պէտք է մեղքերէն դուրս ըլլայ, իսկ եթէ գործերով չի կրնար արդարութեան հասնիլ, [ապա] Քրիստոսի շնորհքը կ'ամբողջացնէ անոր արդարութեան պակասութիւնը: Այս բանը յայտնի է պոռնիկ կնոջ [դէպքէն]⁸:

Իսկ երկրորդին կը պատասխանեմ, թէ ի զուր տեղ ուրիշին մեղքը ուրիշի մը վրայ չի մնար, եթէ կամակից չըլլայ անոր գործերուն, կամ ընկերակից կամ խօսակից: Իսկ ինչո՞ւ համար չզղջացող մեղաւորը ատելի է Աստուծոյ: «Եւ Քու ատածներդ, Տէր, պիտի ատեմ»⁹,— կ'ըսէ: Արդարեւ եթէ մէկը ատուածին ընկերակից, խօսակից եւ խորհրդակից կ'ըլլայ, իրապէս ան ալ կը պատժուի անոր մեղքերուն համար. եւ յայտնի է մարմնաւոր թագաւորներէն, քանի որ եթէ ոմանք թագաւորին թշնամիները

³ Անդ:

⁴ Սաղմ. ԺԸ. 14:

⁵ Հմմտ. Բ. Կորնթ. 2. 14:

⁶ Յակ. Բ. 10:

⁷ Բ. Օր. ԺԹ. 21:

⁸ Ղուկ. Է. 37—40:

⁹ Սաղմ. ՃԼԸ. 21:

կը պատուեն, իրենց հոգիներուն խեղդումը կ'ընդունին՝ ըստ Սողոմոնի առակին, թէ՛ «անզգամին հետ մի՛ բնակիր, որպէսզի չխեղդուիս...»¹⁰։ Օրինակ՝ Սաուղը կոտորեց քահանաները Դաւիթին ընդունելուն համար, որուն թշնամի կը համարէր։ Իսկ եթէ մեղաւորէն հեռու ըլլան՝ խօսքով ու ընկերակցութեամբ, անոր պատիժներէն ոչինչ կ'ընդունին։ Ասոր համար մարգարէն կ'աղաչէ «պահել զիմ»¹¹, այսինքն՝ թոյլ չտալ չարերուն ընկերակից ըլլալ, որպէսզի անոնց հետ չպատժուի։

Դարձեալ՝ որ այս աշխարհին մէջ ենք, չարին ու բարին կցորդ կ'ըլլանք, իսկ հանդերձեալին արդարին արդարութիւնը իր վրայ է միայն եւ ոչ՝ ուրիշներուն։ Նոյնպէս ալ մեղաւորին մեղքը։ Տակաւին, եթէ մէկը արդար է այս պահի ընթացքին, ուրախութեամբ կ'ընթանայ եւ չի՛ տրտմիր։ Նոյնպէս ալ մեղաւորին խղճմտանքը կը տանջէ [զինք], ու չուրախանար, եւ մեղաւորն արդարին ուրախութենէն չունի, եւ ոչ ալ արդարը՝ մեղաւորին տրտմութենէն։ Այդ պատճառով կ'ըսէ. «Արդարին արդարութիւնը իր վրայ պիտի ըլլայ»։

Դարձեալ. կ'ըսէ՝ յայտնի դարձնելով բոլորին իւրաքանչիւր գործերը, որպէս թէ մէկը երկմտի արդարութեան գործին համար, թէ Աստուծոյ վարձք պիտի առնէ թէ ոչ։

Մարգարէով կը հաստատէ, թէ արդարին արդարութիւնը իր վրայ պիտի ըլլայ, այսինքն՝ ամէն ինչի փոխարէնը պիտի ստանայ։ Նոյնպէս եւ ան, որ չարիք կը գործէ, իր սիրտէն թող չանցնի, թէ իր գործին փոխարէնը պիտի չստանայ։ Կ'ըսէ. «Անօրէնին անօրէնութիւնը իր վրայ պիտի ըլլայ»¹², այսինքն՝ ըստ Տիրոջ ըսածին. «Գիտցի՛ր, որ բանտէն պիտի չելլես՝ մինչեւ տուգանքիդ վերջին դահեկանը չվնարես»¹³, որ է ներելի մեղքը։

Դարձեալ. «անօրէնութիւն» ըսելով՝ կը յայտնէ մեղքերու բոլոր տեսակները՝ ըստ առաքեալին. «Անօրէնութիւնները մեղք են»¹⁴։ Իսկ «արդարութիւն» ըսելով՝ կը յայտնէ առաքինութեան բոլոր տեսակները։

Սակայն գիտելի է, թէ ինչ է արդարութիւնը, եւ ինչ է անօրէնութիւնը։

Գիտելի է, քանի որ արդար կը կոչուի ան, որ հաւասարապէս բաշխող է, որովհետեւ իմաստասէրն ալ այսպէս կը սահմանէ, ու այսպիսի

¹⁰ Հմմտ. Առակ. ԻԱ. 19։

¹¹ Եզեկ. ԺԸ. 19, 31։

¹² Եզեկ. ԼԸ. 20։

¹³ Ղուկ. ԺԲ. 59։

¹⁴ Հմմտ. Ա. Յովհ. Գ. 4։

արդարութիւնը առաջնորդներունն է, քանի որ պէտք է բոլորին նոյն ձեւով ընդունիլ՝ եւ աղքատին, եւ տնանկին, եւ ըստ իր կարելիութեան պատուել:

Երկրորդ՝ «արդար» կը կոչուի ան, որ խոհեմութիւն, ողջախոհութիւն եւ քաջութիւն ունի: Խոհեմ ո՛չ անասնականը կ'ըսեմ, ինչպէս ուղտինը, այլ՝ բանականը, այսինքն՝ որ գիտնայ, թէ ինչպիսի օրեր են, մանաւանդ թէ օրուան խորհուրդը քննել եւ պահքերուն մեծութիւնը ճանչնալ: Նոյնպէս ողջախոհութիւնը, քանի որ այսօր պահք է, հրաման չունի իր մաքուր անկողինին մօտենալ, որպէսզի պոռնիկ չկոչուի՝ օրէնքը լուծելով: Նմանապէս զօրաւոր կ'ըլլայ, որպէսզի զօրանայ աղօթքի ու ողորմութեան, ինչպէս նաեւ խոստովանութեան մէջ, այս բոլորէն ետք քրիստոնեան արդար կը կոչուի:

Երրորդ՝ «արդար» կը կոչուի ան, որ հոգիին բաժինը նոյնքանով կու տայ ինչպէս մարմինին, քանի որ եթէ հոգին կենդանի է, եւ ապա՝ մարմինն ալ [կենդանի է], որովհետեւ մարմինին կեանքը որոշ ժամանակ է, իսկ հոգիինը՝ յաւիտենական: Արդ, պէտք չէ ժամանակաւորը ապրեցնել եւ յաւիտենականը կորսնցնել:

Չորրորդ՝ «արդար» կը կոչուի ան, որ միջին ճանապարհով կ'ընթանայ, ո՛չ աջ եւ ո՛չ ալ ձախ կը խոտորի, այսինքն՝ ո՛չ մարմնական մեղքերու մէջ իյնալ, որ է ձախ խոտորումը, որ է ազահութիւն, պոռնկութիւն եւ այլն: Եւ ո՛չ ալ աջ, որ է հպարտութիւն, նախանձ եւ այլն:

Հինգերորդ՝ «արդար» կը կոչուի ան, որ ինչ գործի որ կանչուած է, նոյնին մէջ կը մնայ եւ այնտեղէն չելլեր, ինչպէս որ եթէ քահանայ է, քահանայութեան մէջ մնալ: Նմանապէս եւ միւսները, քանի որ առաքեալը կ'ըսէ. «Ինչ վիճակի մէջ էիք, որ կանչուեցաք, նոյն վիճակին մէջ մնացե՛ք»¹⁵:

Վեցերորդ՝ «արդար» կը կոչուի ան, որ թերացած չէ աստուածային բաներուն մէջ, այդ պատճառով աստուածային Գիրքը կ'ըսէ. «Աբրահամ հաւատաց Աստուծոյ, եւ այդ հաւատքը իրեն արդարութիւն սեպուեցաւ»¹⁶:

Եօթներորդ՝ «արդար» կը կոչուի ան, որ Աստուծոյ օրէնքներուն համար վրէժխնդիր է, ինչպէս Փենէհէսը¹⁷, որ աստուածային օրէնքներուն համար սպաննեց Զամբրին եւ Քասբին, ինչպէս մարգարէն կ'ըսէ. «Քաւեց ու մահը արգիլեց, եւ տիկա իրեն համար արդարութիւն սեպուեցաւ»¹⁸:

¹⁵ Տէս Ա. Կորնթ. է. 20, 24:

¹⁶ Ծննդ. ԺԵ. 6:

¹⁷ Տէս Թուոց ԻԵ. 7–15:

¹⁸ Հմմտ. Սաղմ. ՃԵ. 30–31:

Ութերորդ՝ «արդար» կը կոչուի ան, որ առանց աշառութեան եւ առանց կաշառքի դատաստան կը կատարէ, ինչպէս Տէրը կ'ըսէ. «Երեւոյթներէն մի՛ դատէ, այլ արդար դատաստան կատարեցէք»¹⁹:

Իններորդ՝ «արդար» կը կոչուի եւ ան, որ ողորմած է, ինչպէս մարգարէն կ'ըսէ. «Սփռեց ու աղփատներուն տուաւ, անոր արդարութիւնը յափտեան կը մնայ»²⁰:

Տասներորդ՝ այս բոլորէն հեռու Աստուած «արդար» կը կոչուի, ինչպէս մարգարէն կ'ըսէ. «Արդար է Տէրը եւ արդարութիւնը կը սիրէ»²¹: Իսկ Անոր արգարութիւնը կ'ըսէ, որ աստուածային բոլոր խօսքերը գործով կը պարունակէ Իր սիրտին մէջ: Այս՝ այսքան:

Իսկ «անօրէն» կը կոչուի նախ ան, որ բնաւ օրէնքները չէ առած, ինչպէս կռապաշտներն ու այլազգիները, այդ պատճառով անօրէններ կը կոչուին:

Երկրորդ՝ «անօրէն» կը կոչուի ան, որ օրէնքներն առած է, բայց չի կատարեր, եւ ասիկա աւելիով կը պատժուի, քան միւսը, որովհետեւ առաքեալը կ'ըսէ. «Աւելի լաւ կ'ըլլար, որ անոնք բնաւ ճանչցած չըլլային արդարութեան ճամբան, քան թէ ճանչնային»²²:

Երրորդ՝ «անօրէն» կը կոչուի ան, որ չարիք կը գործէ եւ չարիքներու մէջ անգեղջ մնալով՝ ողորմութիւն կը գործէ: «Որովհետեւ ոչ ոք կրնայ երկու տէրերու ծառայել²³, — ըսաւ Տէրը, — ով որ մեղք կը գործէ, ծառայ է մեղքին»²⁴, իսկ եթէ բարիով չարիք կը գործէ, առաւել կերպով կը դատապարտուի: Այդ պատճառով մարգարէն կ'ըսէ. «Անօրէնը, որ պատարագ կը մատուցէ, այնպէս է, որ մէկը շուն կը մորթէ»²⁵:

Չորրորդ՝ «անօրէններ» կը կոչուին բոլոր չարիք գործողները, քանի որ ինչ օգուտ անոնց օրէնքներէն, թէ շատ գրուած բաներ կան, որովհետեւ կամք չունին անոնց մօտենալու:

Հինգերորդ՝ «անօրէն» կը կոչուի ան, որ չի կատարեր ու չի սորվեցներ, ինչպէս Տէրը ըսաւ՝ «Փոքր պիտի կոչուի»²⁶, որ է՝ անօրէն, քանի որ

¹⁹ Յովհ. է. 24:

²⁰ Տէս Սաղմ. ՃԺԱ. 9:

²¹ Տէս Սաղմ. Թ. 8:

²² Բ. Պետ. Բ. 21:

²³ Մատթ. 23. 24:

²⁴ Յովհ. Ը. 34:

²⁵ Ես. 64. 3:

²⁶ Մատթ. Ե. 19:

ինչպէս ինք չի կատարեր, այդպէս ալ ան, որ անոր օրէնքները լսեց ու տեսաւ զինք, օրէնքը կը ձգէ ու անոր գործը տեսնելով՝ այն կը գործէ, քանի որ չի կրնար խօսքով հակառակիլ օրինադիրին, որովհետեւ իր գործերը չար են, մանաւանդ՝ սաստել:

Դարձեալ. խորհրդաբար կը մեկնենք, քանի որ ըսելը արդարին միացած է, կը նշանակէ Քրիստոսին, որովհետեւ Քրիստոսի արդարութիւնը երբեք չի առնչուիր սատանայի անօրէնութեան ու անոր կամարարներուն, այդպէս ալ սատանային անօրէնութիւնը Քրիստոսի օրէնքներու սրբութեան եւ Անոր հետեւողներուն չի միաւորիր, այլ սատանան ու անոր կամարարները միշտ կը տանջուին, իսկ Քրիստոս եւ իր հետեւորդները միշտ կը փառաւորուին, ատոր համար «արդարին արդարութիւնը...»²⁷: Եւ ինչո՞ւ սատանան անօրէն կը կոչուի, յայտնի է Սողոմոնէն, [որ] կ'ըսէ. «Անօրէն իշխանը երբ աստուածանալ կամեցաւ»²⁸:

«Իսկ եթէ մէկը իր բոլոր անօրէնութիւններէն դառնայ, կ'ըսէ»²⁹: Ասիկա բաւարար չէ, թէ դառնայ, այլ անօրէնութեան փոխարէն արդարութիւն գործէ եւ օրէնքները [գործադրէ] ու ողորմութիւն ընէ³⁰, այսինքն՝ արդարութիւն հոգիին ու մարմինին միջեւ, ինչպէս Տէրը այրիի առակին մէջ կ'ըսէ. «Իրաւունքս պաշտպանէ հակառակորդէս»³¹, իսկ օրէնքները միտքով կը սորվի ու կը հնազանդի, իսկ մարմինով ողորմութիւն կը գործէ, ապա չի մեռնիր:

Իսկ մեղաւորը բազմաթիւ բաներ կ'ըսէ իր միտքին մէջ:

Նախ՝ կ'ըսէ, ինչպէ՞ս դառնամ, կ'երկնչիմ, թերեւս Տէրը կրկին անգամ յիշէ մեղքերս ու չմոռնայ:

Այս բանին Տէրը մարգարէին միջոցաւ կը պատասխանէ. «Երբ իր բոլոր գործերէն ու բոլոր անօրէնութիւններէն դառնայ, իր անօրէնութիւնները պիտի չիշխին»³², եւ այս խոստումը ճշմարիտ է:

Երկրորդ՝ կ'ըսէ, թէ եւ մեղքերէս ետք արդարութիւն գործեմ, սակայն ետքի արդարութիւնը չի կրնար փրկել, քանի որ իմ առաջին յանցանքներս բազմաթիւ են:

²⁷ Եզեկ. ԺԸ. 20:

²⁸ Հմմտ. Առակ ԻԴ. 12: (Բնագիրին մէջ նշուած Առակաց ԻԴ. 12 համարը չի համապատասխաներ մէջբերուած համարին: Այդ մտածումին մասին կը կարդանք Ես. ԺԴ. 12–21-ին մէջ. — Վ. (Յ.) Գ.):

²⁹ Եզեկ. ԺԸ. 22:

³⁰ Եզեկ. ԺԸ. 21:

³¹ Ղուկ. ԺԸ. 3:

³² Տէս Եզեկ. ԺԸ. 22:

Ասոր կը պատասխանէ. եթէ ետքէն արդարութեամբ գործէ, կ'ապրի: Երրորդ՝ մեղաւորը կ'ըսէ, թէ՝ Աստուած չուզեր իմ դառնալս, ինչպէ՛ս դառնամ:

Ասոր Աստուած մարգարէին միջոցաւ կը պատասխանէ. «Կ'ուզեմ անոր [չար] նաճապարհէն դառնալն ու ապրիլը»³³:

Զորրորդ՝ թէ մեղաւորը կ'ըսէ՝ չեմ կրնար դառնալ, կ'երկնչիմ, թերեւս մահ կը բերէ վրաս, եւ չկարենամ կատարելապէս զղջալ:

Ասոր կը պատասխանէ, թէ՝ «մեղաւորին մահը չեմ ուզեր»³⁴, թէեւ խոր ծերութեան հասնի, մինչեւ կատարելապէս մաքրուի:

Հինգերորդ՝ թէ մեղաւորը կ'ըսէ, թէեւ ես դառնամ, սակայն Աստուած իր երեսը չերեցնէր ինծի:

Ասոր Աստուած այլ մարգարէի մը միջոցաւ կը պատասխանէ, թէ՝ «Երբ դառնաս, երեսս ցոյց պիտի տամ քեզի»³⁵: Իսկ թէ ինչ անօրէնութիւն եւ ինչ յանցանք ու մեղք եւ ինչպէս կը զանազանուին, սաղմոսին մէջ գրուած կը գտնեն:

Եւ մարգասէր Քրիստոսին, Անոր փառք յաւիտեանս: Ամէն:

ՄԱՏԹԵՆՍ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ ՔԱՐՈՋԸ ՊԱՀՔԻ ԱՌԱՋԻՆ ԶՈՐԵՔՇԱԲԹԻՆ, «ԸՆԹԵՐՑՈՒՄ «ԵԼԻՑ» ԳԻՐՔԷՆ»³⁶

Աստուածային գիրքերէն ոմանք մեզի խրատելու համար գրուեցան, ինչպէս «Բ. Օրինացը», Աւետարանը եւ Առաքելական թուղթերը: Իսկ ոմանք ալ օրինակի համար, ինչպէս մարգարէներուն վարքերը եւ «Գործք առաքելոցը»: Ոմանք խորհուրդի համար, որպէսզի անոնցմով իմանանք Աստուծոյ մարգասիրութեան անճառելի խորհուրդը, որ ծածուկ կերպով ներգործեց ու յետոյ կատարեց: Եւ այսպէս է «Ելից» գիրքը, այդ պատճառով Յակոբ Տեառնեղբայր առաքեալը, այս Սուրբ Գիրքը առնելով, սահմանեց պահքի ժամանակ [կարգալ], որ Ադամի դրախտէն դուրս գալուն խորհուրդն ունի:

³³ Եզեկ. ԺԸ. 23:

³⁴ Անդ:

³⁵ Դան. Թ. 17, 20:

³⁶ Մեծ պահքի առաջին չորեքշաբթի օրը Ելից գիրքի առաջին գլուխի 1–10 համարները կ'ընթերցուին:

Բայց նախ տեսնենք, թե ինչ կը նշանակէ գիրքին վերնագիրը, որ կ'ըսէ՝ «Ընթերցում «Նլից» գիրքին»:

Արդ՝ ըստ նկարագիրին՝ այսպէս կ'ըսուի, թէ կարդացուածը այսինչ գիրքէն է կամ այսինչ առաքեալէն կամ մարգարէէն, այլ՝ թէեւ այս այսպէս է, սակայն խորհուրդ մը ունի:

Նախ՝ այսպէս կը ստուգաբանուի՝ «կարդա՛ եւ գործադրէ՛», քանի որ ով կը կարդայ եւ չի գործադրեր, ի զուր կը դատուի, ինչպէս սանդին չուանը դատարկ մտաւ եւ այդպէս ալ կ'ելլէ, այդ պատճառով բոլոր սուրբ գիրքերուն մասին այսպէս գրուած է:

Դարձեալ, ուրիշ ձեւով մըն ալ այսպէս կ'իմացուի, թէ բոլոր գրուած խօսքերը, որ բոլոր գիրքերուն մէջ է, իրարու հետ միտքդ բեր՝ իմանալով, թէ ինչ խորհուրդով գրուած է, գիրքերուն միտ բանին հասկնալով եւ ոչ թէ միայն սեւ թանաք տեսնելով:

Դարձեալ, տարբեր ձեւով կ'ըսուի՝ դուն սորվիր եւ ուրիշի մըն ալ Դիրքին մօտ բեր, որպէսզի ան ալ սորվի՝ շահելով եղբօրդ՝ ըստ Տիրոջ խօսքին³⁷:

Դարձեալ, տարբեր ձեւով կ'ըսէ՝ «կարդա՛ ատիկա», քանի որ ատիկա աստուածային սերմ է, որովհետեւ շահ կ'ունենաս Տիրոջ առջեւ՝ առաքինութիւնը, ինչպէս բարի երկիրը՝ երեսուն, վաթսուն կամ հարիւր³⁸:

Իսկ թէ Աւետարանին համար այս վերնագիրը չկայ, պատճառն այս է. քանի որ անիկա բերնէ բերան Աստուծոյ մեզի [ուղղուած] խօսք է: Իսկ միւսները իբրեւ միջնորդին միջոցով, այդ պատճառով կ'ըսուի. «Մեք Տէրը կ'ըսէ»: Իսկ միւսներունը՝ «Ընթերցում...»: Իբրեւ թէ այս անուն առաքեալը կամ մարգարէն այս խօսքը Աստուծոյ առած է ու մեզի բերած:

Իսկ այն, որ կ'ըսէ՝ «Նլից գիրքին», նախ՝ կը նշանակէ, ըստ ճառին, Եգիպտոսէն ելլելը, որ Մովսէսին միջոցով եղաւ, քանի որ ամբողջ գիրքն այդ մասին կը պատմէ:

Երկրորդ՝ խրատ կու տայ ելլելը միտքին մէջ ունենալ՝ ըստ մարգարէին. «Տրամութեան հովիտին մէջ իսկ երանելի յոյսը ունենալ»³⁹: Այս պատճառով ամէն տարի կը կարդանք այս ընթերցուածը:

Երրորդ՝ Ադամին դրախտէն ելլելը կը նշանակէ:

Չորրորդ՝ եւ դժոխքէն ելլելը՝ իր ծնունդներով հանդերձ:

³⁷ Հմմտ. Մատթ. ԺԸ. 15:

³⁸ Տէս Մատթ. ԺԳ. 8:

³⁹ Հմմտ. Սաղմ. ԶԳ. 7:

Հինգերորդ՝ չարչարանքներուն ելքը կը նշանակէ, որ սատանային միջոցով նեղութիւն կրած է գործերու շար սովորութենէն՝ հոգին առ Աստուած կ'ազազակէ՝ ըստ Տիրոջ առակին⁴⁰: Այս պատճառով պահքի սկիզբը այս ընթերցուածը սահմանուեցաւ Տեառնեղբօր կողմէն:

Արդարեւ, Յակոբը Ադամին կ'օրինակուի, որ բազմաթիւ կերպերով Եգիպտոս մտաւ:

Նախ՝ քանի որ Յակոբ կերակուրի ցանկութեան պատճառով Եգիպտոս մտաւ, ինչպէս Գիրքը կ'ըսէ. «Քանանի մեծ եռաշախ ժամանակ լսեցին, թէ Եգիպտոսի մէջ ուտելիք կը գտնուի»⁴¹: Այդպէս ալ Ադամ ցանկութեան պատուղին պատճառով, որ կերաւ, երկրի յատակը իջաւ, աշխարհի նեղութիւններուն մէջ, ինչպէս Տէրը անառակին համար կ'ըսէ. «Գնաց եւ այնտեղի ֆաղաֆներէն մէկուն մէջ մնաց եւ այնտեղ եղջիւրներ կ'ուտէր»⁴²:

Երկրորդ՝ քանի որ Յակոբ Յովսէփին համար, որ անորմէ ծնունդ էր եւ կերակրելուն առաջնորդ էր, քաշելով Եգիպտոս բերաւ, այդպէս ալ Ադամը Եւային համար, որ ծնունդ էր անոր կողէն եւ առաջնորդ եղաւ պտուղէն ուտելուն, պարտադրուեցաւ Աստուծոյ տեսութենէն ելլելու եւ խորխորատին մէջ իյնալու:

Երրորդ՝ քանի որ տասներկու որդիներով պահքով Եգիպտոս մտաւ, ինչպէս այստեղ կը թուէ. «Ռութէն, Շմաւոն...»⁴³, եւ այլն, այդպէս ալ Ադամը տասներկու անդամներով դժոխք իջաւ, այլեւ՝ բոլոր ծնունդներով, որ տարուան տասներկու ամիսներուն կը ծնէր, բոլորին իր հետ քաշեց:

Չորրորդ՝ քանի որ Եօթանասուներկու հոգի էին մտնելուն ժամանակ առանց Յովսէփի. այդպէս ալ Եօթանասուներկու լեզուները, որոնք մէկ Ադամին մէջ էին, անոնց զօրութեամբ խաւարային երկրին մէջ մտաւ:

Հինգերորդ՝ քանի որ Եգիպտոսը երկաթի հալոց կը թարգմանուի, ուր Յակոբ մտաւ. այդպէս ալ այս երկիրը հնոց է ու փորձութեան վայր, ուր մենք կը բնակինք, քանի որ կը չարչարէ եւ բովով քննուելով հանգամանքներուն հետ այստեղ յայտնի կը դառնան:

Վեցերորդ՝ որովհետեւ Յակոբին Եգիպտոս մտնելը՝ կերակրուելու համար, պատճառ եղաւ իր ազգին եգիպտացիներուն ծառայ ըլլալուն,

⁴⁰ Հմմտ. Բարուք Գ. 1:

⁴¹ Հմմտ. Գործք է. 11–12:

⁴² Տէս Դուկ. ԺԵ. 15–16:

⁴³ Ելք Ա. 2:

այդպէս ալ Ադամին պատուիրանազանցութիւնը պատճառ եղաւ իր որդիներուն սատանային գերութեան ու ծառայութեան [ենթարկուելուն]:

Եօթներորդ՝ քանի որ Յովսէփին եւ Յակոբին մեռնելէն ետք սկսան այդ ազգը ծառայեցնել. այդպէս ալ Աբէլ արդարին, Ադամին ու Եւային մեռնելէն ետք [մարդկային] բնութեան մահը սկսաւ եւ դժոխք երթալը:

Ութերորդ՝ որովհետեւ փարաւոնը անոնց մանուկներուն գետ կը նետէր⁴⁴. այդպէս ալ սատանան աշխարհի մէջ մարդոց բարի խորհուրդները չարութեան մէջ կը ձգէր եւ վատ ճանապարհներու [կ'առաջնորդէր], որ էր՝ ուտելը, խմելը եւ պոռնկութիւն ընելը:

Իններորդ՝ քանի որ արուները կը սպաննէին, իսկ էգերը կ'ապրեցնէին⁴⁵. այդպէս ալ սատանան մարդոցմէ բարի խորհուրդը փորձութեամբ կը սպաննէր, ինչպէս Աբէլին մղեց իր եղբայրը սպաննելու⁴⁶, նաեւ բազմաթիւ հարուածներով տանջեց⁴⁷, ինչպէս Յոբէն յայտնի է: Իսկ թոյլերուն եւ կնաբարոններուն աճեցուց ու զօրացուց, որոնք մեղսասէր ու անհաւատներ էին:

Տասներորդ՝ որովհետեւ Իսրայէլի որդիներուն կը տառապեցնէին կաւի եւ աղիւսի գործով. այդպէս ալ սատանան Ադամի որդիներուն իրենց կենդանութեան ժամանակ կը տառապեցնէր պոռնկութեամբ, ինչպէս կաւը, եւ անզղջութեամբ, ինչպէս աղիւսը՝ ցամքեցնելով աստուածային սէրէն:

Տասնմէկերորդ՝ քանի որ փարաւոնը Իսրայէլի որդիներուն Եգիպտոսի մէջ հինգ քաղաքներ շինել տուաւ, Փեգոնը, Ռամիսան, եւ այլն⁴⁸. այդպէս ալ սատանան հինգ զգայութիւնները իրեն բնակութեան համար կազմեց, որով անօրէնութեան բոլոր տեսակի գործերով կը ճեմէր, եւ գեղեցիկ կերպով կազմեց՝ ըստ մարմինի, որով մարդիկ հնարեցին զանազան կերպերու շինուածքներ, որը՝ բողոքեան, որը՝ շնութեան:

Տասներկրորդ՝ որովհետեւ աղիւսի գործին համար յարդ չէին տար, որպէսզի առանց յոգնելու չաշխատին, այլ կ'երթային եղէգ բերելու⁴⁹, որմէ իրենց մարմինները ճղուելով հողը արիւնով կը շաղախէր. այդպէս ալ սատանան մարդուն եղջիւրներէն չէր տար, որ խոզերը կ'ուտէին,

⁴⁴ Ելք Ա. 22:

⁴⁵ Տէս Ելք Ա. 16:

⁴⁶ Ծննդ. Դ. 8:

⁴⁷ Տէս Յոբ Բ. 13, Թ. 17:

⁴⁸ Տէս Ելք Ա. 11:

⁴⁹ Տէս Ելք Ե. 12:

այսինքն՝ մեղքերէն, քանի որ մարդու բնութիւնը կը ցանկար, սակայն ոչ ոք կու տար անոր,— կ'ըսէ Տէրը⁵⁰: Այդ պատճառով անկարգ տուփանքին յարեցաւ, որ բնութենէն դուրս է՝ նման եղէգին, որով մարդու հոգին աւելի կը խոցուէր, ինչպէս յայտնի է Սողոմէն, որովհետեւ արեան⁵¹ նման կրակով լեցուց երկիրը, եւ կը տոչորէին⁵²:

Տասներեքերորդ՝ քանի որ Իսրայէլի որդիները դառն ծառայութեան մէջ Տիրոջ կ'աղաղակէին. այդպէս ալ Ադամին որդիները, աշխարհէն նեղութիւն կրելով, Աստուծոյ կը յուսային սատանային ձեռքէն փրկուելու, ինչպէս Երեմիան կը պաղատէր. «Տէր Աստուած Իսրայէլի, մեր անձերը նեղութիւն կը կրեն, եւ հոգիները ծանրաբեռնուած են անօրէններէն, Քեզի կ'աղաղակենք»⁵³: Իսկ Աբրահամ սողոմացիներուն փրկութիւնը կը խնդրէր⁵⁴:

Տասնչորսերորդ՝ որովհետեւ իսրայէլացիներուն փրկիչը իրենց ազգէն ծնաւ, այսինքն՝ Մովսէսը Եգիպտոսի մէջ. այդպէս ալ մեր Տէրը մարդկային բնութենէն ծնաւ այս աշխարհին մէջ, երբ տակաւին սատանայի չարութեան բռնութիւնը բազմացած էր:

Տասնհինգերորդ՝ քանի որ Մովսէսին ալ գետին մէջ նետեցին. այդպէս ալ սատանան կ'ուզէր Հերովդիայի միջոցով մեր Տիրոջ սպաննել, այդ պատճառով Բեթղեհէմի մանուկները կոտորուեցան⁵⁵:

Տասնվեցերորդ՝ որովհետեւ Մովսէս պրտուէ ամանով պատուեցաւ, իսկ ջուրը Մովսէսին մօտ չէր մտներ, քանի որ կապրաձէթով ծեփուած էր. այդպէս ալ մեր Տէրը Իր ծնունդին ժամանակ խանձարուրով պատուեցաւ եւ քարայրի մը մսուրին մէջ դրուեցաւ, ու մեր Տիրոջ մօտ հեշտութեան եւ թուլութեան ջուր չմտաւ, որովհետեւ աստուածային բնութեամբ պնդացած էր:

Տասնեօթներորդ՝ քանի որ փարաւոնին աղջիկը տեսնելով Մովսէսին խանդաղատանքով լեցուեցաւ⁵⁶ եւ հրամայեց հանել զինք ջուրէն. այդպէս ալ մոգերը, որոնք կռապաշտութեան որդիներ էին, տեսնելով աստուղը՝ եկան Քրիստոսին երկրպագելու, որոնք իրենց թագաւորին հրամանով Արեւելքէն եկան:

⁵⁰ Տէս Ղուկ. ԺԵ. 16:

⁵¹ Տէս Ելք է. 21:

⁵² Ծննդ. ԺԹ. 23–25:

⁵³ Հմմտ. Երեմ. ԺԱ. 11, ԺԲ. 6:

⁵⁴ Տէս Ծննդ. ԺԸ. 16–33:

⁵⁵ Տէս Մատթ. Բ. 16–18:

⁵⁶ Տէս Ելք Բ. 6:

Տասնութերորդ՝ որովհետեւ իր մօր տուաւ զայն՝ կերակրելու, մինչեւ կատարեալ հասակի հասնիլը⁵⁷. այդպէս ալ մեր Տէրը Իսրայէլի ժողովուրդին մօտ սնաւ մինչեւ կատարեալ հասակին՝ երեսուն տարեկանին հասնիլը:

Տասնիններորդ՝ քանի որ փարաւոնին աղջիկը զինք իր որդին ըրաւ եւ սնուցեց զինք. այդպէս ալ մեր Տէրը հեթանոսներուն որդի կոչուեցաւ, ինչպէս Նաային կ'ըսէ. «Մեզի ոռդի մը ծնաւ, մեզի մանուկ մը տրուեցաւ»⁵⁸:

Քսաներորդ՝ որովհետեւ զայն Մովսէս անուանեց, այսինքն՝ ջուրէն հանուած. այդպէս ալ մեր Տէրը հեթանոսներուն կողմէ Քրիստոս անուանուեցաւ, որ է օծեալ, այսինքն՝ տարբեր սովորական մարդոցմէ:

Դարձեալ. թէեւ այս խորհուրդը ինքն իր մէջ ծածկաբար ունի այս գիրքը, որ ապագային կատարուեցաւ, սակայն տարբեր բնոյթի խրատ եւ օգուտ ունի մեզի այս ընթերցումը: Որովհետեւ Յակոբ խորհրդաբար կը նշանակէ մեր հոգին ու մարմինը, իսկ Եգիպտոս՝ մեղքերն ու անօրէնութիւնները, տակաւին ապաշխարութիւնն ու շարշարանքները ըստ բազմաթիւ կերպերու:

Նախ՝ որովհետեւ ինչպէս ըսուեցաւ, թէ Յակոբ կերակուրի ցանկութեամբ Եգիպտոս իջաւ, այդպէս ալ մենք մինչեւ հիմա կերանք, խմեցինք եւ ցանկացանք, այդ պատճառով մեղքի մէջ ինկանք ու ատոր համար պահճի ու ապաշխարութեան կը մօտենանք:

Երկրորդ՝ քանի որ այն ատեն սովը ամբողջ երկրին տիրեց եօթը տարի, այդ պատճառով Յակոբի որդիները հաց փնտուելու ելան. այդպէս ալ մեզի հասած է Բանին Կենաց սովը, եւ ատիկա մահացու եօթ մեղքերու պատճառով, եւ մեղքերու չափ, որ գործեցինք, այդ պատճառով արժան է մեզի, որ Կենաց Բանը փնտուելու ելենք, որ անմահութեան հացն է՝ խրատ Աստուածաշունչ գիրքերէն⁵⁹:

Երրորդ՝ որովհետեւ մինչ տակաւին Յովսէփ Գեղեցիկը կար, Իսրայէլը Եգիպտոսի տէրն էր, իսկ երբ մեռաւ, ապա ծառայ եղան, այդպէս ալ ինչքան ժամանակ որ ողջախոհութիւնը մեր մէջ կենդանի էր, մեր կամքերուն, ցանկութիւններուն ու սատանային տէրն էինք. իսկ երբ մեղքերով մեր մէջի սրբութիւնը մեռցուցինք, այդ ատեն սատանային կողմէ գերուեցանք:

⁵⁷ Տէս Ելք Բ. 8:

⁵⁸ Նս. Թ. 6:

⁵⁹ Հմմտ. Յովհ. Ե. 35:

Զորրորդ՝ քանի որ Յովսէփէն ետք ուրիշ թագաւոր մը ելաւ, որ Իսրայէլի ազգը չէր ճանչնար⁶⁰։ այդպէս ալ Աստուծոյ հեռանալէն ետք, սատանային միջոցով, որ աշխարհի տէր կոչուած է, մեղքերու մէջ ինկանք, ինչպէս Տէրը կ'ըսէ. «Այս աշխարհի իշխանը»⁶¹, որովհետեւ ան աստուածապաշտները չի ճանչնար, մանաւանդ անոնք, որոնք տակաւին նոր բարեգործութիւն կը կատարեն:

Հինգերորդ՝ քանի որ փարաւոնը Իսրայէլի ազգին կը չարչարէր, այդպէս ալ սատանան կը չարչարէ մեզ չար գործերու եւ անիրաւ խորհուրդներու միջոցով, այդ պատճառով մեր խորհուրդը [մտածումը] խղճմտանքէ եւ մեղքերու ալէկոծութենէն չի դադրիր:

Վեցերորդ՝ որովհետեւ, թէեւ Իսրայէլի որդիները չէին ուզեր փարաւոնին ծառայել, սակայն անոր բռնութիւնը նեղելով կը տանջէր զանոնք. այդպէս ալ մեղանչելէն ետք, թէեւ կայ մեր կամքը այս ինչ մեղքը չընելու, սակայն սովորութեան բռնութիւնը, որ սատանայի ներգործութենէն է չի ձգեր մեզի, այլ բռնութեամբ մեղքերուն ծառայել կու տայ:

Եօթներորդ՝ որովհետեւ փարաւոնը հինգ բան ընել կու տար. աղիւսի գործը, քաղաքներու շինութիւնը, մանուկները ծովուն մէջ նետելը, արունները սպաննելը, էգերն ապրեցնելը. այդպէս ալ սատանան մեզի հինգ բան ընել կու տայ: Նախ՝ մեր միտքին մէջ պղծութեան խորհուրդը կը նետէ: Երկրորդ՝ մեղքը իր քաղաքը շինել կու տայ: Երրորդ՝ մեր հոգիները գիշութեան աղտին մէջ կը նետէ, ինչպէս ծովուն մէջ: Զորրորդ՝ այրի հոգին մեղքերով կը սպաննէ: Հինգերորդ՝ իզագած մարմինը ժամանակաւոր կենդանութեամբ կ'ապրեցնէ:

Ութերորդ՝ քանի որ եբրայեցիները Աստուծոյ աղաղակեցին. այդպէս ալ մեր հոգին իր ներքին դէմքով, որ միայն Աստուծոյ տեսանելի է, կ'աղաղակէ՝ ցոյց տալով սատանայէն ստացած մեղքերու վէրքերը մարմինին վրայ, տակաւին անելանելի բանտը, ինչպէս մարգարէն կ'ըսէ. «Տէր, իմ անձս բանտէն հանէ»⁶²:

Իններորդ՝ որովհետեւ Մովսէս այնտեղ ծնաւ եւ երեք տարի ծածուկ պահուեցաւ⁶³, որ կայտառ էր. այդպէս ալ մենք, թէեւ սատանան մինչեւ հիմա մեզ մեղքերու մէջ պահեց, սակայն այստեղ մեր մէջ ծնաւ խղճմտանքը, որպէսզի կարենայ մեզ մեղքերու խառնակութենէն հանել,

⁶⁰ Տէս Ելք Ա. 8:

⁶¹ Յովհ. ԺԲ. 31:

⁶² Տէս Սաղմ. ՃԽԱ. 8:

⁶³ Ելք Բ. 2:

քանի որ ան է փրկիչ, եւ երբ մեր միտքին մէջ կատարեալ խղճմտանքը ծնի, երեք ժամ կամ երեք օր կամ երեք ամիս կը պահուըտի, եւ թէեւ խղճմտանքը երբեք չի դադրիր, այլ կատարեալը այդ ժամանակ կը ծնի:

Տասներորդ՝ քանի որ Մովսէս փարաւոնի աղջկան կողմէ որդեգրուեցաւ նաժիշտին միջոցաւ, եւ զայն իր մօտ տուաւ սնուցելու համար, այդպէս ալ մեր մարմինը, որ մեղքերու աղջիկն է, այստեղ մեր հոգիները կ'առնէ զգայութիւններուն միջոցաւ եւ մեր մօր՝ Եկեղեցիին կու տայ, այլեւ՝ պահեցողութեան եւ ապաշխարութեան, որպէսզի աստուածային գիրքերու կաթով, պահեցողութեան պարկեշտութեամբ եւ խոստովանութեան անմեղութեամբ սնուցէ մեզ: Որմէ յատկացուելով քրիստոնեաներ կ'անուանուինք եւ առաքինութեան հասակին եւ արդարութեան գործերուն հասնելով՝ արժանի ըլլանք Աստուծոյ Որդիին փառքին, անմահ Բանին Յարութեան՝ յաւիտենական կեանքին հաղորդուելով ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր, որով եւ ընդ որում Հօր միանգամայն եւ Սուրբ Հոգիին վայել է փառք, իշխանութիւն եւ պատիւ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից: Ամէն:

Շարունակութիւնը՝ յաջորդիւ

Գրաբարէ արեւմտահայերէնի վերածեց՝
ՎԱՐԱՆԴ (ՅԱԿՈԲ) ՔՈՐԹՄՈՍԵԱՆ



ԻՎԱՆ ԻԼՅԻՆ

ՀԱՅՐԵՆԻՔԻ ՄԱՍԻՆ

Սկիզբը՝ նախորդիվ

2. Հայրենիքի ձեռքբերումը

Մարդը հայրենիք է գտնում ոչ թե պարզապես բնագոյով, այլ բնագոյով հաստատված հոգով եւ ձեռք բերում սիրով: Իսկ դա նշանակում է, որ հայրենիքի հարցը լուծվում է ինքնաճանաչողության եւ կամավոր ընտրության եղանակով:

Հարկադրաբար եւ ձեւականորեն կարելի է մարդուն կամ մարդկանց մի ամբողջ բազմություն կցել ինչ-որ մի պետության: Կարելի է մարդկանց պատժել կամ մահապատժի ենթարկել գործած դավաճանության համար: Բայց անհնար է մարդուն հարկադրել իր հայրենիքի պես սիրել ինչ-որ մի «երկիր» կամ իրեն օտար մի ազգի ազգայնական դառնալ: Սերն ինքնին է առաջանում, իսկ եթե ինքնին չի առաջանում, ապա չի էլ լինի. այն պարտադրելի չէ, այն ազատության, մարդու ինքնորոշման ներքին ազատության արգասիքն է:

Բայց դա ամենը չէ: Դա նրա հոգեւոր ազատության, կամավոր, հոգեւոր ինքնորոշման գործն է: Ինչպէս հասկանալ:

Նախեւառաջ պարզենք, որ բնական, պատմական, արյունակցական եւ կենցաղային աղերսները, որոնք ինքնին կարող են մարդու համար հայրենիքի ցուցիչներ չհանդիսանալ, կարող են եւ պիտի ձեռք բերեն այն նշանակությունը, որը դրանց հայրենիքի սիրո արժանի առարկան է դարձնում: Այդժամ դրանք տոգորվում են ներքին սրբազան նշանակությամբ, քանզի մարդը դրանց միջոցով իր հոգու եւ ոչ միայն իր, այլեւ նախնիների եւ իր ժողովրդի համար ասես մարմին, կամ կացարան, կամ օրրան, կամ զենք ու միջոց, կամ նյութ է ձեռք բերում: Այդժամ կյանքի՝ մեր թվարկած արտաքին պայմաններն ազգային ոգու եւ նրան անհրաժեշտ նյութի ստույգ նշանակներ են դառնում: Ահա թե ինչու ուստի սրտին հաճո չեն հարավամերիկյան

դաշարափթթուն հարթավայրերը եւ Կանադայի սառնամած անապատները, բայց մալոռուսական տափաստաններն ու արխանգելսկյան ձնածածկ ամայությունը կարող են ստիպել նրա սիրտը տրոփել: Ոչ թե արյունն ինքն է լուծում հայրենիքի հարցը, այլ արյունը՝ որպես հոգեւոր ավանդույթի մարմնավորող ու կրող: Ոչ թե տարածքն է սրբազան եւ անձեռնմխելի, — քանզի կայսերական Ռուսիան կամավորաբար զիջեց Ալյասկան, եւ ոչ ոք դրանում խայտառակություն չտեսավ, — այլ ռուսական ազգային հոգեւոր մշակույթի ծաղկման համար անհրաժեշտ տարածքը, որը միշտ ռուս հայրենասերների համար որպես սրբազան ու անձեռնմխելի կընկալվի:

Այսպիսով՝ հարցը լուծվում է բնազդով հաստատված հոգով եւ սիրով՝ հոգեւոր սիրով կամ, ավելի ստույգ ու ամբողջական ասած, սիրով առ ազգային ոգին:

Այսպես՝ ճշմարիտ հայրենասիրությունը բնորոշ է ոչ թե պարզ նվիրվածությունը արտաքին հանգամանքներին եւ կենցաղի ձեւական հատկանիշներին, այլ նրանց մեջ թաքնվող եւ նրանց միջոցով ի հայտ եկող սերն առ ոգի՝ սերն առ այն ոգի, որը եւ նրանց ստեղծել է, կերտել, տառապանքով ձեռք բերել կամ դրանց վրա դրոշմել իր կնիքը: Կարելորդ ոչ թե «արտաքինն» է, ինչպիսին որ է, այլ «ներքինը», ոչ թե առերեւոյթը, այլ նվիրական եւ ի հայտ եկող էությունը: Կարելորդն այն է, թե ինչն է հատկապես սիրվում սիրելիի մեջ եւ հանուն ինչի է այն սիրվում: Այսպես ուրեմն, ճշմարիտ հայրենասեր է նա, ով իր զգացմունքի համար իրապես անձնվեր սիրո եւ ծառայությանն արժանի առարկա ձեռք կբերի՝ մի այնպիսի առարկա, որը նախեւառաջ «հաճելի է, որովհետեւ լավն է», հետո միայն՝ «լավն է, որովհետեւ հաճելի է»:

Սա կարելի է արտահայտել հետեւյալ կերպ. ճշմարիտ հայրենասերը սիրում է իր հայրենիքը ոչ թե սովորական հզոր աշառություն՝ զուտ անհատապաշտորեն (սուբյեկտիվորեն) հիմնավորվող եւ իր առարկային թվացյալ արժեք հաղորդող աշառությամբ («լավն է, որովհետեւ հաճելի է»): «Ինձ դուր է գալիս իմ հայրենիքը, նշանակում է՝ նա ինձ համար լավն է»... Նա այն սիրում է հոգով, ոչ կույր սիրով. ոչ միայն սիրում է, այլեւ հաստատում է սիրելիի կատարելությունը. «Իմ հայրենիքը չքնաղ է, իրապես չքնաղ է ի Տեր, ուրեմն ինչպե՞ս այն չսիրեմ»: Սա նշանակում է, որ ճշմարիտ հայրենասերը ելնում է հայրենիքին բնորոշ իրական, ոչ թվացյալ, առարկայական արժանիքի ընդունումից, այլ

կերպ ասած՝ նա այն հոգեւոր սիրով է սիրում, որի մեջ բնազդն ու հոգին միասնական են:

Սիրել հայրենիքը նշանակում է մի այնպիսի բան սիրել, որն իրականում սիրո արժանի է. այնպես որ այն սիրողն իրավացի է իր սիրո մեջ, նրան ծառայողը՝ իրավացի իր ծառայության մեջ. եւ այս սիրո եւ այս ծառայության մեջ գտնում է իր կենսական ինֆնորշումն ու իր երջանկությունը: Հայրենիք հորջորջվող առարկան այնքան է ինքնին, առարկայորեն եւ կատարելապես չքնաղ, որ այն գտած, ձեռք բերած հոգին չի կարող այն չսիրել...

Մարդը չի կարող չսիրել իր հայրենիքը. եթե չի սիրում, նշանակում է՝ չի գտել այն եւ չունի: Արդ, հենց հոգով, հոգեւոր սովով, աշխարհում աստվածայինի նկատմամբ կամքով է հայրենիքը ձեռք բերվում: Ով հոգով չի սովում (հմետ. Պուշկինի «Հոգեւոր սովով տվայտված...»), ով երկրայինում աստվածայինը չի որոնում, այդպիսին գուցե եւ չգտնի իր հայրենիքը, որովհետեւ կարող է պատահել, որ հոգեւոր գործարան չունենա այն ընկալելու համար: Սակայն նա, ով կտեսնի եւ կճանաչի իր հայրենիքը, չի կարող չսիրել այն: Հայրենիքը հոգեւոր իրականություն է: Այն գտնելու եւ ճանաչելու համար մարդուն անձնական հոգեղենություն է պետք: Դա պարզից էլ պարզ է. հայրենիքն ընկալվում է հենց կենդանի եւ անմիջական հոգեւոր փորձառությամբ. դրանից իսպառ զուրկ մարդը կզրկվի նաեւ հայրենասիրությունից:

Մարդկանց հոգեւոր փորձառությունը բարդ ու իր կառուցվածքով բազմազան է. նա ընդգրկում է նաեւ մարդու գիտակցությունը, նաեւ հոգու անգիտակցական-բնազդային խորքերը. մեկի հետ հայրենի երկրի բնությունը կամ արվեստն է բարբառում, մյուսի հետ՝ իր ժողովրդի կրոնական հավատը, երրորդի հետ՝ ազգային բարոյականության տարերքը, չորրորդի հետ՝ հարազատ ժողովրդի պետական ճակատագրի մեծությունը, հինգերորդի հետ՝ իր իսկ ազնիվ կամքի կենսաուժը, վեցերորդի հետ՝ իր մտքի ազատությունն ու խորությունը եւ այլն: Հայրենասիրություն կա, որ ընտանեկան եւ ցեղական զգացումից է ելնում, որպեսզի այդտեղից իր մեջ ամփոփի ազգային ոգու եւ ազգային կեցության ողջ լայնությունը, խորությունն ու կենսաուժը: Բայց հայրենասիրություն էլ կա, որ հարազատ ժողովրդի կրոնական եւ բարոյական նկարագրից է ելնում, նրա հոգեւոր գեղեցկությունից եւ ներդաշնակությունից, որպեսզի այդտեղից իր մեջ ամփոփի նրա հոգեւոր խռովքի բոլոր աններդաշնակությունները:

Այսպես է Տյուտչեւը գրել.

Այս աղբատիկ գյուղերը,
 Այս լերկ բնությունը
 Հարազատ համբերության երկիրն են,
 Ռուս ժողովրդի երկիրն ես:
 Զի հասկանա եւ չի նկատի
 Օտարազգու հայացքը հպարտ՝
 Ինչ է անթելված եւ ինչ լույս է տալիս ծածուկ
 Մերկությանդ մեջ խոնարհ:
 Քո ողջ երկրով մեկ՝
 Խաչի բեռան տակ կ'հաճ,
 Ծառայի տեսով երկնի Արքան
 Շրջել է՝ օրհնություններ բաշխելով¹:

Հայրենասիրություն կա՝ բնությունից եւ կենցաղից ելած, որ անտեսում է նրանց մեջ առկա միասնական հոգեւոր կենսածեւը, ապա հետո միայն խորասուզվում համաժողովրդական թռիչքի եւ խորության խնդիրների մեջ: Այսպես է արտահայտվում Լերմոնտովն իր «Հայրենիք»² բանաստեղծությունում:

Սիրում եմ հայրենիքս, սակայն սիրով տարօրինակ,
 Եւ անգոր է իմ այդ սիրոյն միտքս մատնել լուրջ պարտության,
 Ո՛չ այն փառքը, որ գնել է տաք արյունով նա շարունակ,
 Ո՛չ հանգիստը, որ լեցուն է իմնավատան հպարտությամբ,
 Ո՛չ էլ նրա նվիրական ավանդները մութ անցյալի
 Իմ մեջ երբեք չեն հարուցում երազանքներ ուրախալի:
 Բայց սիրում եմ, սիրում եմ ես — ինչի՞ համար՝ ե՛կ հասկացիր—
 Նրա անախի ստեպների լուրջությունը ցրտից սառած:
 Նրա թավուտ անտառների տարուբերումն անծայրածիր
 Ու գետերի վարարումը՝ ծովեր դարձած:
 Գյուղամիջյան ճանապարհով սիրում եմ ես թռչել կառնով
 Եւ հայացքով ներթափանցած՝ մթան բոլոր հետախուզել,

¹ Խոռվիքի և աններդաշնակության մասին տես Տյուտչեւի «Խելահեղություն», «Ինչի մասին է կաղկանձը», «Գիշեր և ցերեկ», «Ո՛վ, մարգարեացող հոգի իմ...» և այլ բանաստեղծություններ: Կասկածից վեր է, որ այս մտահայեցողություններն ու պատկերները բանաստեղծը քաղել է ռուսական համաժողովրդական-ազգային հոգեւոր փորձառությունից և ասված են ոչ միայն իր անունից և իր մասին, այլև ողջ ժողովրդի (հատկապես բերված է «Այս աղբատիկ գյուղերը» ոտանավորից — ծնթ.՝ ռուս. հրատ.):

² Լերմոնտովը համաժողովրդական խորության խնդիրներին անդրադառնում է, օրինակ, «Պոետի մահը», «Բորոդինո», «Նովգորոդին», «Երգ ցար Իվան Վասիլևիչի մասին» եւ այլ գործերում:

Փափագելով տա՛մ օթեան՝ տեսնել լույսեր տխուր շարժով,
 Տրամաբախիժ գյուղականների դողդո՛ղ լույսեր:
 Կրակ տված խոզանների ծովան եմ սիրում,
 Բայց ստեպում օթեանն ա՛մ ինչ-որ գումակ,
 Եւ բլուրին՝ ոսկեդեղին ծով արտերում՝
 Մերձ ու մոտիկ մի գույգ կեչի՝ այնպես ներմակ:
 Մի խնդությամբ, որ անհայտ է շատ-շատերին,
 Տեսնում եմ ես դեզ ու հարդով լեցուն մի կալ,
 Պունուր խրճիթ՝ ծածկված շերտով ծղոտների,
 Եւ լուսամուտ՝ իր փեղկերով փորանկար:
 Ու երբ տուն է եւ իրիկուն շաղով-ցողով,
 Մինչ ուշ գիշեր ես կղիտե՛մ այն պարը տա՛մ
 Սուլոցներով, դոփյունների թինդ ու դողով
 Արդեն հարբած մուժիկների զրույցի տակ³:

Բայց այլ հայրենիք էլ գոյությունի ունի՝ հոգեւոր հայրենիքից բխած, նվիրական ու «խորհրդավոր», «այլ ձայների» ականջալուր, «վսեմ կոչման սահմանն» ու «վերջնական նպատակը» հայեցող, որպեսզի բնազանցական (մետաֆիզիկական) բարձունքներից հասու լինի եւ սիրի սեփական ժողովրդի կենցաղը: Այգպիսին է, օրինակ, կոմս Ա. Կ. Տոլստոյի բանաստեղծությունը՝ գրված Ի. Ա. Ակսակովին:

Ինձ հույժ խիստ դատելով՝
 Գտնում ես՝ տաղերս լի են պաթոսով
 Ու պարզությամբ շատ կարոտ:
 Առդ. անանցին փափագելով՝
 Անտեսանելի աշխարհն է զգում հոգիս,
 Հենց որոտընդոստ ձայնի ներքո էլ
 Մեկ անգամ չէ, որ ես, գուցե,
 Կերտել եմ իմ սաղմոսարանը:
 Սակայն այս կյանքն էլ խորթ չէ ինձ,
 Երբ ծառայում եմ հայրենիքին հոգեւոր,
 Հոգուս զարթոնքի պահին էլ
 Չեմ մոռանում երկրայինը:
 Վստա՛հ եղիւր, հաճո է ինձ բնությունը
 Եւ կենցաղը մեր սիրասուն ժողովրդի.
 Նրա ձգտումներն ինձ հարազատ են,
 Իսկ երկրայինը՝ սիրելի.
 Սիրելի են առօրյա պատկերներն համակ,

³ * Մ. ԼԵՐՄՈՆՏՈՎ, *Ընտիր երկեր, Երեւան, 1982 թ., թարգմանությունը՝ Պ. Սեւակի:*

Դաշտերը, արտերն ու գյուղերը,
 Օրորվող անտառների շրջումները,
 Ցողապատ արտերից լսվող խոթոցները գերանդու,
 Դոփյուն-սուլոցով պարերը
 Հարբած մոծիկների^{4*} բարբաջներով ուղեկցվող:
 Սիրում եմ չումակների^{5*} օթեաններն տափաստանի,
 Գետերի վարարումներն հորդառատ,
 Քոչող սայլի նոնոցն
 Ու օրոր-շորոր արտերը ցորենի:
 Սիրում եմ կորովընթաց տոնյկաները^{6*},
 Ընթացի մեջ հնչող սուլոցները սահնակների,
 Ու լավ կռած լծասարերը
 Ու լծադեղընսկեզոծ:
 Սիրում եմ ես աշխարհը այն,
 Ուր ձմեռներն երկար են, տեսական,
 Իսկ գարուններն այնքան մատղաշ,
 Ուր մայր Վոլգայով ի վար
 Լողում են նավերն բուռլակների^{7*}:
 Նվիրական է ինձ ամենն էլ,
 Ինչ էն ձեռքով ես պատկերել, ընկեր իմ,
 Քո իսկ ձգտումները փառաբանական,
 Ազնիվ խոսքիդ հնչյունները խելամիտ:
 Այն էլ ասեմ՝ ինչ սուրբ է, վայելուչ,
 Ինչ ներդաշնակ է մարդու համար երկրի վրա
 Մի՞թե խոռվահույզ հավերժ տիեզերքում
 Այլ՝ վեհ կոչման խորհուրդ չունի՞
 Ու վերջնական նպատակ:
 Այո՛, բույսի ամեն շրջունի մեջ,
 Ամեն տերեւի սոսափի մեջ
 Այլ իմաստ եմ ես տեսնում,
 Այլ գեղեցկություն է երեսում,
 Այլ ձայներ եմ նրա մեջ լսում:
 Եւ մահաբեր կյանքը շնչելով՝
 Սիրով եմ ես հայում երկիրը.
 Հոգիս, սակայն, բարձունքներ է փափագում,
 Կանչում է ինձ, ձեռքով անում հեռաստանը:
 Բայց այդ մասին մարդու լեզվով
 Ինչ-ինչ բաներ ունակ չեմ պատմելու:

⁴ * Մոծիկ — Ռուս գյուղացի:

⁵ * Չումակ — Առուծախով զբաղվող ուկրաինացի գյուղացի:

⁶ * Տոնյկա — Երեք ձիերով լծված կառք:

⁷ * Բուռլակ — Նավաբարձ բանվոր:

Եւ կասկած չկա, որ անանցի հայեցողությանը սովոր ակնը հեշտ հասու կլինի հավերժական գեղեցկությանն ու խորությանն իր ժողովրդի հոգում:

Այսպիսով՝ բոլոր մարդկանց համար մի միասնական, միանման ճանապարհ առ հայրենիք գոյություն չունի: Մեկը ելնում է բնագրի խորքից՝ այն սրբազան հոգեւոր մորենուց, որը նրա անգիտակցականում «հրով վառվում էր, բայց չէր այրվում». մյուսը՝ գիտակցված հոգեւոր հայեցողություններից, որոնց, ուրախ թե տխուր, հետեւում է նրա բնագրը:

Մեկն սկսում է «արյան» կանչից եւ ավարտում կրոնական հավատով, մյուսը՝ սկսում հետազոտությունից եւ ավարտում մարտական սխրանքով: Սակայն հոգեւոր բոլոր ուղիները, որքան էլ մեծ լինեն նրանց մեջ առկա տարբերությունները, տանում են դեպի այն: Գիտության այրի հայրենասիրությունը տարբեր է գյուղացու, հոգեւորականի, արվեստագետի հայրենասիրությունից. մի հայրենիք ունենալով՝ նրանք բոլորը կկառչեն նրան եւ բնագրով, եւ հոգով, եւ սիրով, բայց եւ այնպես յուրաքանչյուրը՝ յուրովի:

Բայց հոգով մեռածը երբեք հայրենիք չի ունենա: Կրոնապես ամալի եւ պետականապես անտարբեր, ամուլ՝ ճանաչողության մեջ, մեռյալ՝ բարի գործեր անելու մեջ, անգործ՝ գեղեցկության հայեցողության մեջ, բացառնակապես չնոգեղեմացած բնագրով, այսպես ասած, «հոգեւոր ապուշի» հոգին հոգեւոր փորձառություն չունի: Եւ այն ամենը, ինչ հոգի է, այն ամենը, ինչ հոգուց է, նրա համար դատարկ խոսք ու անիմաստ արտահայտություն կմնա:

Այդպիսի հոգին հայրենիք չի գտնի, այլ, լավագույն դեպքում, ցմահ կբավարարվի նրա փոխարինիչներով, իսկ նրա հայրենասիրությունը մոլություն կմնա, որին նա, առաջին իսկ վտանգի դեպքում, դյուրությամբ կուրանա:

Հայրենիք ունենալ նշանակում է սիրել այն. բայց ոչ այն սիրով, որը գիտի իր սիրո առարկայի անպետքությունը եւ դրա համար, չհավատալով իր իրավացիությանն ու իրեն, ամաչում է եւ իրենից, եւ նրանից. եւ հանկարծ «հիասթափությունից» կամ էլ մի նոր մոլության ճնշման ներքո սպառվում է: Հայրենասիրությունը կարող է եւ պիտի ապրի միայն այն հոգում, որի համար երկրի վրա ինչ-որ սրբազան բան կա, որը կենդանի փորձառությամբ (թերեւս, միանգամայն «վերբանական

(իռացիոնալ)»՝ նաշակել է այս սրբազանի առարկայական եւ բացարձակ արժեքը եւ այն ընդունել իբրեւ իր ժողովրդի սրբություններից մեկը: Այդպիսի մարդն ստույգ գիտի, որ իր սիրո առարկան ինչ-որ մի չֆնաղ բան է հաշս Աստծու. որ այն ապրում է իր ժողովրդի հոգում ու նրա մեջ արարվում. եւ այդպիսի մարդու մեջ սիրո հուրը բռնկվում է այդ չքնաղ բանին մի թեթեւ, բայց իրական հպումից:

Հայրենիք գտնել նշանակում է իրապես ճաշակել այդ հպումը եւ հոգու մեջ պահել այդ զգացումից բռնկված հուրը. դա յուրատեսակ հոգեւոր դարձի ապրում ունենալ է նշանակում, որը բացահայտ դավանություն է պարտադրում, դա նշանակում է խնդրո առարկայի մեջ բացարձակ արժանիք բացահայտել՝ իրապես եւ առարկայորեն նրան բնորոշ, եւ հարել նրան կամքով ու զգացմունքով, ընդսմին եւ սեփական անձի մեջ անվերապահ հավատարմություն արմատավորել այդ առարկայի նկատմամբ, եւ նրա կատարելությունը անշահախնդրորեն ուրախանալու ունակություն, սիրել եւ ծառայել նրան:

Այլ խոսքով՝ դա նշանակում է սեփական կյանքը միավորել նրա կյանքի հետ եւ սեփական նակատագիրը՝ նրա նակատագրի, իսկ դրա համար հարկ է, որ մարդու բնագդը հոգեւոր խորություն եւ հոգեւոր սիրո շնորհ ձեռք բերի:

Հենց այս գործընթացն էլ ես բնորոշում եմ հետեւյալ խոսքերով. հայրենասիրության հիմքում հոգեւոր ինֆնորոշման գործողությունն է ընկած:

Առհասարակ մարդն իր կյանքը պայմանավորում է նրանով, որ իրեն սիրելի առարկա է գտնում. այդժամ նրան մի նոր վիճակ է տիրում, որի մեջ նրա կյանքը սիրելի բովանդակություններով է լցվում, իսկ ինքը կառչում է այդ աղբյուրին եւ տոգորվում այնու, ինչ այդ աղբյուրը բերում է իրեն: Ընդ որում, ճշմարիտ սերը մարդուն միշտ անձնուրացության ունակություն է պարգեւում, քանզի ստիպում է մարդուն սիրո առարկան իրենից առավել սիրել:

Իսկ երբ մարդն այսպես է ընկալում հոգեւոր կյանքն ու իր ժողովրդի հոգեւոր ժառանգությունը, ապա գտնում է իր հայրենիքը եւ իսկական հայրենասեր դառնում. նա հոգեւոր ինֆնորոշման գործողություն է իրականացնում, որով հոգու ամբողջական եւ ստեղծագործական վիճակի մեջ նույնականացնում է իր նակատագիրը իր իսկ ժողովրդի նակատագրի հետ, իր բնագդը՝ համաժողովրդական ինֆնապահպանության բնագդի հետ:

Հայրենիք կոչվող հոգեւոր գանձը մարդկանց հոգեւոր վիճակներով չի սպառվում, բայց եւ այնպէս նախեւառաջ դրանց մեջ է ապրում՝ հոգիներում, եւ անդ էլ պիտի հայտնաբերվի: Ով իրեն հայրենիքի հարցում չկայացած ու անօգնական է զգում, պիտի նախեւառաջ դիմի իր իսկ հոգուն եւ իր իսկ հոգեւոր փորձառության մեջ նանաչի իր ժողովրդի հոգեւոր աշխարհը (հայրենասիրական ինքնաճանաչողութեան գործողութիւն): Այդժամ հար եւ նման հեքիաթի՝ ականջը գետին հպած հերոսին՝ կլսի իր հայրենիքի ձայնը. նա կլսի, թե ինչպէս է հայրենիքն իր սեփական հոգում հառաչում ու հեծեծում, երգում, լաց լինում ու ցնծում. ինչպէս է տնօրինում, ուղղորդում եւ բեղմնավորում իր իսկ սեփական կյանքը: Հանկարծ կհասկանա, որ իր անձնական կյանքն ու իր հայրենիքի կյանքը վերջին հաշվով մէկ միասնութիւնն է, եւ որ ինքը չի կարող չընդունել իր հայրենիքի ճակատագիրը, քանզի այն նույնքան անխզելի է իրենից, ինչպէս եւ ինքը՝ նրանից՝ թե՛ բնագոյով, թե՛ հոգով:

Հայրենիքը, սակայն, չի ապրում սոսկ իր զավակների հոգիներում: Հայրենիքն իմ ժողովրդի հոգեւոր կյանքն է, միաժամանակ եւ այդ կյանքի ստեղծագործական արարումների ամբողջութիւնը, եւ, վերջապէս, ընդգրկում է նաեւ այդ կյանքի բոլոր անհրաժեշտ պայմանները՝ եւ մշակութայինները, եւ քաղաքականները, եւ նյութականները (եւ տնտեսութիւնը, եւ տարածքը, եւ բնութիւնը):

Այն, ինչ սիրում է իսկական հայրենասերը, ոչ թե պարզապէս «ժողովուրդն» է, այլ հենց հոգեւոր կյանքով ապրող ժողովուրդը. քանզի հոգեւորապէս բարոյալքված, ընկած եւ պիղծ վայելքներով ապրող ժողովուրդը բուն հայրենիքը չէ, այլ լոկ նրա կենդանի հնարավորութիւնը («ներուժը»):

Իսկապէս իմ հայրենիքը («արգիականորեն») կյանքի է կոչվում միայն այն ժամանակ, երբ իմ ժողովուրդը հոգեւոր զարթոնք է ապրում. բավական է հիշել հրեա հանդիմանող-մարգարեների արդար ցասումնալից խանդավառութիւնը: Ճշմարիտ հայրենասերին թանկ է ոչ թե պարզապէս բուն «ժողովրդի կյանքը» եւ ոչ թե պարզապէս «կյանքը լիութեան» մեջ, այլ հատկապէս ճշմարտապէս հոգեւոր եւ հոգեւոր-ստեղծագործական կյանքը:

Այդ իսկ պատճառով եթե նա երբեւէ տեսնի, որ իր ժողովուրդը թաղվել է հղիութեան մեջ, խրվել մամոնային ծառայելու մեջ եւ երկրային լիութեանից կորցրել հակումն առ հոգի, կամք ու այն ձեռք բերելու

ունակություն, ապա ցավ ի սիրտ ու սրտմտությամբ կխորհրդածի, թե ինչպես հոգեւոր սով հարուցի ընկած մարդկանց այդ հղիացած ամբոխների մեջ: Ահա թե ինչու ճշմարիտ հայրենասերի համար ոչ թե ինքնըստինքյան են թանկ ու կարեւոր ազգային կյանքի բոլոր պայմանները՝ եւ հողը, եւ բնությունը, եւ տնտեսությունը, եւ կազմակերպվածությունը, եւ իշխանությունը, այլ որպէս հոգու համար նախադրյալներ, հոգով ստեղծված եւ հանուն հոգու գոյություն ունեցող:

Ահա սա է էությունը սրբազան գանձի՝ հայրենիքի, հանուն որի արժե մաքառել եւ հանուն որի կարելի եւ պետք է մահվանն ընդառաջ գնալ: Աստ ամենայն ինչ որոշվում է ոչ թե պարզապէս բնազդով, այլ, որ ամեն ինչից ավելի խոր ու ամեն ինչից ավելի հաստատուն է, հոգեւոր կյանքով, եւ նրա միջոցով էլ ամեն ինչ իր ճշմարիտ նշանակությունն է ստանում եւ իր իրական արժեքը: Եւ եթե երբեւիցե տարածքի մասին եւ ժողովրդի՝ ազատության եւ հոգեւոր կյանքի զարթոնքի միջեւ ընտրության խնդիր ծագի, ապա ճշմարիտ հայրենասերը երբեք չի վարանի. քանզի չի կարելի տարածքը, տնտեսությունը, հարստությունը կամ նույնիսկ շատ մարդկանց հասարակ կյանքը պաշտամունքի առարկա դարձնել եւ հանուն դրա ուրանալ զլիափորն ու սրբազանը՝ ժողովրդի հոգեւոր կյանքը:

Հոգեւոր կյանքը հենց այն է, ինչի համար եւ հանուն որի կարելի է եւ պետք է սիրել սեփական ժողովրդին, պայքարել նրա համար եւ զոհվել հանուն նրա: Հոգեւոր կյանքի մեջ է ամփոփված հայրենիքի էությունը, այն էությունը, որն արժե սիրել իր անձից առավել, որով արժե ապրել հենց այն բանի համար, որ հանուն նրա արժե եւ մահանալ: Նրան արժե ձուլել եւ սեփական կյանքը, եւ սեփական ճակատագիրը, քանի որ այն ճշմարիտ ու նվիրական է Աստծու առաջ: Իմ ժողովրդի հոգեւոր կյանքն ու ստեղծագործությունները ոչ այլ ինչ են, եթե ոչ առ Աստված իրական եւ կենդանի ծառայություն (աստվածապաշտություն), որը պիտի պատվեն ու պահպանեն նաեւ բոլոր մյուս ժողովուրդները: Այս՝ առ Աստված կենդանի ծառայությունը սրբազան ու ինքնին արդարացված է նաեւ ինձ համար, բայց ոչ միայն ինձ եւ իմ ամբողջ ժողովրդի համար, այլեւ բոլորի համար եւ առհավետ, բոլոր մարդկանց եւ ժողովուրդների համար, որոնք ապրում են այսօր եւ երբեւէ կապրեն:

Եւ եթե որեւէ մեկը պատմական օրինակի հիմամբ կամենար համոզվել, որ այլ ժողովուրդների հոգեւոր կյանքը դարեր անց էլ իսկապէս

պատվովում է, ապա թող միայն մտածեր «Հին Կտակարանի», հունական փիլիսոփայության եւ արվեստի, հռոմեական իրավունքի, իտալական գեղանկարչության, գերմանական երաժշտության, Շեքսպիրի եւ ԺԹ. դ. ռուսական գեղեցիկ գրականության մասին...

Ճշմարիտ հայրենասերը, իր ճակատագիրը միավորելով իր ժողովրդի ճակատագրին նրա նվաճումներում եւ անկումներում, օրհասական պահին եւ բարօրության շրջաններում, ինքն իրեն բնագդով եւ հոգով չի նույնականացնում բազմաթիվ եւ իրեն անհայտ «մարդկանց» հետ, որոնց մեջ, հավանաբար, կան նաեւ չար, ազահ, ողորմելի եւ դավաճան մարդիկ. նա նաեւ չի ձուլվում մութ ամբոխի կյանքին, որը խռովության օրերին, ըստ Պուշկինի, «անխոհեմ ու անողորմ» է լինում, նա իրեն չի զոհաբերում աղքատ կամ շվայտ խաժամուժի օգտապաշտական շահերին (առհասարակ խաժամուժ է կոչվում հայրենիք չճանաչող կամ ուրացող ժլատ, անհոգեւոր, հակապետական ամբոխը), նա բնավ գլուխ չի խոնարհում «մեծամասնության» առաջ միայն այն պատճառով, որ բազմաքանակ են, եւ չի համարում, որ մեծամասնությունը միշտ իմաստությունմբ եւ անսխալական կամքով է օժտված:

Ո՛չ, նա իր բնագդն ու հոգին միաձուլում է իր ժողովրդի բնագդին եւ հոգուն. նա կյանքով եւ մահով ծառայում է իր ժողովրդի հոգեղենությանը, քանզի նրա հոգին եւ մարմինը բնականորեն եւ աննկատորեն հետեւում են կատարված նույնականացմանը:

Ինչպես որ մարդու մարմինն ապրում է լոկ մինչ այն պահը, քանի դեռ շունչը բերանում է, այնպես էլ ճշմարիտ հայրենասերի հոգին կարող է ապրել մինչ այն պահը, քանի դեռ իր ժողովրդի կյանքի հետ ստեղծագործական միաբանության մեջ է: Բանն այն է, որ իր եւ իր ժողովրդի միջեւ ոչ միայն հաղորդակցություն կամ միավորում է հաստատվում, այլեւ բնագդի եւ հոգու մեջ ուղղակի միություն է ի հայտ գալիս:

Եւ այս միությունը նա արտահայտում է բազմանշանակ եւ անկեղծ «մենք» անձնական դերանունով:

Այսպիսի նույնականացումը չի կարող արհեստականորեն, քմահաճաբար եւ կանխամտածված ձեւով ստեղծված լինել:


Կարելի է այն ցանկանալ, բայց ձեռք չբերել. կարելի է երազել նրա մասին, բայց չհասնել: Այն կարող է միմիայն առաջանալ ինքնըստինքյան, բնականորեն եւ ակամա՝ ասես ծաղկելով հոգում, վերբանական

(իռացիոնալ) կերպով փթթելով նրանում, հաղթելով եւ համակելով այն: Սակայն հայրենասիրական զգացմունքի «վերբանականության» ընդունումն ամենեւին պետք չէ մեկնաբանել նրան հասու լինելուց հրաժարվելու իմաստով կամ կատարյալ պատահականության, քաոսայնության եւ անորոշալի անօրինականության իմաստով: Բանն այն է, որ իրականում իր ապրումով վերբանական այս զգացմունքը ենթակա է միանգամայն որոշակի բնագրային-հոգեւոր ձեւերի եւ օրենքների, որոնց կարելի է եւ պետք է հասու լինել:

Շարունակությունը՝ հաջորդիվ

Թարգմանությունը՝
ԳՐԻԳՈՐ ԴԱՐԲԻՆՅԱՆԻ





ԳԷՈՐԳ ՄԱԴՈՅԵԱՆ

Բանասիրական գիտ. թեկնածու

ՍԻՐԱՆՈՅՇ ՄԱԴՈՅԵԱՆ

ՅԵՏՁՐՎԵՂԵԱՆՆԵՐԻ ԵՒ ՆՐԱՆՑ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Քրհեղեղի եւ դրան յաջորդած դէպքերի վերաբերեալ առաւել տարա-
Խծուած աւանդութիւնը սուրբգրայինն է¹: Սա մարդկութեան ամենա-
յայտնի, ամենասիրուած, հետեւաբար նաեւ ամենահետազօտուած պատ-
մութիւններից է: Եւ առաջին հարցը ծագում է հէնց սկզբից. ինչու Սուրբ
Գիրքը, ասենք, Ծննդ. Զ. 18-ում Նոյի եւ նրա մերձաւորների պարագային
չի կիրառում «ազգ», «ընտանիք», «գերդաստան» բառերը («...եւ մտցես
ի տապանն. դու եւ որդիք քո, եւ կին քո, եւ կանայք որդւոց քոց ընդ
քեզ»), որ եւ կարող է գայթակղութիւն լինել աւանդական կարգին դէմ
գնացողների համար: Այստեղ պէտք է պարզապէս յիշենք, որ Աստուա-
ծաշնչի հայերէն դասական բնագրում «ընտանիք» ձեւն առաջին անգամ
կիրառում է լոկ Ծննդ. ԼԵ. 2-ում («Եւ ասէ Յակոբ ցընտանիսն իւր»): Սա-
կայն Ծննդ. է. 1-ի՝ «Եւ ասէ Տէր Աստուած ցնոյ. Մո՛ւտ դու եւ ամենայն
տուն քո ի տապանդ» տողում «տուն» բառը հէնց ընտանիք է թարգմանե-
լի: Այն հատուածներում, ուր «ընտանիք» բառը Նոյին ուղղուած խօսքում
չի կիրառուում, Սուրբ Գրքերը տալիս են դրա կազմն ամբողջացնող ան-
դամների անուանական թուարկութիւնը, որ դարձեալ նոյնն է. «...արա՛
դու քեզ տապան... մտցես ի տապանն. դու եւ որդիք քո, եւ կին քո, եւ
կանայք որդւոց քոց ընդ քեզ» (Ծննդ. Զ. 14, 18)՝ այդու վանելով բոլոր
կասկածները: Գայթակղութիւնը բացառում է նաեւ այն հանգամանքով,
որ ոչ միայն ջրերից փրկուող մարդիկ, այլ նաեւ կենդանիները պէտք
է հաւասար թուով՝ «արու եւ էգ» լինէին, քանզի նոր կեանքը նրանցից

¹ Այս պնդումը պատումի հաւանական կամ ճիշտ լինելու մասին չէ եւ բանասիրական տեսանկիւնից իր ձեւակերպումից աւելի ոչինչ չի պարտադրում:

էր սկսուելու: Այս «աստուածային ծրագիրը» երեւում է Ծննդ. Թ. 19-ից. «Սոքա էին որդիք Նոյի, եւ ի նոցանէ սփռեցան ընդ ամենայն երկիր»: Սուրբգրականից քիչ են տարբերուում Եւսեբիոս Կեսարացու աւանդած պատառիկները. «Քսիսութրոսն... որ ի յերբայեցւոցն Նոյ կոչի»², հրաման է ստանում՝ «նաւ գործել եւ ի ներքս մտանել՝ հանդերձ ազգականօք եւ կարեւոր բարեկամօք»³ եւ «զկին եւ զորդիս եւ զկարեւոր բարեկամս ի ներքս մուծանել»⁴: Թերեւս, «ընտանիք» բառը Նոյին վերաբերող հաստատմանը չկիրառելու որոշակի բացատրութիւն կարելի է համարել Անկանոն գրքի տողերը, որոնց համաձայն՝ հրամանն ստանալու պահին Նահապետը դեռեւս ընտանիք չունէր, ուստի եւ չէր կարող «ընտանեօք հանդերձ» տապանը մտնելու հրահանգ ստանալ. «Հրամայեաց Աստուած Նոյի տապան շինել. եւ ամուսնանալ»⁵: Անկանոն գիրքը նաեւ մատնանշում է այդ ամենի բուն նպատակը. «Զաշխարհս ամենայն ջրով անցուցանելոց է, զամենեսեան խեղդելոց է, եւ [դու] լինիս նոր Ադամ. զի ի զաւակէ քումմէ լցցի աշխարհս»⁶: Եւ իսկապէս, հետագայ շարադրանքում տեսնում ենք, որ նախախնամութիւնն իրականացաւ, ու Նոյեան սերունդները շատացան, «բազմացան զաւակք նորա... աճեցան եւ բազմացան եւ լցին զՆախ իջեւան, եւ նովաւ լցին զաշխարհ»⁷:

Սուրբ Գրքերը վկայում են նաեւ, որ ջրհեղեղից փրկուողներն ութն էին՝ Նոյ նահապետը, նրա կինը եւ նրանց երեք որդիները՝ իրենց կանանց հետ (Ծննդ. է. 7 եւն): Այս թիւը կրկնուում է նաեւ այլ՝ անգամ հեռւոր ժողովուրդների աւանդութիւններում: Օրինակ՝ չինական հնագոյն գրութիւններում ջրհեղեղից փրկուող Նահապետը հեղեղի, նաւի եւ ութ բերանի համադրութեամբ ստեղծուող գրանշանով է յիշատակուում (նրան մատնանշող առնուազն 24 հին գրանիշ է յայտնի, եւ բոլորը՝ հեղեղ + նաւ + 8 բերան կազմութեամբ)⁸: Հայկական աւանդութիւնների պարագային պէտք է ի նկատ առնուի Ղանալանեանի հետեւեալ դիտարկումը.

² «Եւսեբիոսի Պամփիլեայ Կեսարացոյ Ժամանակականք», մասն Ա., «Ժամանակագրութիւն պատմական», Վենետիկ, 1818, էջ 30:

³ Անդ, էջ 32—33:

⁴ Անդ, էջ 34:

⁵ Տե՛ս «Թանգարան հին եւ նոր նախնեաց», գիրք Ա., «Անկանոն գիրք Հին Կտակարանաց», Ս. Ղազար, 1896, էջ 321:

⁶ Տե՛ս անդ, էջ 322:

⁷ Տե՛ս անդ, էջ 323—324

⁸ Տե՛ս K. S. VOO, R. SHEELEY, L. HOVEE, Noah's Ark Hidden in the Ancient Chinese Characters, TJ 19(2) 2005, էջ 96—108:

«Յայտնի է, որ ե՛ւ հայերի, ե՛ւ նրանց հարեւան ասորիների մօտ, Աստուածաշնչից անկախ, հնագույն ժամանակներից գոյություն են ունեցել ջրհեղեղի մասին աւանդություններ, որոնք հետագայում Աստուածաշնչի ազդեցութեամբ կենդանացել ու նորոգուել են»⁹: Հետեւաբար, երբ արտաքին գրքերն ու ժողովրդական բանահիւսությունը փրկուողների աւելի մեծ թիւ են ներկայացնում, այդ երեւոյթը չի կարելի պարզապէս անտեսել, որովհետեւ դրանք կարող են «Աստուածաշնչից անկախ, հնագույն ժամանակներից գոյություն» ունեցածները լինել: Փրկուողների թուային կազմն ընդլայնող տեղեկություններ կան, ասենք, Բերոսոս Քաղգէացու մատեանից մնացած պատառիկներում: Պատումներ կան, որ հրէական (բնականաբար նաեւ քրիստոնէական) աւանդութեանը հակասելով՝ շարադրանքը բանահիւսական տրամաբանութեան տեսանկիւնից դարձնում են առաւել հիմնաւոր: Օրինակ՝ Սուրբ Գրքերը Նոյի (առաւել եւս նրա ժառանգների) վերաբերեալ որեւէ տեղեկություն չեն տալիս, թէ նաւաշինական կամ ծովագնացական հմտություններ է ունեցել: Եւ այս անծանօթ գործում յաջողելու աստուածաշնչեան միակ հիմնաւորումն այն է, որ Նոյին ճշգրիտ հրահանգներ տրուեցին նաւի կառուցման վերաբերեալ¹⁰, ինչի շնորհիւ նա կարողացաւ մի այնպիսի տապան կառուցել, որը դիմակայեց հեղեղի ջրերին: Աստուածաբանական տեսանկիւնից այս «ճշգրիտ հրահանգներն» այնքան «հիմնաւոր են», որ անգամ չի քննարկւում, թէ ընդհանրապէս Նոյն իր կեանքում երբեւէ հիւսնություն արել էր կամ հաշուողական-գծագրական տարրական գիտելիքներ ունէր թէ ոչ: Ամենեւին խօսք չկայ նաեւ նաւարկութեան մասին. տապանն ամբողջութեամբ յանձնուած է եղել նախախնամութեանը: Սակայն այս եւ նման հարցերին պատասխանում են մեր նշած աղբիւրները. դրանք երկու նոր հանգամանք են աւելացնում պատումին. ա) փրկութեան միջոցը կառուցելու համար Նոյը դիմել է «նաւի ճարտարապետի» օգնութեանը, բ) հեղեղի ժամանակ օգնութեան է(են) հասել նաւավար(ներ): Յատկապէս վերջինիս ներկայութիւնը կարելոր է արտաքին պատումի մէջ, որովհետեւ ջրհեղեղից փրկուողները ոչ թէ պարզապէս նաւում փակուելով պիտի ազատուէին աղէտից, այլ ի սկզբանէ նահապետին պատուիրուած էր նաւել աստուածների մօտ, իսկ դա ծովագնացական եւ նաւը

⁹ Ա. ՂԱՆԱԼԱՆԵԱՆ, *Աւանդապատում, Երեւան, 1969, էջ 245*։

¹⁰ *Տէս Ծննդ. 2, 15–16*։

կառավարելու որոշակի հմտութիւններ էր պահանջելու¹¹: Ալեքսանդր Բագմավէպի շնորհիւ պահպանուած բերոսոսեան տողերը ցոյց են տալիս, թէ երբ տապանը կանգ առաւ, Նահապետը՝ Քսիսութրոս-Նոյը, «ելանել կնաւ եւ դստերբ միով հանդերձ ճարտարապետաւ նախն... եւ կնոջն նորա եւ դստեր եւ նաւապետին ի նոյն պատիւ վայելել»¹²: Իսկ Աբիւղէնոսի միջոցով պահպանուած հատուածում կարդում ենք. «Եւ իբրեւ Սիսիթրոս զայն ի գլուխ հանեալ վճարէր, մինչդեռ առագաստ ձգեալ»¹³ նաւարկել ի Հայս կամէին, յանկարծակի հասանէին նաւավարն յԱստուծոյ»¹⁴: Այսպիսով՝ համաշխարհային տարածում գտած ութ փրկուողների մասին պատումին աւելանում են նոր գործող անձինք, որ Սուրբ Դրքերում վկայուած շեն եղել. նրանք են՝ Նոյ նահապետի դուստրը եւ նաւի ճարտարապետ-նաւավարը (այս կոչումներով կարող է հանդէս գալ նաեւ մէկ անձ, որովհետեւ «ճարտարապետ»-ը թարգմանելի է թէ՛ իբրեւ «շինօղ նաւաց», թէ՛ «ղեկավար, նաւապետ»¹⁵, իմա՝ նաւավար): Միւս կողմից դիտելի է, որ համաձայն աւանդութիւնների ճշող մեծամասնութեան՝ ջրհեղեղից բոլոր փրկուողները զոյգերով էին. Նոյն իր կնոջ հետ, երեք որդիներն իրենց կանանցով: Թերեւս կարելի է կարծել, որ Բագմավէպի աւանդած պատումով ընտանիք պիտի կազմէին նաեւ Նահապետի դուստրն ու նաւավարը: Մինչդեռ արիւղէնոսեան տարբերակով արդէն գործ ունենք առնուազն երկու նաւավարի հետ, այսինքն՝ այդ շարադրութեամբ եւս երկու ընտանիք կազմելու հնարաւորութիւն էր ստեղծուելու:

Նոյ նահապետի նաւաշինական կարողութիւնների վերաբերեալ վերելում հնչած հարցին պատասխանում է նաեւ հայկական աւանդազրոյցը: Դրանից տեղեկանում ենք, որ իրաւամբ նաւ պիտի կառուցէր «համապատասխան մասնագիտական հմտութիւններով» օժտուած մէկը. «Նոյ նահապետն օր տապանը պիտի շինէր, կանչեց ուստի մէկիմ ու ըսաց.

¹¹ Այն, որ տապանը ղեկ է ունեցել, այսինքն՝ կառավարուել-ուղղորդուել է դէպի որոշակի աշխարհագրական տեղանք, շատ աղբիւրներում չի նշւում: Բայց նման միտք արտայայտում է մեր աւանդազրոյցներից մէկը. «Նոյ նահապետին կեմին (տապան) գնըց Մաստարու գլխը կայնեցաւ: Նոյ նահապետ տումանը (ղեկ) օլբեց, կեմին գետինը դպաւ, խրխրաց, ըսըց՝ «Տղաք, աշուանդ (աչքերդ) լոս, ջուրը էջեր է: Բերին մաս տարտըղնեցին (բաժանել, ցրել), անունը մնաց Մաստարու լեռ», տէս Ա. ԴԱՆԱԼԱՆԵԱՆ, նշ. աշխ., էջ 29:

¹² Տէս «Եւսեբիոսի...», էջ 35–36:

¹³ Այս բնորոշմամբ տապանն ամբողջովին հանդէս է գալիս իբրեւ լիակատար նաւ. ոչ միայն ղեկ ունէր, այլ նաեւ առագաստ:

¹⁴ «Եւսեբիոսի...», էջ 49:

¹⁵ Տէս ՆՀԲ:

«Արի՛ տապանս շինէ»¹⁶: Հետաքրքիր է նաեւ, որ այդ աշխատանքի դիմաց Նահապետը խոստանում է իր դստերը կնութեան տալ («աղջիկս քեզի տամ»): Զրոյցը նաեւ ներկայացնում է, որ սպասուող աշխատանքն ահռելի էր, եւ մէկ վարպետն ի զօրու չէր այն կատարել: Ուստի՝ «Նոյ նահապետը տեսաւ օր բանը շատ դանդաղ կերթայ, կանչեց ուրիշ էրկու դիւրկրի (ատաղձագործ) ա ու ըսաց. «էկէ՛ք, իմ տապանս շինեցէ՛ք, աղջիկներս կուտամ ձեզի»: Սակայն դէպքերի զարգացումն անակնկալ է խոստանում. «Նոյ նահապետն ընդամէնը մէ աղջիկմ ունէր», մինչդեռ «իրէք մարդու խոստացաւ»: Ու չնայած նախատեսուած չէր, թէ ճարտարապետները պիտի փրկուեն, բայց «ուստեքը տապանին գլոխը իրենց հըմար ա տեղ շինեցին ու ազատան» եւ ջրհեղեղից յետոյ պահանջեցին կատարել խոստումը՝ «աղջիկները ուզեցին»: Եւ «Նոյը մոլըրաւ մնաց», որովհետեւ ընդամենը «մէ աղջիկմ ունիր»: Սակայն ջրհեղեղից փրկող ամենակարող Ուժը դարձեալ օգնութեան է հասնում Նահապետին, եւ նա յանկարծ տեսնում է, որ «իրեն սփան ու շունը աղջիկ դառան՝ իսկ աղջկանը պէս»: Այդպիսով Նահապետն ազատւում է իր խօսքը դրժելու ծանրագոյն խնդրից: Որոշ ժամանակ անց նա այցելում է նորակազմ ընտանիքներին եւ փեսաներից հետաքրքրւում է՝ գոհ են արդեօք նրանք: Առաջինը պատասխանում է՝ «Լաւ է, հըմը... ինչ օր խօսիմ կը՝ իշու պէս կողը դէմ կուտայ»: Եւ «Նոյը հասկըցաւ, օր ատիկ էշն է»: Միւսի ամուսինն այսպէս պատասխանեց. «...շատ լաւ է՝ հըմը ինչ օր կըսեմ, շան պէս շամշիւրմիշ կէնէ»: Եւ Նահապետը հասկացաւ, որ «ատիկայ շունն է»: Եւ միայն երրորդ ընտանիքում «մարթը ոտքէն գլոխ շնորհակալ էղաւ» Նոյից: Խօսքը եզրափակելով, թէ կանանց այդ երեք տեսակներն էլ շատացան, զրոյցը ներկայացնում է իզական սեռի երեւակայական բաժանումը երեք խմբի¹⁷: Իսկ մեր շարագրանքի համար յատկապէս կարեւոր է, որ տապանի վերնամասում վարպետներն իրենց համար տեղ էին շինել, որ ջրհեղեղից փրկուեն՝ աւելացնելով կազմուելիք ընտանիքների թիւը: Դիտելի է, որ սա ոչ թէ պատահական յօրինուածք է, այլ նման աւանդութիւն

¹⁶ Ա. ՂԱՆԱԼԱՆԵԱՆ, նշ. աշխ., էջ 334:

¹⁷ Նոյն պատումը գտնում ենք նաեւ արաբական աւանդագրոյցում՝ լոկ այն տարբերութեամբ, որ ըստ դրա՝ տարբեր պահերի երեք փեսացուներ այցելում են Նահապետին եւ նախնական համաձայնութեան գալով՝ հեռանում են նրա դստերն արժանի տուն կառուցելու: Մնացեալ շարագրանքը իսկական դստեր, շնից եւ աւանակից ստեղծուած՝ կեղծ աղջիկների դրուագով, համընկնում է. տե՛ս J. E. HANAUE, Folk-lore of the Holy Land, Moslem, Christian and Jewish, London, 1907, էջ 16–17:

վաղուց է եղել, համաձայն որի՝ նաև կառուցող վարպետը վերին մասում իր համար մնալու տեղ է սարքել: Ս. Գրիգոր Տաթևացին, խօսելով Նոյ նահապետի բաց թողած ագռաւի մասին, ոչ միայն այս գաղափարն է փոխանցում, այլ նաև յայտնում է ճարտարապետի անունը՝ «Ներսէս անուն արուեստաւոր տապանին՝ շինեաց իւր տուն ի վերոյ կողմանէ», բայց որովհետեւ նախախնամութեամբ որոշուած չէր, որ Ներսէսը պէտք է փրկուի, ուստի նա ընդամենը սնունդ է դառնում ագռաւի համար. «զի ոչ էր հրաման Աստուծոյ, սատակեցաւ նա անդ, եւ զնորա գէշն ուտէր ագռաւն»¹⁸:

Կողմնակալ չլինելու համար նկատենք, որ կան նաև փրկուողների թիւը նուազեցնող կամ անձերին այլոց հետ փոխարինող պատումներ: Օրինակ՝ մահմեդական աւանդութեան համաձայն՝ Նահապետի (Նուխ-նուհ) որդին ջրահեղձ է լինում՝ յուսալով ապաստանել մի բարձր լեռան վրայ, իսկ փրկում են լոկ հաւատացողները¹⁹:

Ուշագրաւ է արհաւիրքից փրկուող Նահապետի մասին զրադաշտական աւանդութիւնը, որ, ի տարբերութիւն ջրհեղեղեանի, համընդհանուր փրկութեան առաւել դիւրին եղանակ է ուղենշում: Հետազօտողները նկատել են, որ Եիման (Yima) հիմնական բնորոշ գծերով միաւորում է Ադամի եւ Նոյի կերպարները²⁰: Նոյեան աւանդութիւնից նրա պատումը հեռանում է յատկապէս այն պատճառով, որ Եիման ոչ թէ հեղեղից պէտք է փրկուէր, այլ սառնամանիքից, ուստի ոչ թէ նա պէտք է կառուցէր, այլ ստորերկրեայ ապաստարան: Եւ Ահուրա Մազդան խօսեց Եիմայի հետ՝ ասելով. «27 (70). Այնտեղ պէտք է տանես երկրի երեսին եղած մեծագոյն եւ երեւելի տղամարդկանց եւ կանանց սերմերը, նաեւ ամենամեծ ու ընտիր անասունների սերմերը»²¹: Ինչպէս նշում է «Մենդոցն արդի գիտութեան լոյսի ներքոյ» գրքի հեղինակը, ստորգետնեայ տունը փրկում է ոչ միայն Եիմային ու նրա ընտանիքը, կենդանական աշխարհը, այլ նաև բուսականութիւնը եւ «specimens of all the human race»²², եւ սա՝ սերմ կամ կենսաբանական նմոշ հաւաքելը պահպանում, աւելի դիւրին

¹⁸ ԳՐԻԳՐ ՏԱԹԵՎԱՅԻ, Գիրք հարցմանց, Երուսաղէմ, 1993, էջ 294:

¹⁹ Ղուրան, Սուրահ ԺԱ. 40—43:

²⁰ ՏԷՍ E. WORCESTER, The Book of Genesis in the Light of Modern Knowledge, New York, 1901, էջ 192:

²¹ Հմմտ. «The Zend-Avesta», Part I, The Vendidad, Translated by J. Darmesteter, Oxford, 1880, էջ 17:

²² ՏԷՍ E. WORCESTER, նշ. աշխ., էջ 372:

իրականացնելի գործ է եւ աւելի փոքր տարածք պահանջող, քան, ասենք, ծաղկման շրջանին հասած կենդանիներին ու գազաններին մէկտեղելը: Սակայն այս ճանապարհն անհամեմատ աւելի կատարեալ մշակման միջոցներ էր պահանջելու:

Զրհեղելի մասին պատմութեան համաշխարհային տարածուածութիւնն առիթ է տուել, որ փրկուողները, յատկապէս՝ Նահապետը, բազում եւ այլազան անուններով հանդէս գան: Եւ ինչպէս տարբեր են Նահապետին տրուող անունները, նոյն կերպ բազմազան են նրա կնոջ մասին յիշատակութիւնները: Հետազոտողներից մէկը Նահապետի կնոջ համար հաշուարկել է 103 անուն՝ դրանք քաղելով բոլոր հնարաւոր աղբիւրներից²³: Բազմաթիւ են նաեւ Նահապետի որդիների ու հարսների անունները: Յոբելենից գիրքը, հարազատ մնալով հրէական աւանդութեանը, մանրամասնում է, որ Նոյի երեք որդիներն իրենց կանանց անուններով քաղաքներ կառուցեցին Լուբար (Ղուբար-Արարատ) լեռան շրջակայքում՝ Nêlâtamâûk, Adâtanêsês, Sêdêqêtelêbâb: Զիովաննի Նաննիի աղբիւրն աւանդում է, որ ապականութեամբ լցուել էր ողջ աշխարհը, եւ «միայն բարի հսկայ Noe-ն էր Աստուծոց երկիւղում եւ հնազանդում նրա օրէնքներին՝ իր ողջ ընտանիքով եւ տնով, որի անդամներն էին՝ Titea-ն նրա կինը, նրանց զաւակները՝ Shem-ը, Cham-ը եւ Iaphet-ը, նրանց կանայք՝ Pandora-ն, Noela-ն եւ Noegla-ն»²⁴: Վիտերբացի վանականը յայտնում է

²³ Տե՛ս F. LEE UTLEY, The One Hundred and Three Names of Noah's Wife. "Speculum", vol. 16, №4 (Oct., 1941), էջ 426—452: Այբբենական ցանկում, հայկական աւանդութեան՝ Նոյեմզարի երկու տարբերակներից բացի, հետաքրքրական է նաեւ ասորական եւ արաբական աղբիւրներից ծագող Haical, Haicala, Haikal, Haykel, Haykol շարքը, որ, ամենայն հաւանականութեամբ, միեւնոյն Հայկալ հնչման տարբեր տառադարձութիւնների արդիւնք կարելի է համարել: Ժամանակին Ղեւոնդ Ալիշանը նկատել է, որ մեր Հայկ նահապետի անունը որեւէ նմանութիւն չունի ո՛չ իր նախնիների, ո՛չ իր սերունդների անունների հետ. «...աւելի զարմանալի է երբ յիշենք մէկ մը իր հօր եւ նախնեաց աւելի երկայն եւ յօդեալ անուանքը, Թորգոմ, Թիրաս, Գոմեր, մէկ մ'այլ իր որդւոց եւ թոռանց անուանքը, որ ամենեւին իրեն չեն նմանիր եւ ընդհանրապէս Ար ու Ամ վանգովք յօդեալ են, ինչպէս Արամենակ, Արամայիս, Ամասիա, Գեղամ, Արայ եւ այլն». տե՛ս «Հայաստան յառաջ քան զիյնելն Հայաստան», էջ 127: Ընդհանուր շարքից Հայկի անուան այս տարբերուելը ոմանց առիթ է տուել կարծելու, թէ անունը հարմարեցուած-սարքովի է, ինչը, փաստօրէն, հերքում է Նոյ նահապետի կնոջ՝ Հայկալ անուան այս տարբերակի առկայութեամբ: Հայկալ-ը բացատրում է ասոր. տանաբառով, ուստի եւ վրաց. թարգմանութեան մէջ անունը դարձել է Տաճարի. տե՛ս A. SU-MIN RI, Commentaire de la Caverne Des Trésors: Étude Sur L'histoire Du Texte Et de ses surces, Lovanii, 2000, էջ 234:

²⁴ Տե՛ս «An Historical Treatise of the Travels of Noah into Europe: Containing the First Inhabitation and Peopling Thereof», Done into English by Richard Lynche, Gent. London, 1601, պարբ. 4:

նաեւ, որ ջրհեղեղից յետոյ Նոյն իր Tytea կնոջից երեսուն զաւակ ունեցաւ՝ «բոլորն էլ հսկաներ էին», եւ նրանք բազմացան ու բնակեցրին աշխարհը: Սակայն, ինչպէս տեսնում ենք, անունների քանակից չի փոխուում Փրկութեան լեռանը հասնողների, բնականաբար նաեւ ջրհեղեղից յետոյ կազմուելիք ընտանիքների թիւը՝ Նահապետն իր երեք որդիների եւ կանանց հետ էր: Եւ այստեղ ծագում է ընդդիմախօսների հերթական հարցը, որ խարսխուում է արինակից բարեկամների միջեւ պատկերացուող կապերին, որոնց առկայութեամբ միայն կարող էր լցուել աշխարհը: Այս խնդիրն ամբողջովին լուծուած է պարթեւական պատումում, որովհետեւ Երման աշխարհի վերաբնակեցման համար պարզապէս պէտք է ի գործ դնէր տղամարդկանց եւ կանանց կենսաբանական նմուշները: Վերելում տեսել ենք նաեւ, որ բերոսեան շարադրանքի համաձայն՝ Նոյն իր հետ պիտի վերցնէր «ազգականներին եւ կարելու բարեկամներին», այսինքն՝ արինակցական կապ չունեցողների: Զրհեղեղի մասին, թերեւս, հնագույն աղբիւր հանդիսացող քաղղէական կաւասալերում նշուած է, որ Նահապետը շատերին է փրկել՝ ներառեալ իր ծառաներին ու սպասուհիներին. «28. Եւ ես ստիպեցի, որ նաւ բարձրանան բոլոր ծառաներն ու սպասուհիներն իմ, 29. դաշտային գազանն ու կենդանիները հարթավայրերի, ինչպէս եւ մարդկանց բոլոր որդիները. ամենքին վերեւ ես բարձրացրի»²⁵: Իսկ արաբական աւանդազրոյցում ասուում է, որ «փրկուեցին Նոյը, նրա ընտանիքը (բացառութեամբ նրա կնոջ, Անակի, Քանաանի եւ Օգի) եւ նրանք, ովքեր հաւատացին, որոնց թիւը ոմանք ասում են վեց, ուրիշները՝ տասը, տասներկու եւ նոյնիսկ եօթանասունութ կամ ութսուն»²⁶: Ներկայ ձեւակերպումը, փաստօրէն, ցոյց է տալիս, որ «հաւատացողները» Նահապետի ընտանիքից չէին: Ի տարբերութիւն այս ամենի՝ Աստուածաշնչի ակնարկները տրամաբանական լուծումների են յանգեցնում: «Տեսեալ որդւոցն Աստուծոյ զդստերս մարդկան զի գեղեցիկ էին, առին իւրեանց կանայս յամենեցունց զոր ընտրեցին... մտանէին որդիքն Աստուծոյ առ դստերսն մարդկան... ետես Տէր Աստուած, եթէ բազմացան չարիք մարդկան ի վերայ երկրի» (Մննդ. 2. 2, 4—5), եւ հէնց սա էր պատճառը, որ Աստուած ասաց. «Ջնջեցից զամենայն մարմին զոր արարի յերեսաց երկրի, ի մարդոյ մինչեւ յանասուն. եւ ի սողնոց մինչեւ ի թռչունս երկնի. զի բարկացայ զի արարի զնոսա» (Մննդ. 2. 7): Անկանոն գիրքն աւելի


²⁵ Հմմտ. G. SMITH, The Chaldean Account of Genesis, New York, 1876, էջ 267:

²⁶ Տէս J. E. HANAUE, Folk-lore..., էջ 14:

մանրամասն է խօսում երկրի վրայ տարածուած ապականութեան մասին. «Խսկ աղջկունքն ազգին Կայէնի, հնարիւք սահմանեցին զկարմրադեղն եւ զսպիտակադեղն, [որովք] զերեսս կարմրացուցանէին եւ սպիտակացուցանէին. զունքն քաշեցին եւ զաչսն դեղեցին եւ ծարուր դրին, զծամն եւ զվարսսն սահմանեցին, եւ այլ պէսպէս սազ եւ երգարանս սահմանեցին. զոտսն եւ զձեռսն խինեցին եւ կարմրացուցին, եւ այլ զարդարանօք զմարմինս իւրեանց զարդարեցին եւ պճնեցին: Եւ այնպիսի պճնեալ զգեստիւք եւ ազգի ազգի եղանակօք գնացին ի լեռան խնդալով եւ պարելով, ծափ տալով եւ փողս հնչեցուցանելով, երկայն ածելով եւ պէս պէս ձայնիւ եղանակելով՝ խառնեցան ընդ որդւոցն Սեթայ, զամենեսեան խաբեցին: Հինգ հարիւր եւ քսան ճգնաւոր էին, [եւ] մի Նոյ միայն մնաց կոյս, եւ այլ ամենեքեան խառնեցան ընդ նոսա եւ չարացան քան զնոսա, եւ եղեն պղծագործ քան զշուն. այլ ո՛չ հայր զդուստրն ճանաչէր եւ ո՛չ մայր զորդին ճոկէր, ո՛չ քոյր զեղբայր. եւ այնպիսի կենօք հանապազ շնային, եւ ոչ յիշէին զԱստուած»²⁷: Հետեւաբար բնական է կարծել, որ իր մաքրութեան շնորհիւ ընտրուած Նոյը եւ նրա ժառանգները չէին կարող նոր խառնակութեամբ աշխարհի բնակեցման սկիզբ դառնալ: Նոյն տրամաբանութեան ծիրում է ասորական «Անձաւի գանձարան» գիրքը. պատմում է, որ մահանալիս Մաթուսաղան Նոյին կտակում է, որ Ադամ նախահօր մարմինը տեղաւորի տապանի կենտրոնում: «Դու եւ որդիներդ պէտք է զբաղեցնէք տապանի արեւելեան կողմը, իսկ կինդ եւ որդիներդ իդ կանայք՝ արեւմտեանը: Կանայք չպէտք է մօտենան ձեզ, իսկ դուք՝ նրանց: Դուք նրանց հետ ո՛չ պէտք է ուտէք, ո՛չ խմէք, ու մինչեւ տապանից դուրս գալը չյարաբերուէք նրանց հետ»²⁸: Այսինքն՝ պահեցողութեան պարտադրանք կար անգամ ամուսնու եւ կնոջ յարաբերութիւններում, եւ բարոյական պահանջները գերակայ էին անգամ ճգնաժամային վիճակում: Եւ բնական է, որ այս հարցին նման նուրբ մօտեցում ցուցաբերող պատումը չէր կարող շարունակուել այնպէս, որ աւարտուէր մերձաւոր հարազատների խառնակութեամբ, պարզապէս Սուրբ Գիրքն ամբողջութեամբ չի վերարտադրում վաղնջական պատմութիւնը փրկուածների, նրանց ընտանիքների եւ ընտանեկան յարաբերութիւնների մասին,

²⁷ «Թանգարան հին...», էջ 321:

²⁸ Տէս «The Book of the Cave of Treasures: A History of the Patriarchs and the Kings, Their Successors from the Creation to the Crucifixion of Christ», Translated from the Syriac Text By Sir E. A. Wallis Budge, London, 1927, էջ 47:



Նոյեան տապանը Հայոց աշխարհում: Աշխարհի Հերկթորդեան փառեղ, ԺԳ. դարավերջ:


*ուստի հետազոտողներն ստիպուած են լինում այլ ժողովուրդների աւան-
դութիւններում որոնել բացատրութիւններ:*

РЕЗЮМЕ

В статье рассматриваются библейские, вавилонские, сирийские, парфянские, арабские и армянские предания об оставшихся в живых после Великого потопа и семьях, которые образовались после него.

SUMMARY

The article examines the biblical, Babylonian, Syrian, Parthian, Arabic and Armenian traditions about the survivors of the Great Flood and the families formed afterwards.



ԱՐԾՐՈՒՆԻ ՍԱՀԱԿՅԱՆ

Պատմական գիտ. դոկտոր,

բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր, ՄՄ

ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍԻ ԲՆԱԳՐԻ ՇՈՒՐՁ

Սկիզբը՝ նախորդիվ

«Ագաթանգեղոսի Պատմությունը» եւ Հովհանն Ոսկեբերանը.
միջբնագրային աղերսներ

Մայր Ագաթանգեղոսի հիմքում ընկած է Դ. դ. վերջին Ս. Սահակի գրած հունարեն վարքը, որի առայժմ հայտնի միակ ընթերցողական արձագանքը եղել է Ս. Հովհանն Ոսկեբերանի կողմից՝ որպես վարքի վերապրում-վերապատում Ս. Գրիգոր Լուսավորչին նվիրված «Ներբողեան»-ում (404–405 թթ.): Ուստի հարկ է համառոտ անդրադառնալ ներբողյանի բովանդակության այն տեղերին, որոնք բխում են Ս. Գրիգորի եւ Հռիփսիմյանների միացյալ վարք-վկայաբանությանից, որը տարաբախտաբար առանձին մեզ չի հասել, բայց պահպանվել է մայր Ագաթանգեղոսի կազմում՝ խմբագրաբար ընդարձակված եւ Հովհանն Ոսկեբերանի «Ներբողեան»-ում համառոտ վերաշարադրված:

Նախ՝ երկու առանձին սրբախոսական երկերի կցման, ապա բովանդակային կազմի մասին:

Այդ կցումը, որ նույնն է թե գրական մոնտաժը, սկզբնական տեսքով պահպանվել է Ոսկեբերանի «Ներբողեան»-ում, որից կարելի է կռահել, որ հունական միացյալ վարք-վկայաբանության բնագրում այն եղել է դեռեւս արհեստական, մի տեսակ մեքենայորեն արտահայտված:

Բանն այն է, որ Գրիգորի առանձին վարքում խոզակերպումը եղել է ի պատիժ Տրդատի՝ սուրբին խոր Վիրապ նետելու համար, իսկ Հռիփսիմյանների առանձին վկայաբանության մեջ, բնական է, խոզակերպում չի եղել, բայց սրբերի թաղման տեղերում պետք է եղած լինեն լուսարձակումներ եւ բուժումներ: Երկուսն իրար միացնելու միջոցով մի պատում ստանալու նպատակով Սահակ Պարթեւը ժողովրդական

հեքիաթասացների կամ վիպասանների նման Գրիգորին միառժամանակ թողել է վիրապում եւ անցել զուգահեռ դիպաշարին՝ սրբունիների պատմությանը, որտեղ Տրդատին խոզակերպության մեջ պատուհասել է նրանց սպանության դիմաց, որից հետո Տրդատի քրոջ երազի միջոցով նորից վերադարձել է վիրապում մնացած Գրիգորին: Ահա թե ինչպես են այս անցումները հետք թողել բնագրում:

«Ներբողեան»-ում հորի մեջ Գրիգորի փակվելուց հետո հեղինակն անցում է կատարում Հռիփսիմյանների զուգահեռ դիպաշարին. «Այսպիսի ուրումն բարբառէր հանապազ, այսպիսի աղաւթիւք պաղատէր երանելին Գրիգոր, յայսպիսի մաղթանս խոնարհեցուցանէր զամենողորմ գթութիւնն Աստուծոյ, մինչեւ յայց ել հովին քաջ մոլորեալ հօտի իւրոյ, այն, որ կամի զամենայն մարդիկ զի կեցցեն եւ ի գիտութիւն ճշմարտութեան եկեսցեն ամենեքեան, եւ այցելութեանն օրինակ էր այսպիսի: Կին ոմն գեղեցկութեամբ հռչակեալ Հռիփսիմէ անուն, յարեւմտից արեգակն ծագեալ արեւելեան աշխարհին հանդերձ լուսափայլ աստեղօքն, որ ընդ նմա...»¹: Ապա շարունակվում է մինչեւ ավարտ՝ կույսերի նահատակություն. «Այսպիսի խանդաղատական բանիւք յորդորէ (Գայանեն,— Ա. Ս.) զկոյսն անխոնարհելի զմտացն դիտաւորութիւն ունելով առ Աստուած մինչեւ ցկատարումն, որովք արիաբար, ճգնութեամբ եւ վկայական հանդիսիւ կատարէին ամենեքեան ի Քրիստոս:

Եւ զի՞նչ յետ այսորիկ պատուհասեալ լինէր բռնաւորն հանդերձ զօրօք դժնդակագոյն հարուածովք, քանզի փոփոխեալ լինելով ի մարդկային բնութենէն ի կերպարանս խոզի՝ որպէս երբեմն արքայն Ասորեստանեայց ի ձեռն Դանիէլի, ոչ օրինակաւ, այլ արդեամբք, ոչ առասպելով, այլ ճշմարտութեամբ» (էջ 23—24): Ապա հաջորդում է արքայաքրոջ երազը եւ այլն՝ ըստ կարգի²:

Արդ, եթե էջ 22-ի եւ 24-ի միջեւ զուգահեռ ներդրված դիպաշարը մտովի հանենք, կստանանք Ս. Գրիգորի առանձին վարքի մի պատկեր, որում

¹ «Երանելոյն Յովհաննու Ոսկերեքանի Կոստանդնուպոլսի եպիսկոպոսապետի Ներբողեան ասացեալ յաղագս վարուց եւ նահատակութեան սրբոյն Գրիգորի Հայոց Մեծաց հայրապետի ի Կոկիսոն Հայոց մինչ յաքսորանս էր, ի խնդրոյ հայազին ուրումն եպիսկոպոսի եւ վարդապետի համազգույ Նորին Դեոսկորոս անուն կոչեցելոյ եւ այլ եւս յոգնախումբ բազմութեան, որք ժողովեալ էին յաւուր յիշատակի մեծահռչակ տօնի նորին սուրբ Լուսաւորչին արեւելեան աշխարհին», «Սոփերք հայկականք», հտ. 4, Վենետիկ, 1853, էջ 22: Այսուհետ սույն հրատարակության հղումների էջերը կնշվեն բնագրում:

² Օրինակ՝ բառը մեզ հուշում է, որ եղել է առ աչոք եւ ոչ թե այլաբանորեն, ինչպես առական:

Գրիգորի փակվելուն (ոչ թե տարիներ, այլ օրեր անց, ըստ մայր բնագրում պահպանված մի նշումի՝ վեց օր) հաջորդում է խոզակերպումը:

Այսպես՝ «...այն որ կամի զամենայն մարդիկ զի կեցցեն եւ ի գիտութիւն ճշմարտութեան եկեսցեն ամենեքեան...» (էջ 22), որին անմիջապես հաջորդել են հետեւյալ տողերը. «Եւ զի՛նչ յետ այսորիկ. պատուհասեալ լինէր բռնաւորն հանդերձ զօրօք դժնդակագոյն հարուածովք, քանզի փոփոխեալ լինելով ի մարդկային բնութենէն ի կերպարանս խոզի...» (էջ 24): Այսինքն՝ բուն վարքում չի եղել «եւ այցելութեան աւրինակ էր այսպիսի» (էջ 22) տողից մինչեւ «կատարէին ամենեքեան ի Քրիստոս» (էջ 24) տողն ընկած հատվածը, որն արհեստական կցվածքի արդյունք է:

Նույնը, սակայն, չի ասվի մայր Ագաթանգեղոսում եղած համակցման (մոնտաժման) արվեստի մասին: Այն ավելի նուրբ է, սահուն ձեւով դիպաշարը Գրիգորից անցնում է Հռիփսիմյաններին, ապա վերադառնում Գրիգորին սրբուհիների գերեզմանների վրա վկայարաններ կառուցելու միջոցով: Զգացվում է, որ նոր խմբագիրները հատուկ ջանացել են բնագիրը մշակել եւ ընդարձակել: Այնուամենայնիւ, ինչ-որ հետք Ս. Գրիգորի առանձին վարքից մայր Ագաթանգեղոսը եւս պահպանել է: Գրիգորի չարչարանաց պատմությունը մայր բնագրում ավարտվում է §136-ով, որում Տրդատը Հայոց աշխարհին ուղղված հրովարտակի մեջ նշում է, որ ինչպես ինքը չխնայեց իր սիրելի վաստակավոր Գրիգորի կյանքը քրիստոնյա լինելու պատճառով, այնպես բոլորը պետք է զգուշանան եւ ապավինեն աստվածներին եւ արքային:

§137-ից սկսվում է նոր գլուխահեռ դիպաշարը՝ միանգամայն ինքնուրույն պատմողական սկսվածքով. «Եւ եղեւ ընդ ժամանակս ընդ այնոսիկ խնդրեաց իւր կին կայսրն Դիոկղետիանոս»: Ավարտվում է §§209—210-ով, որոնցում, սրբախոսական ժանրին համապատասխան, ի մի են բերվում զոհերի քանակը եւ ամսաթվերը: «Արդ ի քսան եւ ի վեց ամսոյն հոռի կատարեցաւ սուրբն Հռիփսիմէ դասուն սրբով... եւ ի քսան եւ եօթն ամսոյն հոռի՝ սուրբն Գայիանէ երկու իւրովք ընկերօքն...»³:

Հաջորդ իսկ պարբերութիւնը (§211) պատումը դառնում է Տրդատի պատուհասմանը, ինչը մաքուր դարձաբանական վարքի կամ պատմության դրվագ է, որովհետեւ դրանով պետք է դարձի գա թագավորը,

³ «Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց», աշխատ.՝ Գ. Տէր-Մկրտչեան եւ Ստ. Կանալեանց, Տփլիս, 1909, էջ 11: Այսուհետ բնագրում կնշվեն մեջբերվող հատվածների պարբերութիւնների (պարագրաֆների) համարները:

ուստի եւ Ս. Գրիգորի առանձին վարքի մասն է կազմում: Այն չէր կարող սրբուհիների վկայաբանության մաս լինել, որովհետեւ հակասում է այդ ժանրի քերթողական արվեստին (պոետիկային):

Արդ, §211-ը լիովին կարող էր շարունակել §136-ին, միայն թե Հռիփ-սիմեի անունը պիտի չլիներ, կամ փոխարենը լիներ Գրիգորի անունը: Այսպես՝ §136-ում իր սիրելի Գրիգորի «զմեծ վաստակն» ոչինչ համարելով դիցն սիրո եւ երկյուղի համեմատ՝ Տրդատը §211-ում վեց օր հետո որսի է գնում եւ կառք նստելիս, ըստ §212-ի, պատուհասվում, այն է՝ խոզակերպվում իրեն ուղեկցող մարդկանց հետ (§313): Իսկ §214-ն ասում է. «Յայնմ ժամանակի տեսիլ երեւեալ յԱստուծոյ ի վերայ քեռ թագաւորին...», ըստ որի՝ Խոսրովի դուխտին մի լուսակերպ մարդ հուշում է, որ նրա եղբայր Տրդատը բժշկություն կգտնի Արտաշատում կապված Գրիգորից:

Հավանաբար, մինչ այդ արքունիքում փորձում են արքայի համար մի ելք գտնել, ուստի փորձանքից մի օր հետո տեսիլ է գալիս: Բայց քանի որ մարդիկ չեն հավատում եւ խնդում են, տեսիլը կրկնվում եւ կրկնվում է (§216)՝ սպառնալով, որ եթե մյուսներին չպատմի, հարվածները կսաստկանան: Վերջապես պատմելուց հետո Օտայ անունով նախարարը մեկնում է Արտաշատ եւ Գրիգորին, հորի մեջ ողջ գտնելով, բերում է Վաղարշապատ (§219):

Փաստորեն, ըստ Ս. Գրիգորի առանձին վարքապատումի՝ Գրիգորը հորում մնացել է՝ 6 օր (որսից առաջ) + 2 օր (խոզակերպումից հետո, երազից առաջ) + 1 օր (երազի կրկնվելը) + 5 օր (երազի հնգկնվելը) + 1 օր (Օտայի Արտաշատ գնալ-գալը), այսինքն՝ 15 օր, ինչը միանգամայն զարմանալի չէ ողջ մնալու համար: Բայց քանի որ, ըստ Սահակ Պարթևի մտահղացման, Տրդատի բռնարարքը Գրիգորից հետո պետք է տարածվեր նաեւ սրբուհիների վրա, 15 օրը փոխվել է 15 տարվա, չնայած մի այլ տեղ նշված է 13 թիվը (§§122, 124, 132): Այդ դեպքում էլ պետք է հաշվարկել 13 օր (6+1 օր (կրկնվելը) + 5 օր (հնգկնվելը) + 1 օր (բերելը): Ինչ-որ է, 13 թե 15 տարվա դեպքում առաջ է եկել դիպաշարային մի նոր դրվագ. մի այրի կին օրը մի նկանակ հաց է նետել հորի մեջ (§124): Բայց կա եւս մի այլ անուղղակի վկայություն, որը նույնպես հաստատում է 15 օրվա ժամկետը: §223-ում Գրիգորը հարցնում է մեռած վկաների տեղերը եւ նրանց մարմինները ինն օր գիշեր-ցերեկ անթաղ մնալուց հետո գտնում միանգամայն անվնաս... «Եւ տեսին զի զօրութեանն Աստուծոյ պահեալ էր զմարմինս նոցա, զի այն ինն տիւ էր եւ ինն գիշեր...»: Եթե

ուղիղ իմաստով ընկալենք, այն է՝ սպանության վեցերորդ օրը խոզակերպվեց, 9-րդ օրը Գրիգորը ելավ վիրապից, հետեւաբար պատուհասված մնաց 3 օր (9—6), ինչը հակասում է 15-օրյա ժամկետին, մանավանդ այն պայմանին, որ անհրաժեշտ է երազը կրկնել եւ հնգկնել, հետո Գրիգորին հորից հանել: Բայց եթե ընկալենք Հռիփսիմյաններից անկախ, ապա կստացվի, որ Գրիգորը Տրդատի խոզակերպումից ինն օր հետո դուրս է ելել ($6+9=15$ օր):

Ի դեպ, 15 օրը միացյալ վարք-վկայաբանության մեջ 15 տարվա փոխարկվելուց հետո հետադարձ ուժով սկսել է ազդել պատմական հաշվարկների վրա, թե երբ է Տրդատը պետականորեն ընդունել քրիստոնեությունը: Թե՛ Խորենացին, թե՛ մյուսները, որոնք ընդունել են 301 թվականը, ելակետ են ունեցել հենց Ագաթանգեղյան 15 տարին, որովհետեւ, այն ավելացնելով Տրդատի գահակալման 287 թվին, ստացել են 301:

Վարքի եւ վկայաբանության միացման թեման ավարտելուց առաջ արժե եւս մի քանի դրվագ հիշատակել Սահակ Պարթեւի հունական միացյալ վարքից, որոնք մտել են մայր Ագաթանգեղոսի մեջ, եւ որի վկան դարձյալ Հովհան Ոսկեբերանն է:

Խոզակերպումի դրվագում մայր Ագաթանգեղոսը Ս. Գրքից զուգահեռ է անց կացնում Բաբելոնի Նաբուգոդոնոսորի հետ (§212), իսկ Հովհանի «Ներբողեան»-ում զուգահեռվում է «որպէս երբեմն արքայն Ասորեստանեայց ի ձեռն Դանիէլի» (էջ 24): Արդյոք Ասորեստանն է հիշվել Սահակի հունական բնագրում, թե՛ Բաբելոնը, դժվար է ասել, բայց որ նման զուգահեռ անց է կացվել, փաստ է: Կամ՝ մայր Ագաթանգեղոսը §§220—221-ում պատմում է, որ վիրապից ելնելուց հետո Գրիգորի առաջին գործը լինում է ընդառաջ եկող մերկ խայտառակ թագավորին ու մյուսներին աղոթքի միջոցով զգաստացնելը, այսինքն՝ բանականությամբ օժտելը եւ հրամայելը, որ նրանք անձամբ իրենց ամոթը հանդերձներով ծածկեն: Այս դրվագի դիմաց Ոսկեբերանը ունի հետեւյալը. «Եւ նայեցեալ Տէր յաղաչանս սրբոյն, շնորհեաց ամենեցուն առժամայն զբուժումն ի դիւական ախտիցն, եւ զմարդկապէսն մտաւորութիւն եւ զխօսս՝ թագաւորին...» (էջ 34):

Արդեն նշվել է, որ նախնական բուժման այս դրվագը տուրք է «գրական մոնտաժին», որովհետեւ Ս. Գրիգորի առանձին բանավոր վարքապատումի մեջ բուժումը պետք է լիներ միանգամից:

Իսկ երկրորդ գործը, որ անում է Գրիգորը վիրապից ելնելուց հետո, վկաների մարմինները հավաքելն ու ամփոփելն է (§§223—224): «Իսկ

անդէն սկսաւ հարցանել Գրիգորիոս, թե ուր եղեալ են մարմինք վկայիցն Աստուծոյ» (§223): Ապա քիչ անց հաջորդում է. «Իսկ նա ընթացեալ ժողովել եւ ամփոփել զմարմինս նոցա ի սպանման տեղեացն, զի կային անդէն» (§223):

«Եւ ամփոփեաց, առ գնաց (՞) ի հնձանն, ուր վանքն իսկ լեալ էին նոցա եւ իւր իսկ վանս անդէն կալեալ՝ օթեւանս առնէր... առ Աստուած աղօթս մատուցանէր վասն նոցա փրկութեան, եւ խնդրուածս առնէր, զի դարձցին եւ ապաշխարութեան հնարս գտանել մարթասցեն» (§224): «Եւ ի վաղիւ անդր թագաւորն եւ նախարարքն... խառնաղանճ ամբոխիւն, բազմութեամբ եկեալ ի ծունր իջեալ առաջի սրբոյն Գրիգորի...» (§225): Այս դրվագին զուգահեռ՝ Ոսկեբերանի «Ներբողեան»-ում կարդում ենք. «...եւ եկեալ (Գրիգորը.— Ա. Ս.) նոքօք հանդերձ խնդրէր տեսանել զնշխարս վկայիցն Աստուծոյ, եւ տեսեալ հաւաքէր խնդութեամբ եւ մեծաւ պատուով ամփոփէր զգանձսն պատուականս ի հնձանայարկս նոցունց, ուր եւ ինքեան վանս կալեալ, բազմամբոխ ժողովրդեամբն եւ թագաւորամբն, սկսանէր ուսուցանել նոսա ի սկզբանց արարչութեանց անտի մինչեւ ցկատարումն յաւիտենիս, զոր ոչ է մեզ կարելի ասել մի ըստ միոջէ, քանզի յոյժ իմաստուն էր այրն հոգեւորական գիտութեամբ, լի շնորհօք աստուածային...» (էջ 34): Համեմատելիս պարզ երեւում է, որ երկու բնագրերն ունեցել են մի ընդհանուր հունարեն աղբյուր, որից երբեմն արել են բառացի քաղվածքներ, միայն թե «Ներբողեան»-ը, ինչպես երեւում է վերի մեջբերումից, անմիջապես անցնում է վարդապետելու դրվագին, իսկ մայր Ագաթանգեղոսը երկար է նախապատրաստվում այդ անցմանը: Այսպես՝ «Ներբողեան»-ը վերոբերյալ հատվածից շարունակում է. «...բայց թերեւս ծանուցանէր զանմեղութիւնն Աստուծոյ եւ զարարածոց ամենայն զեղելութիւն, զգոյացութիւն մարդոյն, զշնորհին պարգեւ, զանձնիշխան կամքս (երեւում է ԺԲ. դարում հնարավոր լեզվահատկանիշ՝ կամքս փխ. Կամս.— Ա. Ս.), զփափկութիւն դրախտին... զյաճախութիւն յետ այնր ի մեղս, զօտարանալն յԱստուծոյ... զըրհեղեղան կործանումն եւ զբաժանումն ծովուն... զՄովսիսական քարոզն, զգրաւորական օրէնքն... զգալուստն Քրիստոսի... զխաչելն որ վասն մեր⁴... զյառնելն յերրորդ աւուր, զփրկելն մեզ ի սատանայէ... զիջանելն Հոգւոյն

⁴ Աստվածաբանական այս նրբերանգը եւս պետք է համարել ԺԲ. դ. երկրորդ քառորդում դավանաբանական վեճերի ազդեցությամբ խմբագրվելու հետեւանք:

Սրբոյ ի վերնատունն... զմիւսանգամ զալուստն հայրենի փառօք... եւ զհամառօտ վճիռ դատաստանի յաւիտենից...» (էջ 35—36):

Իսկ մայր Ազաթանգեղոսի բնագրում ժողովուրդը խնդրում է Գրիգորին, թե. «Ծանո՛ղ զմեզ եւ հաստատեա՛ զմիտս մեր, զի մարթասցուք աղաչել զերեսս Արարչին մերոյ, զոր ոչն գիտէաք, եթէ... ընկալցի՞ զմեզ յապաշխարութիւն եւ կայցէ՞ եւս տեղի դարձի... Կամ դու արդեօք... տայցէս մեզ զուղիղ վարդապետութիւն... եւ ոչ արկանիցես զմեզ յարդարեւ յուղիղ ճանապարհէն» (§245): Ապա Ս. Գրիգորը նախ բացատրում է մարդկանց, որ ինքը, լինելով անարժան, վիրապից փրկվել է իբրեւ Աստծու ծառայուծյան գործիք. «Զի թէպէտ եւ մեք անարժան էաք, սակայն վասն ձերոյ օգտի զմեզ պահեալ՝ երեւեցոյց զԻւրոց սքանչելեացն զօրութիւն զի զմեզ պահեալ ածեալ եւ ի ձեր մշակութեան գործն եկեալ, եւ զօգուտն զձեր բերեալ՝ Աստուծոյ մարդասիրութիւնն մեօք առ ձեզ կատարեսցի» (§248): «Վասն զի տուաւ ի ձեռս իմ պատմել ձեզ զհրամանս Աստուծոյ, դարձուցանել զձեզ ի ստուգութիւն, ի ճշմարտութեան ճանապարհն... դառնալ առ Աստուած կենդանի...» (§251): «Իսկ եթէ զձեզ յորդոր յօժարութեամբ տեսանիցեմք դարձեալ առ Աստուածութիւն անդր՝ ախորժ յօժարութեամբ սկիզբն արասցուք ձեզ՝ պատմելոյ վասն արարչութեանցն, թէ զիմորդ բարի աշխարհս ստեղծաւ ի բարերարէ անտի... թէ զիմորդ եկն Որդին Աստուծոյ մարմնով յաշխարհ անարգութեամբ. թէ զիմորդ գալոց է ի վախճանի նովին մարմնով եւ փառօք Հօր, եւ վասն լինելոց բարեացն եւ հանդերձեալ դատաստանին...» (§252), ապա նշում է, թե ինչպես է մարդ պարտավոր ապրել ըստ պատվիրանների, ինչպես լինել արժանի՝ Աստծու ճանապարհով գնալու: «Զայս ամենայն կարգաւ մի ըստ միոջէ ոճով պատմեցից...» (§252): Բայց անմիջապես կրկնում է. «Սակայն մեք ձեզ ի սկզբանցն սկիզբն արարեալ՝ սկսցուք ցուցանել զաշխարհի զարարչութիւնն, բարերարութեան բարեացն ի բարերարէն, եթէ դուք կամիցիք սրտի մտօք ունկնդիր լինել եւ հաւատալ: Սակայն մեք անսուտ ի բնէ սկիզբն արասցուք պատմելոյ ձեզ նախ՝ վասն մեծի միոյ միայնոյ բարերարին, եւ ապա՝ եղելոցս ամենեցուն ի նմանէ...» (§253): Արդ, ինչի՞ համար է այս կրկնությունը: Որպեսզի նորից դառնալով Աստծուն՝ ցույց տա, որ ոչ ոք չի տեսել նրան «ոչ ի հոգեղինաց, ոչ ի հրեղինաց զուարթնոց», բայց ինքը պատմում է՝ համաձայն արդար մարդկանց՝ մարգարեների եւ հատկապես Մովսեսի մատյանների (§257): Եւ վերջում՝ վարդապետությունն սկսելուց անմիջապես առաջ՝ նորից կրկնություն. «Արդ, սկսցուք

շնորհօքն Քրիստոսի ձեզ պատմել մի ըստ միոջ է մանրապատում նշանակօք, եւ դուք, ունկնդիր եղեալ սրտի մտօք, լուշիք» (§258):

Այսպիսով՝ վարդապետության վերաբերյալ ունենք երկու ծրագիր՝ մայր Ագաթանգեղոսից եւ «Ներբողեան»-ի միջոցով ներկայացված հունարեն վարքից: Դրանց համադրումից երեւում է, որ վարքում շատ համառոտ կերպով վերապատմվել է Ս. Գիրքը՝ իբրեւ նոր դավանանքի առարկա, իսկ մայր Ագաթանգեղոսում ներկայացված «Վարդապետությունը», որ ողջ գրքի կեսն է կազմում, ոչ միայն վերապատմել, այլեւ մեկնաբանել ու խրատել է լսողներին: Երկու դեպքում էլ երեւում է, որ «Վարդապետությունը» հերոսի կողմից կոչված է իբրեւ նորադարձ ժողովրդին նոր հավատքի մեջ ամրացնելու գործիք, այսինքն՝ համառոտ թե ընդարձակ, կարեւոր չէ, այն դարձաբանական ժանրի քերթողական արվեստից բխող բաղադրիչ է:

Հետեւաբար՝ այն ոչ թե առանձին գրվել ու «մոնտաժվել» է հունարեն վարքին, այլ հորինվել է վարքի գրառման հետ միաժամանակ, եթե հաշվի առնենք, որ մինչ այդ վարքը բանավոր էր, որի մեջ վարդապետությունը կարող էր լինել միայն շատ հակիրճ հիշատակման մակարդակով (օրինակ այսպես՝ «օրեր շարունակ սուրբը պատմում էր՝ աշխարհի արարումից սկսած մինչեւ աշխարհի վերջը, երբ լինելու է վերջին դատատանը»), որի մեջ արդեն պատմողը կառանձնացներ ամենաառանցքային նյութերը՝ նոր Կտակարանի շեշտադրումներով:

Ի դեպ, հունարեն վարքի համար հենց նման պատմողական ծրագիրը ենթադրվում է «Ներբողեան»-ի մեջ թվարկված թեմաներից:

Հասկանալի է, որ նույն կերպ էլ մայր Ագաթանգեղոսն է «Վարդապետությունը» մշակել ու ընդարձակել ըստ նոր շարադրանքի ծրագրի՝ հունարեն վարքի հիմքի վրա, նոր աղբյուրների օգտագործմամբ (Գրիգոր Լուսավորիչ, «Յաճախապատում», Կյուրեղ Երուսաղեմացի, «Կոչումն ընծայութեան» եւ այլն)⁵ անգամ նոր իրողությունների ներմուծմամբ (օր.՝ §567, որում հեղինակ Մաշտոցն ակնարկում է աղանդների եւ կռապաշտության մնացուկների դեմ պայքարը Ե. դ. 30-ական թվականներին՝ ըստ Կ. Պոլսից հղված ահազանգի): Դեռ ավելին, եթե «Վարդապետությունը» առանձին գրվածք լիներ, չպիտի անդրադառնար Հռիփսիմյանների թեմային (§§514–516, 563–564), որովհետեւ չէր հասկացվի կամ տեղին չէր լինի:

⁵ Տե՛ս Լ. ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆ, Ագաթանգեղազիտական պրպտումներ, Երեւան, 2019:

Հետաքրքիր է, որ «Վարդապետության» ավարտից հետո մայր Ազաթանգեղոսը շարունակության մեջ նորից է անդրադառնում 65 օր անդադար քարոզելու եւ ուսուցանելու թեմային (§722), իսկ §723-ում ուղղակի կրկնում է այն, ինչ «Վարդապետություն»-ից առաջ արդեն ասել էր. «Համօրէն տեղեկացուցեալ... ուսուցանէր ամենեցուն ի սկզբանց անտի սկիզբն արարեալ, յաշխարհահամար յաշխարհապատում արարչութենէ անտի մինչեւ ի բուն սրբոցն պատգամախօսացն Աստուծոյ, ամենեցուն... ընդեւս եւ ծանօթս կացուցանէր» (հմմտ. նաեւ §724): Իհարկեւ, ինչ-որ տեղ կարելի է «Վարդապետությանը» նախորդող եւ հաջորդող մտքերի կրկնությունը թերամշակման հետեւանք համարել, բայց եւ միաժամանակ դրանք «մոնտաժող» հեղինակների ուշադրության ցուցիչներ են առ այն, որ նրանք բավականին լրջորեն կանգ են առել Պատմության առաջին գլուխների կցագրման վրա:

Այսպիսով՝ մայր Ազաթանգեղոսի եւ Հովհան Ոսկեբերանի «Ներբողեան»-ի տվյալների համադրումից պարզ դարձավ, որ Դ. դ. վերջին Սահակ Պարթևի հունարեն շարադրած վարք-վկայաբանության մեջ երկու առանձին սրբախոսական երկեր, բանավոր ավանդույթից առնվելով, միակցվել են իրար՝ իբրեւ մեկ ընդհանուր վարք՝ Ս. Գրիգոր Պարթևի հիշատակի տոնը կատարելու համար: Այդ հունարեն վարքը դարձաբանական պատմության ժանրի պահանջով ունեցել է նաեւ համառոտ «Վարդապետություն»: Սրանով կարելի է արձանագրել, որ գտնված է «Ազաթանգեղայ Պատմութեան» գլխավոր աղբյուրը՝ հունարեն վարքը, որովհետեւ վերջինս՝ որպես միջուկ, երեւի ոչ այնքան թարգմանական, որքան վերաշարադրման ուղիով է տեղ գրավել Ազաթանգեղոսի երկում:

Հունարեն վարքի հետքերը մայր Ազաթանգեղոսում դրսևորվել են նաեւ հերոսների անունների մեջ: Այլեւս զարմանալի չպիտի թվա, թե ինչու Տրդատ, Գրիգոր անունների հետ մեկ-մեկ հանդիպում են նրանց հունաձեւությունները՝ Տրդատիոս, Գրիգորիոս: Իսկ Հռիփսիմե եւ Գայանե անունները ծագումով լատինական են. Rufus⁶ (= վառ կարմիր, շեկ) > իգ. Rufina > հայ Ռուփինա, > Հռուփինայ > Հռուփինէ > Հռուփիմե > Հռիփիմէ > Հռիփսիմէ, Gaja (= ուրախ, զվարթ) > Gajana > հայերեն Գայանայ > Գայանէ: Սակայն քանի որ այս հոմոեական անունները հայերեն փոխանցվել են ոչ միայն բանավոր, այլեւ գրավոր հունարեն վարքի

⁶ См И. Х. Дворецкий, Латинско-русский словарь, Москва, 1976:

կազմում, ապա հեշտ է նկատել, որ միայն հունարենով պատմել-գրելու միջոցով է հնարավոր եղել Հռիփսիմիեի անունը նրա վիպական կերպարի թելադրանքով ենթարկել կեղծ ժողովրդական ստուգաբանության՝ բխեցնելով հուն. ριπτω (= նետել, դեն գցել, ձգել, թողնել) բառիմաստից (թեկուզ տրամաբանորեն անվանակազմիչ բառ կարող էր լինել՝ ρυπτω = մաքրել, լվալ, որի հայերեն համարժեքն է Մաքրուհի, Սրբուհի)⁷:

Եթե մենք ապացուցած չլինեինք, որ գլխավոր աղբյուրը եղել է Ս. Գրիգորի հունարեն վարքը, ապա միայն հերոսուհու անվան կեղծ վիպական ստուգաբանությունը հունարենի հենքի վրա՝ բավական է, որ ենթադրվեր հունարեն վարքը⁸: Փաստորեն, հունարեն վարքը եղել է մինչև Դ. դ. վերջերը բանավոր ձեռավորված դարձաբանական ավանդապատումի գրավոր մշակման առաջին աստիճանը, իսկ երկրորդը եղել է մայր Ագաթանգեղոսը: Կարելի է անգամ բնագրորեն վեր հանել առաջին գրավոր մշակման առարկայական հետքը՝ մայր Ագաթանգեղոսի եւ «Ներբողեան»-ի հայտնած մի տեղեկության վերլուծմամբ: Բանն այն է, որ բանավոր վարքում Ս. Գրիգորը վիրապից դուրս գալուց հետո պետք է անմիջապես բուժեր Տրդատի խոզակերպությունը, իսկ մայր Ագաթանգեղոսը բուժումը կապում է կույսերի թաղման միջոցով ապաշխարելու հետ: Իսկ ինչ է պատմում միջանկյալ օղակը՝ հունարեն վարքը՝ ըստ Ոսկեբերանի «Ներբողեան»-ի: Պարզվում է, որ Գրիգորը վիրապից դուրս գալուց հետո խնդրում է Աստծուն, որ իր ոտքերը ընկած Տրդատին ու մյուս խոզակերպներին բուժում տա. «Եւ նայեցեալ Տէր յաղաշանս սրբոյն շնորհեաց ամենեցուն առժամայն զբուժումն ի դիւական ախտիցն...» (էջ 34): Ապա վարդապետումից անմիջապես հետո, երբ տեսնում է, որ ընդունել են քարոզը, նորից է դիմում Աստծուն՝ բուժումն ամբողջովին տալու խնդրանքով. «Քանզի բառնայր վաղվաղակի ի ձեռն աղօթից նորա հարուածք պատուհասին յամենեցուն, եւ կնքելով զթագաւորն այրն Աստուծոյ նշանաւ խաչին, թօթափէր նոյնժամայն զգեստ խաւարային, մերկանայր եւ զկերպարանս անասնեղէն, զոր զգեցաւ յաղագս մեղացն դատապարտեալ, եւ զգենոյր զառաջին կերպարանացն զվայելչութիւն,


⁷ Տէն Ի. Խ. ДВОРЕЦКИЙ, Древнегреческо-русский, Москва, 1958, էջ 1454, 1458:

⁸ Խնդրի լուծման բանասիրական վերջին հաջողված փորձը պատկանում է Ա. Մուշեղյանի գրչին, որը հաստատում է Ա. Գուտշմիդի կարծիքը: Տէն Ա. ՄՈՒՇԵԳՅԱՆ, «Ագաթանգեղոսի Պատմությունը», ստեղծման հանգամանքները, գրության ժամանակը եւ հեղինակի հարցը, ՊՐՀ, 2012, №1 (189), էջ 217: Հմմտ. A. VON GUTSCHMID, Agathangelos, Leipzig, 1877, էջ 355:

նա եւս զարմագոյն եւ հրաշալի» (էջ 36—37): Սա նշանակում է, որ երկու փուլով բուժում է եղել, բայց երկուսն էլ կույսերի թաղումից անկախ. մեկը՝ անմիջապէս հորից դուրս գալիս, մյուսը՝ վարդապետելուց հետո, որին հաջորդելու են հայտնի դրվագները՝ մեհյանների ավերում, ձեռնադրութիւն, մկրտութիւն, նոր տաճարների կառուցում, ճգնութիւն: Պարզ երեւում է, որ Սահակ Պարթեւն առաջին գրավոր մշակման մեջ հող է նախապատրաստել, որ երկրորդ մշակման հեղինակ Մաշտոցը բուժման եւ թաղման դրվագների միջոցով իրար միացնի Գրիգորի վարքը եւ Հռիփսիմյանների վկայաբանութիւնը:

Հունարեն վարքի երբեմնի առարկայական գոյութիւնը փոխում է Ագաթանգեղոսի գիտական խնդիրների էութիւնը եւ լուծման տրամաբանութիւնը: Թե ով է վարքը ներմուծել մայր Ագաթանգեղոսի մեջ, իսկ ներմուծել է թե՛ թարգմանաբար եւ թե՛ խմբագրաբար ընդարձակելով, այնքան կարեւոր չէ, որքան այն, որ արդեն ավելորդ է դառնում բանասիրական այն խնդիրը, թե ով է ումից օգտվել՝ Կորյունը Ագաթանգեղոսից, թե՛ հակառակը⁹: Լուծում է ստանում նաեւ այն խնդիրը, թե առանձին «Վարդապետութիւն» եղել է, թե՛ այն Ագաթանգեղոսի կազմում է ստեղծվել¹⁰, կամ թե Հռիփսիմյանների վկայաբանութիւնն ու Գրիգորի վարքը առանձին են եղել, թե՛ միասին են ստեղծվել եւ այլն, եւ այլն:

Շարունակութիւնը՝ հաջորդիվ



⁹ Տէն Ա. ՄՈՒՇԵՂՅԱՆ, Կորյուն, թե՛ Ագաթանգեղոս. բնագրերի քննութիւն նոր տեսանկյունից, ԼՀԳ, 1996, №2, էջ 49—64:

¹⁰ Հմմտ. Ա. ՄՈՒՇԵՂՅԱՆ, Ագաթանգեղոսի Պատմութիւնը եւ հին վրացերեն «Վասն հաւատոյ» դավանաբանական երկը, ԼՀԳ, 1987, №3 (531), էջ 64—66: Պ. ՄՈՒՐԱԳՅԱՆ, Ագաթանգեղոսի հին վրացերեն խմբագրութիւնները, Երեւան, 1982, էջ 73—80:

Տ. ՏԱՃԱՏ ՎԱՐԴԱՊԵՏ ԾԱՏՈՒՐՅԱՆ
Միաբան Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի

ՀՈԼՈՎԱԿԱՆ ՏԵՂԱՇԱՐԺԵՐ ԳՐԻԳՈՐ ԽԼԱԹԵՑՈՒ «ԲՆԱԳՐԱԿԱՆ ՆՇՄԱՐՆԵՐ»-ՈՒՄ

Ներածություն

ԺԱ. դարից հետո՝ թուրքական արշավանքների եւ տիրապետության շրջանում, ինչպես նկատում է Հր. Աճառյանը, «գրական լեզվի եւ ժողովրդական լեզվի տարբերությունը մեծագույն չափերի է հասնում»¹։ Սա հենց այն ժամանակաշրջանն է, որ համապատասխանում է մեր ուսումնասիրության նյութին առնչվող հեղինակի՝ Գրիգոր Խլաթեցու (1349—1425 թթ.) ապրած ժամանակներին, որի օրոք արդեն խոսակցական եւ գրական հայերենի տարբերությունը բավականին մեծ էր։ Ժողովրդական կամ խոսակցական լեզուն գնալով փոփոխություններ էր մտցնում գրաբարի քերականության բազմաթիվ օրենքների մեջ, միաժամանակ օտարներից փոխառություններ անում, ստեղծում բառեր, որոնք բացակայում էին դասական գրաբարում։ Միով բանիվ, գրաբարին հաջորդող լեզվավիճակը՝ միջին հայերենը², պարզեցնում է հոլովական համակարգը՝ ստեղծելով քերականական նոր օրենքներ ու կանոններ։

Գրիգոր Խլաթեցու «Բնագրական նշմարներ»³-ում հոլովական տեղաշարժերն ուսումնասիրելիս, բնականաբար, անդրադառնալու ենք միջին հայերենի՝ մեր ուսումնասիրության նյութի խնդիրներին առնչվող հոլովման համակարգին՝ համեմատելով դասական գրաբարի նույնանուն

¹ Հր. ԱՃԱՌՅԱՆ, Հայոց լեզվի պատմություն, հտ. Ա., Երեւան, 1951, էջ 230։

² «Այսօր լեզվաբանության մեջ զանազանություն է դրվում այս շրջանի ժողովրդական լեզվի եւ արդի ժողովրդական լեզվի միջեւ. առաջինը կոչվում է միջին հայերեն (ըստ ոմանց՝ ստորին հայերեն), երկրորդը՝ աշխարհաբար կամ նոր հայերեն՝ հակադրությամբ գրաբարի կամ հին հայերենի» (Հր. ԱՃԱՌՅԱՆ, նշ. աշխ., էջ 231)։

³ Այս անվան տակ նկատի ունենք Գրիգոր Խլաթեցու՝ ձեռագիր եւ տպագիր աղբյուրներից քաղված ստեղծագործությունները՝ պատմական ողբերը, գանձերը, վարք-վկայաբանությունները, հիշատակարանները, թղթերը եւ հանելուկները, որոնք ամփոփված են «Գրիգոր Ծերենց Խլաթեցի» աշխատության երկրորդ մասում՝ «Բնագրական նշմարներ» վերտառության ներքո (տե՛ս Ա. ՄԱԹԵՒՈՍՅԱՆ, Ս. ՄԱՐԱՅԱՆ, Գրիգոր Ծերենց Խլաթեցի, Երեւան, 2000, էջ 121—199)։

համակարգի հետ: Հոլովման համակարգի հիմնական առանձահատկությունների մասին խոսելիս շեշտը դրվելու է հիմնականում գրաբար եւ միջին հայերեն հոլովների եւ հոգնակի թվի կազմության համեմատության վրա՝ ըստ Գրիգոր Խլաթեցու բնագրերի:

1. Փոփոխություններ հոլովների կազմության մեջ

Ոսկեդենիկ գրաբարի եւ միջին հայերենի հոլովման համակարգերի միջեւ առկա զգալի տարբերությունները՝ իրենց զանազան դրսևորումներով, արտացոլված են Խլաթեցու մեր ուսումնասիրության նյութը կազմող երկերում:

Ի տարբերություն գրաբարի, որտեղ անվանական կանոնավոր հոլովումն արտահայտվում է պարզ եւ խառն հոլովումների տիպերով, միջին հայերենում ընդհանրապես եւ Խլաթեցու բնագրերում մասնավորապես վերանում է վերոնշյալ հոլովումների անջրպետումը: Ինչպես ստորեւ նկատելի կդառնա, այստեղ այլեւս գոյություն չունեն խառն հոլովումով բառեր: Շատ հաճախ յուրաքանչյուր հոլով հանդես է գալիս իրեն հատուկ ձայնավոր վերջավորությամբ:

Սեռական եւ տրական հոլովներն իրենց կազմությամբ նույնացել են ի ձայնավոր վերջավորությամբ:

Սեռական՝

«...Ղամպար վառել կամէին ի յայրել ըզնըշխարս մեր ախրին...» (էջ 122):

«...Որ ի քարկործման ժամին փախուցեալ զաւղեալ թաքչէին,

Սաստիկ էր լալին նոցին, կոծ եւ աշխարհ ի վերայ ախրին...» (էջ 123):

«...Ուղեղըն ցրուեալ գըլխին, ըզգագաթն վերացուցին...» (էջ 122):

«...Զտէր Դաւիթ հոգւովն արի, լի շնորհաւք, յաջորդ աթոռի...»

(էջ 123):

«...Թող մեզ խաւարի այսաւր լոյս լուսնին եւ ակն արեւին...» (էջ 123):

«...Վանաց, քաղաքաց, գեղի պարիսպ ես...» (էջ 192)⁴:

Տրական՝

«...Ի հնգետասան արին մեհեկի, չորեքաբարին,

Եկին պատեցին զմեր տէրն եւ յատեան մահու մատնեցին...» (էջ 122):

⁴ Ինչպես տեսնում ենք, գրաբարի զարտուղի հոլովման պատկանող տէր եւ գիւղ բառերը նույն անցման են ենթարկվել:

«...Մեծահանդէս արձուցն Սիւս անուն վիճակ մեր վիհին...» (էջ 123):

«...Եւ անդ եհաս աւր վախճանին,
Սատակեցաւ յիւր արձուցն...» (էջ 130):

«...Անտի գնաց մինչ ի Զըմիւռին
Քաղաք Լիկեաց ծովեզերին...» (էջ 129):

«Հաղորդեցան կենաց խորհրդին...» (էջ 145):

«...Սա հիւանդաց է պիտանի,
ու առողջարար ամեն ցավի...» (էջ 147):

Ինչպես երեւում է վերելի օրինակներից, Ի արտաքին պարզ հոլովումը հաճախականությամբ բացարձակ գերակշռում է. այն գրաբարում նույնպես (միացած Ի—Ա խառն հոլովմանը), մյուս հոլովումների հետ համեմատած, ավելի գործածական է: Խլաթեցու երկերում, ինչպես տեսնում ենք, նույնիսկ Ե պարզ ներքին հոլովման պատկանող բառերը (օրինակ՝ ծովեզ), իրենց հատուկ Ե հոլովիչն ստանալուց բացի, սկսել են ենթարկվել Ի արտաքին պարզ հոլովման:

«Արտաքին թեքման վան (ուան, ւան) հոլովումը նույնպես նորակազմ հոլովում է, որ սկզբնական շրջանում խիստ սահմանափակ կիրառություն ունի, նույնիսկ այդ հոլովման պատկանող անունների մի մասը միջին հայերենի զարգացման առաջին ենթաշրջանում չի հանդիպում սեռական—տրական հոլովաձեւով (հեղինակը նույնացնում է միջին հայերենի սեռական եւ տրական ձեւերը.— Տ. Վրդ. Մ.) եւ վերականգնվում է բացառականի միջոցով: Այս հոլովման պատկանող անունները խմբավորվում են իմաստային հատկանիշով. նշանակում է ժամանակ ցույց տվող անուններ: Այս հոլովման պատկանող անունների մեջ կա ընդհանուր հատկանիշով չբնորոշվող մեկ բառ՝ մահ—մահուան, որ ավելի հին կազմություն է, քան ժամանականիշ բառերինը, վկայված է դեռեւս գրաբարի ժամանակաշրջանից»⁵:

Սակայն նույն բանը չենք կարող ասել խլաթեցու գործածած բառերի հոլովաձեւերի համար, քանզի վերը բերված օրինակներից պարզ երեւում է, որ նույնիսկ ժամանականիշ բառերը ենթարկվում են Ի արտաքին պարզ հոլովման (օրինակ՝ աւր—աւրին, փոխ. աւուր, չորեքշաբաթ—չորեքշաբաթին (երբեմն էլ՝ չորեքշաբաթուն, ուղղական հոլովը հանդես է գալիս նաեւ չորեքաթի ձեւով), ժամ—ժամի, փոխ. ժամու): Իսկ մահ բառը դեռեւս պահպանել

⁵ Լ. Ս. Հովսեփյան, Զեւարանություն («Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության», խմբագրությամբ՝ Գ. Բ. ՋԱՆՈՒԿՅԱՆԻ, գր. Բ., Երևան, 1975, էջ 28):

է իր նախկին՝ դասականգրաբարյան ձեւը՝ մահու: Ի դեպ, վերելի օրինակներում, ինչպես երեւում է, ժամանականիշ բառերը՝ եզակի տրականով, դրված են ի նախդրի հետ, սակայն իրաթեցու մեկ-երկու օրինակներում ոչ միայն ի նախդիրն է բացակայում, այլեւ բառը հանդես է գալիս հայցական հոլովով. «...Հիմզն յունւարի Թաւրէզ մըտան...» (էջ 124) եւ «...ապայ այն եկի ի վանքն, որ ձմեռնս թէ Տէր կամեսցի, ի մեկտեղ լինիմք...» (էջ 193):

Վերելի օրինակները ցույց են տալիս, որ դրանց հոլովումն աշխարհաբարին է մոտենում: Մեծ թիվ են կազմում նաեւ Ո եւ ՈՒ պարզ արտաքին հոլովման պատկանող բառերը, որոնք նույնպես սկսել են հոլովվել ի արտաքին պարզ հոլովմամբ՝ երբեմն պահպանելով նաեւ իրենց նախկին՝ Ո կամ ՈՒ հոլովիչը (օրինակ՝ աթոռ—աթոռի, փոխ. աթոռոյ, գլուխ—գլխի, փոխ. գլխոյ, խորհուրդ—խորհրդի, փոխ. խորհրդոյ, ցալ—ցալի, փոխ. ցալոյ⁶, արեւ—արելի, փոխ. արելու): Այս օրինակներում անմիջապես նկատելի է դառնում Ո > Ի եւ ՈՒ > Ի փոխանցումը, որը շատ բնորոշ է տվյալ ժամանակաշրջանին:

Գեղ (գիւղ, գեղ) բառը, որ դասական գրաբարում պատկանում է անկանոն կամ զարտուղի հոլովման, իրաթեցու երկերում, ինչպես տեսանք վերելի օրինակում, հանդես է գալիս ի պարզ արտաքին հոլովման ձեւերով (գեղի, փոխ. գեղը): Սա նշանակում է, որ գեղ բառի եզակի ուղղականը դարձել է գեղ, որի վերջավորութանն էլ ավելացել է ի ձայնավորը:

Զգալիորեն իր հոլովական բուն ձեւից տարբերվում է տէր բառը, որը իրաթեցու բնագրերում լրիվ այլ հոլովական վերջավորություն է ստացել՝ ամբողջությամբ մոտենալով աշխարհաբարի հոլովական համակարգին՝ տիրին (փոխ. տեառն):

«Գրաբարն աչքի էր ընկնում հոլովման տիպերի եւ նրանց հարացուցային տարբերակների արտակարգ բազմազանությունը: Բացի այդ

⁶ Ցալ բառը իրաթեցու՝ «Մատեան ողբերգութեան Գրիգորի Նարեկացոյ՝ ասացեալ Գրիգորի Վարդապետէ իրաթեցո Յերենց կոչեցեալ» խորագրով բանաստեղծության մեջ, որի ծայրակայն է՝ «Գրիգորի է ԱՅՍ ԲԱՆՔՍ ԹՈՂՈՒԼ ԶՄԵՂՍ», գրված է վ-ով, որը չենք կարծում, թե սպագրական սխալ եղած լինի, քանզի նույն գրքում (տես Ա. ՄԱԹԵՆՈՍՅԱՆ, Ս. ՄԱՐԲՅԱՆ, նշ. աշխ.) իրաթեցին օգտագործում է բազմաթիվ բառեր, որոնց ուղղագրությունը չի համապատասխանում դասական շրջանի գրաբարին, օրինակ՝ եղբոր, հեծէծագին, իլաթեցո եւ այլն:

Հանգի սիրուն անսպասելի տեղաշարժ է նկատվում տրական հոլովի իմաստով, բայց աննախդիր հայցականով գործածված այս օրինակում.

«...Փառք եւ պատիւ ի մէնջ տացին

Երրորդութեան միակին՝

Հայր եւ Որդի եւ Սուրբ Հոգին...» (էջ 135):

համակարգային բազմազանությունից՝ դեռեւս դասական գրաբարի շրջանում նկատվում էին հոլովական զուգաձեւություններ, երբ միեւնույն բառը կարող էր ենթարկվել տարբեր հոլովումների, այսինքն՝ ստանալ տարբեր հոլովիչներ (ազոաւոյ—ազոաւու եւ այլն)։ Զուգահեռաբար տարբեր հոլովումներով հոլովվելու կամ մի հոլովատիպից մյուսին անցնելու այդ առանձնահատկությունը շարունակվում է եւ հետագա դարերում⁷։

Նույն օրինակափությունը նկատելի է նաեւ Խլաթեցու «Բնագրական նշմարներ»-ում։ Իբրեւ օրինակ բերենք հետեւյալ նախադասությունները, որոնցում տեղ են գտել նմանատիպ հոլովաձեւեր.

«...Աւտար որդիքն Աբրահամին»

Միահաղոյն յաշխարհս մըտին,

Յաթոռս Ատըրպատականին» (էջ 125)։ Հմմտ.

«...Զի իւրաքանչիւր դաս եւ ի ժամանակս ընտրեաց եւ ընկալեալ երախայրեաց պտուղս ի մարդկայինս ազգէ՝ որպէս զապաշաւանս նախաստեղծիցն՝ եւ ...զհաւատն բարի գործովքն Աբրահամու եւ զմաքրութիւնն Իսահակայ...» (էջ 156) կամ «...Զխոստումն Աբրահամու լցեալ, զհաւատոյ որդիացեալսն բազմացուցեալ...» (էջ 156)։

«...Եւ զինչ արինակաւ երանի աղտեղի լեզոյս...» (էջ 136)։

«...բերանովն ողջունեաց, բանիւ արհնեաց, լեզաւն գովեաց...» (էջ 137)։

«...Այս է՝ քան զբոլոր մարդկային բնութիւնս, եւ մանաւանդ՝ քան զամենայն երամս սրբոց եւ զդասս արդարաց...» (էջ 136)։ Հմմտ.

«...Եւ նա ի քարշէլն եւ ի հարկանելն՝ մինչդեռ օրհնութիւն ի բերանն էր, աւանդեաց զհոգին իւր առ Աստուած՝ բարի խոստովանութեամբ, ըստ գրոյն որ ասէ. “Հոգիք արդարոց ի ձեռին Աստուծոյ են”⁸...» (էջ 155)։

«...Եւ եղեւ աղախին կնոջ ֆրդոյն...» (էջ 166)։

«...Եւ եղեն ի նմանէ որդի եւ դուստր ֆրդին...» (էջ 166)⁹։

Ստորեւ բերվող օրինակում թշնամի բառի հոգնակի ձեւը՝ մի դեպքում սեռականով, իսկ մյուս դեպքում՝ բացառականով գործածված, ընդունում է տարբեր հոլովիչներ.

⁷ Լ. Ս. Հովսեփյան, ԺԳ. դարի հայերեն ձեռագրերի հիշատակարանների լեզուն, Երեւան, 1997, էջ 23–24։

⁸ Հմմտ. Իմաստ. Գ. 1։

⁹ Քուրդ բառը չկա ՆՀԲ-ում, ինչը նշանակում է, որ այն ավելի ուշ շրջանի բառ է, որը հոլովվում է ՈՒ կամ Ո արտաքին պարզ հոլովիչներով (ՄՀԲ, հ. Բ., էջ 449)։

«...Իսկ թէ ըստ բարեսէր բնածին բարուցդ գթասիրեալ ի մեզ խոնարհիք, նա կեամք առ ժամս կարաւտացեալ ձեր տեսոյդ եւ մէնացեալ յայնպիսի եղբարց ի մէջ թընամաց եւ աւերակս վանորէից դիպեալ յոչ կամայ ի ներս անկեալ եւ կամաւք ազատիլ ոչ կարացեալ» (էջ 184):

«...այսպէս բազում թռչունք աւտար ճանապարհորդք ի մարդկանէ եւ աղքատք երկրի շքով քո ապրին ի թընամեաց եւ կերակրին առ քեզ հոգով եւ մարմնով...» (էջ 192, գրաբարյան ձեւ):

Հոգնակի տրական հոլովի —աց վերջավորութեան փոխարեն Ի—Ա արտաքին խառն հոլովման պատկանող կամֆ անեզական բառը հանդիպում է —եաց վերջավորութեամբ.

«...երկիր պագանեմք առաջի մարդասէր, անոխակալ եւ անյիշաչար կամեաց քոց...» (էջ 138):

Բացառական հոլովի կազմութիւնը խլաթեցու գործերում ավելի միօրինակութեամբ է հանդես գալիս եւ գրաբարյան օրինաչափութիւնների հետ համեմատած՝ հնարավորինս ավելի քիչ տեղաշարժեր ունի: Եթե դասական գրաբարում բացառական հոլովի կառուցվածքային տարր էր կազմում ի նախդիրը՝ եզակիի դեպքում՝ — է ձայնավոր (Ա եւ Ո պարզ արտաքին հոլովումների ժամանակ եզակի բացառականը հոլովակերտ մասնիկ չէր ստանում)¹⁰ վերջավորութեամբ, իսկ հոգնակի թիվը — ց մասնիկի օգնութեամբ, ապա ստորեւ բերվող օրինակները՝ իրենց զանազան դրսեւորումներով, ցույց են տալիս, որ այստեղ գոյութիւն ունեն երեք կարգի տեղաշարժեր:

Ա. կարգի տեղաշարժ: խլաթեցու բազում նախադասութիւնների մեջ բացակայում է բացառական հոլովի կառուցվածքային տարր կազմող ի նախդիրը:

«...Առին բաղանեացն ելին եւ քարիւ ըզգլուխն հարին...» (էջ 122):

Սակայն այս նույն նախադասութիւնը, որ «Ողբ ի գծողէս բան [ի Գրիգորէ խլաթեցուց]» վերնագրով բանաստեղծութիւնից է, կա «Զաքարիա Կաթողիկոս Աղթամարցի» արձակ ստեղծագործութեան մեջ, ուր բացառականը գրաբարյան ձեւով է.

«...եւ հանին արտաքս ի բաղանեացն ի քարշ եւ հարին զգլուխն...» (էջ 155):

¹⁰ խլաթեցու բնագրերում կա մի նախադասութիւն, որտեղ մարդ բառն իրեն հատուկ Ո պարզ արտաքին հոլովումից շեղվել եւ եզակի բացառականում է հոլովակերտ վերջավորութիւնն է ստացել. «...Որպէս Աստուած յամէն լեզուէ, յամէն մարդէ աւրհնութիւն կու խնդրէ...» (էջ 193):

Բերենք աննախդիր ուրիշ կիրառություններ.

«...Զի ո՞վ ոք կարիցէ արժանապէս գովել զայնոսիկ, որոց գովութիւնն Աստուծոց է եւ ոչ ի մարդկանէ...» (էջ 136):

Այս նախադասության մեջ, ի նախդրի անկումից բացի, ինչպես տեսնում ենք, գոյություն ունի մեկ այլ տեղաշարժ, այն է՝ Աստուած բառի գրաբար բացառական յԱստուծոյ ձեւի փոխարեն «կիսաաշխարհաբար» Աստուծոց ձեւը:

«...Նոքա՛ ոչ էին աշխարհէս, եւ նա՛ ի վեր քան զնոսա...» (էջ 138):

«...Ներսէս դախաւն էր տունկ բերեալ...» (էջ 140):

«...Ասացեալ Գրիգորի¹¹ Վարդապետէ Խլաթեցո...» (էջ 146):

«...էր նա յաշխարհէն Հոնաց ի կողմանց հիւսիսոյ եւ մայրաֆաղափէն Ղրիմայ...» (էջ 152):

«...Որ եւ հարեւր ամաց անցեալ

Մըխիթարայ բանիցս ոգեալ...» (էջ 169):

«...Եւ այնմ արէ հըսարեցին...» (էջ 171):

«...Եւ միաբան ամէն մեծէ ի փոքր...» (էջ 183):

«...Եւ հայցեմք հեշտալուրն Տեառնէ լինել եւ մնալ ձեզ անարատ յամենայն կրից յերկար ամաւք...» (էջ 183):

«...Ամէն գրի՛ հինգ օր իւրմէն,

Գնայ զվեց ամիսն ամէն...» (էջ 195):

«...էր գերագոյն նա եւ յունաց

աստուածաբան վարդապետաց...» (էջ 198)¹²:

Բ. կարգի տեղաշարժ: Սա նախորդի բոլորովին հակառակ երեւույթն է: Բացառական հոլովն այստեղ հանդես է գալիս ի նախդրի կրկնակի կիրառությամբ, ինչը «...հետեւանք է ձայնավորով սկսվող բառից առաջ յ տարբերակի իմաստի մթագնման, մանավանդ այն դեպքերում, երբ բացառական հոլովաձեւի եւ ի նախդրի միջեւ ընկնում են այլ բառեր: Այս երեւույթը նկատելի էր նաեւ գրաբարի զարգացման ավելի վաղ շրջաններում՝ թեեւ ոչ մեծ հաճախականությամբ»¹³: Ինչպես ստորեւ պիտի տեսնենք, Խլաթեցու երկերում մեծ թիվ են կազմում այսպիսի դեպքերը.

«...Բամբ Հայաստանեայց դառնացեալք ի յանաւրիմաց...» (էջ 122):

¹¹ Գրիգորի ձեւի փոխարեն սպասելի էր բառի ուղիղ՝ Գրիգոր ձեւը:

¹² Ինչպես այստեղ, այնպես էլ այլուր նույն նախադասություններում զուգահեռ տեսնում ենք գրաբարյան ձեւեր:

¹³ Լ. Ս. Հովսեփյան, նշ. աշխ., էջ 34:

«...Իշխանք բազումք ի տանց ելին
Եւ ի յընչից պարապեցին...» (էջ 126):

«...Որ ի յատուց աւագ Զատկին,
Մինչեւ ի տան սըրբոյ Խաչին...» (էջ 128):

«...Մինչեւ կոչեաց առ ինքըն զամեն,
ԶՀայոց իշխանսն ի յԱյրարատէն...» (էջ 144):

«...Ի յախտաժետ անձէն յետին,
որ սպասաւոր կոչի բանին...» (էջ 146)¹⁴:

«...Բայց մի ի յութից ըմբռնեցն՝ Սիրանոս անուն, որ որդի սիրական
Բելիարայ եղեւ...» (էջ 164):

«...Եւ մինն ի յերիցն իմացեալ փախեալ եւ միւսն գնացեալ էր ի ճա-
նապարհ...» (էջ 165):

«...Եւ լուաւ անդ ի յովանց, թէ ուր կարծիք ուրացութեան լինի, անդ
եւ հաստատութիւն հաւատոցն երեւեսցի...» (էջ 167):

«...Եւ մեք ի յահէ նոցին սասանիմք...» (էջ 173):

Գ. կարգի տեղաշարժ: Ստորեւ բերվող օրինակում ձայնավորից առաջ
յ-ի փոխարեն ի է գործածվել.

«...Ոմն ի երկրէն Հոշտունեաց

էր յոյժ փարթամ յամեն բարեաց...» (էջ 198):

Տեղաշարժ է նկատվում նաեւ հոգնակի բացառականի հետ Ա պարզ
ներքին հոլովման պատկանող եւքն քանակական թվականով համաձայ-
նեցված հոլովաձեւում: Տեղաշարժն այստեղ վերաբերում է ոչ թե թվակա-
նի եւ գոյականի համաձայնությունը, այլ եւքն թվականի հոգնակի բացա-
ռականի մեջ տեղ գտած ավելորդ եւ ձայնավորի սպրդմանը.

«...ի Սրբոյ Հոգւոյն պարգեւաց եւթեանց գերագոյն...» (էջ 184):

Գործիական հոլովը Խլաթեցու գործերում դեռեւս պահպանել է իր
գրաբարյան օրինաչափությունները՝ իբրեւ հոլովաձեւի վերջավորու-
թյուն ունենալով վ, ի կամ բ, եւ այդ օրինաչափությունից տեղաշարժեր
գրեթե չկան:

Ինչպես սեռական եւ տրական հոլովների կազմության մասին խոսե-
լիս նշեցինք, այստեղ եւս մեկ-երկու օրինակ ցույց են տալիս բառի՝ իր
գրաբարյան հոլովումից անցնելը մեկ այլ հոլովման:

¹⁴ Անձն բառի բացառական հոլովաձեւը, ինչպես տեսնում ենք, յանձնէ գրաբարյան
օրինաչափ ձեւի փոխարեն ն-ի անկումով է՝ յանձնէ:

«...զամենեսեան լուսաւորէր բարի ձեւօք եւ ուղղակի կարգաւք եւ ողջամիտ խրատով» (էջ 156):

«...ընդ հովանեաւ սուրբ Ստեփանոսի եւ Վասիլ Թագաւորի սուրբ նշանի, որոց խնամաւմն աւարտեցի...» (էջ 173):

Վերելի օրինակներից առաջինում խրատ բառը հղովմած է Ո պարզ արտաքին հղովմամբ: Սակայն ՆՀԲ-ում (հ. Ա., էջ 992) այդ բառի դիմաց Ո պարզ հղովման հնարավոր տարբերակը դրված է ամենավերջում՝ Ո՞ի եւ ի պարզ արտաքին հղովումներից հետո: Նշանակում է՝ խրատ բառը դասական գրաբարի շրջանում նախ ենթարկվել է Ո՞ի, ապա եւ՝ ի, իսկ հետո միայն Ո պարզ հղովման:

Երկրորդ օրինակում խնամ բառը հղովմած է Ի—Ա արտաքին խառն հղովմամբ, սակայն ըստ ՆՀԲ-ի (հ. Ա., էջ 949)՝ բառը հղովմում է Ո պարզ արտաքին հղովմամբ, որի հոգնակի գործիականը պետք է լիներ խնամով:

Ինչպես գրաբարյան ժամանակաշրջանի գրիչների, այնպես էլ Խլաթեցու երկերում ներգոյական հոլովի իմաստը մեծավ մասամբ պահպանել է իր կազմության առանձնահատկությունները՝ արտահայտված ի նախդրի եւ եզակի տրական կամ հոգնակի հայցական հոլովների համադրությամբ.

«...Այլ եւ հարցումն արգահատելի ի շփոթանացս ժամանակի զորպէսն եւ զգիարդն, վասնորոյ հայցեմք յԱստուծոյ լինել ձեզ եւ մնալ ընդ երկայն աւուրս անփորձ ի յոգիս, եւ առողջ ի մարմնի՝ արտաքոյ յամենախորժ կրից...» (էջ 194):

Ներգոյական հոլովի իմաստն արտահայտող կառույցներում նույնպես նկատելի են ի նախդրի կիրառության հետ կապված երեք կարգի տեղաշարժեր:

Ա. կարգի տեղաշարժ: Մեր ուսումնասիրած բնագրերում առկա են աննախդիր կառույցի ընդամենը մի քանի օրինակներ: Նմանատիպ արտահայտությունների սակավությունը, ի տարբերություն բացառական հոլովի, խոսում է այն մասին, որ ի նախդիրը ներգոյական հոլովի իմաստը տրականից եւ հայցականից տարբերող միակ հատկանիշն է:

«...Ղարայ-Ուսուֆ տէրն թախթին

Սատակեցաւ ըստ արժանին...» (էջ 131):

«...Եմք անաղավթ հեղգ ի բարիս,

Անապաշաւ խըղճամըտիս...» (էջ 135):

«...Սպիտակ դաշտին բնակէին...» (էջ 198):

Այստեղ թերեւս կարելի է մեկ օրինակ եւս բերել, որտեղ առկա է մեկ այլ տեղաշարժ. եզակի տրականի փոխարեն բառը դրվել է հայցական հոլովով (մինչդեռ գիտենք, որ ներգոյական հոլովի իմաստը կարող է արտահայտվել եզակի հայցականով միայն այն դեպքում, երբ տվյալ բառը պատկանում է Ա եւ Ո պարզ արտաքին հոլովումներին¹⁵):

«...Թող զորս ծովըն խեղդեցան

Եւ քարավէժ եղեալ կորեան...» (էջ 133):

Բ. կարգի տեղաշարժ: Այստեղ նույնպես ձայնավորով սկսվող բառից առաջ յ նախդրային տարբերակի իմաստի մթագնման հետեւանքով հանդիպում է ի նախդրի կրկնակի կիրառություն.

«...Իսկ ի յամի ութհարիւրին

Ի եւթանասուն թըւականին (1421)...» (էջ 131):

«...զաւրհնեալն ի յերկինս եւ զգովեալն ի յերկրի...» (էջ 136):

«...Ոմն յիշխանացն անուն Գարեգին,

Անդ վըրայեաց ի յայն մատենին...» (էջ 144):

«...Ի յԱրտազու գաւառ¹⁶ ժողովին,

Ուր էր տապանըն Թագէտսին...» (էջ 145):

«...Պահել անփորձ զիս ի մարմին

Եւ անամօթ ի յատենին...» (էջ 148):

«...կարօտեալք, նեղեալք, չարչարեալք, յանապատի մոլորեալք՝ ի լեւրինս, ի յայրս եւ ի փապարս երկրի...» (էջ 156):

«...ի յերկինս՝ երկու լուսաւորքն՝ արեգակն եւ լուսինն, ի յաստեղս՝ արուսեակն առաւօտու, ...ի յոսկիս՝ արաբացին, ի յակումս՝ տպազիոնն, ի կանայս՝ Մարիամ Աստուածածին, ի յարս՝ Բանն Աստուած մարդացեալ...» (էջ 158):

«...Ի յԱյրիվանս մեզ պատահեալ,

Փափագ սրտիս եղեւ լըցեալ...» (էջ 169):

«Իմ ի յերկրի ծնանելով,

Ստինս երկնիցըն դիելով...» (էջ 197):

Գ. կարգի տեղաշարժ: Նկատելի է նաեւ, որ ձայնավորից առաջ յ նախդրի փոխարեն ի նախդիրն է գործածվում.

«...Յայսմ ի ահագին վըշտին մեք վիրաւք հարաք դառնագին...» (էջ 123):

¹⁵ ՏՃԱ Ա. Ա. ԱՔՐԱՀԱՄՅԱՆ, Գրաբարի ձեռնարկ, Երեւան, 1976, էջ 24, 38:

¹⁶ Սպասելի էր յԱրտազ գաւառի:

«...Ի գերեզման մահու եղար,

Եւ ի երրորդ ատար յարեար...» (էջ 179):

Վաղ շրջանի գրաբարի համեմատությամբ՝ ստորեւ բերվող օրինակում պահպանվել է հոգնակի ուղղականի — Բ ձևովը: Նման բազում օրինակներ կտեսնենք հայցական հոլովի քննության ընթացքում.

«...Արդ, յայս դառն ատուքս եւ յահագին ժամանակիս յանկ ելեալ կատարեցաւ սա...» (էջ 177):

Ինչպես գիտենք, հոլովական ընդհանուր համակարգում եզակի հայցականը հոլովանիշ ձևով չի ունենում. այն նմանվում է ուղղականին եւ նրանից տարբերվում է միայն զ նախդիր ստանալու դեպքում:

Խլաթեցու բնագրերում հայցական հոլովի կապված երկու կարգի տեղաշարժ կարելի է մատնանշել:

Ա. կարգի տեղաշարժ: Դարձյալ այստեղ խոսքն աննախդիր կիրառությունների մասին է, տեղաշարժ ցույց տվող բայերի կողքին.

«...Հինգն յունւարի Թաւեզ մըտան...» (էջ 124):

«...Այլ ի բազում տեղեաց էին,

Ի խիզանայ՝ և ի Բաղիշոյ,

Որք հասկաքաղ եկեալ էին...» (էջ 133):

«...՝Ի ատար երկիր վըտարեցան...» (էջ 132): Հմմտ.

«...Իսկ զգերիսըն զոր առին

Յատար երկիր վըտարեցին...» (էջ 130):

Բ. կարգի տեղաշարժ: Հանդիպում է ի նախդրի կրկնակի կիրառություն.

«...Ի յԱղուվանք արշաւեցին

Եւ չար ոճիրս անդ գործեցին...» (էջ 133):

«...Ի յայլազգիս խառնակեցան,

Ըզարութիւն նոցա ուսան...» (էջ 134):

«...Ի յասպաւեզն յաշխարհական...» (էջ 140)¹⁷:

«...Ի յընթերցումն պարապէր...» (էջ 142):

«...այլ ի յայցել խնամով արդարութեամբ չափեաց...» (էջ 155):

«...որ ըստ հոգւոյ եւ ըստ մարմնոյ ի յանդորս փոխեցան...» (էջ 158):

«...Արդ ի յարկանել զհուր սիրոյն Իւրոյ յերկիր Աստուած Բանն...»

(էջ 159):

¹⁷ Այս օրինակում, ինչպես նկատելի է, ի նախդիրը դրվել է նաեւ աշխարհական հետադաս որոշի վրա:

«...Ձնետն Աստուծոյ արեամբ արբած,
Սուրն ի յարիւննս շաղախած...» (էջ 172):

«Մինչ ի յարբունս ծերութեան
Խանձարրապատ եղանելով...» (էջ 197):

Ինչ վերաբերում է հայցական հոլովի հոգնակի թվի կազմությանը, ապա այստեղ ամենազգալի տարբերությունն այն է, որ եթե գրաբարագիր հեղինակների գործերում հոգնակի ուղղականի — ԲՆԵՈՒԹԵՐ ԽԻՍՍՈՍԱԿԱՎ ԷՐ ՀԱՆԴԻԱԿՈՒՄ, ապա ԽԼԱԹԵՑՈՒ ԲՆԱԳՐԵՐՈՒՄ ԱՅԴ ԲՆԵՈՒԹԵՐ ԳՆԱԼՈՎ ԱՎԵԼԻ ԿԻՐԱՌԱԿԱՆ Է ԴԱՌՆՈՒՄ, այնպես որ — ԲՆԵՈՒԹԵՐՈՎ ՀԱՅԿԱԿԱՆԻ ՕՐԻՆԱԿՆԵՐԻ ԹԻՎԸ ԳՐԵԹԵ ՀԱՎԱՍԱՐՎՈՒՄ Է ՕՐԻՆԱՀԱՎԻ — Ա ՎԵՐՋԱՎՈՐՈՒԹՅԱՄԲ ՀՈԳՆԱԿԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՀՈԼՈՎԻՆ.

«...զմեծութիւնն ազգին կանանց եւ զպարծանքն բոլոր հողեղինաց...» (էջ 136):

«...Յարմարողի զբանքս ի կարգին,
Նարեկացո վարդապետին...» (էջ 148):

«Զանձն՝ բարի եւ զվարքն՝ ուղիղ, զհաւատն՝ ուղղադաւան եւ զբարքն՝ հեզ...» (էջ 152):

«...Զայս Բ վարդապետս կարգեաց Մաղաքիայն յերկու տեղիս՝ առ ի յընթեռնուլ եւ յուսուցանել...» (էջ 153):

«...Զի ոմանք սրբութեամբ զկուսութիւն ստացան..., եւ կէսք՝ զպահես եւ զաղօթս որ առանձին...» (էջ 159, նաեւ էջք 170, 184, 187, 192, 194, 197):

«...Այլ զի եւ կաթողիկոսքն մեր զերկոսին սպանին ի միում ամի...» (էջ 173)¹⁸:

Գիտենք, որ «ի նախդիրն ամենից շատ գործածվում է այս (հայցական.— Տ. վրդ. Մ.) հոլովի հետ՝ դրսեւորելով բազմազան նշանակություններ»¹⁹:

«...Իսկ ամիրապետն ասաց զնա տանել ի յիւր հայրենիւն...» (էջ 122):

«...Անտի դարձան ՚ւ ի Հայք եկին

Եւ ի վերայ Վանայ եկին...» (էջ 128, նաեւ էջք 133, 152, 170):

«...Ի ԽԼԱԹ ԼԱՒ ՀԱՆԳԻՍՏ ԷԻ, ԱՊԱՅ ԱՅՆ ԵԿԻ Ի ՎԱՆԲՆ, ՈՐ ԶՄԵՆՆԱ ԹԷ ՏԷՐ ԿԱՄԵՍԵՐԻ, Ի ՄԷԿՏԵՂ ԼԻՆԻՄՔ, ԱՆՈՒՐՔ ՄԻ ԱՅԼ ՀԱՄԲԵՐԵՄՔ...» (էջ 193):

¹⁸ Այստեղ հայցականի զ նախդիրը դրվել է հետադաս՝ թվականի վրա. «...մեր երկու կաթողիկոսներին էլ սպանեցին...»:

¹⁹ Ա. Ա. ԱՐԲԱՆՍՅԱՆ, նշ. աշխ., էջ 255:

Վերելի օրինակները ցույց են տալիս, որ ի նախդիրը տեղաշարժ ցույց տվող բայերի (տանել, ելին, եկի) կողքին, դրվելով հայցական հոլովի վրա, մատնանշում է շարժման ուղղություն. սա քերականության մեջ հայտնի է «ուղեւորման հայցական» եզրով:

Դասական ձեւի հետ համեմատած՝ տեղաշարժ է նկատվում նաեւ իլաթեցու մեկ օրինակում՝ կապված եղբայր բառի հոգնակի ուղղականի հետ, որտեղ պահպանվում է բառի եզակիի հոլովաձեւը՝ դրան ավելանալով միայն —հ հոգնակերտը: Այլ կերպ ասած՝ հիմքի այ > ա հնչյունական հերթագայությունը տեղի չի ունենում:

«...Արդ, ով եղբայրք իմ սիրելիք...» (էջ 176):

Մարդ բառի հոգնակի ուղղական եւ հայցական հոլովաձեւերն ամբողջությամբ տարբերվում են գրաբարյանից: Եթե մարդ բառը գրաբարում ստանում էր —հ կամ —իկ հոգնակերտ վերջավորությունը, ապա իլաթեցու բնագրերում այն հանդիպում է այլ ձեւերով.

«...Սովաւ մարդիկք ցրնծան, եւ հրեշտակք՝ ուրախանան...» (էջ 175):

«...Գիտութիւն լիցի ձեզ, որ ի ձեր հրամանացդ բան մի ասաց Ղազարդ, թէ մարդիկք ի մեզանէ սարտին եւ ի զադին անկանին...» (էջ 194):

«...Երրորդ՝ այլ եւ ջերմեռանդ անթերի սիրովն՝ զոր ունէր առ Աստուած եւ առ մարդիկք, իսկ եւ զարդարեալ էր խոհեմութեամբն...» (էջ 153):

«...Յայնժամ հնարս իմացան գազանամիտ մարդիքն եւ կապէին...» (էջ 166):

Սակայն նույն բառը սեռական հոլովում պահպանել է իր նախկին՝ գրաբարյան ձեւը.

«...ի բարձրութենէ ի վայր հոսէին, եւ այնպէս զայնքան բազմութիւն մարդկան քարավէժ մահացուցին...» (էջ 166):

Իլաթեցու երկերում հանդիպում ենք այնպիսի դեպքերի, որտեղ ուղիղ խնդրի պաշտոնում դրված է ոչ թե հայցական, այլ տրական հոլովաձեւ, որը երբեմն արտահայտվում է զ նախդրով.

«...Եւ արդ՝ դրուատ գովութեան առաքելոցն սրբոց՝ զորդոցն լուսոյ ըստ մերում կարի արժանապէս հատցուք...» (էջ 136):

«...Արբեալ մանկունք իմաստացան,

ի հեշտութեանց, որ պատրեցան,

Ուրախարար հաւրն գըտան...» (էջ 140):

«...Ապա ի թիւ խառնէր այլոց...» (էջ 141):

«...ամենախնամն Աստուած բարին յաշողէ եւ զձերոցդ ամենի...» (էջ 183):

«...Զարքայանիստ քաղաքն առին,

Որում Տըփիսիսըն կոչէին...» (էջ 125):

Վերելի օրինակներն իրենց ձեւով մոտենում են արեւելահայ աշխարհաբարի անձնանիշ բառերի տրականաձեւ հայցականին:

«Դերանունների մի մասն անվանական հոլովում ունի, այսինքն՝ հոլովում է գոյական (ինչպես նաեւ ածական ու թվական) անունների նման, հոլովիչներով, իսկ մի մասն էլ հոլովում է յուրահատուկ ձեւով՝ առանց հոլովիչների, արմատների փոխանցումներով եւ սրանց յուրահատուկ փոփոխություններով. այդ պատճառով էլ վերջիններիս հոլովումը մեր քերականագիտության մեջ ընդունված է կոչել դերանվանական հոլովում²⁰: Որոշ դերանունների հոլովման մեջ էլ նկատվում է անվանական եւ դերանվանական հոլովումների համադրումը»²¹:

Խլաթեցու բնագրերում դերանունների գործածության մեջ այնքան էլ մեծ տեղաշարժեր չեն նկատվում: Մի շարք դերանուններ պարզապես որոշակի միտում են դրսևորում եզակի եւ հոգնակի բացառական հոլովում է-ով վերջավորվելու: Ստորեւ բերվող օրինակները ցույց են տալիս, որ դրանք «աշխարհաբարացող» ձեւեր են.

«...Րամեալ ժողովոյս Հայոց ըզգլուխն ի մեզնէ բարձին...» (էջ 122):

«...Այլ որ ի ձեզանէ փոքր մեծ իմն աւգնականութիւն է մեզ...» (էջ 190):

«...Վանաց, քաղաքաց, գեղի պարիսպ ես, երէց ու աշխարհական, վարդապետ ու ամէն գոհ եւ շուքր են ի քննէ...» (էջ 192, արեւմտ. քննէ):

Հայտնի է, որ դեռեւս դասական գրաբարում առաջին եւ երկրորդ դեմքի անձնական դերանունները բացառական հոլովում, իրենց հիմնական ձեւերից բացի, ունեցել են այլ ձեւեր (իմձէն, մեզէն, մեզոյն, քեզէն, քեզոյն, ձեզէն, ձեզոյն), սակայն այստեղ գրեթե չի գիտակցվել բացառական հոլովի իմաստը: «Սրանք գրաբարում սպասարկու բառերի կիրառություն ունեն: Սովորաբար գործածվում են առաջին եւ երկրորդ դեմքի դերանունների հետ՝ սաստկական նշանակությամբ, օրինակ՝ «...Ես իմձէն աշօք տեսի...» (Եղիշե, II), «...Մեք մեզէն ողջ եմք...» (Եղիշե, I): Այս

²⁰ Տե՛ս Ս. ՄԱԼԽԱՍԵԱՆՅ, Գրաբարի հոլովումը, խոնարհումը եւ նախդիրները (երկրորդ, բարեփոխուած տպագրութիւն), Թիֆլիս, 1910, էջ 38, այլեւ՝ Մ. ԱՔԵՂՅԱՆ, Գրաբարի քերականություն (երկրորդ, վերամշակված տպագրություն), Երեւան, 1936, էջ 123:

²¹ Ա. Ա. ԱՐՐԱՀԱՄՅԱՆ, նշ. աշխ., էջ 75:

օրինակներում կիրառված են սաստկական նշանակությամբ՝ ես իմնս՝ հենց ես, մենք իմնեսր՝ հենց մենք»²²;

Բոլորովին տարբերվում է այլ անորոշ դերանունը՝ հոգնակի թվով իր գործածությամբ.

«...Ոմանք պահօք եւ ոմանք աղօթիւք, այլոք յոտնակացութեամբ եւ կէսք գետնախշտութեամբ...» (էջ 156):

Խլաթեցու այս օրինակում այլոք-ը ոչ թե սխալագրություն է, այլ պարզապես այլ անորոշ դերանվան հոգնակի ուղղականը՝ ի տարբերություն դասական գրաբարի, որտեղ բառիս հոգնակի ուղղականն այլ է: Վերելի օրինակը հաստատում է այն փաստը, որ միջին հայերենում ուր-ը հանդես էր գալիս արդեն որպես հոգնակերտ ձևույթ²³:

2. Հոգնակի թվի յուրահատուկ կազմություններ

Դասական գրաբարում հոգնակի ուղղականը կազմվում է եզակի ուղղականից՝ հիմնականում —Ֆ ձևույթի հավելումով: Ներքին հոլովման դեպքում հոգնակի ուղղականում բառի մեջ հանդես են գալիս Ա, Ի, Ե ձայնավորները եւ ՈՒ երկբարբառային ձայնավորը: Հոգնակի սեռականը կազմվում է եզակի սեռականից՝ —ց հոլովակերտի ավելացումով: Հոգնակի տրականն իր կազմությամբ նման է սեռականին: Հոգնակի հայցականը կազմվում է հոգնակի ուղղականից՝ —Ֆ հոլովակերտը —ս-ով փոխարինելով: Հարկ չենք համարում խոսել գրաբարի հոգնակի բացառական եւ գործիական հոլովների կազմության մասին, որովհետեւ այս մասին վերելում արդեն խոսվել է:

Ի տարբերություն դասական գրաբարի՝ Խլաթեցու բնագրերում արմատապես փոխվում է պատկերը. գրաբարյան —Ֆ հոգնակերտ ձևույթը մեծապես նեղացնում է իր գործածության շրջանակները: —Ք հոգնակերտին փոխարինելու են գալիս նորերը, որոնք մեծ ակտիվություն են դրսևորում հատկապես միջին հայերենում: Այդպիսիք են՝ —այք, —եր: Վերջինս, միջին հայերենին հատուկ օրինաչափությամբ, մեծ մասամբ կցված է լինում միավանկ բառերին.

Հոգնակի ուղղական՝

«...Լաւ հարկեւոր տանուտայք,

²² Անդ, էջ 76:

²³ Լ. Ս. Հովսեփյան, Ձեռքանություն, էջ 37:

Համեստ 'ւ աղւոր լաւ տանտիկնայք...» (էջ 133):

«...Տուն մի տեսայ սպիտակ փռած,

Ու սեաւ հաւեր ի ներս թառած...» (էջ 198):

«...Թէ հարսին զարդերքն եւ բաժինքն է...» (էջ 194):

Վերջին օրինակում զարդ բառը, —եր-ից բացի, —ք հոգնակերտ վերջավորությունն է ստացել:

Հոգնակի սեռական եւ տրական՝

«...Դու առ մեզ արեկ, մեր աչացս լոյս ես եւ սրտի սուն...» (էջ 184):

«...Ես էնց կու կամիմ Աստուծով զքեզ առ իս՝ զինչ զլոյս աչացս, եւ զլուր ականջացս...» (էջ 184):

«...այլ եւ պիտանի ես ի շինութիւն քաղաքաց եւ գեղորէից...» (էջ 192, հմմտ. գրք. վանորէից):

Այս հոլովներում առկա են հոգնակի թվի երկու տարբեր վերջավորություններ՝ —երոյ եւ —երու:

«...Սուրբ Գեղարդեան տեառնամխեալ,

Եւ խաչերոյս աստուածընկալ...» (էջ 169):

«...Տէր լոյս ծագեա՛ խաւարելոյս

Եւ դէ՛ղ արա իմ խոցերուս...» (էջ 178):

Հոգնակի հայցական՝

«...Ուռեալ նեխաւ գէշ գարշելին,

Ագռաւք հանին զաչեր նորին...» (էջ 131):

«...Բամեալ գանձերս որ ի միջին

Եչն առաջին եւ Նուն յետին» (էջ 135):

Վերելինից բացի՝ Խլաթեցու գործերում առկա են —անի եւ —ան հոգնակերտ վերջավորությամբ՝ հայցական հոլովով ձեւեր: Սրանցից —անի հոգնակերտը, դեռեւս գրաբարյան շրջանից սկսած, հավաքականության իմաստով էր հանդիպում.

«...Չէրդին ամուր եւ զնըսբին՝...

Եւ այլ բազում քաղաքանին...» (էջ 128):

«...Անթիւ ըռզակ էր զոր տարան,

Աղէկ ձիան եւ շատ ուղտան...» (էջ 132):

Մյուս կողմից՝ Խլաթեցու երկերում գտնում ենք այնպիսի բառա-
ձեւեր, որտեղ հոգնակի ենթակայի հետ ստորոգյալը եզակի թվով է գոր-
ծածվել: Նրանցում —ք հոգնակերտն այլեւս միայն բառակազմական

արժեք ունի, եւ բառերն ընկալվում են որպէս եզակի՝ երբեմն (բայերի հետ գործածվելիս) պահպանելով, սակայն, իրենց հոգնակիութունը.

«...Զի շփոթեցաւ զաւրբն չարին

Եւ յիրերաց փախուստ առին...» (էջ 131):

«...Ոչ ի կամաց, այլ յակամայ

Հանդիպեցաւ այս դէպք նոցա...» (էջ 134):

«...Եւ կատարեալ վնարեցաւ լուսազարդ գիրքս ընդ հովանեաւ սրբոյն Սարգսի եւ Անանիայի...» (էջ 178):

«...Յաշնան, հրոտից ամիսն ի ԺԳ. (13), յաւուր յիսնականտին սկսեալ եղեւ գիրքս, եւ յամռան հրոտիցն Լ (30) աւարտեցաւ...» (էջ 178):

«...Թարգմանեցաւ գիրքս խրատական սուրբ վարուց...» (էջ 181):

«...Առաջնորդաց հրամանքն այս է...» (էջ 194):

Եզրակացություն

Գրիգոր Խլաթեցու «Բնագրական նշմարներ»-ում գոյություն ունեցող հոլովական տեղաշարժերը քննելիս հանգեցինք հետեւյալ եզրակացության.

Ի տարբերություն գրաբարի, որտեղ անվանական կանոնավոր հոլովումն արտահայտվում է պարզ եւ խառն հոլովումների տեսակներով՝ Խլաթեցու բնագրերում վերանում է վերոնշյալ հոլովումների անջրպետումը, եւ դադարում է խառն հոլովումով բառերի գործածությունը: Յուրաքանչյուր հոլով շատ հաճախ սկսում է հանդես գալ իրեն հատուկ ձայնավոր վերջավորությամբ: Խլաթեցու գործերում շատ բառեր, այլ հոլովական վերջավորություն ստանալով, ամբողջությամբ մոտենում են աշխարհաբարի հոլովական համակարգին:

Ինչ վերաբերում է Խլաթեցու բնագրերում գործածված բառերի հոգնակի թվի կազմությանը, այն իր յուրահատկությամբ զգալիորեն տարբերվում է դասական գրաբարում հանդես եկող հոգնակերտ մասնիկների կազմությունից: Խլաթեցու երկերում հանդիպած —հ հոգնակերտն այլեւս միայն բառակազմական արժեք ունի: Բառերն ընկալվում են որպէս եզակի՝ երբեմն (բայերի հետ գործածվելիս) պահպանելով, սակայն, իրենց հոգնակիութունը: Միաժամանակ, գրաբարյան —հ հոգնակերտ ձեւույթին փոխարինելու են գալիս նոր՝ —այք, —եք հոգնակերտ վերջավորությունները, որոնք գործուն են հատկապես միջին հայերենում:

РЕЗЮМЕ


Несмотря на то, что Григор Хлатеци жил и творил в конце XIV — начале XV вв., тем не менее, при написании текстов на среднем армянском языке в значительной степени был связан с V в., в качестве источника имея для себя классический древнеармянский язык (грабар).

Общность с древнеармянский в значительной степени чувствуется в системе падежей, где некоторые склонения внутреннего наклонения, морфема «к» (ք) во множественном числе и т. д., по своему строению они достигают V в.

При всем этом есть много общего и с ашхарабаром (современным армянским): они связаны схожестью падежных окончаний, в способах образований множественного числа и склонениях имен существительных и местоимений.

SUMMARY

Although Grigor of Khlat lived and worked in the late 14th and early 15th century, he was greatly attached to the 5th century while writing in the Middle Armenian language, having as an origin the Classical Armenian language. The similarities with the Classical Armenian language are very significant in the case system, in which some declension forms, “ք” plural ending, etc., with their structure date back to the 5th century. Despite all this, they have a lot in common with the Modern Armenian language. They are related to case endings, plural forms specific to the Modern Armenian language, approach of nominal and pronominal cases.



ԱՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Պատմական գիտ. թեկնածու, ԵՊՀ

ԲՐԱԶԻԼԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Հայկական սփյուռքի պատմության ուսումնասիրումը մշտապես եղել է մենում է մասնագետների ուշադրության կենտրոնում: Այս ուղղության մեջ կատարվել են բազմաթիվ աշխատանքներ, սակայն Սփյուռքի պատմության որոշ դրվագներ անհրաժեշտ է նորովի ներկայացնել եւ մեկնաբանել: Այս հանգամանքը պայմանավորված է աշխարհում տեղի ունեցող շարունակական փոփոխություններով, որից անմասն չի կարող մնալ նաեւ Սփյուռքը: Սույն հոդվածը նպատակ ունի որոշակիորեն լրացնելու եղած բացը:

Հայերի մուտքը Բրազիլիա: Բրազիլահայ համայնքը Հարավային Ամերիկայի ամենաստվար գաղթավայրերից է: Հայերն այստեղ հաստատվել են ԺԹ. դարի երկրորդ կեսերից¹: 1890-ական թթ. երկրորդ կեսին սուլթանական Թուրքիայում հայերի շարունակական հալածանքների եւ ջարդերի արդյունքում մեծացավ վերջիններիս արտահոսքը դեպի Ամերիկյան մայրցամաք: Հայերի հիմնական մասն Արեւմտյան Հայաստանի տարբեր շրջանների եւ Կ. Պոլսի բնակիչների փոքրաթիվ խմբեր էին, որոնք չկարողանալով մուտք գործել ԱՄՆ՝ տեղափոխվեցին եւ հաստատվեցին Հարավային Ամերիկայի երկրներում²: ԺԹ. դարավերջին Բրազիլիա տեղափոխվեցին նաեւ որոշ թվով սիրիահայ արհեստավորներ³: 1895 թ. տվյալների համաձայն՝ հայերի թիվը Բրազիլիայում մոտ 100 էր⁴:

Հայերի առավել մեծ խմբեր (հիմնականում Կիլիկիայից) ժամանեցին Բրազիլիա Հայոց ցեղասպանությունից հետո՝ 1920-ական թթ.⁵:

¹ Տե՛ս Ե. ՎԱՐԳԱՆԵԱՆ, Պրազիլիոյ հայ գաղութը, Պուէնոս Այրես, 1948, էջ 19. Կ. ԴԱԼԼԱՔՅԱՆ, Հայ սփյուռքի պատմություն. Համառոտ ակնարկ, Երեւան, 2004, էջ 21:

² Տե՛ս <https://brazil.mfa.am/hy/community-overview>, 24.09.2020:

³ Տե՛ս T. NAJARIAN, Armenians in Brazil, <https://tamarnajarian.wordpress.com/2012/05/25/armenians-in-brazil/>, 22.09.2020. Ե. ՎԱՐԳԱՆԵԱՆ, նշ. աշխ., էջ 39–40:

⁴ Տե՛ս «Հայկական սփյուռք» տարեգիրք, «Բրազիլիայի հայ համայնք», Երեւան, 2009, էջ 233:

⁵ Տե՛ս T. NAJARIAN, Armenian in Brazil, <https://tamarnajarian.wordpress.com/2012/05/25/armenians-in-brazil/>:

Բրազիլական կառավարության ցուցաբերած բարյացակամ վերաբերմունքը հնարավորություն տվեց հայերին անարգել տեղաշարժվել նահանգից նահանգ՝ փնտրելով առավել նպաստավոր բնակավայրեր: Ներգաղթյալ հայերը բնակություն հաստատեցին հիմնականում Սան Պաուլո քաղաքում եւ համանուն նահանգի այլ բնակավայրերում: Սան Պաուլոյից բացի՝ հայ ներգաղթյալների քիչ թե շատ ստվար խմբեր բնակություն հաստատեցին Ռիո դե Ժանեյրո քաղաքում: Այստեղ որոշ ժամանակ անց ձեւավորվեց մոտ 300 ընտանիքից բաղկացած հայկական համայնք՝ իր համապատասխան կառույցներով⁶:

Սկզբնական շրջանում Բրազիլիայում հայտնված հայությունը նախեւառաջ փորձում էր նոր պայմաններին ընտելանալ, հիմնավորվել եւ անհրաժեշտ կենսապայմաններ ստեղծել: Չնայած դրան՝ հենց այդ շրջանում բրազիլահայերին հաջողվեց համայնքային կյանքի բավականին ամուր հիմքեր դնել:

Հայերի համեմատաբար խոշոր խմբեր Բրազիլիա ժամանեցին 1940–1960-ական թթ.: Այս անգամ նրանք այս հեռավոր երկիր հասան ոչ միայն Թուրքիայից, Լիբանանից ու Սիրիայից, այլ նաեւ Եգիպտոսից, Ֆրանսիայից եւ այլ երկրներից⁷, շարունակելով կենտրոնանալ Սան Պաուլո նահանգում, Ռիո դե Ժանեյրոյում, Պորտո Ալեգրեում, Ֆորտալեզայում եւ հյուսիսարեւելյան ու հարավային մյուս նահանգների քաղաքներում ու բնակավայրերում:

Հայերի նոր խմբերի ներհոսքը, հատկապես՝ Մերձավոր Արեւելքի երկրներից, որոշակի աշխուժություն մտցրեց համայնքային կյանքում, որը նկատելի նահանջ էր ապրում այդ շրջանում՝ արձանագրելով հայկական մի շարք միությունների եւ կազմակերպությունների գործունեության դադարեցում եւ ձուլման միտումների ուժեղացում⁸:

1960-ականներից մինչեւ մեր օրերն ընկած ժամանակահատվածում բրազիլահայ համայնքը նկատելիորեն չստվարացավ⁹: Բրազիլիայի ազգաբնակչության թվի արագ աճը, օտարազգիների հախուռն մուտքը երկիր, ինչը կառավարությունը մի քանի տասնամյակ խրախուսում էր՝ որպես տնտեսական զարգացման կարեւոր նախապայման, հանգեցրին

⁶ Տէս Լ. ԵԴԱԶԱՐՅԱՆ, Մ. ՆԱԼԲԱՆՅԱՆ-ՄԱՐԳԱՐՅԱՆ, Բրազիլահայ համայնքը, ԼՂԳ, 2007, թ. 3, էջ 66:

⁷ Տէս <https://brazil.mfa.am/hy/community-overview>, 25.09.2020:

⁸ Տէս «Հայ սփյուռք» հանրագիտարան, Երեւան, 2003, էջ 112:

⁹ Տէս <https://brazil.mfa.am/hy/community-overview>, 21.09.2020:

արդեն ընկերային (սոցիալական) բնույթի նկատելի խնդիրների: Դա ստիպեց երկրի ղեկավարությունը սահմանափակումներ մտցնել երկիր մուտք գործող արտասահմանյան քաղաքացիների, այդ թվում՝ հայերի համար:

Տնտեսական խնդիրներից բացի՝ վերջին տասնամյակներում հայերի ներհոսքին դեպի Բրազիլիա խանգարեցին նաեւ այլ հանգամանքներ: Դրանք էին՝ քիչ տարածում ունեցող պետական լեզուն (պորտուգալերեն), բնակլիմայական արտասովոր պայմանները, 1960—1980 թթ. երկրում իշխող բռնատիրական (ավտորիտար) վարչակարգը: Հայկական ոչ սովոր համայնքը եւս չկարողացավ ձգող ուժ հանդիսանալ դեպի բնական պաշարներով հարուստ եւ տնտեսական մեծ հեռանկարներ ունեցող այս հսկա, սակայն հայերին քիչ ծանոթ երկիրը:

Այդ նույն ժամանակահատվածում, ռազմաքաղաքական եւ տնտեսական անկայուն վիճակի պատճառով, Մերձավոր Արեւելքի երկրներից սկսվեց հայերի նկատելի արտագաղթ: Նրանք ուղղվեցին հիմնականում դեպի արագ զարգացող երկրներ՝ շրջանցելով հարավամերիկյան երկրները: Ի տարբերություն Սփյուռքի այլ գաղթօջախների՝ Բրազիլիայի Դաշնային Հանրապետություն (ԲԴՀ), բացի մեկ-երկու տասնյակի հասնող ընտանիքներից, մուտք չեն գործել նաեւ տարբեր հանգամանքների բերումով Հայաստանի Հանրապետությունը վերջին տարիներին լքած հայերը¹⁰:

Այսպիսով՝ կարող ենք արձանագրել, որ հայերը մուտք են գործել Բրազիլիա հիմնականում երեք փուլով: Առաջին փուլ, մեր կարծիքով, կարելի է համարել ԺԹ. դարի կեսերից մինչեւ դարավերջ ընկած ժամանակահատվածը, երբ հայերի սակավաթիվ խմբեր եկան ու հաստատվեցին Բրազիլիայում: Այն կարելի է անվանել նաեւ ծանոթության փուլ, քանի որ նշյալ շրջանում հայերն առաջին անգամ ոտք դրեցին այս երկիր եւ ծանոթացան առկա իրողությունների հետ:

Կարծում ենք՝ երկրորդ փուլ կարելի է համարել ԺԹ. դարավերջից մինչեւ 1920-ական թթ. ընկած ժամանակահատվածը: Այս շրջանում հայերի հոծ խմբեր տեղափոխվեցին եւ բնակություն հաստատեցին Բրազիլիայում: Ի տարբերություն նախորդ փուլի, երբ հայերի արտագաղթը դեպի Բրազիլիա տեղի էր ունեցել կամավոր, երկրորդ փուլում նրանք

¹⁰ ՏՆՍ Լ. ԵՐԱԶԱՐՅԱՆ, Մ. ՆԱԼԲԱՆԳՅԱՆ-ՄԱՐԳԱՐՅԱՆ, նշ. աշխ., էջ 68. «Հայկական սփյուռք» տարեգիրք, «Բրազիլիայի հայ համայնք», էջ 233:

հիմնականում հարկադրաբար էին գնացել նման քայլի: Այս շրջանում Բրազիլիա տեղափոխված հայերի հիմնական մասը լքել էր սեփական բնօրրանը օսմանյան Թուրքիայում իրականացված Հայոց ցեղասպանության, ինչպես նաև մինչ այդ տեղի ունեցած շարունակական կոտորածների ու հալածանքների արդյունքում: Դա էր պատճառը, որ այս փուլում Բրազիլիա տեղափոխված հայերն սկսեցին առավել լրջորեն մտածել այս երկրում հիմնավորվելու մասին:

Երրորդ փուլը ներառում է 1940—1960 թթ. ընկած ժամանակահատվածը: Այս շրջանում Բրազիլիա հասած հայերի խմբերը ոչ միայն օսմանյան Թուրքիայի նախկին տարածքներից էին, այլ նաև աշխարհի տարբեր հայաշատ վայրերից: Սա պայմանավորված էր այն հանգամանքով, որ այդ ժամանակաշրջանում Բրազիլիայում արդեն գոյություն ուներ ձեւավորված հայկական համայնք՝ իր համապատասխան կառույցներով ու ենթակառույցներով, եւ այս երկիր տեղափոխվող հայերն արդեն ունեին առավել հստակ պատկերացումներ իրենց ապագայի վերաբերյալ: Նրանք գիտեին, որ որոշ հարցերում կարող են ապավինել իրենց հայրենակիցներին եւ առավել դյուրին հարմարվել նոր միջավայրին:

Նշյալ փուլերին հաջորդած շրջանում՝ 1960-ական թվականներից մինչև մեր օրերը, շատ քիչ թվով հայեր են մուտք գործել Բրազիլիա:

Ըստ Բրազիլիայի Դաշնությունում ՀՀ դեսպանության տվյալների՝ 2015 թ. դրությամբ Բրազիլիայում բնակվում էր շուրջ 100 հազար հայ: Այս փաստն արձանագրվել է նաև 2015 թ. հունիսի 2-ին ԲԴՀ Ազգային կոնգրեսի Դաշնային Սենատի՝ Հայոց ցեղասպանությունը ճանաչող բանաձեւում¹¹: Սակայն միեւնույն ժամանակ Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակի կայքում Բրազիլիայում բնակվող հայերի թիվը նշված է 50 հազար¹², իսկ «Հայկական սփյուռք» տարեգրքում՝ 40 հազար¹³: Եզնիկ քհն. Վարդանյանի «Հայերը Բրազիլիայում» գրքում նշված է, որ 1948 թ. տվյալներով՝ Բրազիլիայում ապրում էր 20 հազար հայ¹⁴: Կառլեն Դալլաքյանը, իր աշխատության մեջ ներկայացնելով Հայկական սփյուռքի ժողովրդագրական պատկերը, նշում է, որ ամբողջ Հարավային Ամերիկայում բնակվում է 100—125 հազար հայ, իսկ

¹¹ Տե՛ս <https://brazil.mfa.am/hy/community-overview>, 21.09.2020:

¹² Տե՛ս <http://diaspora.gov.am/hy/pages/5/brazil>, 23.09.2020:

¹³ Տե՛ս «Հայկական սփյուռք» տարեգիրք, «Բրազիլիայի հայ համայնք», էջ 233:

¹⁴ Տե՛ս Լ. Եզնիկյան, Մ. Նալբանդյան, Մ. Մարգարյան, նշ. աշխ., էջ 69:

Բրազիլիայում՝ 20 հազար¹⁵։ Վարդան Մատթեոսյանը նշում է մոտավորապես 18–20 հազար¹⁶։ Լ. Եղիազարյանը եւ Մ. Նալբանդյան-Մարգարյանը, իրենց հոգւածում ներկայացնելով Բրազիլիայում տեղի ունեցած ժողովրդագրական աճը վերջին տասնամյակների ընթացքում, 2007 թ. դրությամբ իրական են համարում 35–40 հազարը¹⁷։ Թ. Նաչարյանն իր հոգւածում նշում է, որ 2002 թ. Բրազիլիայում ապրում էր 43 հազար հայ¹⁸։ «Հայ սփյուռք» հանրագիտարանում գրված է, որ 2003 թ. տվյալներով՝ Բրազիլիայում բնակվում էր 25–30 հազար հայ¹⁹։ Միեւնույն ժամանակ առանձին դեպքերում, հաճախ նաեւ բրազիլացիների կողմից նշվում է 35–40 հազար, նույնիսկ՝ 60–80 հազար²⁰։ Այլ թվերի մասին եւս տեղեկութուններ կան։

Ի մի բերելով նշված թվերը՝ դժվար է հասկանալ, թե իրականում որքան հայ է այժմ բնակվում Բրազիլիայում։ Մի կողմից փորձում ենք հավատալ Բրազիլիայի Հանրապետությունում ՀՀ դեսպանատան հաղորդած պաշտոնական տվյալներին, մյուս կողմից տեսնում ենք, որ դրանք խիստ հակասում են «Հայկական սփյուռք» տարեգրքում եւ Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի կայքում տեղ գտած տեղեկութւններին։ Եզնիկ քհն. Վարդանյանի գրքում նշված թվերը նույնպես հակասում են ՀՀ դեսպանատան հաղորդած տվյալներին։ Չնայած այն հանգամանքին, որ Եզնիկ քհն. Վարդանյանի աշխատության հրատարակումից հետո անցել է շուրջ 70 տարի, այնուամենայնիվ, կարծում ենք, որ այս ժամանակահատվածում հնարավոր չէր ունենալ Բրազիլիայում ապրող հայության հնգակի աճ։ Պետք է նշել, որ 1948 թ. համայնքը նոր էր ձեւավորվել, եւ տեղի հայությունն ապրում էր առավել հավաքական։ Այս հանգամանքը թույլ էր տալիս առավել հեշտ ու ճշգրիտ հաշվարկել հայերի իրական թվաքանակը, քան մեր օրերում, երբ նրանք ցրված են այդ մեծ երկրում, իսկ մի մասն էլ առհասարակ հեռացած է հայկական միջավայրից։ Սկսած 1960-ական թվականներից բրազիլահայ համայնքը էականորեն

¹⁵ Տէս Կ. ԴԱԼԼԱՔՅԱՆ, նշ. աշխ., էջ 280։

¹⁶ Տէս Վ. ՄԱՏԹԵՈՍԵԱՆ, Հարաւային կողմն աշխարհի. Հայերը Լատին Ամերիկայի մէջ սկիզբէն մինչեւ 1950, Անթիլիաս, 2005, էջ 329։

¹⁷ Տէս Լ. ԵՂԻԱԶԱՐԵԱՆ, Մ. ՆԱԼԲԱՆԴԵԱՆ-ՄԱՐԳԱՐԵԱՆ, նշ. աշխ., էջ 69։

¹⁸ Տէս T. NAJARIAN, Armenian in Brazil, <https://tamarnajarian.wordpress.com/2012/05/25/armenians-in-brazil/>։

¹⁹ Տէս «Հայ սփյուռք» հանրագիտարան, Երեւան, 2003, էջ 113։

²⁰ Տէս Լ. ԵՂԻԱԶԱՐԵԱՆ, Մ. ՆԱԼԲԱՆԴԵԱՆ-ՄԱՐԳԱՐԵԱՆ, նշ. աշխ., էջ 69։

չի համալրվել: Անշուշտ, հայերն ունեցել են որոշակի աճ, սակայն չենք կարծում, որ դրա արդյունքում հայության թվաքանակը կարող էր հնգապատկվել: Նշյալ ժամանակահատվածում հայության հնգակի աճի վերաբերյալ տվյալները մերժում են նաեւ Վ. Մատթեոսյանն ու Կ. Դալլաքյանը: Կարծում ենք՝ իրականությունն առավել մոտ են «Հայկական սփյուռք» տարեգրքում, Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի կաջքում, Լ. Եղիազարյանի եւ Մ. Նալբանդյան-Մարգարյանի, Թ. Նաչարյանի հոգեվածներում, «Հայ սփյուռք» հանրագիտարանում նշված տվյալները: Ըստ այդմ՝ կարելի է եզրակացնել, որ մեր օրերում Բրազիլիայում բնակվող հայերի թիվը մի քանի տասնյակ հազար է եւ չի գերազանցում 50 հազարը:

Բրազիլահայերի հիմնական մասը կենտրոնացած է Սան Պաուլո նահանգում, մասնավորապես՝ այդ նահանգի նույնանուն մայրաքաղաքում: Սան Պաուլո նահանգի Օզասկո, Պրեզիդենտե, Ալտինո եւ այլ քաղաքներում եւս ապրում են հազարավոր հայեր: Ռիո դե Ժանեյրոյում, տարբեր տվյալներով, բնակվում է 400—2000 հայ, մայրաքաղաք Բրազիլիայում՝ շուրջ 300²¹: Հայերի մնացյալ մասը ցրված է երկրի տարբեր նահանգներում (Պարանա, Սեարա, Բահիա, Մատու Գրոսու, Մինաս Ժերաիս, Սանտա Կատարինա եւ այլն):

Համայնքի կազմավորումն ու համայնքային կառույցների ձեւավորումը: Բրազիլիա ժամանած հայերի մեծ մասը, սկզբնական շրջանում անծանոթ լինելով երկրին ու նրա բարքերին, չտիրապետելով պորտուգալերենին, զբաղվում էր մանրավաճառությամբ՝ շրջելով մեկ բնակավայրից մյուսը: Նախնական այդ փուլին, սակայն, հաջորդեց կայունացման ժամանակաշրջանը: Մի քանի տասնամյակի ընթացքում հայերին հաջողվեց հաստատուն դիրքեր զբաղեցնել Բրազիլիայի հասարակական կյանքում: Նյութապես ապահովված ու երկրին հարմարված հայերն աստիճանաբար սկսեցին ընդգրկվել արտադրության եւ արդյունաբերության, ինչպես նաեւ առևտրի ու սպասարկման ոլորտներում: Նրանք բացեցին սեփական ձեռնարկություններ եւ խանութներ: 1890-ականների վերջերին Բրազիլիա ժամանած Գասպարյան ընտանիքը մեծ ավանդ ունեցավ

²¹ Տե՛ս Լ. Եղիազարյան, Մ. Նալբանդյան-Մարգարյան, նշ. աշխ., էջ 69. «Հայ սփյուռք» հանրագիտարան, էջ 113. T. NAJARIAN, Armenian in Brazil, <https://tamarnajarian.wordpress.com/2012/05/25/armenians-in-brazil/>, 18.09.2020. «Հայկական սփյուռք» տարեգիրք, «Բրազիլիայի հայ համայնք», էջ 233:

հայկական համայնքի ձեւավորման գործում²²։ Այս ընտանիքը Սան Պաուլո բերեց հետագայում երկրի առեւտրի եւ արտագրութեան ոլորտներում մեծ ազդեցություն ձեռք բերած Նազարյաններին եւ Ջեֆերյաններին։

Բրազիլահայ համայնքի կազմավորումը, սակայն, որպէս այդպիսին, տեղի ունեցավ 1920-ական թթ., երբ Սիրիայից, Լիբանանից, Եգիպտոսից, Թուրքիայից եւ Արեւելքի այլ երկրներից ժամանեցին ու բրազիլական հողում արմատներ գցեցին փախստական հայերի մեծաթիվ խմբեր²³։ Դա 1915 թ. Հայոց ցեղասպանություն վերապրողների աշխարհասփոման երկրորդ ալիքն էր, երբ ազգային աղետին հաջորդած տարիներին Բեյրութի, Կահիրեի, Երուսաղեմի, Հալեպի ու Դամասկոսի որբանոցներում, հիվանդանոցներում եւ կացարաններում ապաստան գտած հայերն սկսեցին տեղաշարժվել Ատլանտյան օվկիանոսից այն կողմ։

Եզնիկ քհն. Վարդանյանի կարծիքով՝ Բրազիլիայի հայ գաղութի պատմությունն սկսվել է 1923 թ., քանի որ իրական գաղթը տեղի է ունեցել այս շրջանում²⁴։ Գ. Մխիթարյանի համոզմամբ՝ բրազիլահայերի ազգային կյանքի կազմակերպումը ու զարգացումն սկզբնավորվել են 1924 թ. Գաղութային հիմնադիր հանձնաժողովի ձեւավորմամբ ու հոգեւոր հովվապետության հաստատմամբ²⁵։ Եթե այս ամենին հավելենք, որ համայնքային հիմնական կառույցներն ու կազմակերպությունները ձեւավորվել են նույն շրջանում, ապա կարող ենք հստակ արձանագրել՝ բրազիլահայ գաղթօջախը կազմավորվել է 1920-ական թվականներին։ Հայերի նյութական բարեկեցությունը նպաստել է համայնքային կյանքի կազմակերպմանը։

Բրազիլիայում հիմնված հայկական առաջին կազմակերպությունը «Հայ կարմիր խաչն» էր, որն իր գործունեությունն սկսել է 1915 թ. եւ ավարտել 1917-ին։ Այնուհետեւ 1917 թ. նոյեմբերի 8-ին սկսել է գործել «Հայ բարեգործական միությունը», որի նպատակն էր հայերին աջակցելը, տեղական բնույթի ծրագրեր իրականացնելը²⁶։ Սա առավել մեծ եւ գործուն կառույց էր, որի նախաձեռնությամբ բրազիլահայ համայնքը բազմաթիվ ծրագրեր իրականացրեց։ «Հայ բարեգործական միությունը»

²² Տէս Ե. ՎԱՐԳԱՆԵԱՆ, նշ. աշխ., էջ 40-47։

²³ Տէս Լ. ԵՂԱՋԱՐՅԱՆ, Մ. ՆԱԼԲԱՆԳՅԱՆ-ՄԱՐԳԱՐՅԱՆ, նշ. աշխ., էջ 66։

²⁴ Տէս Ե. ՎԱՐԳԱՆԵԱՆ, նշ. աշխ., էջ 25։

²⁵ Տէս Գ. ՄԽԻԹԱՐԵԱՆ, Պրազիլահայ գաղութը (սկիզբէն մինչեւ մեր օրերը), Փարիզ, 1938, էջ 26։

²⁶ Տէս Ե. ՎԱՐԳԱՆԵԱՆ, նշ. աշխ., էջ 291։

«Հայկական բարեգործական ընդհանուր միության» (ՀԲԸՄ) մասնաճյուղը չէր: Այն կազմալուծվել է 1921 թ.: Վերոնշյալ կազմակերպություններն ստեղծվել էին Սան Պաուլոյում, որտեղ կենտրոնացած էր Բրազիլիայում ապրող հայության ճնշող մեծամասնությունը²⁷:

Բրազիլահայ գաղութի հասարակական կազմակերպությունների գերակշիռ մասը, սակայն, սկսել է գործել 1920–1930-ական թթ.²⁸: Մինչև Երկրորդ աշխարհամարտն ստեղծվել են համայնքի եկեղեցական ու կրթական հիմնական հաստատությունները, մշակութային ու երիտասարդական կազմակերպությունները, քաղաքական կուսակցությունների մասնաճյուղերը:

1927 թ. հիմնվել է «Հայ գաղութային միությունը», որը համայնքային կյանքը կազմակերպող մարմին էր: Գաղութային միության հետ միաժամանակ ձևավորվել է «Երիտասարդաց երկսեռ միությունը»: Միությունների հիմնական նպատակն ազգային արժեքների պահպանումն էր: Նրանք միտված էին ուծացման դեմ պայքարելուն եւ հայրենասիրություն սերմանելուն²⁹: 1920-ական թվականներին իրենց գործունեությունն են սկսել նաեւ «Հայ երիտասարդաց միությունը», «Հայ մարմնակրթական միությունը», «Յառաջդիմասէր հայուհեաց» միությունը:

1933 թ. հիմնվել է «Կրթասիրաց միությունը»³⁰, 1934-ին՝ Հայ Կարմիր խաչի մասնաճյուղը, նույն թվականին՝ «Զափահաս որբերու միութեան» մասնաճյուղը³¹: 1938 թ. սկսել է գործել «Օրիորդաց միությունը»³², 1940-ին՝ «Արմենիա» երիտասարդաց միությունը³³: 1944 թ. օգոստոսին Սան Պաուլոյում ստեղծվել է «Հայ մշակութային միությունը»: Վերջինս տարբեր կուսակցությունների անդամ եւ անկուսակցական երիտասարդների մի ստվար խումբ էր³⁴, որը հարում էր համայնավարներին եւ նպատակ ուներ հարաբերություններ զարգացնել Խորհրդային Հայաստանի հետ: 1928 թ. հիմնվել են նաեւ «Մարաշի»³⁵, ապա «Զեյթունի» եւ «Հաճընի»

²⁷ Տե՛ս անդ, էջ 51:

²⁸ Տե՛ս անդ, էջ 66–68:

²⁹ Տե՛ս Գ. ՄԽԻԹԱՐԵԱՆ, նշ. աշխ., էջ 29:

³⁰ Տե՛ս անդ, էջ 40–42:

³¹ Տե՛ս անդ, էջ 45. Վ. ՄԱՏԹՆՈՍԵԱՆ, նշ. աշխ., էջ 258:

³² Տե՛ս Ե. ՎԱՐԴԱՆԵԱՆ, նշ. աշխ., էջ 256:

³³ Տե՛ս անդ, էջ 261. «Հայ սփյուռք» հանրագիտարան, էջ 115. <https://brazil.mfa.am/hy/community-overview>:

³⁴ Տե՛ս Ե. ՎԱՐԴԱՆԵԱՆ, նշ. աշխ., էջ 472:

³⁵ Տե՛ս անդ, էջ 173:

հայրենակցական միությունները: Ավելի ուշ ստեղծվել են եւս մի քանի հայրենակցական միություններ՝ «Սիս» (1933 թ.), «Այնթափ» (1936 թ.) եւ այլն³⁶: 1945 թ. իր գործունեությունն է սկսել «Պատերազմի հայ աղէտեալներու օժանդակ յանձնախումբը»³⁷: Հետագա տարիներին ստեղծվել են կուսակցական, բարեգործական, մշակութային, մարզական-երիտասարդական, հայրենակցական եւ մի շարք այլ կազմակերպություններ:

Հայ քաղաքական կուսակցությունները եւս նշանակալի դերակատարում ունեն բրազիլահայ համայնքի կազմավորման, զարգացման եւ ազգային ավանդույթների պահպանման գործում:

ՀՅԴ տեղական կազմակերպությունը հիմնվել է Սան Պաուլոյում 1928 թ.³⁸: Սկզբնական շրջանում այն հիմնականում բաղկացած էր «Հայ գաղութային միության» եւ «Հայ երիտասարդաց երկսեռ միության» նախկին անդամներից: Ներկայումս ՀՅԴ-ն համարվում է Բրազիլիայի ամենագործուն ու մեծաթիվ համայնքային կառույցներից մեկը եւ գործում է «Արմենիա մշակութային ընկերակցություն» անվան տակ: Այն ունի երկու հիմնական կառույց՝ «Դրո» հանձնախումբ (կոմիտե, ենթարկվում է Բուենոս Այրեսում գործող Հարավային Ամերիկայի ՀՅԴ-ի կենտրոնական հանձնախմբին) եւ 1940-ից գործող Հայկական ակումբը»: Վերջինս համայնքային կարեւոր կազմակերպություն է եւ տնօրինում է ընդարձակ տարածք՝ իր շինություններով (հանդիսասրահ (500 մարդու համար), փոքր սրահ, ամենօրյա գործող ճաշարան, գրադարան, փակ մարզադահլիճ, մարզադաշտ, լողավազան եւ այլն): Ակումբը կազմակերպում է հայոց լեզվի դասընթացներ, թողարկում է պարբերական տեղեկագիր: Ունի 40 անդամից կազմված վարչական մարմին: ՀՅԴ-ի տեղական կազմակերպության կողմից է համակարգվում «Հայ դատի հանձնախումբը», որը ստեղծվել է 2003 թ.: Վերջինիս նախաձեռնությամբ են ստեղծվել «Հայաստան» մշակութային ընկերությունը (հրատարակում է «Լրատու» պարբերականը), «Հայկական երգչախումբը»: 2005 թ. հիմնադրվել է ՀՅԴ-ի «Համազգային» կրթական եւ մշակութային միության Բրազիլիայի մասնաճյուղը:

³⁶ Տէս Վ. ՄԱՏԹԵՈՍԵԱՆ, նշ. աշխ., էջ 258:

³⁷ Տէս անդ:

³⁸ Տէս Գ. ՄԵԻԹԱՐԵԱՆ, նշ. աշխ., էջ 33–42. «Հայ սփյուռք» հանրագիտարան, էջ 116. Լ. ԵՂԻԱՋԱՐՅԱՆ, Մ. ՆԱԼԲԱՆԳՅԱՆ-ՄԱՐԳԱՐՅԱՆ, նշ. աշխ., էջ 72. <https://brazil.mfa.am/hy/community-overview>, 24.09.2020:

Սոցիալ-դեմոկրատական հնչակյան կուսակցության (ՄԴՀԿ) առաջին մասնաճյուղը Բրազիլիայում (Սան Պաուլո) հիմնվել է 1928 թ.: ՄԴՀԿ-ն նույնպես նշանակալի դերակատարում է ունեցել բրազիլահայ համայնքի կազմավորման եւ ազգային ավանդույթների պահպանման գործում: ՄԴՀԿ-ն Բրազիլիայում առավել հայտնի է «Արարատ» մշակութային միություն անվամբ: Ռամկավար ազատական կուսակցությունը (ՌԱԿ) հիմնականում համախմբված է Հայկական բարեգործական ընդհանուր միության շուրջ³⁹: Բրազիլիայում գործում է «Թեքեյան» մշակութային միության մասնաճյուղը:

Բրազիլիայում գործող համայնքային առավել կենսունակ կառույցներից է ՀԲԸՄ-ի Սան Պաուլոյի մասնաճյուղը, որը ձևավորվել է 1932 թ.: Մինչեւ 2005 թ. միությանը կից գործել է «Պարեն եւ Ռեծինա Բազարյան» դպրոցը, որն ուներ մոտ 100 աշակերտ⁴⁰: ՀԲԸՄ-ի մասնաճյուղի հովանու ներքո են «Էրեբունի» երգչախումբը, «Ծիածան» պարբերականը (հայերեն, պորտուգալերեն): Միությունը համագործակցում է Հայաստանի հետ:

Բրազիլահայ համայնքը ղեկավարվում է իր կանոնադրությամբ, որը վավերացրել է այդ երկրի կառավարությունը: Կանոնադրության համաձայն՝ ընտրվում է բրազիլահայության 40 հոգուց բաղկացած Ազգային ներկայացուցչական մարմին, որն իր հերթին ընտրում է Կենտրոնական վարչական խորհուրդ: Այն կազմված է համայնքային միությունները ներկայացնող անդամներից եւ բրազիլահայության ազգային կյանքը կազմակերպող գլխավոր մարմինն է (բաղկացած 9–11 անդամից)⁴¹: Ժողովները նախագահում է թեմակալ առաջնորդը⁴²: Նշյալ կառույցների հովանավորությամբ են գործում եկեղեցական, կուսակցական, հայրենակցական, բարեգործական, մշակութային, կրթական, մարզական կազմակերպությունները: Երկար տարիներ կառույցի ատենապետն էր Վարուժան Բուրմայանը: Նա միաժամանակ հայկական ծագում ունեցող համալսարանականներին համախմբող «Բրազիլիա—Հայաստան» ընկերության, 1988 թ. երկրաշարժից տուժածների օգնության բրազիլական

³⁹ Տե՛ս անդ:

⁴⁰ Տե՛ս անդ:

⁴¹ Տե՛ս Ե. ՎԱՐԳԱՆԵԱՆ, նշ. աշխ., էջ 329–332:

⁴² Տե՛ս անդ, էջ 353. նաեւ՝ <http://diaspora.gov.am/hy/pages/5/brazil>, 24.09.2020. «Հայ սփյուռք» հանրագիտարան, էջ 114. <https://brazil.mfa.am/hy/community-overview>, 24.09.2020:

հանձնաժողովի, «Հայաստանի վերակառուցման հանձնաժողովի» նախագահն էր:

Հոգևոր կառույցները: Սփյուռքի հայկական համայնքներում Հայոց Եկեղեցու դերը մշտապես եղել է մնում է նշանակալի, այս իմաստով բացառություն չէ նաեւ բրազիլահայ համայնքը:

Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին 1920-ական թվականներին Բրազիլիայում արդեն ուներ իր ներկայացուցիչը: Այս համայնքի առաջին հայ հոգևորականը Գաբրիել ավ. քհն. Սամուելյանն էր, որը Մերձավոր Արեւելքից գաղթած հայության հետ 1923 թ. հաստատվել էր Բրազիլիայում: Նոր վերաբնակեցվածները, գաղութային կյանքը կազմակերպելու եւ վարչություն ստեղծելու նպատակով, 1924 թ. ձեւավորում են հանձնաժողով ու հաստատում հոգևոր հովվապետություն⁴³: Այնուհետեւ նրանք դիմում են ամերիկահայոց թեմի առաջնորդին (Նյու Յորք)՝ իրենց վարչությունը վավերացնելու եւ Բրազիլիայի հայ համայնքի եկեղեցական ու ազգային կյանքն իր հովանու տակ առնելու խնդրանքով: 1933 թ. այս համայնքն ընդգրկվում է Հարավային Ամերիկայի հայրապետական պատվիրակության կազմում (կենտրոնը՝ Բուենոս Այրես): Այս վիճակը շարունակվում է մինչեւ 1983 թ., երբ Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Ա. Պալճյանի (1955–1994 թթ.) կոնդակով Հարավային Ամերիկայի հայրապետական պատվիրակությունը բաժանվում է երեք առանձին (Արգենտինայի, Ուրուգվայի, Բրազիլիայի) թեմերի⁴⁴:

Կարող ենք արձանագրել, որ Վազգեն Ա. Պալճյանի կոնդակը Բրազիլիայում Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու առանձին թեմի կազմավորման հիմքն է: Այսպիսով՝ հայրապետական կոնդակով 1983 թ. կազմավորվում է Բրազիլիայի թեմը, որի առաջնորդանիստն է դառնում Սան Պաուլոյի Ս. Գեորգ եկեղեցին:

Բրազիլիայում հայկական առաջին եկեղեցին Ս. Հովհաննես Մկրտիչն է, որը կառուցվել է 1935 թ. Օզասկոյում (ներկայումս եկեղեցու սպասավորությունը կատարում են Սան Պաուլոյի Ս. Գեորգ եկեղեցու քահանաները)⁴⁵: Բրազիլիայի թեմի առաջնորդանիստ Ս. Գեորգ եկեղեցին

⁴³ Տէս Գ. ՄԵԻԹԱՐԵԱՆ, նշ. աշխ., էջ 26:

⁴⁴ Տէս Լ. ԵՂԵՍՅԱՆ, Մ. ՆԱԼԲԱՆՅԱՆ-ՄԱՐԳԱՐՅԱՆ, նշ. աշխ., էջ 71. «Հայ սփյուռք» հանրագիտարան, էջ 114:

⁴⁵ Տէս անդ:

կառուցվել է 1938 թ.⁴⁶։ Այն վերակառուցվել է 1948 թ.⁴⁷։ Բրազիլիայի հայոց թեմին կից գործում է բրազիլահայությունյան ազգային ներկայացուցչական մարմինը՝ Եկեղեցական խորհուրդը, որի ենթակայության ներքո են գործում համայնքային կառույցների եւ կազմակերպությունների մեծ մասը։ Նշենք նաեւ, որ Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսությունը Բրազիլիայում թեմ չունի⁴⁸։

1934 թ. ստեղծվել է «Բրազիլիայի հայ կաթողիկոսների միությունը»։ 1935 թ. Սան Պաուլոյում հիմնադրվել եւ մինչ օրս գործում է Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին, որը միավորում է բրազիլահայ կաթողիկ համայնքը⁴⁹, հրատարակում է «Մեհենջեր» պարբերականը (պորտուգալերեն)։

Բրազիլիայում գործում է նաեւ Հայ ավետարանչական (բողոքական) եկեղեցին (Սան Պաուլո), որն սկսել է գործել 1931 թ.⁵⁰։ Վերջինիս հոգեւոր իշխանության սահմաններում, բայց ինքնուրույնաբար, գործում է նաեւ «Ավետարանական եղբայրներ» միությունն իր եկեղեցիով⁵¹։ Գաղութի կյանքում ավետարանչական հայերը եւս ունեն զգալի դերակատարում (շուրջ 400 ընտանիք)։ Նրանք հաճախ կազմակերպում են հասարակական եւ բարեգործական միջոցառումներ, հրատարակում են պարբերականներ (հայերեն, պորտուգալերեն)։

Դպրոցը։ Բրազիլիայում, կրթության մասին օրենքի համաձայն, ազգային փոքրամասնությունների դպրոցներում, տվյալ ժողովրդի պատմությունից եւ մայրենի լեզվից զատ, դասավանդվում են նաեւ երկրի պետական ուսումնական ծրագրերով նախատեսված առարկաներ, ինչը բնորոշ է Սփյուռքում գործող հայկական դպրոցներին։ Համայնքի ձեւավորումից ի վեր Բրազիլիայում գործել են հայկական մեկօրյա դպրոցներ։ Հայտնի են «Կիլիկիա», «Նուբարյան», «Սահակ—Մեսրոպյան» վարժարանները։ Այնուհետեւ հիմնվել են ամենօրյա վարժարաններ (1928 թ., 1983 թ.)։ 1928 թ. մարտի 12-ին Գաղութային միության հովանու ներքո իր գործունեությունն է սկսել Սան Պաուլոյի առաջին նախակրթարանը։ Կրթական գործընթացը կազմակերպել են «Յառաջդիմասէր հայուհեաց

⁴⁶ Տէս Ե. ՎԱՐԳԱՆԵԱՆ, նշ. աշխ., էջ 321։

⁴⁷ Տէս «Հայ սփյուռք» հանրագիտարան, էջ 114։

⁴⁸ Տէս Լ. ԵԳԻԱՋԱՐՅԱՆ, Մ. ՆԱԼԲԱՆԳՅԱՆ-ՄԱՐԳԱՐՅԱՆ, նշ. աշխ., էջ 71։

⁴⁹ Տէս <https://brazil.mfa.am/hy/community-overview>։

⁵⁰ Տէս Ե. ՎԱՐԳԱՆԵԱՆ, նշ. աշխ., էջ 477—481։

⁵¹ Տէս Լ. ԵԳԻԱՋԱՐՅԱՆ, Մ. ՆԱԼԲԱՆԳՅԱՆ-ՄԱՐԳԱՐՅԱՆ, նշ. աշխ., էջ 7. «Հայ սփյուռք» հանրագիտարան, էջ 114—115. <https://brazil.mfa.am/hy/community-overview>, 25.09.2020։

միութեան» ներկայացուցիչները⁵²։ Նույն թվականի ապրիլի 16-ին բացվել է Մարաշի եւ շրջակայից հայրենակցական միության «Եղիշէ Դուրեան» նախակրթարանը։ 1931 թ. նշյալ նախակրթարանները միավորվել են եւ շարունակել գործել համայնքի հանգանակությամբ՝ անվանակոչվելով «Դուրեան» ազգային վարժարան՝ ի հիշատակ Երուսաղեմի հայոց պատերիարք Եղիշէ արք. Դուրյանի⁵³։ 1938-ից այս հաստատությունը գործել է Ս. Գեւորգ եկեղեցուն կից եւ թեմին պատկանող միակ հայկական ամենօրյա դպրոցն է⁵⁴։ Դպրոցն ունի մանկապարտեզ, նախակրթարան եւ երկրորդական (միջնակարգ) բաժին, մոտ 120 աշակերտ։ Հիշատակության է արժանի նաեւ մինչեւ 2005 թ. (կամ 2006 թ. սկիզբը) գործող «Փառեն եւ Ռեզինա Պազարյան վարժարանը»⁵⁵, որը նույնպես եղել է ամենօրյա։ Այն հիմնադրվել է 1983 թ. Սան Պաուլոյում՝ ՀԲԸՄ-ի հովանավորությամբ։ Վարժարանն ունեցել է մանկապարտեզ, նախակրթարան եւ երկրորդական բաժին, շուրջ 100 աշակերտ։ Մինչ վերջերս գործում էր նաեւ երկու փոքր դպրոց (մոտ 100 աշակերտ) Սան Պաուլոյի մերձակա Պրեզիդենտե Ալտինո եւ Ֆեյրա դե Սանտանա քաղաքներում։ Կիրակնօրյա դպրոցներ ունի նաեւ հայ ավետարանչական համայնքը։ Նշյալ դպրոցներից բացի՝ Բրազիլիայում տարբեր ժամանակներում գործել են նաեւ այլ դպրոցներ («Խրիմեան» (1931–1953 թթ.)՝ Պրեզիդենտե Ալտինո, «Ավետարանական համայնք» (1931–1953 թթ.)՝ Սան Պաուլո, «Նուպարեան» (1933–1937 թթ.)՝ Սանտա Աննա, «Կաթողիկէ համայնք» (1934–1935 թթ.)՝ Սան Պաուլո, «Կիլիկիա» դպրոց (1935–1936 թթ.)՝ Սան Պաուլո եւ այլն)⁵⁶։

1962 թվականից Սան Պաուլոյի համալսարանում հիմնադրվել եւ գործում է հայագիտության ամբիոն⁵⁷։ Ամբիոնի բացումից ի վեր Բրազիլիայում առաջացել է որոշակի հետաքրքրություն հայագիտության նկատմամբ։ Սան Պաուլոյի համալսարանի Հայկական ուսումնասիրությունների ամբիոնի շնորհիվ ամեն տարի տասնյակ ուսանողներ (հիմնականում օտարազգի) մասնակցում են հայոց լեզվի եւ գրականության դասընթացներին։ Պրոֆեսոր Եսայի Դուռզյանը, որը հիմնադրել ու ղեկավարել է

⁵² Տէս Վ. ՄԱՏԹԵՈՍԵԱՆ, նշ. աշխ., էջ 258–259. Ե. ՎԱՐԳԱՆԵԱՆ, նշ. աշխ., էջ 296–297։

⁵³ Տէս Գ. ՄԽԻԹԱՐԵԱՆ, նշ. աշխ., էջ 33–38։

⁵⁴ Կ. ԴԱԼԼԱՔՅԱՆ, նշ. աշխ., էջ 280։

⁵⁵ Տէս <https://brazil.mfa.am/hy/community-overview>։

⁵⁶ Տէս Վ. ՄԱՏԹԵՈՍԵԱՆ, նշ. աշխ., էջ 259։

⁵⁷ Տէս անդ, էջ 330. Կ. ԴԱԼԼԱՔՅԱՆ, նշ. աշխ., էջ 280. <https://brazil.mfa.am/hy/community-overview>։

(մինչև 1988 թ.) նշյալ ամբիոնը, հայտնի է հայոց լեզվին եւ գրականությանը նվիրված իր մի շարք աշխատություններով: Նրա ջանքերով 6 հատորով պորտուգալերեն լույս են տեսել Հայոց ցեղասպանության մասին նյութեր եւ ուսումնասիրություններ: Ամբիոնը միակն է հարավամերիկյան տարածաշրջանում⁵⁸: Այն իրականացնում է գիտահետազոտական աշխատանքներ հայոց լեզվի եւ գրականության, մշակույթի եւ պատմության տարբեր հարցերի վերաբերյալ, հրատարակում հեղինակային ուսումնասիրություններ, ձեռնարկներ ու հոդվածներ: Ամբիոնի դասախոսները մասնակցում են Հայաստանում կազմակերպվող հայագիտական միջազգային համաժողովներին ու գիտաժողովներին:

Այսպիսով՝ բրազիլահայ համայնքը ոչ միայն մեծապես կարեւորել է հայկական դպրոցների հիմնադրումը, ինչը հայկական ինքնության պահպանման գրավականներից էր, այլ նաեւ զարկ է տվել հայագիտության զարգացմանն ու տարածմանը:

Մամուլը: Բրազիլահայ համայնքի պատմության ընթացքում հրատարակվել են շուրջ 15 անուն հայերեն պարբերականներ, որոնք, սակայն, կարճատեւ կյանք են ունեցել: Հայերեն առաջին տպագիր պարբերականը ամսաթերթ «Եռանդն» էր, որը լույս է ընծայվել 1928–1931 թթ: Այնուհետեւ Սան Պաուլոյում 1933–1937 թթ. հրատարակվել է Հնչակյան ուսանողական միության «Կայծ» ազգային, գրական, գեղարվեստական պաշտոնաթերթը: Հետագա տարիներին հրատարակվել են «O Dominante» (1934–1935 թթ.), «Վերելք» (1946–1947 թթ.), «Ararat» (1946–1949 թթ.), «Հայաստան» (1965–1967 թթ.), «Հայաստանի ձայն» (1947–1950 թթ.), «Brazil–Armenia» (1947–1959), «Սիփան» (1983–1987 թթ.), «Նոր Անի», «Տրիբունա Արմենիա» (պորտուգալերեն) պարբերականները: Մինչ վերջերս լույս էին տեսնում «Իրիս» («Ծիածան»), «Մասիս», «Լրատու» (հայերեն, պորտուգալերեն) պարբերականները⁵⁹: 1995-ից սկսել է վերահրատարակվել բրազիլահայ թեմի «Սիփան» երկամսյա պաշտոնաթերթը (հայերեն, պորտուգալերեն): 1942 թ. թողարկվել է հայկական առաջին ռադիոժամը՝ «Հայկական ժամը», որը մեծ ժողովրդականություն է վայելել: 2005-ից ՀՅԴ-ի ջանքերով Սան Պաուլոյի Տրիանոն ռադիոկայանն սկսել է եթեր արձակել «Armenia viva» («Ապրող Հայաստան»)

⁵⁸ Տե՛ս Լ. ԵՂԻԱՋԱՐՅԱՆ, Մ. ՆԱԼԲԱՆԳՅԱՆ-ՄԱՐԳԱՐՅԱՆ, նշ. աշխ., էջ 72:

⁵⁹ Տե՛ս Վ. ՄԱՏԹԷՈՍԵԱՆ, նշ. աշխ., էջ 261–262. Ե. ՎԱՐԳԱՆԵԱՆ, նշ. աշխ., էջ 531–540. «Հայ սփյուռք» հանրագիտարան, էջ 117:

կիրականօրյա հաղորդումը⁶⁰։ Բացի այդ՝ ստեղծվել է «Արմենիա» էլեկտրոնային կայքը, որը ներկայացնում է հարուստ տեղեկատվություն։

Բրազիլահայ նշանավոր գործիչները։ Բրազիլիայում չկա մասնագիտական գործունեության որեւէ բնագավառ, որտեղ հայերն իրենց ակներեւ նպաստը բերած չլինեն։ Այս երկրում հայերը հիմնականում ճանաչված են որպես կոշիկի արտադրության եւ դրա վաճառքի ոլորտում մասնագիտացած ազգային փոքրամասնություն։

Եւրոպայում ուսանած եւ 1880-ականներին Բրազիլիա տեղափոխված անվանի ճարտարագետ Միհրան Լատիֆը⁶¹ անջնջելի հետք է թողել այս երկրի պետական ու տնտեսական կյանքում։

Մարտիրոս Աղամյանը քաղաքական ասպարեզ մուտք գործած առաջին հայ գործիչն էր, որ կարողացավ հաջողություն ունենալ Բրազիլիայում։ Նա 1931 թ. ընտրվել է Գրիստալինոյի (Կոյազ նահանգ) քաղաքապետ եւ մինչեւ 1933 թ. զբաղեցրել այդ պաշտոնը⁶²։ Չնայած այս հանգամանքին՝ բրազիլահայերը մուտք են գործել քաղաքական ասպարեզ հիմնականում 1960-ական թվականներից։ Հայ նշանավոր քաղաքական գործիչներ էին՝ 1960-ական թթ. Բրազիլիայի Դաշնային խորհրդարանի պատգամավոր Ուբիրախարա Քեոթենեճյանը, խորհրդարանի նախկին անդամ Ֆերնանդո Գասպարյանը, Մատու Գրոսսու նահանգի նահանգապետ Պեդրո Պետրոսյանը, Օզասկոյի առաջին քաղաքապետ, նույն քաղաքի կառավարության բնապահպանության քարտուղար Հրանտ Սանազարը, Սան Պաուլո նահանգի խորհրդարանի պատգամավոր Կառլոս Կոլակյանը, ԲԴՀ-ի բյուջեի ու պլանավորման նախկին նախարար (1996–1998 թթ.), Դաշնային խորհրդարանի անդամ, ականավոր տնտեսագետ Անտոնիո Կանգիլը։ Բացի այդ՝ Բրազիլիայի դիվանագիտական համակարգում եւ նրա արտասահմանյան ներկայացուցչություններում ծառայում են հայազգի դիվանագետներ, արտակարգ եւ լիազոր դեսպաններ⁶³։

Բրազիլաբնակ նշանավոր հայեր են Սան Պաուլոյի տեխնոլոգիական ուսումնասիրությունների կենտրոնի տնօրեն, անվանի գիտնական Վահան Հակոբյանը, Բրազիլիայի քաղաքացիական եւ ռազմական նավահանգիստների նախկին տնօրեն, ռազմածովային ուժերի ծովակալ

⁶⁰ Տէս Լ. ԵՂԻԱՋԱՐՅԱՆ, Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆ-ՄԱՐԳԱՐՅԱՆ, նշ. աշխ., էջ 72։

⁶¹ Տէս Գ. ՄԵԹԱՐԵԱՆ, նշ. աշխ., էջ 15։

⁶² Տէս Վ. ՄԱՏԹՆՈՍԵԱՆ, նշ. աշխ., էջ 252։

⁶³ Տէս <https://brazil.mfa.am/hy/community-overview>, 25.09.2020։

Զավեն Պողոսյանը, երկրի Բժշկական ակադեմիայի իսկական անդամ
 Լեւան Պողոսյանը, միջազգային համբավ ունեցող մանկաբույժ Անդրա-
 նիկ Մանիսաջյանը, բանկային խոշոր գործիչներ Վարուժան Բուրմայա-
 նը, Անդրանիկ եւ Անդրե Կիսաջիկյանները, անվանի կինոտեսաբան, Սան
 Պաուլոյի միջազգային կինոփառատոնի հիմնադիր Լեոն Կակոֆը, բրա-
 զիլական կինոյի եւ հեռուստատեսության աստղեր Արաքսի Բալաբանյա-
 նը, Ստեփան Ներսիսյանը, Դենիս Դերկյանը եւ ուրիշներ:

Վերջին տասնամյակների ընթացքում հայերն իրենց նկատելի
 ավանդն են ունեցել Բրազիլիայի զարգացման գործընթացում:

Արժանի հեղինակություն վաստակելով տեղական իշխանություննե-
 րի շրջանում՝ հայ համայնքին հաջողվել է «Արմենիա» կոչել Սան Պաու-
 լոյի հրապարակներից մեկը, դրա տարածքում գտնվող մետրոյի կայա-
 րանը (1995 թ.), օդային մի խոշոր կամուրջ եւ «Արմենիա» հրապարակի
 տարածքում բարձրացնել Մեծ եղեռնի զոհերի հիշատակին նվիրված հու-
 շարձան⁶⁴: Ռիո դե Ժանեյրոյի փոխնախագահ Ստեփան Ներսիսյանի նա-
 խաձեռնությամբ այս քաղաքում ապրիլի 24-ը հռչակվել է որպես «Նդեո-
 նի հիշատակին հայ ժողովրդին հարգանքի տուրֆի եւ զորակցության օր»⁶⁵:
 Համայնքն իր մասնակցությունն է բերել համազգային ձեռնարկներին,
 աջակցել գաղթականներին ու որբերին, նպաստել 1946–1948 թթ. հայ-
 րենադարձությանը, 1988 թ. Սպիտակի երկրաշարժից հետո զգալի օգ-
 նություն տրամադրել աղետի գոտուն⁶⁶: Բրազիլահայ համայնքը կազմա-
 կերպել եւ իրականացրել է կարեւորագույն միջոցառումների մի ամբողջ
 շարք՝ նվիրված Հայոց ցեղասպանությանը⁶⁷:

Հայաստանի անկախացումից հետո՝ հետխորհրդային շրջանում,
 ստեղծված իրադրությունը նոր բովանդակություն հաղորդեց հայապահ-
 պան-հայրենասիրական գործունեությանը: Հայ-բրազիլական դիվանա-
 գիտական հարաբերությունների հաստատումը (1992)⁶⁸ նպաստեց Մայր
 հայրենիքի հետ կապերի ամրապնդմանն ու փոխգործակցությանը:

⁶⁴ Տե՛ս Կ. ԴԱԼԱՔՅԱՆ, նշ. աշխ., էջ 281:

⁶⁵ Տե՛ս «Հայկական սփյուռք» տարեգիրք, «Բրազիլիայի հայ համայնք», էջ 234:

⁶⁶ Տե՛ս «Հայ սփյուռք» հանրագիտարան, էջ 117:

⁶⁷ Տե՛ս «Հայկական սփյուռք» տարեգիրք, «Բրազիլիայի հայ համայնքում տեղի ունեցած
 հիշարժան միջոցառումները», Երեւան, 2013, էջ 202. Լ. ԵՂԻԱՋԱՐՅԱՆ, Մ. ՆԱԼԲԱՆԻՅԱՆ-
 ՄԱՐԳԱՐՅԱՆ, նշ. աշխ., էջ 74:

⁶⁸ Տե՛ս <https://brazil.mfa.am/hy/bilateral-br/>, 22.09.2020. Վ. ՄԱՏԹՈՍԵԱՆ, նշ. աշխ.,
 էջ 330:

Համայնքի առջև ծառացած խնդիրները: Բրազիլիայի հայ համայնքն այժմ կանգնած է այն նույն մարտահրավերների առջև, որոնք առհասարակ բնորոշ են Հայկական սփյուռքին: Անհրաժեշտ մակարդակի վրա չէ հայոց լեզվի ուսուցումը: Ավարտող աշակերտների փոքր մասն է միայն կարողանում իր միտքը բացատրել հայերենով: Նույնիսկ տարեցների շրջանում թույլ է հայերենի իմացությունը. նրանց մեծ մասը թրքախոս կամ արաբախոս է: Ամենասուրը թերեւս խառնամուսնությունների հարցն է: Ըստ Եկեղեցու հաշվառումների՝ խառն ամուսնությունները կազմում են մինչեւ 95 եւ ավելի տոկոս⁶⁹: Չնայած հայապահպանության ուղղությամբ տեղական Եկեղեցու եւ համայնքային կազմակերպությունների ճիգերին՝ հայկականությունը (լեզուն, ազգային սովորույթները, պատմության իմացությունը եւ այլն) հատկապես երիտասարդության շրջանում նկատելի նահանջ է ապրում:

Այսպիսով՝ կարող ենք արձանագրել, որ հայերը, տարբեր պատճառներով ու տարբեր ժամանակներում հաստատվելով Բրազիլիայում, աստիճանաբար կարողացել են ստեղծել բավականին կենսունակ համայնք: Բրազիլահայերն օրինապաշտ, նվիրյալ քաղաքացիներ են, սակայն միեւնույն ժամանակ ձգտում են հնարավորին չափ պահպանել իրենց ազգային ինքնությունը, հավատն ու սովորույթները: Բրազիլահայ համայնքը բավականին միասնական ու կազմակերպված է. նրա տարբեր շրջանակները մշտապես համագործակցում են: Համայնքն իր ենթակայության տակ գործող կառույցներով փորձում է ամեն կերպ նպաստել ազգային նկարագրի եւ ինքնության պահպանմանը:

РЕЗЮМЕ


Статья посвящена армянской общине Бразилии. В ней подробно рассказывается о переселении армян в Бразилию и предпринимается попытка выяснить количество армян, проживающих в этой стране. Описывается процесс формирования армянской общины и общинных организаций в Бразилии. В статье также говорится о значительной роли Армянской Церкви в жизни диаспоры. Обсуждаются все те проблемы, которые существуют в армянской

⁶⁹ Տե՛ս <https://brazil.mfa.am/hy/community-overview/>, 23.09.2020:


общине. В конце статьи рассказывается об основных видах деятельности армян Бразилии и отмечается все достижения и успехи общины за время своего существования.

SUMMARY

The article is dedicated to the Armenian community of Brazil. It begins with a detailed account of the resettlement of the Armenians in Brazil. An attempt is made to find out the number of Armenians living in this country. The process of formation of the Armenian community and community organizations in Brazil are described. The article also talks about the significant role of the Armenian Church in the life of the Diaspora. All the problems existing in the Armenian community of Brazil are discussed. At the end of the article, it mentions the main activities of the Armenians in Brazil and notes all the achievements and success that the Armenian Diaspora has managed to achieve during its existence.



ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ



ՎԱԶԱԳԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Բանասիրական գիտ. դոկտոր

ԼԵԻՈՆ ՇԱՆԹԻ ԵՒ ՄԱՏԹԵՈՍ ՈՒՌԱՅԵՑՈՒ ԵՐԿԵՐԻ ԱՌՆՉՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Լեւոն Շանթի օրինակը ցույց է տալիս, որ մտավորականները, որոնք հանգամանքների բերումով ուսանել են Գեւորգյան ճեմարանում, ողջ կյանքի ընթացքում իրենց գրականությունը բացահայտել են այն, ինչ ձեռք են բերել հայրենի հողի վրա: Շանթը հետագայում սովորեց Գերմանիայում, ինչպես բոլոր ժամանակների մեծ գրողներ են ուսանել աշխարհի տարբեր երկրներում:

Ինչպես լատինամերիկյան գրականության գրեթե բոլոր ճանաչված դեմքերը տարբեր ժամանակներում սովորեցին Փարիզում, իսկ Մաթեոսյանը՝ Մոսկվայում, բայց նրանց համար իրենց գրականության ոգին, կյանքի փորձը չդարձան Արեւմտյան Եւրոպայինը, այլ շարունակեցին մնալ լատինամերիկյան, իսկ Մաթեոսյանի գրականության ազդակները եկան ոչ թե Մոսկվայից, այլ սեփական երկրից, այնպես էլ Շանթը, կրթվելով Եւրոպայում, յուրացնելով ժամանակի թատերգական արվեստի ձեռքբերումները, կայացավ որպես գրող ոչ թե գերմանական, այլ հայոց մշակույթի, պատմության, դարավոր ավանդույթների հիմքի վրա:

Անկախ երեւույթների մատուցման ձեւերից՝ մասնավորապես եւրոպական խորհրդապաշտական արվեստի, Շանթը մնաց որպես խորապես ազգային գրող: Նրա թատերգությունը ծնվեց եւ կայացավ բացառապես մեր պատմության, Արեւելքի մտածողության ծիրում, եւ դրանով է այս արվեստագետի ստեղծագործությունը գրավիչ:

Շանթն իր լավագույն գործերը գրեց այն ժամանակ, երբ հրապարակում Հովհաննես Թումանյանն էր: Ակնհայտորեն մեծ էր Թումանյանի հեղինակությունը: Բայց վերջինիս արձակը ձեւավորվեց ԺԹ. դարի

իրապաշտական գրականության համաբնագրում: Այդպիսին էր եւ Լ. Տոլստոյի կերտած գեղարվեստական աշխարհը: Այս երկու մեծությունների համար մարդու երջանկությունը հնարավոր էր անհատի եւ աշխարհի միջեւ ձեռք բերվող ներդաշնակության պայմաններում: Բավական է հիշել Թումանյանական քառյակներում թեւածող հանուրի կյանքով ապրելու մղումները:

Ս. Գ. Բոչարովը «Պատերազմ եւ խաղաղություն» երկի կարեւոր միտումներից մեկը համարում է անհատականի սահմանափակության հաղթահարումը եւ սեփական եսն ամբողջ աշխարհի անսահմանությունամբ լցնելու մղումը¹: Սա կարեւոր, աշխարհայացքային նշանակություն ունի թե՛ Թումանյանի, թե՛ Տոլստոյի համար: «Մարդը չի անհետանում, չի ոչնչանում. մարդը ձուլվում է այդ մեծ էությունը, վերադառնում է դեպի նա, որից եւ դուրս է եկել»²: Սա Արեւելքին բնորոշ մտածողություն է:

Արեւմտյան մտածողությունը մահն ընդունում է որպես ավարտ, վերջ, Արեւելքը՝ դրա մեջ տեսնում նոր հառնումի սկիզբ: Հնդկական պատկերացումներում մահը եւս «Դառ»՝ ճանապարհ է: Բայց այս հարցը Շանթն իր գրականությամբ միանգամայն այլ կերպ է լուծում: Իր՝ արդեն դարասկզբին գրած ստեղծագործություններով թատերագիրը հանդես է գալիս որպես անհատապաշտ: Թումանյանին գրված նամակներից մեկում նա բացահայտ խոսում է Արեւելքում եւ Արեւմուտքում մարդ-անհատի գրաված տեղի, դերի մասին եւ հստակորեն նկատում է տարբերությունները: «...Արեւելքի մէջ մասսան անհատներու կուտակում մըն է, իրարմէ անջատ, արեւմուտքի մասսան անհատներու կապակցումէն առաջացած նոր օրգանական մարմին մըն է արդէն»³:

Արեւելքցու զգացմունքային խառնվածքը Եւրոպայում ուսանելու տարիներին աստիճանաբար հակվեց դեպի բնական գիտությունները: Մարդու հետ կապված խնդիրները նա փորձում է նախ բացահայտված տեսնել գիտականորեն, ապա նոր միայն գեղարվեստի քննության առարկա դարձնել դրանք: Բայց ինչո՞վ է տարբերվում

¹ Сѓ С. Бочаров, В. Кожин, Д. Николаев, «Три шедевра русской классики», Москва, 1981:

² Ա. Եղիսեան, *Մեծ լոռեցին*, Երեւան, 2009, էջ 61:

³ Հովհ. Թումանյան, *Ուսումնասիրություններ եւ հրապարակումներ*, հտ. 3, Երեւան, 1983, էջ 343:

գրողի ստեղծագործությունը մյուսների երկերից: Յուրօրինակը հե-
րոսների հոգեբանությունն է, լեզուն, թե՛ աշխարհընկալման սկզբուն-
քը, որ հիմք է դարձել նրա ե՛ւ բանաստեղծության, ե՛ւ արձակի,
ե՛ւ թատերգության համար:

Միանգամից ասենք, որ «Շանթը դիմում է անհատին՝ մարդկային
անհատականության կործանման դեմ մղվող պայքարում»⁴: Նրա պարա-
գայում այս խնդիրը հնչում է առանձնակի ուժգնությամբ: Այն ուղղակի
հրամայական պահանջ է: Ազգը կարող է գոյատևել իբրեւ անհատակա-
նությունների ամբողջություն, այլապես այն դատապարտված է դանդաղ
ինքնառնչացման:

Հետագայում Մոսպեղիեում գրած «Ազգությունը որպես հիմք մարդ-
կային ընկերության» հրապարակախոսական աշխատության մեջ շա-
րունակում է զարգացնել առաջադիր գաղափարը, որ ինչպես մարդ
էակի, այնպես էլ ժողովրդի ինքնության հիմնական ցուցանիշն անհա-
տականությունն է: Սա ձեւավորում է «ազգություն» գաղափարը. «...
Ժողովուրդներու անհատականութիւնը կանուանենք ազգութիւն»⁵: Ժո-
ղովուրդներն այն չափով են միայն արժեք ներկայացնում մարդկու-
թյան համար, ինչ չափով դրսևորվում են ժողովրդի «ազգային կամքը,
տաղանդն ու ստեղծագործական ուժը»⁶: Շանթը դարասկիզբ էր մտնում
իբրեւ թատերագիր: Ժանրը հնարավորություն էր տալիս ցուցադրել
անհատականությունների պայքարը:

Գրականությունը ներքին բնազդով նախազգում էր բարդություն-
ները, որոնք ճակատագրական կարող էին լինել ժողովրդի համար: Դա-
րասկզբին արդեն հայ-թաթարական բախումները (1901—1902 թթ.) լուրջ
մտահոգության տեղիք էին տալիս: Շանթի թատերգությունն ուներ ներ-
քին ազդակներ. այն ծնվում էր ազգային ինքնության մաքառման ըն-
թացքում: Հետագայում որքան էլ Հ. Օշականը նրան մեղադրեր ազգային
խնդիրներից իրեն հեռու պահելու մեջ, միեւնույնն է, կշտամբանքներն
անտեղի էին:

Շանթը երբեք չստեղծագործեց ազգային խնդիրներից դուրս: Պար-
զապես նրա թատերգությունը հայոց բեմարվեստին միանգամայն նոր

⁴ Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ, Շանթի թատերգութեան իւրայատկութիւններն ու փիլիսոփայական են-
թիմաստը, «Հայկազեան հայագիտական հանդէս», Պէյրուիթ, 2003, հտ. ԻԳ., էջ 247:

⁵ ԼԵՒՈՆ ՇԱՆԹ, Երկեր, հտ. 5, Պէյրուիթ, 1948, էջ 25:

⁶ Անդ, էջ 28:

միջոցներ էր առաջադրում՝ ի հակադրություն Շիրա վանգադեի իրապաշտական թատրոնի, որտեղ հարցերն ընդգծված հասարակական բնույթ ունեին:

Շանթի թատրոնն իր հարցադրումներով հաղթահարում էր կոպիտ իրապաշտության սահմանները: Նա մեր թատերգության մեջ արմատավորում էր երեւույթների ընկալման փիլիսոփայական կերպը, ազգային խնդիրները մնում էին ողջ ստեղծագործության համաբնագրում, դրանք ընդհանուր երեւույթների մասնավոր դրսեւորումներ էին:

Թատերգությունից թատերգություն գրողը բացահայտելու էր մարդ-երեւույթի էությունը: Անհրաժեշտաբար աշխարհ գալու եւ անհրաժեշտաբար հեռանալու հարաշարժ հոլովույթում նրա հերոսները ձգտելու էին ամենօրյա մաքառմամբ բացահայտել կեցության իմաստը՝ մշտապես կատարելագործելով իրենք իրենց, մշտապես դիմացինին սովորեցնելով հպարտ մտածել:

Ակնհայտ է, որ գրողի թատերգություններն առանձնանում էին հայ դասական գրականության ավանդներից: Դարասկզբին նոր դրամայի զարգացմանը, որ ներառում էր բնապաշտությունից մինչեւ խորհրդապաշտություն, իրենց նպաստը բերեցին Հենրիկ Իբսենը, Հաֆտոր Բյորնսոնը, Յուհան Ավգուստ Ստրինդբերգը, Էմիլ Զոլան, Բեռնարդ Շոուն, Գերհարդ Հաուպտմանը, Կնուտ Համսունը, Մորիս Մետերլինկը:

Խորհրդապաշտները փշրեցին խոսքի իմաստային որոշակիությունը՝ դրան բազմիմաստություն հաղորդելով: Միայն առաջին հայացքից կարող ենք ասել, թե այն գործերը, որոնք հուշակ բերեցին Շանթին («Հին աստվածներ», «Կայսր»), վերաբերում են պատմությանը՝ խորհրդապաշտական գեղագիտության միջոցների գործադրմամբ: Մինչդեռ դա ընդամենն ասելիքը ներկայացնող միջոց էր: Դրանք իրենց խորքում պատմական չեն, այլ խորհրդապաշտական՝ փիլիսոփայական խոր եզրահանգումներով:

Եթե եւրոպական վերոհիշյալ հեղինակներն իրենց ստեղծագործություններով փորձում էին մարդ-անհատի էությունը բացահայտել գեղարվեստական միանգամայն նոր միջոցներով, գրական միտքը հոգնել էր օգտապաշտական, կոպիտ ձեւակերպումներից, եւ դա քիչ էր մարդկային հոգու անպարփակությունը ներկայացնելու համար, ապա Շանթի երկերում հարցադրումները հանգում էին գրեթե տիեզերական չափերի հասնող ընդհանրացումների: Ազգային մտածողության,

համաշխարհային պատմության մեջ հայերի ունեցած անուրանալի ավանդի, անկրկնելի օրինակների հիմքի վրա նա կատարում էր ընդհանրացումներ, որոնք կապակցում էին տարբեր ժամանակները: Գրողի գեղարվեստափիլիսոփայական դիտարկումներն ի վերջո վերածվեցին համաշխարհային քաղաքակրթության զարգացման ընթացքի իմաստավորման: Մարդը, որ երկար ճանապարհ է անցել, ընդհանուր շղթայի մեկ, բայց ոչ վերջին օղակն է: Ապագայում ամեն կարգի արատներից ձերբազատված, իբրեւ աստվածամարդ վերածնված բանական արարծը կշարունակի ճանապարհը:

Իր թատերգությունների համար նյութ վերցնելով անցյալից՝ գրողն արդիական խնդիրները զուգակցեց պատմական ժամանակների իմաստավորմանը: Անտիկ աշխարհը լավագույնս արտահայտված է հունական, հռոմեական արվեստի, պատմության, ճարտարապետության, բանահյուսության մեջ: Հույները փառաբանում էին գեղեցկությունը, հռոմեացու համար նախընտրելին ուժն էր, որ ծառայեցվում էր երկրի հզորացմանը: Բայց ինչպես բնության մեջ ամեն ինչ ենթակա է վերափոխման, նույնը կատարվում է մարդկային հոգու անընդգրկելի տարածության մեջ. անցյալ դարձան մարդկային մարմինն ու ուժը փառաբանող չաստվածները. երբեմնի մտատիպարներն իրենց տեղը զիջեցին նորերին:

Մարդն սկսեց որոնել կատարելատիպեր, որոնք նրան հասանելի էին երկար ճանապարհ անցնելուց հետո միայն: Քրիստոնեությունը մարդկությանն առաջադրեց հազարամյակների լուծելիք խնդիր. «Եղի՛ր կատարյալ այնպես, ինչպես կատարյալ է քո Հայրը»: Մարդն սկսեց փնտրել ոգու գեղեցկություն եւ կատարելություն (Վանահայր, Օհան Գուրգեն, Նաղաշ):

«Շղթայվածը» եւս, ականհայտ ազդակներ ստանալով դարասկզբի իրադարձություններից, լայն առումով ներկայացնում է մարդկության զարգացման ընթացքը: Ինչպես մարդկային, այնպես էլ հասարակական կյանքը մշտապես մնում են ոչ կատարյալ: Ամեն ինչ ենթակա է շարունակական փոփոխության: Երեւոյթները դեպի կատարյալը տանող ընթացքի մեջ են, իսկ առաջադիմությունն ի վերջո դառնում է ընտրության անխուսափելի հետեւանքը:

Հաղթում են նրանք, ովքեր ուժեղ են, ովքեր կարողանում են անելանելի դրության մեջ ուղիներ գտնել, վերափոխվել, հարմարվել

նոր պայմաններին, ապա եւ ներազդել միջավայրի, հասարակական կյանքի վրա:

Իհարկե, Շանթը երբեք էլ չէր կարող ասել, որ գոյություն կունենա ի վերջո պայմանավորում է լավագույնի հաղթանակը, դա կարող էր լինել միայն այն պարագայում, երբ մենք ամենաուժեղը համարեինք ամենալավը (բարոյական իմաստով):

Պատմությունը տալիս է բազմաթիվ օրինակներ, երբ պայքարն ավարտվում է «լավագույնի» պարտությունից: Օշինը (Օշին Պայլ) չկարողացավ պահել երկիրը, քանի որ նրա առաջադրած ծրագիրը հնարավոր էր իրականացնել միայն ապագայում:

Այս ամենից հետո Շանթն անխուսափելիորեն պետք է առնչվեր եւ ոգու խնդրին: Ահա այստեղ էր, որ նրա գրականությունը հենվում էր իր ժողովրդի պատմության եւ ընդհանրապես Արեւելքի մտածողության, նրա կենսափիլիսոփայության վրա: Այս խնդիրը նրա համար աշխարհայացքային նշանակություն ուներ եւ առանց չափազանցության ուղղորդում էր նրա գրականության զարգացման ընթացքը:

Ընդհանրացումներ անելու համար գրողին առավել նպատակահարմար էր դիմել ժողովրդի պատմական փորձին: Եւ դա եղավ Ուռհայեցին՝ իր «Ժամանակագրությունը»:

Ակնհայտ է, որ Շանթը գեղագետ փիլիսոփա է: Պատմության մեջ արձանագրված փաստը նրա համար ոչ այնքան գեղագիտական առումով անկրկնելի էր, որքան դառնում էր ընդհանրացումների գնալու հզոր կոման:

Ավելին՝ նրան գրավում է ոչ այնքան փաստը, որքան դրա՝ պատմության մեջ ժողովրդի ընկալումը: Այդ ընկալման համաձայն՝ «Չմշկիկ կայսրը սեփական ձեռքով իր գլխից հանեց թագը եւ այն դնելով Վասիլի գլխին, նրան բազմեցրեց իր թագավորական գահին... ինքը գնաց անապատ, առավ կրոնական կարգ եւ հաստատվեց վանքում: Երեկվա կայսրը, այսօր կամավոր կերպով աղքատացած, ապրում էր չքավորների հետ՝ վայելելու Սուրբ Ավետարանի երանությունը...»⁷:

Պատմական այս հերոսը գրողի համար դարձավ կարեւորագույն եզրահանգումներ անելու միջոց. բավական է ասել, որ «Հին աստվածներ»-ում պատմական անհատը վերածվեց ճգնավորի, իսկ

⁷ ՄԱՏԹԵՈՍ ՈՒՌՀԱՅԵՑԻ, Ժամանակագրություն, Երևան, 1973, էջ 37:

«Կայսր»-ում այն Օհան Գուրգենն էր՝ հեղինակի փիլիսոփայական եզրահանգումների ավարտակետը:

Շանթն ընդունում է ոգու անմահության գաղափարը մարդկության գոյակցության պահպանման իմաստով: Հետեւապես այն ուժերը, որոնք իրենց նպաստն են բերում համընդհանուր առաջադիմությանը, ժամանակի մեջ չեն ընդհատվում, ուրեմն եւ մահ չունեն. մարդն անսպառելի խնդիրների առաջադրմամբ ու դրանց հաղթահարմամբ գնում է կատարելագործման ուղիով:

Անգամ այն հերոսները (Նազաշ, Օշին), որոնք չեն հաջողում ներկայում, որպես մարդկային ոգու, մաքառումների արտահայտություն, ապրում են սերունդների ներաշխարհում՝ նրանց տոգորելով ազատության, մարդասիրության, պետականության կայացման գաղափարներով:

Գրողի մարդասիրությունը երբեք անելանելի վիճակներ չի առաջադրում, կատարելատիպի լույսը մշտապես առաջնորդում է մարդկությանը: Այս ճանապարհին Շանթը կարեւորում է գրականության դերը, որ պետք է անհատին բարձր զգացմունքներ ու գաղափարներ ներշնչի, նպաստի նրա մաքրագործմանն ու վերածննդին:


Շանթի երկերով հայ գրականությունն իր նպաստն է բերում համաշխարհային մշակույթի զարգացմանն ու մարդկության առաջընթացին:

РЕЗЮМЕ

В статье рассматривается философская направленность, присущая драматургии одного из ярчайших представителей армянской литературы — Левона Шанта. Драматургия Шанта, посредством использования инструментария эстетики символизма, становится высокохудожественной палитрой, представляющей процесс развития мировой цивилизации. Драматург достигает высокого мастерства через привнесение своего творческого эго в достижения как армянских, так и европейских драматургов: действующие лица лучших произведений Левона Шанта («Старые Боги», «Царь») — Отшельник и Оган Гурген обобщают целостность самих произведений. Персонажи эти испытали влияние М. Урхаеци «Хронология». Об этом и представленная нами статья.

SUMMARY

The article examines the philosophical content inherent in the dramatic works of one of the brightest representatives of the Armenian literature — Levon Shant. Through the use of the toolkit of the aesthetics of symbolism, Shant's drama becomes a highly artistic palette representing the development of the world civilization. The playwright achieved all this by creatively mastering the achievements of both the Armenian and European drama. The characters (Hermit, Ohan Gurgén) of the best works of Levon Shant “Ancient Gods” and “Emperor” summarize the integrity of the works themselves. These characters were influenced by “Chronology” of Matheos of Edessa, which is discussed in this article.



ԷԴԳԱՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Պատմական գիտ. թեկնածու, դոցենտ

ՊԵՏՐՈՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԱՐԱՃՅԱՆԸ ԿԻԼԻԿԻՈ ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՓՈԽԱՆՈՐԴ ԵՒ ՅԱՅՐԱՊԵՏ (1936–1940 ԹԹ.)

Սկիզբը՝ նախորդիվ

ՊԵՏՐՈՍ Ա. ՍԱՐԱՃՅԱՆ.

ԿԻԼԻԿԻՈ ԱԹՈՌԻ ՆՈՐ ԳԱՀԱԿԱԼԸ

1939 թ. նոյեմբերի 8-ին մահանում է Կիլիկիո կաթողիկոս Սահակ Բ. Խապայանը (1902–1939 թթ.), որը գահակալեց շուրջ 37 տարի¹: Սահակ Բ. կաթողիկոսի մահվանից հետո՝ 1939 թ. նոյեմբերի 10-ին, կաթողիկոսարանում տեղի ունեցած եպիսկոպոսական եւ միաբանական ընդհանուր ժողովը կաթողիկոսական ընդհանուր փոխանորդ Պետրոս արք. Սարաճյանին միաձայն հաստատեց որպես կաթողիկոսական տեղապահ²: Սահակ Բ. Խապայանի հուղարկավորությունից հետո Անթիլիասն սկսում է նախապատրաստվել կաթողիկոսական ընտրություններին, որը լինելու էր առաջինը Կիլիկիայից տարագրվելուց հետո: Սակայն կաթողիկոսական ընտրությունները կայացան որոշ ձգձգումներից հետո միայն: Պատճառը Ս. էջմիածնից եկող նամակներն էին, որով Մայր Աթոռը ցանկություն էր հայտնում մասնակցել նախատեսվող ընտրություններին: Սակայն, ցավոք սրտի, Մայր Աթոռի ներկայացուցիչն այդպես էլ չժամանեց Անթիլիաս:

Փորձենք ներկայացնել իրադարձությունների ընթացքը եւ հարցը դիտարկել ոչ միայն Ս. էջմիածին — Անթիլիաս հարաբերությունների, այլ նաեւ աշխարհաքաղաքական զարգացումների շարակարգում:

Այսպես՝ Կիլիկիո կաթողիկոսությունից եպիսկոպոսական ժողովն ինը տարբեր նիստեր է հրավիրում կաթողիկոսական ընտրության հարցը քննարկելու համար: 1939 թ. դեկտեմբերի 18–20-ը կաթողիկոսական

¹ Տե՛ս «Հասկ», նոյեմբեր–դեկտեմբեր, 1939, թ. 11–12, էջ 170–176:

² Տե՛ս «Հասկ», սեպտեմբեր–հոկտեմբեր, 1939, թ. 9–10, էջ 141, նոյեմբեր–դեկտեմբեր, 1939, թ. 11–12, էջ 170:

տեղապահ Պետրոս արք. Սարաճյանի հրավերով Անթիլիասում գումարվում է Կիլիկիո թեմերի եպիսկոպոսաց ժողով³։ Որոշվում է կազմել թեմական պատգամավորական ժողով, որը լինելու էր կաթողիկոսական ընտրության իրավասու մարմինը։ Հաստատվում է նաեւ պատգամավորական ժողովի եկեղեցական եւ աշխարհիկ անդամների թիվը։ Յուրաքանչյուր 5000 հոգուց պետք է ընտրվեր մեկ աշխարհիկ պատգամավոր։ Այդ շրջանում Սիրիայում եւ Լիբանանում մոտ 120 հազար հայ էր ապրում։ Ուստի թեմերի գավառական ժողովներում ընտրվելու էր 25 աշխարհական պատգամավոր, որոնք պետք է ունենային սիրիական կամ Լիբանանյան հպատակություն, լինեին Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու հետեւորդ, ինչպես նաեւ՝ «...փորձառու եւ ազգային իրաւանց եւ օրէններում հմուտ, ինչպէս եւ ընդհանուրին համակրանքն ու վստահութիւնը վայելող եւ 30 տարեկանը լրացնող ազգայիններէ...»⁴։ Հստ թեմերին եպիսկոպոսական ժողովի ուղարկած «Ընտրական հրահանգի» 5-րդ կետի՝ պատգամավորների ընտրությունը պետք է կատարվեր «...ազգային Սահմանադրութեան ընտրական հրահանգներուն համաձայն»։ Եկեղեցական 15 պատգամավորներն ընտրվեցին հետեւյալ կերպ՝ 5 թեմակալ արքեպիսկոպոս, Անթիլիասի 5 միաբան եւ 5 քահանա։ Քահանաները, աշխարհական պատգամավորների նման, պետք է ընտրվեին Կիլիկիո կաթողիկոսության 5 թեմերում։ Ընտրովի պատգամավորական տեղերը 5 թեմերի վրա բաշխվեցին այսպես. Հալեպի թեմ՝ 2 եկեղեցական եւ 11 աշխարհական, Լիբանանի թեմ՝ 3 եկեղեցական եւ 9 աշխարհական, Դամասկոսի թեմ՝ 3 աշխարհական, Կիպրոսի թեմ՝ 2 աշխարհական։ Անտիոքի թեմի 1 եկեղեցական եւ 4 աշխարհական պատգամավորներն ընտրվելու էին Լիբանանի եւ Հալեպի գավառական ժողովներում⁵։ Դրանք այն շրջաններն էին, որտեղ 1939 թ. Ալեքսանդրետի սանջակի հայաթափումից հետո⁶ հաստատվել էին գաղթական հայերը։ Նշենք նաեւ, որ եպիսկոպոսական ժողովը որոշվում է Լաթաքիա-Քեսապի շրջանների հովվությունն առժամանակ միացնել Հալեպի թեմին⁷։ Փաստորեն՝ ընդհանուր ժողովը

³ Տէն «Հասկ», նոյեմբեր-դեկտեմբեր, 1939, թ. 11-12, էջ 175:

⁴ Անդ, էջ 177:

⁵ Տէն անդ:

⁶ Այս մասին տես Ա. ԲԱՅՐԱՄՅԱՆ, Ալեքսանդրետի սանջակի հարցը եւ միջազգային դիվանագիտությունը (1936-1939 թթ.), Երեւան, 1998:

⁷ Տէն «Հասկ», նոյեմբեր-դեկտեմբեր, 1939, թ. 11-12, էջ 175:

բաղկացած էր 45 պատգամավորից՝ 25 աշխարհական ու 15 հոգեւորական⁸։ Կիլիկիո նոր կաթողիկոսի ընտրութեան օր է նշանակվում 1940 թ. մարտի 7-ը⁹։ Որոշման մասին տեղեկացվում են նաեւ Մայր Աթոռը եւ Երուսաղեմի ու Պոլսո հայոց պատրիարքութիւնները։

1940 թ. փետրվարի 22-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնից կաթողիկոսական տեղապահ Գեւորգ արք. Չորեքչյանը հեռագրով դիմում է Երուսաղեմի հայոց պատրիարք Մեսրոպ արք. Նշանյանին՝ խնդրելով, իր հեղինակութիւնն օգտագործելով, հետաձգել Կիլիկիո կաթողիկոսի ընտրութիւնը, քանի որ ինքը եւս ցանկանում է ներկա լինել այդ ընտրութեանը։ Հեռագրում գրված էր. «Կը փափագիմք Կիլիկիոյ կաթողիկոսի ընտրութեան մասնակցիլ։ Կը խնդրեմք, որ Ձեր ազդեցութիւնն ի գործ դնե՛ք՝ ընտրութիւնը յետաձգելու մինչեւ յառաջիկայ յունիս 30»¹⁰։ Հաշվի առնելով խնդրի կարեւորութիւնը՝ Մեսրոպ արք. Նշանյանն անձամբ է հեռագիրը բերում Անթիլիաս՝ նպատակ ունենալով խորհրդակցել Պետրոս արք. Սարաճյանի հետ՝ Մայր Աթոռից ուղարկված հեռագրին պատասխանելու եւ համապատասխան որոշում կայացնելու համար¹¹։ Փետրվարի 25-ին Պետրոս արք. Սարաճյանի նախաձեռնութեամբ եւ Երուսաղեմի հայոց պատրիարքի մասնակցութեամբ կրկին հրավիրվում է եպիսկոպոսաց ժողով՝ կաթողիկոսական ընտրութեան հետաձգման հարցը քննելու համար։ Մեսրոպ պատրիարքի վկայութեամբ՝ Ս. Էջմիածնից ստացված հեռագրին եպիսկոպոսական ժողովի ընթացքում «...զանազան մեկնութիւններ տրուեցան»¹²։ Վերջինս Մայր Աթոռի՝ Կիլիկիո կաթողիկոսական ընտրութիւններին մասնակցելու ցանկութիւնը պայմանավորում է զուտ փոխադարձութեան սկզբունքով՝ հիմք ընդունելով այն, որ Խորեն Ա. Մուրադբեկյանը (1932—1938 թթ.) ժամանակին Կիլիկիո կաթողիկոսութեան ներկայացուցիչներին հրավիրել էր մասնակցելու Ամենայն Հայոց Կաթողիկոսի ընտրութիւններին։ Նկատի առնելով «...խնդրոյն կարեւորութիւնը եւ օրուան փափուկ կացութիւնը», այսինքն՝ պատերազմական դրութիւնը, որոշվում է խնդիրը քննարկել նաեւ Ֆրանսիական Բարձր հանձնախմբի հետ եւ վերջինիս կարծիքը իմանալուց հետո կայացնել վերջնական որոշում¹³։

⁸ Տէս անդ, էջ 176—177։

⁹ Տէս անդ, էջ 175։

¹⁰ «Սիրոն», մարտ, թ. 3, 1940, էջ 76. տէս «Հասկ», մարտ, 1940, թ. 3, էջ 45։

¹¹ Տէս «Սիրոն», մարտ, թ. 3, 1940, էջ 76. նաեւ «Հասկ», մարտ, 1940, թ. 3, էջ 45։

¹² Տէս «Սիրոն», մարտ, թ. 3, 1940, էջ 76։

¹³ Տէս «Հասկ», մարտ, 1940, թ. 3, էջ 45. նաեւ՝ Բ. ԵՂԻԱՅԵԱՆ, նշ. աշխ., էջ 492։

Փետրվարի 26-ին Պետրոս արք. Սարաճյանը (Մեսրոպ պատրիարքի, Եղիշե արքեպիսկոպոսի եւ Զարեհ վարդապետի ուղեկցությամբ), նախապես պայմանավորվածության համաձայն, այցելում է ֆրանսիական Բարձր հանձնախմբի ղեկավար (կոմիսար) Գաբրիել Պուոյին եւ ներկայացնում խնդիրը: Վերջինս, լսելով սրբազաններին, ինչպես նաեւ նրանց հայտնած տեղեկությունները Հայոց Եկեղեցու նվիրապետության, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի եւ Անթիլիասի փոխհարաբերությունների մասին, համաձայնում է Կիլիկիո կաթողիկոսի ընտրությունը հետաձգել¹⁴:

Ֆրանսիական հանձնախմբի թույլտվությունն ստանալուց հետո Մեսրոպ արք. Նշանյանը, Կիլիկիո «եպիսկոպոսական ժողովին հետ համախորհուրդ», Մայր Աթոռ Ս. Էջմիածնի կաթողիկոսական տեղապահին է ուղարկում պատասխան հեռագիրը. «Կիլիկիոյ եպիսկոպոսական ժողովը համաձայն է յետաձգել կաթողիկոսական ընտրութիւնը: Կը սպասեմք Ձեր անմիջական տեղեկութեանց»¹⁵: Եպիսկոպոսական ժողովը որոշում է կաթողիկոսական ընտրության հետաձգման պատճառի մասին տեղեկացնել ոչ միայն թեմական առաջնորդարաններին եւ ազգային վարչություններին, այլ մամուլի միջոցով նաեւ ողջ հայությունը:

1940 թ. մարտի 2-ին Պետրոս արք. Սարաճյանը Հալեպի առաջնորդարանի միջոցով Մայր Աթոռ Ս. Էջմիածնից ստանում է հերթական հեռագիրը՝ Գեւորգ արք. Զորեքչյանի ստորագրությամբ, որտեղ վերջինս կրկնում է նախորդ նամակում արված խնդրանքը կաթողիկոսական ընտրության հետաձգման վերաբերյալ: Այդ հեռագրով տեղեկացվում էր նաեւ, որ կաթողիկոսական ընտրությանը մասնակցելու մասին մեկ այլ ընդարձակ նամակ էլ ուղարկվել է փոստի միջոցով: Սակայն այդ նամակը ուշանում էր: Ապրիլի 9-ին Երուսաղեմի պատրիարքը հեռագրով Մայր Աթոռ Ս. Էջմիածնից խնդրում է արագացնել ընտրություններին մասնակցելու վերաբերյալ նամակի ուղարկելը, ինչը որոշակիորեն կհստակեցնեք հետագա անելիքները: Սակայն այս հեռագիրը մնում է անպատասխան¹⁶:

Շուտով ֆրանսիական Բարձր հանձնախումբն Անթիլիաս ուղարկված իր ներկայացուցչի միջոցով կաթողիկոսությանը հորդորում է հնարավորին չափ արագացնել ընտրությունները¹⁷: Ֆրանսիական իշխա-

¹⁴ Տէս «Հասկ», մարտ, 1940, թ. 3, էջ 45:

¹⁵ «Հասկ», մարտ, 1940, թ. 3, էջ 46. տէս «Սիոն», մարտ, թ. 3, 1940, էջ 77:

¹⁶ Տէս «Հասկ», մայիս, 1940, թ. 5, էջ 79:

¹⁷ Տէս Բ. Եղիւճեան, նշ. աշխ., էջ 493:

նությունները, կարծես զգուշանալով ինչ-որ բանից, փոխել էին նախկին դիրքորոշումը եւ ցանկանում էին արագ ավարտին հասցնել Կիլիկիո կաթողիկոսական ընտրությունը: Պետրոս արք. Սարաճյանը հերթական անգամ հարցը քննարկում է ֆրանսիական հանձնախմբի ղեկավարի հետ, որը կրկին հորդորում է ընտրություններն այլեւս չհետաձգել: Որոշվում է նշանակել կաթողիկոսական ընտրության նոր օր՝ մայիսի 30-ը՝ «...նկատելով, որ կաթողիկոսական ընտրութիւնն աւելի ուշացնել նպատակաշարմար չէ»¹⁸: Ընտրությունների նոր օրվա մասին մայիսի 7-ին՝ «գիտութեամբ եւ հաւանութեամբ Բարձր գոմիսէրութեան», տեղեկացնում են նաեւ Մայր Աթոռին¹⁹: Այս որոշման վրա, հավանաբար, ազդել էին նաեւ Անթիլիասից Մայր Աթոռին ուղարկված հեռագրերին պատասխան չստանալը եւ Ս. Էջմիածնից խոստացված նամակի ժամանակին տեղ չհասնելը, ինչպես նաեւ ֆրանսիական իշխանությունների՝ Կիլիկիո կաթողիկոսական ընտրությունները հնարավորին չափ շուտ անցկացնելու վերաբերյալ պահանջը: Հասկանալի է, որ խորհրդային պատկան մարմինների համապատասխան միջամտություններով էր պայմանավորված ձգձգվող նամակագրությունը: Ուշագրավ է, որ միայն Կիլիկիո կաթողիկոսի ընտրության օրը՝ մայիսի 30-ին է Անթիլիաս հասնում Գեւորգ արք. Չորեքչյանի հերթական հեռագիրը, որով վերջինս խնդրում էր տեղեկացնել՝ արդյո՞ք «...Ս. Էջմիածնի փափագը՝ ընտրութիւնը 30 յունիսին ընելու, զեղչուեցաւ»²⁰: Նույն հեռագրով տեղեկացվում էր նաեւ, որ խորհրդային իշխանություններն արտոնել են անցկացնելու Ամենայն Հայոց Կաթողիկոսի ընտրությունը²¹:

Յավոք, տարբեր պատճառներով, Ամենայն Հայոց կաթողիկոսության ներկայացուցիչը չկարողացավ մասնակցել 1940 թ. Կիլիկիո կաթողիկոսի ընտրություններին:

Կիլիկիո կաթողիկոսի հերթական, բայց Սսից տարագրվելուց հետո առաջին ընտրությունը տեղի ունեցավ 1940 թ. մայիսի 30-ին

¹⁸ «Հասկ», մայիս, 1940, թ. 5, էջ 79:

¹⁹ Տես «Հասկ», յունիս—օգոստոս, 1940, թ. 6—8, էջ 92:

²⁰ «Հասկ», յունիս—յուլիս—օգոստոս, 1940, թ. 6, 7, 8, էջ 93:

²¹ Ամենայն Հայոց Կաթողիկոս հնարավոր եղավ ընտրել միայն տարիներ անց՝ 1945 թ. հունիսի 16—22-ը Ս. Էջմիածնում տեղի ունեցած ազգային-եկեղեցական ժողովի ժամանակ. Գեւորգ արք. Չորեքչյանն ընտրվեց Հայոց հայրապետ. տես «Էջմիածին», հունիս—հուլիս, 1945, էջ [Ե.]:

Անթիլիասում²²։ Նախապես ընտրված 45 պատգամավորից, որոնցից 30-ը աշխարհիկ էին, 15-ը՝ հոգեւորական, ժողովին մասնակցում էին 44-ը. բացակայում էր միայն Լիբանանի շրջանից Ալեքսանդրետի սանջակի հայության ընտրած պատգամավորը՝ Մովսես Տեր-Գալուստյանը, որը, որպես սպա, գտնվում էր զինվորական ծառայության մեջ²³։ Նիստի սկզբում հոգեւորականներից ընտրվում է պատգամավորական ժողովի ժամանակավոր դիվան, ապա՝ հիմնական դիվան՝ երկու ատենապետով (Եղիշե արք. Կարոյան եւ Գրիգոր Ազիրյան)։ Պատգամավորներից մեկի՝ խոսրով Թուրունջյանի առարկության հիման վրա, թե նման համագումարներում դիվան, ըստ սովորույթի, ընտրվում է աշխարհականներից, տեղի են ունենում նոր ընտրություններ, ու Լեւոն Շանթը 38 կողմ ձայնով ընտրվում է պատգամավորական ժողովի դիվանի նոր ատենապետ՝ Եղիշե սրբազանի փոխարեն²⁴։ Քվեարկությամբ կազմվում է թեկնածուների եռանուն ցուցակը՝ հետեւյալ կազմով. Պետրոս արք. Սարաճյան, Եղիշե արք. Կարոյան, Խաղ արք. Աջապահյան։ Մասնակից 43 պատգամավորից 41-ը քվեարկում են Պետրոս արք. Սարաճյանի օգտին, իսկ 2-ը՝ ձեռնպահ են մնում։ Պետրոս արք. Սարաճյանն ընտրվում է Մեծի Տանն Կիլիկիո նոր կաթողիկոս²⁵։ Ընտրության արդյունքի մասին անմիջապես տեղեկացվում են Ֆրանսիական Բարձր հանձնախումբը, Սիրիայի եւ Լիբանանի իշխանությունները, տեղական հոգեւոր պետերը, հեռագրեր են ուղարկվում Ս. Էջմիածին, Երուսաղեմ, Կ. Պոլիս, ինչպես նաեւ Հայոց Եկեղեցու մյուս թեմեր։ Կաթողիկոսի ընտրության վերաբերյալ պատրաստվում է հատուկ հաղորդագրություն, որը տրամադրվում է Սիրիայի եւ Լիբանանի հայկական, ֆրանսիական ու արաբական պարբերականներին²⁶։ Ընտրության հաջորդ օրը Պետրոս Ա. Սարաճյան կաթողիկոսը, բարձրաստիճան հոգեւորականների ուղեկցությամբ, այցելում է Ֆրանսիական հանձնախմբի ղեկավար Գաբրիել Պուոյին եւ Լիբանանի նախագահ Էմիլ Էտտեին։ Վերջիններս, ընդունված սովորույթի համաձայն, փոխայցով ժամանում են Անթիլիաս՝ շնորհավորելու նորընտիր կաթողիկոսին²⁷։

²² Տէն «Հասկ», յունիս—օգոստոս, 1940, թ. 6—8, էջ 91—106։

²³ Կիլիկիո կաթողիկոսական ընտրության պատգամավորական ժողովի մասնակիցների ցուցակը տէն «Հասկ», յունիս—օգոստոս, 1940, թ. 6—8, էջ 93—94։

²⁴ Տէն «Հասկ», յունիս—օգոստոս, 1940, թ. 6—8, էջ 93—94։

²⁵ Տէն «Արեւ», Կահիրէ, 7 յունիսի, թ. 6621, 1940, էջ 1, 4։

²⁶ Տէն «Հասկ», յունիս—օգոստոս, 1940, թ. 6—8, էջ 99—100, 102։

²⁷ Տէն «Արեւ», Կահիրէ, 8 յունիսի, թ. 6522, 1940, էջ 1։

Անթիլիաս են այցելում նաեւ բարձրաստիճան այլ պաշտոնյաներ ու կրոնական առաջնորդներ: Ինչպես հայերը, այնպես եւ օտարները²⁸ աշխարհի տարբեր ծայրերից հղում են շնորհավորական բազմաթիվ նամակներ ու հեռագրեր:

1940 թ. հունիսի 2-ին Անթիլիասի նորակառույց Մայր տաճարում առաջին անգամ տեղի է ունենում Կիլիկիո նորընտիր հայրապետի օծման արարողությունը²⁹՝ Երուսաղեմի հայոց պատրիարք Մեսրոպ արք. Նշանյանի ձեռամբ³⁰: Մի քանի օր անց՝ 1940 թ. հունիսի 9-ին, Պետրոս Ա. Սարաճյանն Անթիլիասի Մայր տաճարում մատուցում է իր անդրանիկ պատարագը՝ «Արեւմտեան Եւրոպայի ռազմաճակատին վերայ ազատութեան, արդարութեան եւ իրաւունքի պաշտպանութեան ի խնդիր կոռուղ դաշնակից արի բանակներուն վերջնական յաղթանակին համար»³¹: Պատարագին մասնակցում են ինչպես հայկական ազգային կառույցների, այնպես եւ ֆրանսիական ու լիբանանյան բարձրագույն իշխանությունների եւ զինվորականության ներկայացուցիչներ³²:

1940 թ. հունիսի 15-ին նորընտիր կաթողիկոսը հրապարակում է իր անդրանիկ եւ միակ կոնդակը³³: Կոնդակում կատարված էին հետաքրքիր շեշտադրումներ, որոնք արտացոլում էին այդ ժամանակաշրջանում առկա իրողություններն ու Կիլիկիո կաթողիկոսության վերաբերմունքը դրանց նկատմամբ: Կաթողիկոսը նախ իր աղոթքն է բարձրացնում «վասն խաղաղութեան»՝ անդրադառնալով սկսված աշխարհամարտի պատճառով հաստատված անկայուն եւ անորոշ վիճակին³⁴: Պետրոս Ա. Սարաճյանն իր երախտիքի խոսքն է հայտնում նաեւ այն երկրներին, որոնք Հայոց ցեղասպանությունից հետո ապաստան էին տվել տարագիր հայությանը՝ հորդորելով իր հոտին. «...երկրի զանազան ժողովուրդներու միջեւ բարոյ յարաբերութեանց մշակման հետամուտ ըլլալ եւ մեզի տրուած ազգային ներքին ազատութեան սահմաններուն մէջ արժեցնել հայ ինքնուրոյն

²⁸ Տե՛ս «Հասկ», յունիս–օգոստոս, 1940, թ. 6–8, էջ 108–111:

²⁹ Տե՛ս «Հասկ», յունիս–օգոստոս, 1940, թ. 6–8, էջ 102–106:

³⁰ Տե՛ս «Սիրոն», յուլիս–օգոստոս, թ. 7–8, 1940, էջ 204. նաեւ՝ «Արեւ», Կահիրէ, 15 յունիսի, թ. 6528, 1940, էջ 1:

³¹ «Հասկ», յունիս–օգոստոս, 1940, թ. 6–8, էջ 106:

³² Տե՛ս անդ, էջ 107. նաեւ՝ Բ. ԵՂԻԱՅԱՆ, նշ. աշխ., էջ 496–497:

³³ Տե՛ս «Հասկ», յունիս–օգոստոս, 1940, թ. 6–8, էջ 82–88:

³⁴ Տե՛ս անդ, էջ 83:

նկարագրի պահպանումը՝ ցեղին յատուկ ձիրքի եւ ոյժի տուրքը բերելով միշտ երկրի բարգաւաճման ի սպաս»³⁵:

Կաթողիկոսը կոնդակում անդրադառնում է նաեւ Անթիլիասի հարաբերություններին Հայոց Եկեղեցու նվիրապետական մյուս աթոռների հետ, մասնավորապես՝ Ս. Էջմիածնի դերակատարությունը եւ Մայր Աթոռի շուրջ ստեղծված իրավիճակին՝ ողջունելով առաջիկայում Ամենայն Հայոց Կաթողիկոսի ընտրությունը կազմակերպելու հանգամանքը եւ Մայր Աթոռին հաստատունություն մաղթելով. «Տէր ամենակալ հաստատուն պահէ Ս. Աթոռը բնիկ Հայաստան աշխարհի մէջ. հոգ չէ, թէ ինչ ֆաղափական հայեացքներով կառավարուած, հողը հայուն է, եւ այդ է կարելորդ»³⁶: 1920–1930-ական թթ. Կիլիկիո կաթողիկոսությունը հետաքրքիր վերաբերմունք էր որդեգրել Խորհրդային Հայաստանի եւ այնտեղ իշխող քաղաքական իշխանությունների նկատմամբ³⁷:

Պետրոս Ա. Սարաճյանի անդրանիկ կոնդակում կարելորդ շեշտադրումներ են առկա հայության միասնականության, հայապահպանության եւ սփյուռքահայության՝ Հայոց Եկեղեցու շուրջ համախմբվելու վերաբերյալ: Կաթողիկոսը «ցրուած հայութեան» միության հիմքը համարում է Հայոց Եկեղեցին՝ իր նվիրապետական աթոռներով ու թեմերով³⁸: Կիլիկիո կաթողիկոսը, հանուն հայության հետագա գոյության, հորդորում է մի կողմ թողնել պառակտում առաջացնող կրոնական եւ գաղափարական պատճառները, լինել հանդուրժող միմյանց նկատմամբ³⁹: Կոնդակում ընդգծվում է նաեւ հայապահպանության կարեւորությունը. «Ազգային գոյութիւնը կենսաւորելու եւ միութիւնը պահպանելու համար մենք ունինք հայ ընտանիք, հայ դպրոցը, հայ մշակոյթը եւ Հայ Եկեղեցին, փառեակ սիւներ, որոնցմով կանգուն պիտի մնայ հայութիւնը: Պարտք կը դնենք ձեր վրայ մասնաւոր սէր տաճել ցեղիս այդ հաստատութեանց հանդէպ...»⁴⁰: Պետրոս Ա. կաթողիկոսը հորդորում է ստեղծված իրավիճակում «բոլորուիլ Եկեղեցւոյն շուրջ», քանզի «Հայ Եկեղեցին անգամ մը եւս այս շրջանին կը

³⁵ Անդ, էջ 84:

³⁶ «Հասկ», յունիս–օգոստոս, 1940, թ. 6–8, էջ 84:

³⁷ Այդ մասին մանրամասն տես է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ, Խորհրդային Հայաստանը Էջմիածին–Անթիլիաս հարաբերությունների համատեքստում 1920–1940-ական թվականներին, Խորհրդային Հայաստանը 1920–1930-ական թթ., «Գիտաժողովի նյութերի ժողովածու», Երեւան, 2020, էջ 74–98:

³⁸ Տես «Հասկ», յունիս–օգոստոս, 1940, թ. 6–8, էջ 84:

³⁹ Տես անդ, էջ 85–87:

⁴⁰ Անդ:

կոշուի փրկարար դեր կատարել սասանող բոլոր ազգային հաստատութեանց դիմաց: Այս անասան վէմի վրայ միայն պիտի կարենանք կազմակերպել ազգային հաւաքական կեանք: Ազգին ամեն մէկ կազմակերպութիւնը թող կապ հաստատէ կենդրոնական այս հաստատութեան հետ... Որքան կանգուն կը մնայ այս ժայռը, իրեն հետ կանգուն կը պահէ ցեղին գոյութիւնը»⁴¹:

Պետրոս Ա. Սարաճյանն իր գահակալության կարճատեւ շրջանում փորձում է կարգավորել կաթողիկոսության առջեւ ծառացած մի շարք խնդիրներ: Նախ՝ փորձում է վերջնական տեսքի բերել Կիլիկիո կաթողիկոսության կանոնադրութիւնն ու միաբանական ներքին կանոնագիրքը: Դեռեւս 1931 թ. հրավիրված եպիսկոպոսական ժողովն ապրիլի 17-ի նիստում անդրադառնում է այս խնդրին, եւ որոշվում է ստեղծել հատուկ հանձնախումբ «Կաթողիկոսական ընտրութեան եւ գործունէութեան յատուկ կանոնագիր» մշակելու համար: 1935 թ. հրավիրված եպիսկոպոսական ժողովի նիստերից մեկում էլ որոշվում է պատրաստել «Կիլիկիոյ միաբանութեան յատուկ ներքին կանոնագիր», որի վերջնական խմբագրումը հանձնարարված էր Պետրոս Ա. Սարաճյանին: Սակայն այդ ուղղությամբ երկար ժամանակ հստակ աշխատանք չէր կատարվում⁴²:

1940 թ. օգոստոսի 1—2-ին հրավիրված եպիսկոպոսական ժողովի հաստատմանն է ներկայացվում 18 կետից բաղկացած «Միաբանական կանոնագրի ծրագիր մը», որը հեղինակել էր Եղիշե արք. Կարոյանը: Այն մանրամասնորեն քննարկվելուց հետո միաձայն հաստատվում է ու վավերացվում Պետրոս Ա. Սարաճյանի կողմից եւ պետք է գործադրվեր նույն թվականի հոկտեմբերի սկզբից⁴³:

Պետրոս Ա. Սարաճյանի մահից հետո՝ հոկտեմբերի 3-ին հրավիրված միաբանական ընդհանուր ժողովը՝ Եղիշե արք. Կարոյանի նախագահությամբ, գումարվում է արդեն հենց այդ կանոնադրության հիման վրա⁴⁴:

Կիլիկիո կաթողիկոսության կանոնադրության հարցը, սակայն, չուծված էր մնում: 1940 թ. կաթողիկոսական ընտրության համար հրավիրված պատգամավորական ժողովը հերթական անգամ անդրադառնում է այս խնդրին: Քննարկվում է Ազգային սահմանադրության հիման վրա «Կաթողիկոսարանի յատուկ կանոնագրութեան» ստեղծման հարցը: Միաձայն

⁴¹ «Հասկ», յունիս—օգոստոս, 1940, թ. 6—8, էջ 87—88:

⁴² Տէն «Հասկ», սեպտեմբեր—հոկտեմբեր, 1940, թ. 9—10, էջ 128:

⁴³ Տէն նաեւ Բ. Եղիշեան, նշ. աշխ., էջ 525:

⁴⁴ Տէն «Հասկ», սեպտեմբեր—հոկտեմբեր, 1940, թ. 9—10, էջ 128:

ընդունվում է բանաձեւ, որով հրավիրված պատգամավորական ժողովին իրավունք է վերապահվում մշակելու նոր կանոնադրություն: Այդ նպատակով ընտրվում է հինգ անդամից բաղկացած հանձնախումբ՝ երկու եկեղեցականի եւ երեք աշխարհականի մասնակցությամբ⁴⁵: Հանձնաժողովը պետք է երկու ամսվա ընթացքում մշակեր կանոնադրություն եւ ներկայացներ նույն պատգամավորական ժողովի վավերացմանը: Հաստատված կանոնադրության գործադրությունը պետք է «պարտաւորիչ» դառնար Կիլիկիո կաթողիկոսության համար⁴⁶: Հանձնաժողովը կանոնադրության նախագիծը մշակում է ավելի քան յոթ ամսում: Կիլիկիո կաթողիկոսության կանոնադրությունը (բաղկացած 36 կետից) վերջնականապես հաստատվում է 1941 թ. հունվարի 19-ին՝ հերթական եպիսկոպոսական ժողովում տեղապահ Նիլդե արք. Կարոյանի կողմից քննարկվելուց հետո: Սույն կանոնադրությունն այդուհետեւ «...հիմ պիտի ըլլար բոլոր կանոնագրութեանց եւ ուղեցոյց կաթողիկոսական ընտրութեանց եւ գործունէութեանց»⁴⁷:

Կրկին անդրադառնալով Պետրոս Ա. Սարաճյանի գործունեությանը՝ նշենք, որ նա փորձում էր ջերմ հարաբերություններ պահպանել հուրընկալ երկրի քաղաքական ղեկավարության, ֆրանսիական հանձնադրային (մանդատային) իշխանությունների, Սիրիայի եւ Լիբանանի մյուս կրոնական առաջնորդների, ինչպես նաեւ սփյուռքահայ կառույցների հետ: Դեռեւս կաթողիկոսական փոխանորդության շրջանում նա ջերմ հարաբերություններ է հաստատում Հայոց Եկեղեցու նվիրապետական մյուս աթոռների, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի եւ այդ ժամանակվա Ամենայն Հայոց Կաթողիկոս Խորեն Ա. Մուրադբեկյանի (1932–1938 թթ.) հետ⁴⁸:

Կիլիկիո նորընտիր կաթողիկոսը երկար չի գահակալում: 1940 թ. սեպտեմբերի սկզբին Պետրոս Ա. Սարաճյանի առողջությունը կտրուկ վատթարանում է, եւ նա տեղափոխվում Բեյրութի Ամերիկյան հիվանդանոց⁴⁹: Այստեղ շուրջ երեք շաբաթ անցկացնելուց հետո 70-ամյա Պետրոս Ա. Սարաճյանը 1940 թ. սեպտեմբերի 28-ին կնքում է իր մահկանացուն⁵⁰:

⁴⁵ Տէս Բ. ԵՂԻՍԵԱՆ, նշ. աշխ., էջ 495, 534:

⁴⁶ Տէս «Ազդակ», Բէյրութ, 1 յունիսի, թ. 76, 1940:

⁴⁷ Տէս Բ. ԵՂԻՍԵԱՆ, նշ. աշխ., էջ 535:

⁴⁸ Տէս «Վաւերագրեր Հայ Եկեղեցու պատմութեան», գիրք Դ., «Տ. Տ. Սահակ Բ. Խապայեան. Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ 1891–1940 թթ.», կազմ.՝ Ս. Բեհրութեան, Երեւան, 1997, էջ 551–553:

⁴⁹ Տէս Բ. ԵՂԻՍԵԱՆ, նշ. աշխ., էջ 523:

⁵⁰ Տէս «Հասկ», սեպտեմբեր–հոկտեմբեր, 1940, թ. 9–10, էջ 114, 124–126:

Պետրոս Ա. Սարաճյանն ընդամենը մեկ հայրապետական կոնդակ հասցրեց ստորագրել եւ երկու անգամ միայն «...բարձրացաւ Կաթողիկէ աթոռին վրայ... զոր իր անձնական դրամով շինել տուած էր՝ իր ճաշակին համաձայն»⁵¹։

Կաթողիկոսի թաղման արարողութեանը մասնակցում են հազարավոր հայեր, ինչպէս նաեւ Լիբանանի նախագահն ու կրօնական առաջնորդները, ֆրանսիական հանձնախմբի ղեկավարութիւնը, բարձրաստիճան պաշտոնյաներ։ Հոգեհանգստի կարգը տեղի է ունենում Բեյրութի Ս. Նշան եկեղեցում, որտեղից հոկտեմբերի 2-ին աճյունը տեղափոխվում է Անթիլիաս եւ ամփոփվում Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր տաճարում՝ Սահակ Բ. Խապայանի գերեզմանի մոտ⁵²։ Բեյրութից Անթիլիաս ճանապարհին, հայկական թաղամասերով անցնելիս, ժողովուրդը հրաժեշտի միջոցառումներ է կազմակերպում՝ իր հարգանքի տուրքը մատուցելով կաթողիկոսին⁵³։

Եզրակացություններ

Այսպիսով՝ Պետրոս Ա. Սարաճյանն իր գործունեության ողջ ընթացքում կարեւոր դերակատարում ունեցավ Կիլիկիո կաթողիկոսութեան վերակազմութեան գործում։ Նա 1920–1930 թթ. նպաստեց Կիպրոսի հայոց թեմի վերաշինութեանն ու հոգեւոր կյանքի կազմակերպմանը։ Այնուհետեւ Պետրոս արք. Սարաճյանն աչքի ընկավ կաթողիկոսական ընդհանուր փախանորդութեան եւ տեղապահութեան շրջանում՝ իրագործելով մի շարք կարեւոր ձեռնարկներ։ Այդ շրջանում Պետրոս արք. Սարաճյանը «...վառեց կաթողիկոսարանի ներքին եւ արաքին բոլոր գործերը... Ան միայն օծումէն ետք կաթողիկոս չեղաւ, այլ անկէ ալ շուրս-հինգ տարիներէ ի վեր արդէն գործնապէս կաթողիկոս էր՝ ինքն ըլլալով ղեկավարն ու հոգին վերաշինուող Անթիլիասին... ամբողջ 42 տարիներ ծառայած էր իբրեւ նուիրեալ եւ բազմաբողբ պաշտօնեայ Հայաստանեայց եկեղեցւոյ»⁵⁴։

Պետրոս Ա. Սարաճյանի պարզ ու գործնական բնավորութիւնը լավագույնն է ներկայացրել «Ազգակը»՝ վերջինիս մահվան կապակցութեամբ

⁵¹ Տէս անդ, էջ 116։

⁵² Տէս Բ. Եղիսեան, նշ. աշխ., էջ 524։

⁵³ Պետրոս Ա. Սարաճյանի թաղման արարողակարգի մանրամասն նկարագրութիւնը տես «Հասկ», սեպտեմբեր–հոկտեմբեր, 1940, թ. 9–10, էջ 124–126։

⁵⁴ Անդ, էջ 490։

գրված խմբագրականում. «Ուրիշներու նման «գրաբար» չէր, այլ կատարեալ «աշխարհաբար»: Ամեն մարդ, մեծ թէ պզտիկ, դիրքի տէր թէ համեստ, կրնար համարձակօրէն մօտենալ անոր եւ ազատօրէն բանալ սիրտը...»⁵⁵: Կահիրեի «Արեւը» Պետրոս Ա. Սարաճյանին համարում է «բանիբուն, վարչագէտ եւ շինարար եկեղեցական մը»⁵⁶: Իսկ Անթիլիասի «Հասկը» վերջինիս բնութագրում է՝ «...առաւելապէս գործի մարդ, քան խօսքի եւ ծրագրի, գրչի եւ գրականութեան, եւ մասնաւորապէս՝ շինարար, Շինող ու շէնցնող մարդ»⁵⁷: Նա իր նախաձեռնած շինարարական աշխատանքներով աչքի ընկալ ոչ միայն Անթիլիասում, այլ նաեւ Կիպրոսում ու Նոր Հաճնում՝ տեղի հայոց թեմերը ղեկավարելու շրջանում: Թերեւս պատահական չէ, որ ժամանակակիցները «Շինող» պատվանունը տվեցին Պետրոս Ա. Սարաճյանին: Իրադարձութիւններին ականատես Բյուզանդ եղիայանը գրում է. «Իր շորս տարիներու շրջանին կատարուեցան կաթողիկոսարանի հիմէն մինչեւ կատար բարեգարդումի գործերը՝ ընդարձակ կալուածներուն գնումը եւ իրարու ետեւէ կառուցումը նոր վեհարանին, նոր դպրեվանքին, Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարին, նահատակաց մատուոյն, միաժամանակ նորոգութիւններն ու պատշաճեցումները նախկին շէնքերուն ու վերասարճաւորումը տպարանի ու մատենադարանի, միշտ հայ ժողովուրդի ծանօթ եւ «անծանօթ» բարերարներէն եկող սրտաբուխ նուիրատութիւններով...»⁵⁸: Մի անգամ Պետրոս Ա. Սարաճյանը, պատասխանելով իր շինարարական գործունեութեան վերաբերյալ ակնարկներին, նշում է. «Ինձ կը վերագրեն այսօր շինութիւններ: Ես չեմ, Ազգը կը շինէ: Շինելու գաղափարն ալ երբեմն ուրիշներ թելադրեցին, ու ես գործադրել ուզեցի միայն...»⁵⁹:

Պետրոս Ա. Սարաճյանի մահվամբ կարծես ավարտվեց Կիլիկիո կաթողիկոսութեան պատմութեան մի ժամանակաշրջան, որը համապատասխանում է Կիլիկիո աթոռի 1921 թ. Սսից տարագրվելու սկզբին եւ 1930 թ. Անթիլիասում հաստատվելու առաջին տասնամյակի ավարտին: Սա մի շրջան էր, որի ընթացքում Կիլիկիո կաթողիկոսութեան հաջողվեց, անցնելով բազում դժվարութիւնների միջով եւ հաղթահարելով բազմաթիւ մարտահրավերներ, պահպանել գոյութիւնն ու իր կարեւոր տեղը

⁵⁵ «Ազդակ», Բէյրութ, 1 հոկտեմբերի, թ. 169, 1940:

⁵⁶ «Արեւ», Կահիրէ, 1 հունիսի, թ. 6516, 1940, էջ 1:

⁵⁷ «Հասկ», սեպտեմբեր–հոկտեմբեր, 1940, թ. 9, 10 էջ 117:

⁵⁸ Բ. Եղիւսեան, նշ. աշխ., էջ 491–492. նաեւ «Հասկ», սեպտեմբեր–հոկտեմբեր, 1940, թ. 9–10, էջ 120:

⁵⁹ Անդ, էջ 518:

գրավել հայկական սփյուռքի հոգեւոր եւ ազգային կյանքում: Այս փուլին հաջորդելու էին տարիներ, երբ ողջ աշխարհը նետված էր Երկրորդ աշխարհամարտի հորձանուտը: Նոր աշխարհամարտը, անխոս, իր ազդեցութիւնն ունեցավ նաեւ հայկական համայնքների վրա: Նշալ ժամանակահատվածում եւս Կիլիկիո կաթողիկոսութիւնը փորձում էր իր գործունեութիւնն իրականացնել՝ նկատի առնելով ստեղծված աշխարհաքաղաքական իրողութիւններն ու այն նոր մարտահրավերները, որոնք ծառացել էին հայութեան, մասնավորապէս՝ Լիբանանի եւ Սիրիայի հայկական համայնքների առջեւ: Սակայն Պետրոս Ա. Սարաճյանի մահվանից հետո Անթիլիասին հուզող գերակա հարցը կրկին շարունակում էր մնալ ընտրութիւնը նոր կաթողիկոսի, որի անձից եւ գործունեութիւնից հետագայում մեծապէս կախված կլինէր Կիլիկիո կաթողիկոսութեան ճակատագիրը: Եւ պատահական չէ, որ Պետրոս Ա. Սարաճյանի մահվանից հետո Անթիլիասի հոգեւորականների խնդրանքն Աստուծոյ շարունակում էր մնալ նույնը՝ շնորհել «...արժանաւոր գահակալ մը»:

РЕЗЮМЕ

После отъезда из Киликии в 1921 году несколько священнослужителей сыграли важную роль в восстановлении Католикосата Великого Дома Киликийского. Среди них был архиепископ Петрос Сараджян.

После смерти сопредседателя Католикоса Бабкена епископское собрание Киликийского Католикосата, созванное в июле 1936 года, избрало архиепископа Петроса Сараджяна главным викарием Католикоса. Последний продолжал руководить армянской епархией Кипра до 1940 года. Новый Католикос правит недолго – всего несколько месяцев.

В тот период руководство Католикосатом Киликии фактически находилось в руках архиепископа Петроса Сараджяна. За эти четыре года последний приложил огромные усилия для восстановления Католикосата Киликии и ряда других вопросов. В те годы в Антилиасе было построено много новых зданий: собор матери Антилиаса, новые здания Дпреванка, памятник мученикам Геноцида армян и др.

После смерти архиепископа Петроса Сараджяна, похоже, завершился важный период в истории Католикосата Киликии, который начался с депортации

в 1921 году до основания в Антилиасе и окончательной реорганизации Католикосата. За этот период Католикосат сумел преодолеть множество проблем, сохранить свое существование, занять важное место в религиозной и национальной жизни армянской диаспоры.


SUMMARY


After leaving Cilicia in 1921, some clergymen played an important role in the restoration of the Catholicosate of the Great House of Cilicia. Archbishop Petros Sarajyan was one of them.

After the death of the co-adjutor Catholicos Babken, the Episcopal Assembly of the Catholicosate of Cilicia convened in July 1936 elected Archbishop Petros Sarajyan as the Vicar General of the Catholicosate of Cilicia. The latter continued to lead the Armenian Diocese of Cyprus until 1940. The new Catholicos reigned for a very short time, only a few months.

In that period, the Catholicosate of Cilicia was actually led by Petros Sarajyan. During those four years, he made great efforts in restoring the Catholicosate of Cilicia and dealing with a number of issues. During those years, many new buildings were built in Antelias: the Cathedral of Antelias, the new buildings of the Seminary, the monument dedicated to the victims of the Armenian Genocide, etc.

After the death of Petros Sarajyan, an important period in the history of the Catholicosate of Cilicia seems to be over, which began with the deportation of the Catholicosate of Cilicia in 1921 and ended with its establishment and final reorganization in Antelias. This was an important period for the Catholicosate of Cilicia, during which the Catholicosate managed to survive, to overcome many challenges and occupy its important place in the religious and national life of the Armenian Diaspora.





ՀԱՄԱՈՐԱՄՆԻ ԱՆՊՐԱՂԱՐՁ ՍԻՋԱԳԵՏՔԵԱՆ ՀԱՅ ԳԱՂԹԱՎԱՅՐԻՆ

Նազոյն ժամանակներից սկսած՝ հայութիւնն առընչութիւններ է ունեցել Միջագետք (Իրաք)ի հետ, հաստատել քաղաքակրթական կապեր, իսկ որոշ ժամանակաշրջաններում էլ ապրել այնտեղ, այս կամ այն չափով իր ներդրումը ունեցել այդ պատմական տարածքում ձեւաւորուած տարբեր պետական կազմաւորումների հասարակական կեանքում: Այդ պատճառով բնական է, որ խնդրոյ առարկայ նիւթը պատմաբանների եւ սփիւռքագէտների հետաքրքրութեան շրջանակներում է: Սակայն, հարկ է նշել, այս խնդիրը, մինչ Սեդա Տ. Օհանեանի սոյն աշխատութեան հրապարակումը, հայ սփիւռքագէտների շրջանակներում կարօտ էր առաւել համապարփակ ու համակողմանի ուսումնասիրութեան:

Ի դէպ, ներկայացուող հրատարակութիւնը հեղինակի՝ այս ուղղութեամբ առաջին ուսումնասիրութիւնը չէ. դեռեւս 2016 թ. Երեւանում արեւմտահայերէնով լոյս է տեսել Սեդա Տ. Օհանեանի՝ «Իրաքի Հայ Համայնքը 20-րդ դարուն» վերնագրով գիրքը, որը հրատարակել է ՀՀ ԳԱԱ պատմութեան ինստիտուտը:

ՀՀ ԳԱԱ պատմութեան ինստիտուտի Հայ գաղթօճախների եւ սփիւռքի պատմութեան բաժնի գիտաշխատող, պ. գ. թ. Սեդա Տ. Օհանեանի «Միջագետք (Իրաք)ի հայ գաղթօճախը վաղնջական ժամանակներէն մինչեւ XX դար»¹ մենագրութեան մէջ ներկայացուած են Միջագետք (Իրաք) ի պատմութեան տարբեր դարաշրջանները, ծաղկուն շրջան համարուող Ապպասեանների տիրապետումից մինչեւ Կենտրոնական Ասիայից ներխուժած բարբարոս ցեղերի կողմից երկիրը աւերակների վերածած պատմափուլերը: Անդրադարձ է կատարուել ժանտախտի համաճարակներին, որոնք պատուհասել են Իրաքի բնակչութեանը, այդ թւում՝ նրա մի մասը կազմող հայութեանը:

¹ ՀՀ ԳԱԱ Պատմութեան ինստիտուտ, Երեւան, 2020, 214 էջ, յղումները կտրուեն շարադրանքում՝ փակագծով:

Յատկանշական է, որ սոյն աշխատությունը հրատարակուել է արեւմտահայերէն, իսկ նրա հեղինակն իր կենսագործունէութեան մի կարեւոր հատուածը անցկացրել է Իրաքի հայ համայնքում, այլ կերպ ասած՝ տեղեակ է համայնքի ներքին խնդիրներին եւ նրբութիւններին: Ըստ այդմ, աշխատությունը գրուած է տեսական եւ գործնական գործօնների համադրմամբ եւ հաշուի է առել համայնքային կառոյցների տարբեր հարցերի վերաբերեալ զգայուն յարաբերությունները:

Աշխատությունը հիմնուած է Կ. Պոլսի պատրիարքական եւ այլ եկեղեցական կառոյցների արխիւային նիւթերի, հայկական ձեռագիր յիշատակարանների եւ մատենագիրների, հասարակական-քաղաքական գործիչների յուշերի, նաեւ ժամանակի մամուլի եւ հայերէն, արաբերէն եւ անգլերէն գրականութեան վրայ:

«Հայկական գաղութներուն ձեւաւորումը» վերնագիրը կրող առաջին գլխում Սեդա Տ. Օհանեանը, անդրադառնալով հայութեան վաղնջական ներկայութեանն այստեղ, շեշտում է. «Թէւ հնագոյն ժամանակներուն Միջագետքի մէջ հայերու գոյութեան մասին փաստերը քիչ են, այնուամենայնիւ, 520 թ. Ք. ա. Պեհիսթունի քարաժայռին վրայ պարսիկ Դաւեհ թագաւորի թողած արձանագրութիւն մը կը վկայէ, որ Արախս անունով հայ զօրական մը իբր ստանուն Նաբուգոքոնոսոր ապստամբութիւն կը բարձրացնէ Բաբելոնի մէջ Աբեմենեան Պարսկաստանի դէմ, եւ տեղացիներու օժանդակութեամբ կը յաջողի Բաբելոնի թագաւոր հռչակուիլ: Սակայն այս յանդուգն փայլի հետեւանով Արախս խաչի մահուամբ կը պատժուի» (էջ 19):

Նոյն գլխի առաջին ենթագլխի մէկ այլ տեղում հեղինակն ընդգծելով, որ «Միջագետքի մէջ Սասանեան տիրապետութեան ժամանակաշրջանին (224–652) հայերու գոյութեան մասին աւելի որոշակի տուեալներ կան», արձանագրում է. «Մինչեւ արաբական տիրապետութեան սկիզբները (VII դար), հայեր գոյութիւն ունէին այդ կողմերը, որոնք Պաղտատի խալիֆայութեան հարստութեան տապալումէն ետք անհետ կ'ըլլան կամ չեն յիշուիր» (էջ 21): Այնուհետեւ Միջագետքում միջնադարում հայ գաղթավայրի գոյութեան մասին փաստերը ներկայացւում են եւ համադրւում տուեալ ժամանակաշրջանի Հայոց կաթողիկոսների գործունէութեան համատեքստում (էջ 22–26):

Քննարկելով այս շրջանի հայութեան կարգավիճակի հարցը՝ գրում է. «Կարգ մը պատմաբաններ կը տարակուսին, որ Ապպասեան

խալիֆայութեան շրջանին, փրստոնեայ հայերը Միջագետքի հողին վրայ, խալիֆաներու անմիջական տիրապետութեան շրջանին կրցած ըլլան ապրիլ, բացի անոնցմէ՝ որոնք պաշտօնի բերումով եւ կալանաւորի հանգամանքով գտնուած են Սամառա ու Պաղտատ: Ասոնք, բնականաբար, մնայուն բնակութիւն չեն հաստատած: Հետեւաբար, հնարաւոր չէր, որ հայերը այս շրջանին կրօնա-եկեղեցական կազմակերպութիւն ունենային: Սակայն սխալ է ըսել, թէ բացարձակապէս հայեր չկային արաբական երկիրներուն մէջ» (էջ 29):

Նոյն՝ առաջին գլխի յաջորդ ենթագլխում, որը վերնագրուած է «Միջագետք (Իրաք)». հայաշատ բնակավայրեր (Միջին դարերէն մինչեւ XX դար)», Սեդա Տ. Օհանեանը նշելով, թէ Լենկ Թեմուրի Միջագետք-Իրաք կատարած արշաւանքների ընթացքում հայկական գաղթօճախները այնքան ոչնչացուած էին, որ XV դարի առաջին քառորդին պատմական աղբիւրներում այս գաղթավայրի գոյութեան մասին որեւէ վկայութիւն չկայ, առաջ է քաշում թեզ, համաձայն որի՝ «Մօտաւորապէս հարիւրամեայ այս շրջանին, երբ բոլոր Միջագետքը պատերազմական թատերաբեմի վերածուած էր, չի գիտցուիր, թէ այս տարածքին գտնուող հայ բնակչութիւնը ինչ եղած է: Ամեն պարագայի ակնյայտ է, որ կարգ մը վայրերու մէջ անոնք անհետացած են, իսկ կարգ մը վայրերուն մէջ ալ այնքան նօսրացած, որ իրենց գոյութիւնն անգամ չեն կրցած պահել» (էջ 36—37):

Յիրաւի, հեղինակի կողմից հիմնաւորուած է այն տեսակէտը, որ «... Պաղտատի հայ գաղթօճախը, Օսմանեան տիրապետութեան ենթարկուելէն ետք կը սկսի կազմակերպուիլ...» (էջ 37): Քննարկելով 1604 թ. Շահ Ապպասի կողմից Նախիջեւանը, Երեւանը, նաեւ Շիրակը եւ Արեւմտեան Հայաստանի տարածքների (Կարին-Էրզրում, Տարօն, Վասպուրական) ամայացումը եւ բռնագաղթի կազմակերպումը՝ Սեդա Տ. Օհանեանը ներկայացնում է նաեւ այս գաղթօճախի նոր համալրումը՝ ըստ պատմական Հայաստանի տարբեր բնակավայրերի եւ բարբառների. «Միջագետք-Իրաքի բնակչութեան կարեւոր մէկ մասը Պարսկաստանէն գաղթած ըլլալով, մէկ բեկորն է այն զանգուածային բռնագաղթուած ժողովուրդին, զոր պարսից Շահ Ապպաս Հայաստանէն բերած եւ տեղաւորած էր Պարսկաստանի զանազան կողմերը: Հետեւաբար, Համատանի հայութեան այս մասը Պաղտատ գաղթելով հետը բերած է Հայաստանի բարբառը եւ հայրենի սովորութիւններն ու աւանդոյթները: Ապա եկած են Արեւմտահայերը Տիգրանակերտէն, Սղերդէն, Ուրֆայէն, Ատանայէն եւ Իզմիրէն, որոնց գաւառաբարբառները ժամանակի հոլովոյթին ի մի ձուլուելով՝ կազմուած է

պաղտատցիներու «բնիկ» բարբառը (պաղտատցիի բարբառը), որ թէև միջավայրի ազդեցութեան տակ ենթարկուած է աղաւաղման, այնուամենայնիւ, կը պահէ իր նախկին հնչիւնաբանութիւնը եւ կը համարուի մէկ մասը հայերէնի արեւելեան բարբառին» (էջ 38):

Ի դէպ, հեղինակն ընդգծելով, որ Իրաքի հայ գաղթօճախը սկսում է ստուարանալ XVII դարից սկսած, հարցի վերաբերեալ մէջբերում է եւրոպացի ուղեւորները՝ Ճօրն Մանուարինկ, Փետրո Թէյշէրա, Փիէթրո Դելլա Վալէ, Յակոբ Վիօթ (էջ 38–39) յիշատակութիւնները, իսկ Մոսուլ /Մուսուլ/ քաղաքում հայութեան մասին ակնարկել են հոլանտացի տոբթ, Լեոնարդ Ռաուլֆը, Դանիացի ուղեւոր Քարսթէն Նիփուրը, Օլիւիէն եւ արաբ ճանապարհորդ Մոհամմէտ Ահմէտ Հիսէյմին (էջ 49–50): Սեդա Տ. Օհանեանը Քիրքում հայութեան ներկայութեան մասին նկատում է. «Հին ժամանակներէ ի վեր Քէրֆուկի մէջ հայ գաղութ մը գոյութիւն ունեցած ըլլալը հաստատող աղբիւրներ կամ տուեալներ գրեթէ չկան, բացառութեամբ 1847 թուականին, երբ Սուլթան Ապտիլ Մէնիտ իր սենեկապետը Պաղտատ առաքած ատեն իրեն կընկերանայ հայ բժիշկ՝ Բարունակ պէյ Ֆէրուհիան, որպէսզի ճամբու վրայի ֆաղաֆներու եւ գիւղերու հիւանդները դարմանէ եւ պատուաստէ» (էջ 54): Հարցի համակողմանի քննարկման տեսակէտից խիստ կարեւոր են երեք անգլիացի ճանապարհորդները՝ Ջ. Ս. Բաֆինգըմ, Ա. Լօֆըր եւ Սըր Րօբըրթ Ջ. Փօրթըր, յիշատակութիւնները (էջ 54):

Դրքի յաջորդ՝ երկրորդ գլխում, որը կրում է «Իրաքահայ թեմի կազմակերպումը» վերնագիրը եւ բաղկացած է երեք ենթագլուխներից: Առաջին ենթագլուխը, որ ունի «Հայ Առաքելական Եկեղեցի» վերնագիրը, հեղինակն անդրադարձել է Իրաքում XIX դարում գոյութիւն ունեցող հայկական եկեղեցիներին: Դրանք են՝ Ս. Աստուածածին, Պաղտատի Ս. Երրորդութիւն Եկեղեցի (Շօրնա քաղամասին մէջ), Մուսուլի Ս. Էջմիածին Եկեղեցի, Պասաւայի Ս. Աստուածածին Եկեղեցի, Եկեղեցի կամ մատուտ Սուկ Էլ-Շիուխ (էջ 72–88):

Սեդա Տ. Օհանեանն ընդգծում է, որ Իրաքում հայկական սրբատեղիները դարձել են կարեւոր սրբավայրեր ոչ միայն տեղի հայերի, այլ նաեւ միւս դաւանանքի հետեւորդների համար. «Ս. Աստուածածին Եկեղեցին ճանչցուած է որպէս Պաղտատի ամենահին եկեղեցին: Կարեւոր ուխտատեղի մը նկատուած է հայերուն, քրիստոնէայ եւ այլ դաւանամբներուն հետեւորդներուն կողմէն, ուր ուխտատուներ կու գան Պաղտատի շրջակայ եւ Իրաքի հեռաւոր ֆաղաֆներէն» (էջ 79):

Այս ենթագլխում տրուած է Ս. Աստուածածին եկեղեցում պաշտօնավարած հոգեւորականների անուանացանկը 1760-ից մինչեւ 20-րդ դար (էջ 87), ինչպէս նաեւ յատուկ տեղ է յատկացուած նուիրեալ հոգեւորականների գործունէութեան ներկայացմանը: «Տ. Մեսրոպ ծ. վրդ. 17 տարիներ անբասիր վարժով հովուեց Պաղտատի հայ համայնքը իբր առաջին առաջնորդ, Պաղտատի թեմին Զուլայի Ամենափրկչական աթոռէն բաժնուելէն ու Պոլսոյ պատրիարքութեան կցուելէ ետք: Շինեց Պաղտատի Ս. Երրորդութիւն եւ Մուսուլի Ս. Էջմիածին եկեղեցիները, անձնութեամբ եւ անսակարկ նուիրումով ծառայեց իր հօտին: Թաղուեցաւ Ս. Երրորդութիւն եկեղեցւոյ աւագ դրան առջեւ կամարին տակ» (էջ 81):

Աշխատութիւնն աչքի է ընկնում իրաքահայ կեանքի յիշարժան իրադարձութիւններին որոշակի անդրադարձներով. «Ուշագրաւ է, որ Իրաքի թագաւորութեան անկախ պետութիւնը հիմնուելէ ետք, Ֆէյսալ առաջին թագաւորը այցելած է Ս. Երրորդութիւն եկեղեցին Օգոստոս 1921-ին, ուր ի պատիւ իրեն համայնքին կողմէ կազմակերպուած հաւաքոյթի մը ընթացքին շնորհակալութիւն յայտնած է Իրաքի հայութեան՝ զինքն միաձայն թագաւոր ընտրելուն համար հաստատելով իր Գիր-Գնահատանք մեր ժողովուրդին, եւ շեշտելով, որ գաղթական հայերուն ամեն հոգածութիւն պիտի ընծայուի իր պետութեան կողմէ: Հանդիսութեան ներկայ եղած է նաեւ ի մէջ այլոց, Իրաքի հանրածանօթ բանաստեղծ Ճամիլ Ս. Էլ Զահաուին, որ կանխել է թագաւորի նաոր պատշան խօսքով մը» (էջ 82):

«Հայ կաթողիկէ համայնք եւ եկեղեցի» վերնագրով երկրորդ ենթագլխում հեղինակը ամրագրում է. «Քաբուշիմները եւս, ինչպէս Կարմէղեանները, կապաւինէին ֆրանսական ուժին ու պաշտպանութեան, եւ իրենց փառքութիւնը անարգել առաջ կը տանէին: Քաբուշիմ հայերը 1628 թուականէն սկսեալ շատ աշխուժ փառքութեամբ յաջողեցան իրենց կողմը շահիլ ի մէջ այլոց հայեր եւ կազմել փոքրիկ համայնք մը» (էջ 90):

Քննարկելով կաթողիկէ համայնքի կարգավիճակի հարցը՝ հեղինակը արձանագրում է. «Քարեկեցիկ են Պաղտատի հայ կաթողիկէ համայնքի գաւակները առհասարակ: Անոնց մէջ կային մեծ ու փոքր կալուածատէրեր, առետրականներ, պետական, դրամատնային եւ օտար ընկերութիւններու պաշտօնեաներ, լրագրողներ, բժիշկներ, ատամնաբոյժներ, արհեստաւորներ եւ այլ աշխատողներ» (էջ 97): Այս համատեքստում որոշակի նշանակութիւն ունի այս համայնքի առանձնայատուկ հարցերին անդրադառնալը, ինչպիսին է՝ «Պասրայի հայ կաթողիկէները (որոնց մեծամասնութիւնը

արաբախօս էին եւ եմ), շունեցան իրենց եկեղեցին եւ մինչեւ օրս կը յանախեն լատինական եկեղեցիներ» (էջ 99):

«Իրաքի հայոց գերեզմանատուները» վերնագրով ենթագլխում ներկայացնելով Պաղտատի Հայոց Առաջին Գերեզմանատունը, որը յայտնի է Պապ էլ-Մուատտամ անուամբ, հեղինակը փաստում է. «1856–1891, երեսուն եւ հինգ տարուան ժամանակամիջոցին արձանագրուած է 467 ննջեցեալի անուններ, միջին հաշուով՝ 13 ննջեցեալ տարին: Ուրեմն, Պապ էլ-Մուատտամի գերեզմանատունը բացուելէն մինչեւ 1891, երկու հարիւր յիսուն տարուան ընթացքին հոն թաղուած ըլլալու է մօտաւորապէս 3000 ննջեցեալ» (էջ 101): Խիստ կարեւոր է, որ քննարկելով այս հարցը պարզ է դառնում տեղի հայութեան թիւը տուեալ ժամանակաշրջանում: Այս առումով յիշարժան է նաեւ հեղինակի հետեւեալ նկատառումը. «Ննջեցեալներուն թաղումը Պապ էլ Շարկի (Պաթթաուին) գերեզմանատան մէջ շարունակեցաւ 80 տարիներէ աւելի: Ըստ կատարուած ցուցակագրութեան մօտ 3000 ննջեցեալներու անիւնները թաղուած են այս գերեզմանատան մէջ: Ննջեցեալներուն թաղումը այս գերեզմանատան մէջ դադրեցաւ 31 Դեկտեմբեր 1986-ին, երբ բացուեցաւ Շաուրա Վէ Ում Ճըտըր գերեզմանատունը (նոր գերեզմանատուն)» (էջ 104):

Դրքի յաջորդ՝ երրորդ գլխում, որը կրում է «Տնտեսական, հասարակական գործունէութիւն» վերնագիրը եւ բաղկացած է համապատասխանաբար երկու ենթագլուխներից, հեղինակն առաջին անգամ գիտական շրջանառութեան մէջ է դնում արաբերէն գրականութիւն: Այս գլխում Սեդա Տ. Օհանեանը կարեւոր դիտարկում է կատարում. «Միջագետք-Իրաքի տնտեսական ծաղկուն ժամանակաշրջանը կը սկսի XVII դարէն ետք, Շահ Ապպասի Արարատեան դաշտի 300 000-է աւելի բնակչութեան յայտնի բռնագաղթէն եւ Պարսկաստանի իր մայրաքաղաքին մօտ, Նոր Զուլայի եւ ուրիշ համայնքներու հիմնադրումէն ետք: Այս ժողովուրդէն զգալի հատուած մը կանցնի Պասրա, Պաղտատ եւ այլուր» (էջ 107): Աւելին, «1722 թուականին Պարսկաստանի մէջ ծաւալուող քաղաքական անմաստ պայմաններուն բերումով, Նոր Զուլայէն հեռացողներէն մաս մը կանցնի Պասրա, եւ հակառակ Պարսկաստանի նոր տիրակալ Քէրիմ Խան Զանդի սպառնալիքներուն՝ Զուլայեցիները անյողդող կը մնան իրենց որոշումին մէջ, շարունակելով ապրիլ իրենց նոր բնակավայր Իրաքի մէջ» (էջ 110):

Ըստ պատշաճի ներկայացուած է Իրաքում հայութեան կարգավիճակի հարցը՝ ընդգծելով, որ հայերը զբաղուել են ոչ միայն առեւտրով, այլ նաեւ օտարերկրեայ ներկայացուցչութիւններում կատարել են

դիւանագիտական որոշակի աշխատանքներ. «Անցեալին պատահայերը ոչ միայն առեւտուրի մէջ մեծ տեղ գրաւած են, այլ նաեւ դիւանագիտական ասպարէզին մէջ կարեւոր դիրքերու տիրացած: Իբրեւ առեւտրական գործակալներ անոնք պաշտօնավարած են Պատարայի Բրիտանական հիւպատոսարանին մէջ: 1767 թ. Բրիտանական հիւպատոս Հէնրի Մուրի առեւտրական գործակալն էր Մարգար անունով հայ մը, իսկ թարգմանը՝ Շէյխ Պօղոս կը կոչուէր» (էջ 118):

Ներկայացնելով իրաքահայ հասարակական կեանքը՝ հեղինակը յատուկ քննարկել է Ում-Իլ-Ատամ կտակը, որն անցել է տարբեր փուլեր, երբ Միջագետքը գտնուում էր Օսմանեան տիրապետութեան, իսկ Իրաքի թեմը՝ Կ. Պոլսի պատրիարքութեան իրաւասութեան ներքոյ: Հեղինակը համագամանօրէն ներկայացնում է այս կալուածքի՝ երկար տարիներ Պոլսի եւ Պաղտատի միջեւ դատական ատեաններում վիճարկումը, քանի որ այն եղել է իրաքահայ համայնքի հասարակական քննարկումների եւ վէճերի առարկայ: «1968-ին վերջ կը գտնէ Ում-Իլ-Ատամի 1854-ին՝ կտակարար՝ մահտեսի Մարկոս Իսկէնտէրեանի ըրած կտակին» (էջ 124): 1968-ին Իրաքի Յեղափոխական ղեկավարութեան Խորհուրդը որոշում է առգրաւել Ում-Իլ-Ատամի կալուածքը: Այդ կալուածքում են ապաստան գտել նաեւ Հայոց ցեղասպանութիւնից փրկուած որոշ հայեր:

Չորրորդ գլուխը, որը վերնագրուած է «Կրթամշակութային կեանք», համապատասխանաբար ներկայացնում է Հայ Առաքելական եւ Կաթողիկէ դպրոցները, ինչպէս նաեւ այդ կրթօճախներում սովորած աշակերտութեան թուի վերաբերեալ տուեալներով վեր է հանուում եւ ուրուագծուում ժամանակի հայութեան տեղն ու դերն այդ երկրում:

Հեղինակը որոշակի արժէքաւոր տուեալներ է ներկայացնում նաեւ հայկական ձեռագրերի յիշատակութիւնների վերաբերեալ: Նա ընդգծում է. «Հակառակ ֆաղափական առկայ աննպաստ պայմաններուն, XVII դարուն վերջերը Պաղտատ կը դառնայ Մերձաւոր Արեւելի հայ գրչութեան օճախներէն մէկը: Գրչութեան այս օճախին մէջ գրուած եւ մանրանկարուած են շարք մը ձեռագիրներ» (էջ 144): Այնուհետեւ ներկայացնում է տպարանի եւ մամուլի վերաբերեալ տեղեկատուութիւնը:

Եզրակացութիւն բաժնում հեղինակը կատարել է մի շարք արժէքաւոր եզրայանգումներ: Այսպէս, նա գրում է. «Իրաքի գաղութի բարգաւաճումը սերտօրէն առնչուած է տեղական իշխանութիւններուն վարած բարեացական ֆաղափականութեան, կամ հակառակը, ենթարկուած է բազմապիսի

կատանմներու, ինչպէս սելնուկ, մոնկոյ, թաթար-թուրք բռնատիրական արարմներուն, որոնցմէ անմասն պիտի չմնային նաեւ հայ համայնքի զաւակները: Այնուամենայնիւ, Իրաք ապաստանած Նոր Զուլայի վանառականները, իրենց գործօն եւ խիստ ակնառու մասնակցութիւնը բերած էին իրենց նոր «հայրենիքին»՝ Իրաքի տնտեսական վերելքին, յատկապէս XVII եւ XVIII դարերուն, երբ երկիրը կը հանդիսանար Օսմանեան կայսրութեան հեռաւոր եւ յետամնաց բնակավայրերէն մէկը, ուր խաւարն ու տգիտութիւնը համատարած եւ տիրապետող էր» (էջ 151):

Թերեւս համայնքի ունեցած կրօնակեղեցական կարեւորութեան մասին է հեղինակի այն եզրակացութիւնը, որ «Իրաքի հայ համայնքի ամենածաղկուն եւ տնտեսապէս բարգաւաճ շրջանը XVIII դարու երկրորդ կէսն է, երբ երկրի հարաւային շրջանները, յատկապէս Պասրա Բաղաֆ-նաւահանգիստը, կը դառնայ տարանցիկ առևտուրի կեդրոն, ուր տեղափոխուած Նոր Զուլայի հայ վանառականները կամ իրենց գործակալները կը ծաւալէին աշխոյժ առևտրական գործունէութիւն: Ամենայն Հայոց կաթողիկոսարանի վաւերագիրներէն կը տեղեկանանք, որ Իրաքի թեմը համարուած է «տէրունի», այսինքն՝ էջմիածինին անմիջապէս ենթակայ թեմ» (էջ 151):

Հեղինակի եզրակացութեան մէջ առկայ է նաեւ թուային յստակ տուեալներ համաճարակներին զոհ դարձած հայութեան մասին. «Հայր Մ. Զամչեանի վկայութեամբ, 1771 թուականին Պասրայի մէջ (ուր կը գտնուէր նաեւ վարդապետը) մոլեգնող համաճարակէն մահացած են 55 000 հոգի, որմէ 4000-ը հայեր եղած են: Ուրեմն Պասրայի մէջ այս թուականին, հայերու թուաքանակը կը գերազանցէր 4000-ը» (էջ 152):

Աշխատութեան կարեւոր արժանիքներից է նաեւ թուով 21 «Յաւելուած»-ները, որոնք համապատասխանաբար վերաբերում են տարբեր վաւերագրերին, ինչպէս նաեւ զուգահեռ առկայ են մշակութային որոշ յուշարձանների լուսանկարներ:


Աշխատութիւնը ունի անգլերէն եւ արաբերէն լեզուներով ամփոփումներ եւ Անուանացանկ:

Այսպիսով, Սեդա Տ. Օհանեանի սոյն մենագրութիւնն ունի գիտական մեծ կարեւորութիւն, քանի որ հեղինակը, հիմնուելով բազմաթիւ արխիւային նիւթերի եւ արաբական աղբիւրների վրայ, որոնց մի մասն առաջին անգամ է գիտական շրջանառութեան մէջ դրել, համակողմանի հետազոտման է ենթարկում Միջագետք (Իրաք) ի հայ գաղթօճախը վաղնջական ժամանակներից մինչեւ XX դարը: Արդի պատմագիտութեան մէջ

էական է հեղինակի կողմից առաջ քաշուած նոր թեզը, որի համաձայն՝ «Վաղնջական ժամանակներէն Իրաքի մէջ բնակութիւն հաստատած հայորդիները յատկապէս 1638 թուականէն ետք, փաստօրէն հիմնադիրները եղան այս երկիրին մէջ հայկական վերակազմեալ գաղութին» (էջ 152):

Կարծում ենք, որ Սեդա Տ. Օհանեանի սոյն արժէքաւոր ուսումնասիրութիւնը կարեւոր ներդրում է հայ սփիւռքագիտութեան մէջ:

ԿԱՐԷՆ ՄԿՐՏՉԵԱՆ
Պատմական գիտ. թեկնածու
ՀՀ ԳԱԱ ՊԻ



ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՐԺԵՔԱՎՈՐ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

2020 թվականին է լույս տեսել Աշոտ Գալստյանի «Արեւելահայ գեղարվեստական վավերագրության լեզուն» (XIX դ. 60-ական — XXI դ. 10-ական թթ.) աշխատությունը: Հետազոտության վերնագիրը ճշտորեն նշում է նրա բովանդակության ողջ տարողությունը, որը եւ բերում է նորություն հայ արդի լեզվաբանության մեջ, քանզի նման հայեցակետով աշխատություն մեզանում գրվել է առաջին անգամ:

Տեղին է հիշել միջազգային հռչակի տեր բյուզանդագետ, հայագետ, լեզվաբան, գրականագետ Նիկողայոս Ադոնցի մի դիտարկումը, որը լեզվաբանական բացառիկ արժեք ունի. «Չկարծեք, թե գյուտերը միայն քիմիական կամ մեքենագիտական աշխարհի մեջ են տեղի ունենում: Մեծագույն գյուտն է, եւ հանճարեղ մտքի գյուտը, երբ մի բանասեր հաշողեցնում է մի բառի վրա հիմնված ժողովրդի քաղաքակրթության անցյալ մեկ շրջան վերականգնել կամ ցեղաբանական կազմությունը ճշտել եւ կամ մի դեպք իր ժամանակաշրջանի մեջ տեղավորել»¹:

Աշոտ Գալստյանը կատարել է հսկայածավալ աշխատանք՝ ջանադիր ի մի հավաքելով հայ գրականության ընթացքի մեջ հայոց լեզվի հարյուր հիսուն տարվա փոփոխություններն ու օրինաչափությունները, որոնք տեղի են ունեցել վավերագրական գեղարվեստական գրականության մեջ:

Ամեն ազգի լեզու նրա զարգացածության աստիճանը որոշող ցուցիչ է, իսկ լեզուն կենդանի ու շարունակ աճող ու փոփոխությունների ենթարկվող հզոր երեւույթ է: Լեզուն փոփոխությունների են ենթարկում հանճարեղ գիտնականները, գրողները, քաղաքագետները: Լեզուն ամեն մի դարի որոշակի ժամանակահատվածում հստակ ներկայացնում է տվյալ ազգի հոգեւոր ու մտավոր կարողությունները: Լեզվի շինարարներն առաջին հերթին նշանավոր գրողներն են, եւ դա հավաստող բազում փաստեր կան:

¹ Մ. Իսկան, Երեք մեծ հայեր, Բեյրութ, 1952, էջ 12:

Վահան Տերյանն իր դարակազմիկ «Հայ գրականության գալիք օրը» հոդվածում հատուկ քննարկման հարց է դարձրել հայոց լեզվի եւ ընդհանրապես լեզվի դերը որեւէ ազգի գրականության առաջընթացի համար: Նա հիացմունքով է վկայակոչում միջազգային ճանաչում ունեցող բանագետ ու բանասեր Մաքս Մյուլլերի ասույթը լեզվի մասին. «Եթե դա (լեզուն) մարդկային ստեղծագործության արդյունք է, ապա նա բարձրացնում է ու հասցնում մարդուն աստվածային աստիճանի, եթե Աստծու պարգեւն է՝ ապա դա նրա ամենամեծ ու ամենաթանկագին պարգեւն է...»²:

Նշանավոր երկու գիտնականների՝ Ն. Ադոնցի եւ Մ. Մյուլլերի լեզվի՝ մասին ասույթները հաստատում են, թե ինչ շնորհակալ գործ է կատարել լեզվաբան Ա. Գալստյանը, որը ճշտորեն ներկայացրել է հայ գեղարվեստական վավերագրության մի երկարաժամկետ հատվածի առաջընթացի պատկերը՝ իր ողջ օրինաչափություններով ու լեզվական հարստացման պատմությամբ:

Գալստյանի գիրքը կարդացվում է հետաքրքրությամբ, որովհետեւ քննվող նյութերի լեզվական իրողություններում գտնված են ամենակարեւորն ու տպավորիչը:

Ճշգրտորեն է ընտրված հետազոտության թեմայի ժամանակահատվածը: Խ. Աբովյանի «Վերջ Հայաստանի» վեպի շրջադարձային երեւույթից հետո հայոց լեզուն՝ աշխարհաբարը, սկսում է իր հղկման ու կատարելագործման ուղին: Գալստյանն իր գրքում, այդ ճանապարհի հանգուցային կետերը մեկնաբանելով, այն հասցնում է մինչեւ մեր օրերը:

Միանգամայն տեղին հղում է կատարված Մխիթարյան հայրերից ականավոր լեզվաբան Արսեն Այտնյանից. «Գրաբարը կա, այն ջնջել չի լինի. աշխարհաբարը ոչ միայն կա, այլեւ զարգացման ու կատարելագործման ընթացքի մեջ է եւ այդ ուղղությամբ մեծ ապագա ունի, գրաբարը պիտի մնա եւ ծառայի բանասիրական նպատակների համար, իսկ աշխարհաբարը կա եւ կմնա որպես կենդանի լեզու, նա ունի գործնական-կիրառական ֆունկցիա»³:

Գրախոսվող գիրքը «Ներածությունից» հետո ունի երեք ծավալուն գլուխ՝ իրենց ենթաբաժիններով, գիտական գրականության

² Վ. ՏԵՐՅԱՆ, Երկերի ժողովածու երեք հատորով, կազմեց եւ ծանոթագրեց Վ. Պարտիզունին, Երեւան, 1961, էջ 281–282:

³ Ա. ԳԱԼՍՏՅԱՆ, Արեւելահայ գեղարվեստական վավերագրության լեզուն, XIX դ. 60-ական – XXI դ. 10-ական թթ., Երեւան, 2020, էջ 41:

անպայմանորեն պատշաճող՝ օգտագործված գրականության եւ համառոտագրությունների ցանկեր: Հիանալի է համառոտագրությունների բաժինը, այն գիտական ժամանակակից պահանջ է, որի միջոցով համառոտ ձեւով ընթերցողը ծանոթանում է մեջբերվող հատվածի սկզբնաղբյուրներին: Սա խիստ շահեկան է այն առումով, որ գիրքն անհրաժեշտաբար հարուստ է փաստական մեջբերումներով, որոնց հիմքերն ընթերցողը հեշտությամբ գտնում է համառոտագրություններում:

Հարուստ է նաեւ օգտագործված բառարանների ցանկը, բացի հայերեն բառարաններից՝ տեղ են գտել նաեւ ռուսերեն, իտալերեն, ֆրանսերեն, գերմաներեն բառարաններ:

Հետազոտողն օտար բառեր գործածելիս դրանց կողքին անհրաժեշտաբար դրել է ժամանակակից հայերենի համարժեքները: Չնայած գիրքը նվիրված է վերջին 150-ամյա վավերագրական հայ գեղարվեստական գրականության լեզվական օրինաչափություններին՝ այն միաժամանակ խիստ տպավորիչ ձեւով մեզ ներկայացնում է, թե զարգացման ինչ ճանապարհ է անցել աշխարհաբարը խաչատուր Աբովյանից հետո, եւ ինչպիսին է այն մեր օրերում:

Շատ կարեւոր է, որ գրքում անդրադարձ կա նաեւ նույն ժամանակահատվածի բանավոր հայերենի զարգացմանը:

Հայ նոր լեզվի հղկողներից մեկն էր նաեւ Ռափայել Պատկանյանը, որի դերը այս գրքում գնահատված է: Նա կրթվել է Մոսկվայի աշխարհահռչակ Լազարյան ճեմարանում, որտեղ հայերենի դասախոսը եղել է միայն գրաբարով գրող համբավավոր հայագետ Մկրտիչ էմինը: Վերջինս գիտեր, որ ապագան աշխարհաբարինն է եւ փորձում էր իր հոգատար հետեւողականությամբ նոր լեզվին տալ պատշաճ կերպարանք ու շքեղություն: Այդ մասին վկայում է Ռափայել Պատկանյանն իր հուշերում⁴:

Լեզվաբանական նման աշխատանքը բնականաբար հենվել է գեղարվեստական գրականության այն տեսակների վրա, որոնք խիստ անհատական գրականություն են՝ հնագույն հիշատակարաններ, ինքնակենսագրություն, օրագրություն, ուղեգրություն, էսսե-ակնարկ:

Տիրապետելով գրաբարին՝ Գալստյանն անդրադարձ ունի միջնադարյան հիշատակարաններին, որոնցում, անգամ զուտ կրոնական

⁴ Տե՛ս Ռ. ՊԱՏԿԱՆՅԱՆ, Երկեր, Երեւան, 1980, էջ 610–611:

գրչագրերում, պատմվում էին ամենատարբեր հրաշագործություններ, սակայն հիշատակարաններն ամենավավերական ու իրական կյանքին աղերսվող հատվածներն էին:

Բնականաբար Գալստյանն անդրադարձ ունի այն լեզվաբանների ու գրականագետների վերլուծական, մեկնողական նյութերին, որոնք աղերս ունեն իր կողմից լեզվաբանական նոր քննության ենթարկվող գործերին: Նա նույնիսկ տարանջատում է, թե տարբեր հուշագիրներ, որոնց գրվածքները տպագրվել են տարբեր պարբերականներում, նայած նյութի բովանդակությանը, օգտագործել են տարբեր բառապաշար: «Էջմիածին» հանդեսում հուշագրական նյութերը, որոնք ներկայացնում են վանքի ու վանական միաբանության անդամների կյանքը, ունեն առանձնահատուկ բառապաշար⁵:

Նույնիսկ օտար երկրների հայկական դպրոցներում սովորող աշակերտներն ու ուսանողներն են նպաստել արեւելահայ աշխարհաբարի բարեփոխմանը. «Ներսիսյան դպրոցը արեւելահայ գրական լեզվի առաջին ջերմանոցն ու սերմնացանն էր»⁶:

Իսկ Լազարյան ճեմարանի մասին Հրաչյա Աճառյանը գրում է. «Ամեն կողմից հավաքված հայ աշակերտները ստեղծեցին մի ուրիշ գրական լեզու, որի հիմքը Երեւանի բարբառն էր: «Նրանք... կոկում էին իրենց լեզուն..., եւ կամաց-կամաց այդ կոկած լեզուն դառնում էր խոսակցական ընդհանուր լեզու նույն դպրոցի սաների համար»⁷:

Առաջին ուղեգրական աշխատություններից, որոնց հանգամանալի անդրադարձ կա գրքում, XVII դ. I կեսի հոգեւոր գործիչ Սիմեոն Լեհացու «Ուղեգրությունն» է եւ Մեսրոպ Թաղիադյանի «Ճանապարհորդութիւն... ի Հայս» աշխատությունը⁸: Իրոք, հանրագիտարանային արժեք ունեցող այս երկը, ուր նկարագրված են Հայաստանի տարբեր բնակավայրերը, ունի ճանաչողական մեծ արժեք: Նրանում Օշական եւ Կարբի գյուղերի բնակիչների անուրախ կյանքը պատկերված է հետեւյալ չափածո տողերում.

Օշականայ մարդիկ,

Անունս է Վարդիկ,

⁵ Տե՛ս Ա. ԳԱԼՍՏՅԱՆ, նշ. աշխ., էջ 23–24:

⁶ Նույն տեղում, էջ 36:

⁷ Նույն տեղում, էջ 36–37:

⁸ Ճանապարհորդութիւն Մեսրոպբայ Դ. Թաղիադեանց Սարկաւագի սրբոյ էջմիածնի ի Հայս (տե՛ս ՄԵՍՐՈՊ ԹԱԳԻԱԳՅԱՆ, Ուղեգրություններ, հոգվածներ, նամակներ, վավերագրեր, Երեւան, 1975, էջ 25–199):

Ինձ տեսե՛ք,
Ձեզ լացե՛ք,
Ուր ուր կե՛՛ք՝ ամուս կացե՛ք⁹:

Ուշագրավ է Գալստյանի գրքի «Գրական եւ գեղարվեստական լեզու: Լեզվական անհատականության հարցը» ենթագլուխը, որում անդրադարձ կա լեզվաբաններ Յու. Ավետիսյանի, Գ. Սեւակի, Գ. Զահուկյանի, Էդ. Աղայանի, Ս. Մելքոնյանի, Պ. Պողոսյանի, Հ. Հարությունյանի, Վ. Առաքելյանի եւ այլոց այն աշխատություններին, որոնք առնչվում են առաջադիր խնդրի լուծման հետ:

«Գեղարվեստական վավերագրության հոգեբանական հիմքերը՝ որպես բնագրի լեզվի կառուցվածքը պայմանավորող գործոններ» բաժնում հետազոտողը շատ տեղին է մեջբերում կատարել ակադեմիկոս Ռուբեն Զարյանի սքանչելի «Հուշապատում» գրքի երկրորդ հատորից. «Ասում են՝ ամեն ինչ ասողից աղքատ մարդ չկա: Որ այդպես է, ուրեմն թող ամեն ինչ թղթին չհանձնվի. մի քանի դրվագ էլ որ հիշելիս միշտ հպարտություն եմ ապրել, թող անհայտ մնան, մնան որպես նվիրական հիշատակներ միայն ինձ համար»¹⁰:

Հոգեբանական խոստուն հղումներ կան նաեւ Խորհրդային Միության կրկնակի հերոս, հերոսական Արցախի քաջահմուտ զորավար, Սարդարապատի հերոսամարտի մասնակից Հովհաննես Բաղրամյանի ստվարածավալ հուշապատումից¹¹:

Գրքում մեծ տեղ է տրված Վահրամ Փափազյանի «Հետադարձ հայացք» եւ Սիլվա Կապուտիկյանի «Քարավանները դեռ քայլում են» գրքերի լեզվական օրինաչափություններին ու բովանդակային եւ բառական նորարարություններին:

Փափազյանն իր հուշերում դիմում է մի մեթոդի, որն արդեն կիրառել էր ինչպես Սեփյանը «Վերք Հայաստանի» վեպում: Աշխարհահռչակ ու մեծ բազմագիտակության տեր դերասանն իր հուշերում գործող անձ է դարձնում նաեւ ընթերցողին. «Տեսնում եմ՝ ծիծաղում ես, ընթերցող, եւ ենթադրում ես, թե արգավանդ մրգաստանում երկար տարիներ թափառելուց հետո՝ իրիկնամութի ժամին, ժուժկալության վարդապետ եմ դառել քո գլխին, բայց հավատա՛, իմ հարազատ, որ կյանքի բուրումնավետ

⁹ Ա. ԳԱԼՍՅԱՆ, նշ. աշխ., էջ 43–44:

¹⁰ Նույն տեղում, էջ 58–59:

¹¹ Տես նույն տեղում, էջ 58:

ծաղկաստաններում մոլորվելիս նույնն եմ մտածել, ինչ հիմա, երբ խոսում եմ քեզ հետ այս տողերով»¹²:

Գրքում հոգեբանական լեզվական դրսևորումներ կան Հովհ. Թումանյանի, Ավ. Իսահակյանի, Ս. Արզումանյանի հուշապատումներից: Հուշագրության գայթակղիչ ուղու վերաբերյալ դիպուկ նկատում ունի Վարպետը. «Հուշեր գրելը մի սայթաքուն ուղի է, որ սկսվում է համեստությամբ ու վերջանում ինքնագովությանմբ»¹³:

Գալստյանը քննում է նաեւ վավերագրության ձայնային-կառուցվածքային բաղադրիչները: Գեղարվեստական վավերագրության էական առանձնահատկություններից են խոսքային կաղապարները եւ յուրահատուկ կառույցները. «Հուշագրության ստվար մասի սկզբում առկա են «առաջին (վերջին) անգամ տեսա..., լսեցի... կամ հանդիպել եմ, ծանոթացա, ծանոթացել էի, ծանոթությունն սկսվեց... կամ տեղի ունեցավ», հանդիպեցի կամ հանդիպեցինք... արտահայտությունները»¹⁴:

Ճշգրտորեն դիտարկվում են կառուցվածքային մաս կազմող միջանկյալ արտահայտությունները:

Գալստյանը նուրբ ընկալմամբ նշում է, թե արեւելահայերենով գրված հուշապատումներում առատորեն առկա են հայ ազգային մշակույթին բնորոշ «կարոտ» բառի բացառիկ գործածություններ. «կարոտ» բառի գործածության հայեցակարգը հատուկ է հայի ազգային նկարագրին, որը հաճախ երեւում է գեղարվեստական վավերագրության խոսքային հաղորդակցության մեջ¹⁵:

Քննության առարկա է դարձել վավերագրության ոճական կառույցների բաղադրիչների համակարգը, որի մեջ մտնում են պատմողական ոճը, նկարագրական խոսքը, դիմանկարի կերտումը, ինչպես նաեւ բնանկարի գեղարվեստական վավերագրությունը:

Վավերագրական գեղարվեստն անպայմանորեն միահյուսված արվեստի դրսևորում է. այդ իսկ պատճառով այնտեղ առկա են դրամատիկ սեռին հատուկ երկխոսությունները, որոնք, ըստ Գալստյանի, պայմանականորեն կարելի է բաժանել երեք խմբի.

ա) գեղարվեստական-վավերագրական բնագրերի՝ իբրեւ երկխոսության տարատեսակի դրսևորումներ,

¹² Նույն տեղում, էջ 62:

¹³ Նույն տեղում, էջ 64:

¹⁴ Նույն տեղում, էջ 78:

¹⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 86:

բ) գեղարվեստական վավերագրության բնագրերի երկխոսության կազմիչ նախադասությունների տարբեր զուգորդումներ,

գ) երկխոսություններով կառուցված գեղարվեստական-վավերագրական տեքստի լեզվական (արտահայտչական) հիմքեր¹⁶:

Այս օրինաչափությունները հաստատվում են խոսուն եւ փաստացի օրինակներով:

Ա. Գալստյանի գրքի երրորդ գլուխը խորագրված է «Գեղարվեստավավերագրական երկերի բնութագրական բառաշերտերը»: Այդ հատվածում տեսնում ենք XIX դ. վավերագրության մեջ գրաբարյան բառերի առատություն, որոնք բացակայում են XX դ. երկրորդ կեսին եւ XXI դ. առաջին տասնամյակում: Գրաբարյան բառեր են առկա Րաֆֆու «Ճանապարհորդություն Պարսկաստանի» եւ Պ. Պռոշյանի «Հուշիկներ» գործերում: Ինչպես իր մյուս երկերում, այնպես էլ այս ուղեգրության մեջ, Րաֆֆին՝ որպես ընտանի բառեր, իր գրելաոճում օգտագործել է գրաբարյան ձևերը՝ հատկապես «իր»-ի, «իրենց»-ի փոխարեն գրելով «յուր», «յուրյանց»: Նույն ձևով Պ. Պռոշյանի ստեղծագործություններում կարդում ենք սորա, դորա, նորա, հոգաբարձուի, իշխանունիի, ծերունիի, երեխայի, ֆահանայի, ծառայի, տղայի: Գալստյանը բերում է նման բազմաթիվ օրինակներ:

Բացի գրաբարյան ձևերից՝ XIX դ. հեղինակները հուշագրություններում հաճախ են գործածում բարբառային բառեր: Օրինակ՝ Ղ. Աղայանը «Իմ կյանքի գլխավոր դեպքերը» գրքում գործածել է ճղպրե-ընկուզենի, դիփ-բոլորը, դսմաբ-բախտ, դելը տալ — տաքության մեջ զառանցել եւ այլն: Րաֆֆու ուղեգրություններում էլ կան բազմաթիվ բարբառային բառեր՝ կուշտ-մոտ, կից, պտռել-փնտրել, ածել-լցնել, ռելս — մարդու բերան (անարգական իմաստով), դաբա — երկար զգեստ, ֆաֆու — գլխի գագաթի մագերը, մասլահաբ-խոսակցություն, մզախ-նիզակ եւ այլն: Նվարդ Թումանյանն էլ իր հայրիկի դիմանկարը կերտելիս օգտագործել է լոռու խոսվածքին բնորոշ բառեր՝ հեռ-հայր, նան-մայր, հոֆիր-հորաքույր, գրից-գրույց, դամբիլ-սալոր, կակալ-ընկույզ, շվաֆ-ստվեր, էսոր-այսօր, դնջանալ-հանգստանալ, շղահաբել-թափահարել, էդ-այդ, էն-այն, էնֆան-այնքան եւ այլն:

¹⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 118:

Հուշագրություններում տեղ են գտել նաեւ արեւմտահայերեն բառեր՝ աս—սա, ասիկա—սա, ան—նա, ինձմե—ինձնից, ադուր—դրա, ասդին—անդին — այստեղ—այնտեղ եւ այլն:

Գալստյանը փաստում է, որ հուշագրություններում ի հայտ են գալիս նաեւ հայերենի նորաբանություններ: Մարգո Ղուկասյանի՝ 1915-ի Հայոց Մեծ ցեղասպանությանը նվիրված փաստագրության մեջ տաղանդավոր հրապարակախոսը գործածել է տեղին ստեղծված զավակաթափ եւ մարդաթափ արտահայտությունները: Դրանք այսօր էլ կարող ենք կիրառել 2020-ի սեպտեմբերի 27-ի Թուրքիայի ու Ադրբեջանի՝ Արցախի դեմ սանձազերծած պատերազմը բնորոշելու համար, որի նպատակն էր Արցախը հայերից մարդաթափ ու զավակաթափ անելը:

Վավերագրություններում Գալստյանն առանձնացնում է օտար լեզուներից կատարված փոխառությունները: Դրանցից մեկը ֆալախա-ն է՝ Թուրքերեն falaka: Տանջանքի այս գործիքը եղել է հայկական դպրոցներում, ու այն աշակերտների սարսափն էր: Ասատուր Մնացականյանը ութերորդ դասարանի համար կազմած իր օրինակելի քրեստոմատիայում հայկական գրչագրերից դուրս է բերել «Ֆալախայ» զվարճալի, բայց եւ տխուր ոտանավորը, որում ներկայացվում է ֆալախայով աշակերտի ոտքերին հարվածելու արատավոր երեւույթը.

Արդ ասացի վարդապետին, վարդապետին,
Ջեմ դիմանայ քո փայտին,
Դաստա կապած ջրպոտին,
Վա՛յ ինձի¹⁷:

Թուրքերեն բառեր են վավերագրություններում տեղ գտած ֆինջան—գավաթ, մաֆրաշ — ճանապարհի մեծ պարկ՝ անկողինը տեղափոխելու համար, փիլավ—փլավ, ֆեշա—թաղիք, էֆենդի—պարոն, ղանջըղ — անզգամ կին եւ այլն:

Հատկապես Րաֆֆու ուղեգրություններում շատ են պարսկերեն բառերը, որոնց մի մասն անցել է այդ լեզվին արաբերենից, երբ VII դ. սկզբում պարսիկները բռնություններ գործադրեցին մահմեդականների, նոր կրոնի հետ յուրացրին նաեւ նոր բառեր՝ մեյդան—հրապարակ,

¹⁷ «Հայ գրականության քրեստոմատիա», միջնակարգ դպրոցի 8-րդ դասարանի համար, կազմեց Ա. Մնացականյանը, Երեւան, 1970, էջ 204:

մինարե — մզկիթի մոտի աշտարակ, դելյան — նարգիլե, մեշլիս — հանդես, հավաքույթ, դովլաթ—հարստություն եւ այլն:

Վավերագրական երկերում առկա են վրացական փոխառություններ՝ կանդելակի —ավագ քահանա, բատոնո—պարոն:

Ղ. Աղայանի հուշագրության մեջ մեծ թիվ են կազմում ռուսերեն բառերը՝ դվոռ, բորշ, կաշա, մագազին, բակալ, օֆիցեր, սանկա, վեդրո եւ այլն: Գալստյանը ներկայացնում է իր հայտնաբերած անգլիաբանությունները, իտալաբանությունները, գաղիաբանությունները, գերմանաբանությունները.

ա) անգլիաբանություններ՝ կոտեջ, ինտելիգենտ, ջեմտլմեն,

բ) իտալաբանություններ՝ մաֆիա, բոավո, ռոտոնդո, կարետ, ֆիասկո եւ այլն,

գ) գաղիաբանություններ՝ ֆոնդ, դիկտատոր, պեդանտ, լիկյոր, ֆասոն, օթեյ, կավալեր, բենեֆիս, ֆրակ, կրուշոն, տրիումֆ եւ այլն,

դ) գերմանաբանություններ՝ շլապա, գաստրոլ:

Գալստյանը մատնացույց է անում նույն դարձվածքների կրկնությունները տարբեր հուշապատումներում՝ աստղը թեփվել, առնեմ արես փախչեմ, խնձոր գցելու տեղ չկա, սիրտը կտրել, սիրտ տալ, սիրտը փառավորվել, սրտին մոտ ընդունել, սիրտ անել, սիրտը կաշել եւ այլն:

Նույն կերպ բազում են գլուխ բաղադրիչով դարձվածքային միավորները՝ գլուխ դնել, գլխի ընկնել, գլուխ հանել, առյուծը գլխին խփել, գլխի վրա նստեցնել, գլխի տակ փափուկ բարձ դնել եւ այլն:

Աշոտ Գալստյանի «Արեւելահայ գեղարվեստական վավերագրության լեզուն» գիրքն ապացուցում է, թե որքան կապված են միմյանց լեզվաբանությունն ու գրականագիտությունը, եւ որքան կարեւոր է լեզվաբանի համար գրականության քաջիմացությունը, իսկ գրականագետին անհրաժեշտ է լեզվական իրողությունների վերաբերյալ ունենալ ճշգրիտ գիտելիքներ: Պատահական չէ, որ XX դ. երկրորդ կեսի ֆրանսիացի լավագույն լեզվաբաններից մեկի՝ Մորիս Գրեւիսի «Լավագույն գործածություն» (La bon usage) ժամանակակից ֆրանսերենի օրինաչափությունները ներկայացնող ստվար հատորը (1519 էջ) եղել է նշանավոր ֆրանսիացի գրողների սեղանի գիրքը: Ահա մի քանի վկայություններ՝

Անդրե Ժիդ. «Գրեւիսը պատասխանում է բոլոր տարակուսելի հարցերին: Նրա գիրքը մշտապես իմ աշխատասեղանի վրա է»:


Էովսե Բազեն. «Եթե ուզում եք անսահման խորհուրդներ ստանալ, դիմեք Գրեւիսին»:

Անրի Թրուայա. «Երկար ժամանակից ի վեր Ձեր «Լավագույն գործածություն»-ը իմ ամենասիրելի եւ ամենից հաճախ խորհրդատու գիրքն է»¹⁸:

Աշոտ Գալստյանի գրախոսվող գիրքն էլ օգտակար է ոչ միայն լեզվաբաններին, այլեւ հայոց լեզվին, հայ գրականությանը նվիրված իսկական մտավորականներին:


ԱՆԼԻՏԱԿԱՆ ԴՈԼՈՒՍԵԱՆՅԱՆ

Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր,
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ՀՊՄՀ



¹⁸ Տե՛ս M. GREVISSE, La bon usage, Duculot, 1980, կազմաշապիկի վրա:

ՄԱՀԱԳՐԱԿԱՆ



ԳԵՐԱՇՆՈՐԻՅՑ ՍԵՊՈՒՅ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՉՈՒԼՁԵԼՆ

Նոյեմբերի 19-ին ի Տէր հանգաւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբան, Գուգարաց թեմի բարեխնամ առաջնորդ Տ. Սեպուն արք. Չուլջեանը: Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանութիւնը, Գերագոյն հոգեւոր խորհրդի անդամները եւ ողջ հոգեւոր դասը սգով եմ Սրբազան Հօր անժամանակ մահը:

Յիշատակն արդարոյն օրհնութեամբ եղիցի:

Կենսագրական

Ծնուել է 1959 թ. մարտի 24-ին Կիլիկիայի Մալաթիայ քաղաքում: Նախնական կրթութիւնն ստացել է Կ. Պօլսի Ներսիսեան վարժարանում:

1969 թ. ընտանիքով հայրենադարձուել է Հայաստան եւ բնակութիւն հաստատել Գիւմրի քաղաքում, որտեղ շարունակել եւ աւարտել է միջնակարգ կրթութիւնը:

1978 թ. ընդունուել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գէորգեան հոգեւոր ճեմարան:

1979 թ. զօրակոչուել է խորհրդային բանակ եւ զօրացրուելուց յետոյ շարունակել ուսումը ճեմարանում:

1985 թ. դեկտեմբերին ձեռնադրուել է սարկաւագ՝ ձեռամբ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի լուսարարապետ Տ. Յուսիկ արքեպիսկոպոս Սանթրեանի:

1986 թ. մարտին պաշտպանել է աւարտաճառ՝ «Ղուկաս Խարբերդցու թարգմանչական գործունէութիւնը» վերնագրով:

Ճեմարանն աւարտելուց յետոյ ծառայութեան է անցել Վեհարանում՝ որպէս քարտուղար:

1987 թ. յունիսի 7-ին՝ Հոգեգալստեան տօնին, ձեռամբ Տ. Ներսէս արքեպիսկոպոս Պողապալեանի, ձեռնադրուել է կուսակրօն քահանայ: Յետ ձեռնադրութեան շարունակել է ծառայութիւնը Վեհարանում:

1987 թ. սեպտեմբերին Ն. Ս. Օ. Տ. Տ. Վազգէն Ա. Վեհափառ Հայրապետի տնօրինութեամբ նշանակուել է Գէորգեան հոգեւոր ճեմարանի փոխտեսուչ:

1989 թ. նոյեմբերին պաշտպանել է վարդապետական ատենախօսութիւն՝ «Պահքը Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցում» վերտառութեամբ:

1990 թ. Ն. Ս. Օ. Տ. Տ. Վազգէն Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից նշանակուել է Շուէյցարիայի Ժնեւ քաղաքի հայ համայնքի հոգեւոր հովիւ:

1991 թ. վերադարձել է Մայր Աթոռ եւ նշանակուել Շիրակի թեմի փոխառաջնորդ:

1995 թ. յունիս ամսից զբաղեցրել է Մայր Աթոռի պահեստային տնտեսութեան գույքագրման յանձնաժողովի նախագահի պաշտօնը: Նոյն թուականի հոկտեմբեր ամսից նշանակուել է կառավարութեան կողմից Մայր Աթոռին վերադարձուող շէնքերի, շինութիւնների ու հողատարածութիւնների ընդունման յանձնաժողովի նախագահ:

1996 թ. ընդգրկուել է որպէս Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ներկայացուցիչ Հայաստանի Հանրապետութեան կառավարութեան մարդասիրական օգնութեան կենտրոնական յանձնաժողովում:

1996 թ. յունիսի 3-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսի հայրապետական սրբատառ կոնդակով նշանակուել է Գուգարաց թեմի առաջնորդ:

1997 թ. յունիսի 15-ին ձեռնադրուել եւ օծուել է եպիսկոպոս՝ ձեռամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսի:

2000 թ. նոյեմբերին նշանակուել է Գերագոյն հոգեւոր խորհրդի անդամ:

2002 թ. հոկտեմբերին ընտրուել է Բնութեան եւ հասարակութեան մասին գիտութիւնների միջազգային ակադեմիայի հայկական մասնաճիւղի իսկական անդամ:

2012 թ. մայիսի 17-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Հայրապետի սրբատառ կոնդակով Սեպուհ սրբազանին շնորհուել է արքութեան պատիւ՝ վերջինիս քահանայապետութեան 25-ամեակի եւ առաջնորդութեան 15-ամեակի առթիւ:

Սեպուհ սրբազանի առաջնորդութեան տարիներին թեմում կառուցուել եւ վերանորոգուել են շուրջ 45 վանք ու եկեղեցի, 25 մատուռ:



Կրթադաստիարակչական ծառայությունների շարքում յիշատակութեան է արժանի Վանաձորում «Միծեռնակ» եւ Հրանտ Դինքի անուն «Կռունկ» թեմապատկան ճամբարների հիմնովին վերակառուցման, կահավորման աշխատանքների կազմակերպումը: Թեմում իրականացուել է մարդասիրական, հասարակական, աղքատախնամ, սննդի ու հագուստի բաշխման «Ձեռք մեկնիր» ծրագիրը, որով օգնել են հազարաւոր կարիքաւորների, իսկ «Ձեռք մեկնիր եղբօրդ» ծրագրի շրջանակում բնակարաններ են բաշխուել երկու տասնեակից աւելի ընտանիքների:



СОДЕРЖАНИЕ

<i>От редакции</i>	5
------------------------------	---

ПАТРИАРШИЕ ЭНЦИКЛИКИ И ГРАМОТЫ БЛАГОСЛОВЕНИЯ

Послание ЕГО СВЯТЕЙШЕСТВА ГАРЕГИНА II, ВЕРХОВНОГО ПАТРИАРХА И КАТОЛИКОСА ВСЕХ АРМЯН , народу	8
---	---

Слово ЕГО СВЯТЕЙШЕСТВА ГАРЕГИНА II, ВЕРХОВНОГО ПАТРИАРХА И КАТОЛИКОСА ВСЕХ АРМЯН , в ходе поминальной церемонии по героям, павшим в Арцахской войне за защиту родины	10
--	----

Слово ЕГО СВЯТЕЙШЕСТВА ГАРЕГИНА II, ВЕРХОВНОГО ПАТРИАРХА И КАТОЛИКОСА ВСЕХ АРМЯН , по случаю панихиды по архиепископу Сепуху Чулджяну	13
---	----

ОФИЦИАЛЬНОЕ

Заявление Верховного духовного совета	16
Заявление Верховного духовного совета	18

ПРОПОВЕДИ

Проповедь ЕПИСКОПА ВАЗГЕНА МИРЗАХАНИЯНА , произнесенная во время Святой Литургии в монастыре Св. Гаяне	21
--	----

РЕЛИГИОВЕДЕНИЕ

Проповеди АРХИМАНДРИТА МАТЕВОСА	25
ИВАН ИЛЬИН — О Родине	39

ИСТОРИКО-ФИЛОЛОГИЧЕСКИЕ ИССЛЕДОВАНИЯ

ГЕВОРГ МАДОЯН, СИРАНУШ МАДОЯН — Об оставшихся после потопа и их семьях.	51
АРЦРУН СААКЯН — О подлиннике Агатаңгелоса	61
АРХИМАНДРИТ ТАЧАТ ЦАТУРЯН — Падежные сдвиги в «Текстуальных проблесках» Григора Хлатеци	72
АРА ОГАНЕСЯН — Об истории армянской диаспоры Бразилии.	90

СООБЩЕНИЯ


ВАЧАГАН ГРИГОРЯН — Связь сочинений Левона Шанта и Матеоса Урхаеци . . .	108
ЭДГАР ОГАНЕСЯН — Архиепископ Петрос Сараджян	116

РЕЦЕНЗИИ. БИБЛИОГРАФИЯ

КАРЕН МКРТЧЯН — Всестороннее обращение к армянской общине Месопотамии.	130
АЭЛИТА ДОЛУХАНИЯН — Ценное лингвистическое исследование	139

НЕКРОЛОГИ

Его Высокопреосвященство архиепископ Сепух Чулджян	149
--	-----



CONTENTS

<i>As an editorial</i>	5
----------------------------------	---

PONTIFICAL ENCYCLICALS, LETTERS OF BLESSING

Message of HIS HOLINESS KAREKIN II, CATHOLICOS OF ALL ARMENIANS , addressed to the nation	8
Message of HIS HOLINESS KAREKIN II, CATHOLICOS OF ALL ARMENIANS , during the ceremony held in memory of the heroes killed for the defense of their homeland in the Artsakh war.	10
Message of HIS HOLINESS KAREKIN II, CATHOLICOS OF ALL ARMENIANS , on the occasion of the burial service of His Eminence Archbishop Sepouh Chuljyan	13

OFFICIAL

Statement of the Supreme Spiritual Council.	16
Statement of the Supreme Spiritual Council.	18

SERMONS

Sermon delivered by H.G. BISHOP VASKEN MIRZAKHANYAN during the Divine Liturgy celebrated at St. Gayane Monastery.	21
--	----

RELIGIOUS STUDIES

Sermons of Archimandrite Matheos	25
IVAN ILYIN – On the homeland	39

HISTORICAL-PHILOLOGICAL STUDIES

- GEVORG MADOYAN, SIRANUYSH MADOYAN** — On the postdiluvian people and their families. 51
- ARTSRUNY SAHAKYAN** — On the original text of Agathangelos 61
- ARCHIMANDRITE DAJAD TSATURYAN** — Case transpositions in “Textual Notes” by Grigor of Khlat 72
- ARA HOVHANNISYAN** — On the history of the Armenian Diaspora of Brazil. 90

ESSAYS


- VACHAGAN GRIGORYAN** — On the affiliation of the works of Levon Shant and Matheos of Edessa 108
- EDGAR HOVHANNISYAN** — Archbishop Petros Sarajian as the Catholicos’ Vicar General and Patriarch of Cilicia (1936–1940) 116

LITERARY REVIEW

- KAREN MKRTCHYAN** — Comprehensive review of the Mesopotamian Armenian Diaspora 130
- AELITA DOLUKHANYAN** — Valuable linguistic study 139

OBITUARY

- His Eminence Archbishop Sepouh Chuljyan 149



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԻԲՐԵԻ ԽՄԲԱԳՐԱԿԱՆ. 5

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՆԴԱԿՆԵՐ. ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԳՐԵՐ

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

ուղերձը ժողովրդին. 8

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ խօսքը

Արցախեան պատերազմում հայրենիքի պաշտպանության համար
նահատակուած հերոսների յիշատակի արարողության ընթացքին 10

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ խօսքը

գերաշնորհ Տ. Սեպուհ արքեպիսկոպոս Չուլջեանի յուղարկաւորութեան
առիթով. 13

ՊԱՇՏՈՆԱԿԱՆՔ

Գերագոյն հոգեւոր խորհրդի յայտարարութիւնը 16

Գերագոյն հոգեւոր խորհրդի յայտարարութիւնը 18

ՔԱՐՈՉԽՕՍԱԿԱՆ

Տ. ՎԱԶԳԷՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԻՐԶԱԽԱՆԵԱՆԻ քարոզը՝ խօսուած

Ս. Գայանէ վանքում մատուցուած Սուրբ Պատարագին. 21

ԿՐՕՆԱԳԻՏԱԿԱՆ

ՄԱՏՈՒՆ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ քարոզները 25

ԻԲԱՆ ԻԼՅԻՆ — Հայրենիքի մասին. 39

ՊԱՏՄԱԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԳԷՈՐԳ ՄԱՂՈՅԵԱՆ, ՍԻՐԱՆՈՅԾ ՄԱՂՈՅԵԱՆ — Յետջրհեղեղեանների եւ նրանց ընտանիքների մասին	51
ԱՐԾՐՈՒՆԻ ՍԱՀԱԿԵԱՆ — Ազաթանգեղոսի բնագրի շուրջ	61
Տ. ՏԱՃԱՏ ՎԱՐԴԱՊԵՏ ԾԱՏՈՒՐԵԱՆ — Հոլովական տեղաշարժեր Գրիգոր Խյաթեցու «Բնագրական նշմարներ»-ում	72
ԱՐԱՅ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ — Բրազիլահայ համայնքի պատմությունից.	90

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ


ՎԱԶԱԳԱՆ ԳՐԻԳՈՐԵԱՆ — Լեւոն Շանթի եւ Մատթեոս Ուռհայեցու երկերի առնչության մասին	108
ԷԴԳԱՐ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ — Պետրոս արքեպիսկոպոս Սարաճեանը Կիլիկիոյ կաթողիկոսական ընդհանուր փոխանորդ եւ հայրապետ (1936—1940 թթ.) . . .	116

ԳՐԱԽՕՍՈՒԹԻՒՆ. ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ

ԿԱՐԷՆ ՄԿՐՏՉԵԱՆ — Համակողմանի անդրադարձ Միջագետքեան հայ գաղթավայրին	130
ԱԷԼԻՏԱ ԴՈԼՈՒԽԱՆԵԱՆ — Լեզուաբանական արժեքաւոր հետազոտություն	139

ՄԱՀԱԳՐԱԿԱՆ

Գերաշնորհ Տ. Սեպուհ արքեպիսկոպոս Չուլջեան.	149
--	-----



- ԱԲՀ** - Առձեռն բառարան հայկազնեան լեզուի (Մ. Ազերեան, Գր. Ճէլալեան), Վենետիկ, 1846 եւ 1865
- ԱԺ** - Արեւելագիտական ժողովածու, Երեւան
- ԱԻ** - Արեւելագիտության ինստիտուտ, ՀՀ ԳԱԱ, Երեւան
- ԱՀ** - Ազգագրական հանդէս (խմբ.՝ Ե. Լալայեան), հ. 1-26, Շուշի/Թիֆլիս, 1896-1916
- ԱՖՏ** - Աստվածաբանության ֆակուլտետի տարեգիրք, Երեւան
- ԲԵՀ** - Բանքեր Երեւանի համալսարանի, Երեւան
- ԲՀ** - Բանքեր հայագիտության, Երեւան
- ԲՀԱ** - Բանքեր Հայաստանի արխիվների, Երեւան
- ԲՄ** - Բանքեր Մատենադարանի, Երեւան
- ԳԱԹ** - Գրականության եւ արվեստի թանգարան, Երեւան
- ԳԻ** - Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ, ՀՀ ԳԱԱ, Երեւան
- ԳՀՀ** - Գեորգեան հոգեւոր ճեմարան (աստուածաբանական համալսարան), Ս. Էջմիածին
- ԴԱՆ** - Դաշտային ազգագրական նյութեր
- ԴՀՊ** - Դիւան հայոց պատմութեան (խմբ.՝ Գ. Աղանեանց), հ. 1-13, Թիֆլիս, 1893-1917
- ԴՀՎ** - Դիվան հայ վիմագրության, Երեւան
- Ե(Լ)Ժ** - Երկերի (լիակատար) ժողովածու
- ԵՊԿ** - Երեւանի պետական կոնսերվատորիա
- ԵՊՀ** - Երեւանի պետական համալսարան
- ԷԱԺ** - Էմինյան ազգագրական ժողովածու (խմբ.՝ Գ. Խալաթյանց, Կ. Կոստանյան), հ. 1-9, Մոսկվա, 1901-1913
- ԷՊԱԹ** - Էջմիածնի պատմաազգագրական թանգարան
- ԼԻ** - Հրաչյա Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, ՀՀ ԳԱԱ, Երեւան
- ԼՀԳ** - Լրաբեր հասարակական գիտությունների, Երեւան
- ՀԱ** - Հանդէս Ամսօրեայ, Վիեննա
- ՀԱԱ** - Հայաստանի ազգային արխիվ, Երեւան
- ՀԱԲ** - Հայերեն արմատական բառարան (Հ. Աճառյան), հ. 1-4, Երեւան, 1971-1979
- ՀԱԲԵ** - Հայ ազգագրություն եւ բանահյուսություն, Երեւան
- ՀԱԲՈ** - Հայոց անձնանունների բառարան (Հ. Աճառյան), հ. 1-5, Երեւան, 1942-1962
- ՀԱԹ** - Հայոց ազգագրության եւ ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարան, Սարգարապատ
- ՀԱԻ** - Հնագիտության եւ ազգագրության ինստիտուտ, ՀՀ ԳԱԱ, Երեւան
- ՀԱՊ** - Հայաստանի ազգային պատկերասրահ, Երեւան
- ՀԲԲ** - Հայերեն բացատրական բառարան (Ստ. Մալխասյանց), հ. 1-4, Երեւան, 1944-1945
- ՀԺՀ** - Հայ ժողովրդական հեքիաթներ, Երեւան
- ՀՀ** - Հայագիտական հանդէս, Երեւան
- ՀՀ ԳԱԱ** - Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիա, Երեւան
- ՀՀՀ** - «Հասկ» հայագիտական հանդէս, Անթիլիաս
- ՀՀՀԾ** - Հայաստանի հնագիտական հուշարձանները, Երեւան
- ՀՀՀՍ** - Հայկազեան հայագիտական հանդէս, Բեյրութ
- ՀՀՄ** - Հայաստանի հնագույն մշակույթը, Երեւան
- ՀՀՄԾ** - Հին Հայաստանի մշակույթը, Երեւան
- ՀՀՑ** - Հայագիտության հարցեր, Երեւան
- ՀՀՇՏԲ** - Հայաստանի եւ հարակից շրջանների տեղանունների բառարան (Թ. Խ. Հակոբյան, Ստ. Տ. Մելիք-Բախչյան, Հ. Խ. Բարսեղյան), հ. 1-5, Երեւան, 1986-2001
- ՀՊԹ** - Հայաստանի Պատմության թանգարան, Երեւան
- ՀՊՀ** - Հնագիտական պեղումները Հայաստանում, Երեւան
- ՀՊՀՑ** - Հայոց պատմության հարցեր, Երեւան
- ՀՊՄՀ** - Հայաստանի պետական մանկավարժական համալսարան, Երեւան
- ՀՍՀ** - Հայկական սովետական հանրագիտարան, հ. 1-13, Երեւան, 1974-1987
- ՀՏ** - «Հուշարձան» տարեգիրք, Երեւան
- ՄԱ** - Մերձավոր Արեւելք, Երեւան
- ՄԱԵԺ** - Մերձավոր եւ Միջին Արեւելքի երկրներ եւ ժողովուրդներ, Երեւան
- ՄՀ** - Մատենագիրք Հայոց, Անթիլիաս

- ՄՄ** - Մաշտոցի անվան Մատենադարան, Երևան
- ՄՊՎ** - Մատենադարանի պարսկերեն վավերագրերը, Երևան
- ՄՅՀԶ** - Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, Երևան
- ՆՀԲ** - Նոր բառգիրք հայկազեան լեզուի (Գ. Անտիքեան, Խ. Սիրմէլեան, Մ. Ալգերեան), հ. 1-2, Վենետիկ, 1836-1837
- ՆՀԺՊ** - Նյութեր հայ ժողովրդի պատմության, Երևան
- ՇՀՀԿ** - Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն. գիտական աշխատանքներ, Գյումրի
- ՊԲՀ** - Պատմաբանասիրական հանդես, Երևան
- ՊԻ** - Պատմության ինստիտուտ, ՀՀ ԳԱԱ, Երևան
- ՊՄ** - «Պատմություն և մշակույթ» հայագիտական հանդես, Երևան
- ՎՀԵՊ** - Վավերագրեր Հայ Եկեղեցու պատմության, Երևան
- ՎՀՀ** - «Վէմ» համահայկական հանդես, Երևան
- ՏՀԳ** - Տեղեկագիր հասարակական գիտությունների, Երևան
- ՑԶՄՄ** - Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, Երևան
- ՔՀ** - Քրիստոնյա Հայաստան, Ս. Էջմիածին
- ՔՀՀ** - «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան, Երևան, 2002
- ՕԱՀՀՄ** - Օտար աղբյուրները հայերի և Հայաստանի մասին, Երևան
- ԱԴՎ** - Армянский гуманитарный вестник, Ереван
- АО** - Археологические открытия, Москва
- АПА** - Археологические памятники Армении, Ереван
- АРА** - Археологические раскопки в Армении, Ереван
- ВВ** - Византийский временник, Ленинград-Москва
- ВДИ** - Вестник древней истории, Москва
- ВЕУ** - Вестник Ереванского университета, Ереван
- ВОН** - Вестник общественных наук, Ереван
- ДВ** - Древний Восток, Ереван
- ДКА** - Древнейшая культура Армении, Ереван
- ИАЭ** - Институт археологии и этнографии, НАН РА, Ереван
- ИАН** - Известия Академии наук Армянской ССР, Общественные науки, Ереван
- ИФЖ** - Историко-филологический журнал, Ереван
- КБС** - Кавказско-ближневосточный сборник, Тбилиси
- КВ** - Кавказ и Византия, Ереван
- КДА** - Культура древней Армении, Ереван
- КСИА** - Краткие сообщения института археологии, Москва
- КСИМК** - Краткие сообщения института истории материальной культуры, Москва
- МАК** - Материалы по археологии Кавказа, Москва
- МИАН** - Материалы по истории армянского народа, Ереван
- МНМ** - Мифы народов мира, Москва (ред. С. А. Токарев), 1991-1992
- НАА** - Национальный архив Армении, Ереван
- СА** - Советская археология, Москва
- СМОМПК** - Сборник материалов для описания местностей и племён Кавказа, т. 1-46, Тифлис, 1881-1915
- СЭ** - Советская этнография, Москва
- ХВ** - Христианский Восток, Санкт-Петербург
- AJNES** - Armenian Journal of Near Eastern Studies, Yerevan
- AS** - Anatolian Studies, Cambridge
- AW** - Antike Welt, Mainz am Rhein
- BAR** - British Archaeological Reports, International Series, Oxford
- САН** - Cambridge Ancient History, Cambridge
- IC** - Iran and the Caucasus, Leiden
- JANER** - Journal of Ancient Near Eastern Religions, Leiden
- JAOS** - Journal of American Oriental Society, Michigan
- JAS** - Journal of Armenian Studies, Belmont
- JSAS** - Journal of the Society for Armenian Studies, Fresno
- MDOG** - Mitteilungen der Deutschen Orient-Gesellschaft, Berlin
- OrCh** - Oriens Christianus, Leipzig
- PO** - Patrologia Orientalis, Paris-Brepols
- REArm** - Revue des études arméniennes, Paris
- SMEA** - Studi Micenei ed Egeo-Anatolici, Roma

ISSN 1829-4243

Հրատարակում է
Գէորգեան հոգեւոր ճեմարանի
(աստուածաբանական համալսարան)
գիտխորհրդի երաշխատրույթեամբ եւ որոշմամբ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ՀՀ ազգային եւ ՀՀ ԳԱԱ Հիմնարար գրադարանները ձեռնամուխ են եղել «Հայկական գիտատեղեկատուական հանգոյցի» ձեւաւորման աշխատանքներին:

Այս հանգոյցում ի մի են բերում հայագէտների եւ գիտութեան տարբեր բնագաւառների ներկայացուցիչների հրատարակած յօդուածների, գրքերի ընտրանիները: Այս աշխատանքներին իրենց աջակցութիւնն են բերում հայաստանեան եւ Սփիւռքի հայագիտական կենտրոնները, հրատարակչութիւնները, գրադարանները:

Հանգոյցը հասանելի է համացանցային հասցէով:

Բոլոր նիւթերը հասանելի են ազատ դիտման ու ներբեռնման համար:

Ունեցէ՛ք Ձեր ներդրումը համահայկական այս եզակի նախագծում՝ օգտուելով հանգոյցից, տարածելով տեղեկատւութիւն դրա մասին, տրամադրելով թուայնացուած նիւթեր:

ՀՀ Ազգային գրադարան
ՀՀ ԳԱԱ Հիմնարար գրադարան

Խմբագրութեան հասցէն՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ, Ք. ՎԱՂԱՐՇԱՊԱՏ,

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ

«ԷՋՄԻԱԾԻՆ»

ԿՐՕՆԱԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

Республика Армения, Эчмиадзин, редакция журнала «Эчмиадзин»

Republic of Armenia, Etchmiadzin, Editorial Office of the Journal "Etchmiadzin"

Էլ. փոստ՝ etchmiadzinamsagir@gmail.com

Ամսագրի արխիւն ամբողջական կերպով՝ www.tert.nla.am կամ <http://www.flib.sci.am/arm/node/2>

Հեռ. (+374-10) 517-277/278

Ստորագրուած է տպագրութեան՝ 15.12.2020 թ.



ՄԵՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ
ԷՋՄԻԱԾԻՆ ՏՊԱՐԱՆ